This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

Srvandztiants, Garegin

ՄԱՆԱՆԱՅ

Manana

ԺՈՂՈՎԵԱՑ

ԵՒ

Ի ԼՈՅՍ ԷԱԾ

Գ. Վ.

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

ՊԱՀՃԷ ԳԱՓՈՒ ԽՍԱՏ ԷՖԷՆՏԻ ԽԱՆ ԹԻՒ 43

— 1876 —

Ի ՆՇԱՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ

ԱՂԱՅ ՅՈՎՍԷՓԱՅ ԻԶՄԻՐԼԵԱՆՑ

ՂԶԼԱՐՑՒՈՅ

ՆՈՒԻՐԷ

ՄԱՆԱՆԱՅՍ

ԺՈՂՈՎՈՂ

Գ. Վ.

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

GR
280
.S69
1876

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մանանայս կը մատուցանեմ Հայ բանասիրաց ոչ իբրև Սինայ Անապատին երկնատեղաց նուիրական հաց, այլ իբրև Հայաստանի Գագաթին, որ երկրի ծաղկանց հիւթերէն օդին մէջ կը գոյանայ, ցօղով այգոյն կը շաղախի, արևուն ջերմիկ ճառագայթներէն կը զանգի, կը հասուննայ, և շաքարախմորի և մեղրի համով իբրև գինդ յակինթ կամ հատ հատ մարգարիտ կ'իջնայ մացառներու, տերևոց, գազի փշոց, և մատուտակի ոստոց վրայ 'ի գոյն արծաթափայլ, և 'ի ձև նռան հատի, զոր ժողովեն մանկտիք և հարսունք բլիթ բլիթ յօրինելով պաշար կազմեն 'ի քաղցր ճաշակ անձանց, և հիւրոց 'ի մեծարանս ։

Ստոյգ է թէ բազմազան են տեսակք պարունակութեան գրքոյս, և խառնակ· բայց ես դիտմամբ ըրած եմ զայդ, ուզելով նիւթէ նիւթ փոփոխել փոյթ ընդ փոյթ, որպէս զի զուարճալի և անձանձրանալի ընեմ գործս, և միանգամայն բազմախուռն զրուցաց, երգելեաց և բանից ծանօթ՝ զընթերցողս ։

Գիտեմ թէ զանազան ախորժակ ու ճաշակ ունեցողներն՝ զանազան դատաստան կ'ընեն ո և իցէ գործոյ մը· ուստի ջանացի գէթ որ իւրաքանչիւր ոք իւր քիմքը գոհացնելու պատառ մը ուտելիք կամ պուտ մը ըմպելիք կարողանայ գտնել այս թղթերուս մէջը ։

Հեղինակութիւն չէ ։ Շատեր՝ իրենց գիտցած և խօսած բաներ պիտի տեսնեն Մանանայիս մէջ · գուցէ և շատերն արհամարհեն իմ այս երկը · բայց և վստահ եմ թէ պիտի գտնուին գնահատող անձինք ոչ միայն նիւթոյն նկատմամբ, այլ և պիտի գտնուին՝ որ ճանչնան թէ այսպիսի գործ մը պատրաստել և 'ի լոյս ածել՝ աւելի վաստակ կ'առթէ գրասիրի մը , քան 'ի նորոյ բան մը հեղինակել ։

Արժէք մը չունի քան ինքեան թէպէտ, բայց և ես իբրև բարձր գործ մը չեմ ներկայացներ զայս ։ Այս՝ որ կը նմանի ծուէն ծուէն կցկցեալ գրօշուց, զոր կը ժողովէ կարկատողն և կը կազմէ գոյնզգոյն վարագոյր կամ սփռոց 'ի զարդ և 'ի պէտս սպասուց տանն ։ Այսպէս և իմ Մանանայս 'ի կարգս սպասուց գրականութեան ։

Ես գրականութեան այն չինական վաճառին եմ, որ 'ի վայրիս և 'ի մայրիս կը թափառի · լեռնային, դաշտային տունկեր ծաղիկներ և բոյսեր կը ժողովէ , և կուզովով կ'ածէ զայն 'ի վաճառ 'ի հրապարակս քաղաքին, յորմէ առեալ քաղաքացին՝ պարտիզպանն կը վերատնկէ զայն և կը զարդարէ 'ի պարտէզս և 'ի բուրաստանս ապարանից մեծատանց ։

Նմանապէս այս է իմ երկն · Ուսումնասիրաց և գրասիրաց համար պատրաստած նախնական նիւթ ։

Ահա ՀԱՄ ԵՒ ՀՈՏ ՀԱՅՐԵՆԵԱՑ ։ Ասանայ Աւետարանեաց տեղագրութիւնք ։ Բնակչաց կայկչապրութիւնն և պէս պէս կենցաղավարութիւնք · Իսկ մանկտոյն ·

Նախապաշարմունք․ Սովորոյթք․ Զրոյցք ու Առածք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՔ։ Գիր և Բարբառ, Զընդաւղզ կամ Զինուորական․ Քանդակ- ներ արձակեր։

ՎԷՊՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ․ Հէքեաթներ․ Եւ առասպելներ։

ԵՐԳՔ ԵՒ ԾԻՍԱԳՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ․ Գուսանական և ժողովրդական Երգեր․ Տաղեր․ Աստուածքներ․ Հանելուկներ․ Աստղերու և Լուսիններու վրայ․ Տօնակատարութիւն․ Ծածկադրութիւնք և Ծածկագիր։ Դիւթութիւնք և Բժժանք։ Հետևաբար ընդարձակած մի քննել կարող բան՝ Դիւթական և Բժշկական։ Հաւատալութիւն է Զուարթնոցին՝ Աշխարհութիւնք կենդանեաց կերպից և Աստեղաց անուանց։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ։ Քաղաքականութիւն Վանայ։ Երաժշտական։

ՀԱՅՐԵՆԵԱՑ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ․ Բայք և Ցուցակք Երկրագործական բառերու

Այսոնք են համառօտութիւնք Ծանօթութեան, կամ բովանդակութիւն գրքոյս։ Հետազօտ ընթերցողն այստեղ ձկնաւ է իմ գործունէութեանց և յանձնաջ բերած ժողովրդական խօսքերուն մէջ այնպիսի կտորներ, որ ինչպէս անգիր պահուած է Հայաստանի բնակչաց բերանը, նոյնպէս և անոնց հետքը մեր ազգային հինգերորդ դարէն ընթացք մատենագրաց մէջն ալ յիշուած է․ որով կը համոզուի թէ անոնցմէ շատ մը որքան հին և վաղեմի բաներ են, եղբայր․ Ցեղ մը կը յիշատակէ Խորենացին իբրև Վիպասան Արտաւազդեայց։

Ի գրոց Խորենացւոյն ։

« . . . Բիւրասպի Աժդահակայ առասպելք իցեն՝ դիւաց նմա սպասաւորութեան. ուսոցն համբուրումն. և անդուստ վիշապացն ծնունդ. և յայնմհետէ չարութեան յաճախութիւն ծախել զմարդիկ 'ի պէտս որովայնի ։ Իսկ ապա և Հրոդանայ ումեմն զնա կապել սարեօք պղնձեօք և 'ի լեառն տանել, որ կոչի Դմբաւընդ. այլև 'ի ճանապարհի ննջել Հրոդանայ, և Բիւրասպեայ քարշել 'ի բլուրս. և 'ի զարթչելն Հրոդանայ և տանել զնա յայրս ինչ լերինն և կապել, և զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել. յորմէ պակուցեալ և հնազանդեալ կայ չղթայիցն, և ոչ զօրէ ելանել և ապականել զերկիր ։» Գիրք Ա. ։

« . . . Անտեղի է մեզ երկրորդել զառասպելն (զայզգէն Պահլաւկաց) յաղագս երազոյն փափագոյն և արտադրութեանց հրոյն մանուածոյ որ 'ի Սասանայ, և պատումն զհօտիւն. և Լուսնակն՝ և Ախտարմաղացն յառաջասացումն, որ են քաւդեայք. և որ ինչ զկնի այսոցիկ՝ պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբքն, և անմիտ հանճարաբանութիւն մոգին դստեր վասն նախազին, և որ ինչ այլք ամենայն ։ Նաև այծի դիեցումն մանկան ընդ հովանեաւ արծւոյն. և գուշակումն ագռաւուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն՝ հանդերձ արբանեկութեամբ գայլուն ։» Եա ։ Գիրք Բ. ԳՐԱԿ կէ. ։

« . . . Զարտաւազդայ (Արտաշիսեան) երգիչք Գողթան առասպելաբանեն. եթէ

'ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց․ դժուարի Արտաւազդ ասելով ցհայրն․ Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակա՞ց թագաւորեմ։ Վասնորոյ անիծեալ զնա Արտաշիսի, ասաց այսպէս․ Եթէ յորս հեծցիս յԱզատն 'ի վեր 'ի Մասիս, զքեզ կալցեն քաջք, տարցին յԱզատն 'ի վեր 'ի Մասիս․ անդ կացցես և զլոյս մի' տեսցես։ Զրուցեն ըզսմանէ և պառաւունք․ Եթէ՝ արգելեալ կայ․ յայրի միում կապեալ երկաթի շղթայիւք․ հանապազ կրծելով զշղթայսն ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի․ այլ 'ի ձայնէ կռանահարութեան դարբնաց զօրանան ասեն կապանքն․ վասն որոյ և առ մերով ժամանակաւ՝ բազումք 'ի դարբնաց զհետ երթալով առասպելին, յաւուր միաշաբաթոջ երիս կամ չորս բաղխեն ըզսալն, զի զօրասցի, ասեն, շղթայքն Արտաւազդայ»։ Եւ թէ, «Վիշապազունքն գողացան զմանուկն Արտաւազդ, և դև փոխանակ եդին»։ ԳԻՐՔ Բ․ ՊՐԱԿ ԾՐ․։

«Ասեն զԵրուանդայ (Արշակունւոյ)՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով, վասնորոյ ընդ այգանալ՝ սովորութիւն ունել ասեն, սպասաւորացն արքունի վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդեայ․ և 'ի հայեցուածէ, ասեն, դժնէութեան, պայթել որձաքար վիմացն․ ոյժս դիւականս առ իւր ունել զօրութիւնս»։ ԳԻՐՔ Բ․ ՊՐԱԿ ԼԹ․։

«Ի զաւակացն Հայկայ այր խոժոռագիլ և բարձր, կոճղատարազ անձն և

տափակութիւն · խորակն և դժնահայեաց ·
Ցուրք անուն կոչեցեալ, որ վասն առա-
ւել ժահահոտութեան կոչէին Անգեղեայ ·
վիթխարի հաստաբուն և ուժով ։ Կարի ան-
նմանագոյնս թուին և նմա երդ քանզի
վասն ուժեղութեան և սրտեայ լինելոյ ·
որ ոչ Սամփսոնի և ոչ Հերակլեայ և ոչ
Սաձկին նմանին այն զօրոյցք ։ Քանզի երա-
գէին նմա բառն հարկանել զօրձաքաք վի-
մաց ձեռօք, և ճեղքուլ ըստ կամաց՝ մեծ
և փոքր, և քերել եղնգամբքն և կազմել
որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղըն-
գամբք զարձուխս · և այլս այսպիսիս ։ Իսկ
յեզեր ծովուն մեծի Պոնտոսի, դիպեալ
նաւաց թշնամեացն՝ դիմէ 'ի վերայ, և 'ի
խաղալ նոցա 'ի խորն իբր ասպարէզս ութն
և տասն, և սա ոչ ժամանեալ, առնու
վէմս և ձգէ զկնի, և 'ի սաստիկ պատառա-
մանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք ·
և ամբարձումն ալեացն՝ որ 'ի պատառմա-
նէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բա-
զում մղոնս » ։ — « Վկայեն Քոստոմայ Սաձ-
կի, ասեն Պարսիկք, Ձ· և Ի· փղաց ոյժ
ունել » (1) ։ ԳԻՐՔ Բ· ՊՐԱԿ Է· ·

Իսկ Եզնիկ բաւական մանրամասնօրէն
կը նկարագրէ յիշելով · « Համբարուք,
Ցհանգք, Պարիկք, Յուշկապարիկք,
Իշացուլք, Առլեզք, Ծովացուլք, Պայք,
Վիշապք. Ճահապետք վայրաց, » Եւ · « յո-
րոց ոմանց 'ի կերպս կերպս կերպարանին
'ի կանանց կերպարանս, 'ի գրաստս, 'ի

---

(1) Այն հատուածը կարծես ամբողջապես կը պար-
ունակէ Խորենացւոյն ակնարկած ամէն և բանին ։

հեծեալս։ «Մինչ ասէ․ Թէ 'ի մերում գիւղ Ծովակացուց զկով գործեաց, և զգուշիւն հանապազ մեք լսեմք։ «Իւր զԱրտաշիրեն Թէ յառաջին ժամանակին Արտաշէսեան մեքենայ զմիրասարս դիւցազանաւք և ոչնչացուցանէին․ «Ցեն վիշապք և օձք, որ կրանաւորեալք և մեծամեծք են․ որս ասեն, տանամարդք են նոցա իբրև մարդկան 'ի բնակութիւն, և 'ի թագաւորազգեաց և 'ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանիս։ «Արտաւազդ Հայոց՝ արգելեալ կայ գեւաց, որ ցայժմ կայ կենդանի․ նա եղանելոց է և ունելոց զաշխարհս։ «Նհանդեն երբեմն 'ի կնոջ կերպարանս երևի, և երբեմն փոկ լինի և լուղորդաց ընդ առս անկեալ՝ հեղձուցանէ։

«Ի կալս ջորիք և ուղտք երևին․ 'ի դաշտս երագագոյնք ձիքն, և հեծեալք իբրև զմարդիկ զհետ երէոց արշաւեն։ «Բառնայցի 'ի վէր վիշապն եզամբք իւ անուանելովք։ «Յասխխակոս ազգ իւք օձից՝ հայելով միայն սաստակէ զմարդ կամ զանասուն․ ուսանի յորժամ 'ի ջրհորս զգետանիցի, երագ առեալ իջանեն 'ի նեղքս ըմբռնել․ զի հայեցեալ ընդ նրագն՝ ոչ մեռղանիցէ մարդոյն օձն։» ԵԶՆԻԿ ԳԻՐՔ Ա․ ԻԷ ․․․

Երկարագոյն գրուած կայ խարամանեանց դիւաց, խառնարդի շրջոլաց, յաւերակս բնակողաց, չարիս պատճառողաց են, հագաւաքեալ 'ի կարծեաց, յաղանդոց, և 'ի քիւշէն Զրադաշտին․ որք մերձաւոր իւն կայ համեմատութիւն Նարգիզ և Շողեր խաւթանենրոց խմազերուն։

Այս և աստեղաց ազդեցութեանց վրայ գրուածէն։ «Գաւլեայքն աստեղանշմարք զծննդոց պատճառս և զմահուանց՝ յաստեղաց իբրև 'ի կենդանեաց դնեն։ «Որպէս թէ յորժամ ծնանիցին՝ անդէն և մահունք իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին· և ըստ այն ոչ յառաջել ումեք մեռանիլ հնար իցէ, և ոչ յամենալ։ «Բաղդաւորութեանց և չուառութեանց զաստեղսն դնեն պատճառս։ «Մինչդեռ Առիւծն, ասեն, յաստեղատանն իցէ, և ծնանիցի ոք, թագաւոր լինելոց է։ «Եւ մինչդեռ Եզն է, և ծնանիցի ոք, հզօր և բարենշան գալոց է։ «Եւ մինչդեռ Խոյն է, և ծնանիցի ոք, մեծատուն լինելոց է որպէս նայն թաւ և ասուեղ։ «Եւ յորժամ Կարիճն է, և ծնանիցի ոք, չար և մեղանչական լինելոց է։ «Յորժամ Կրոնոսն յաստեղատունն մտանիցէ, թագաւոր մեռանի։» Տե՛ս։ ԵԶՆ. ԳԻՐՔ Բ· ԺԳ· ԺԴ·։

— Նաև «Յորժամ ակն մարդկան խաղայցէ, բնական ազդեցութեամբ վասն ըզնորոգ ոք տեսանելոյ լինի նշանակ։ «Յորժամ յերանս կամ յայլ անդամս միս խաղայցէ, նշանակ հեծանելոյ ուրուք է· կամ հանդերձս ազնիւ ագանելոյ, կամ սիրելւոյն պատահելոյ, կամ գան ըմպելոյ։ «Յորժամ ոտն կծիցէ կամ ձեռն, մին՝ ճանապարհի գնալոյ նշանակ է կամ անձրևի, և միւսն՝ առնլոյ ինչ յումեքէ կամ տալոյ։ «Փնչելն՝ և լեզուին կծել, և ունկանն հարկանել, և ըմբանին կծել 'ի բնական ազդեցութենէ անտի են· զոր տնկեալ է Արարչին յանդամսն· զի յորժամ 'ի խորհըր-

դական զգուշութենէն զերծիցի , բնական ազդեցութեամբն պատսպարեսցի ։ Իւ յօրանջելն և ձգտելն կարծեցին ոմանք՝ ՚ի դեւէ ․ և փնչելն՝ ՚ի հրեշտակէ ։ » Ճա ։ ԵՋՆ․ ԳԻՐՔ Բ․ ԺԹ ․ ։

Յուսոց և արմատոց նկատմամբ ։

Ի Ս․ Գ․ Նարեկացւոյ մեկնութենէ Երգոց երգոյն ։ « Զկինամոմոնէ , ասեն , թէ ՚ի սաստիկ եռանդն կաթսայի մատչի , չիջուցանէ զջերմութիւն եռացման ջրոյն որ ՚ի նմա ․ և եթէ ՚ի յոյժ ջերմին բաղանիս մտանէ , առ ժամայն իսկ զովացուցանէ ըզտունն ․ և այլ այնպիսի իրս անհաւատալի լսողացն ասեն ․ թէ մարդ որ ՚ի քուն լինի , և կինամոմոն առ նմա իցէ , և որ հարցանէ ոք բան ընդ ննջեալն , պատասխանի առնէ ․ բայց միայն ՚ի բերանոյն վերայ դիցէ զկինամոմոնն ․ և ՚ի քուն լինի , և արթուն է ․ և պատասխանիս բանիցն հարցանողացն առնէ ․ ՚ի քուն թուի , և արթուն է » ։

Ի ձեռագիր մատենէ ։ « Մեռոնի ծաղիկք ․ այս է զօրութիւն ։ Բայց պարտ է յայտնել զէութիւն չորիցս ծաղկանցս , թէ ուստի՞ է , կամ ո՞րպէս գտանի , և ո՞րպէս ունի զօրութիւն ։ « Հերիկն՝ յԵթովպիայ գտանի յեզր Փիսոն գետոյն , և ունի զօրութիւն զդևս հալածելոյ ՚ի մարդկանէ ․ և այս է յանդիմանութիւն դիւաց ․ որ անկար խոտովս խորտակի ։

« Ոսկեղէգն՝ նորասքանչ և անուշահոտ ՚ի Սինա լերին գտանի ․ այլ և զցաւսն բըժշկէ ․ մանաւանդ զքոս և զըլխոյն « Ակ-

Տեառն 'ի Թերքաթոյ գաւառին · աքանչելապէս և զարմանալի · զի յորժամ ոք 'ի խոր քնոյ ժինջ և 'ի վերայ շրթանց դնեն, զամենայն խորհուրդս սրտին ասէ, և ոչ գիտէ · և յորժամ յեռանդ ջուր հատուցանի՝ զմոռա-ցուցանէ ։ « Ջմուռն 'ի Բաբիլոն գտանի · խնկի նման է · որով մարմին թագաւորաց օծանին, զի անապականս պահեսցէ · և զի դրան է քերել զերդ · յորժամ 'ի քաղաքս խառնեն և մարդոյ տան, թմբրէ · զոր և Երեմիաս աղաղակեցին ։ « Այսքան ծառայիկ ցառագաթեալ ջուրն այն յօծումն քահանա-յից և թագաւորաց ։ » են ։

Ի գրոց Եզնիկայ ։ « Ի բանջարս է ինչ՝ որ տանձենին ստանայիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի ։ « Ջմանրագորն եթէ ոք ըսկ ուտիցէ, սատակիչ է · և խառնեալ ընդ այլ սպե-ղանս, քնածու լինի քնահատից ։ « Եւ դեղագործ՝ եթէ 'ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, վնասէ · և եթէ զջուրն քամեալ ա-նապակի ըմպիցէ ոք, սատակի · և եթէ ըմ-պերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, 'ի ցան-կութենէ արգելանէ ։ « Եւ կանեփուկն թուփ ինչ է · որոյ սերմն նորա դեղ է · և նոյն դարմանեալ կասեցուցիչ ցանկութեան ։ « Եւ մեղրախոտն, որ տանձենին 'ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նոյնպէս զմարմն հի-ւանդացեալս հնարին բժշկել հատանելոյ ։ « Եւ կաղամախչական ազգ ինչ՝ տանձենին սպա-նող է · և խառնեալ ընդ այլ դեղոց՝ մարդ-կանց դեղ է, բուժիչ 'ի մահուանէ ։» ։

Զանազան քարանց կամ ականց նկատամամբ · յԱռաքէլ Պատմագրէն ։

«Ադամանդի խասեաթն թէ հարցանես, նա մարդն որ ունենայ մատանեայ լինի, ալմաստն տանի զունանգն · ու թագաւորաց քաղցր երեւնայ · ու խօսքն ղաբուլ լինի · 'ի չարէ չվախենայ · փորցաւութիւն չքաշէ · մոռացկոտ չլինի · տայիմ ֆառահ կենայ »։

«Ասացած են իմաստունքն թէ՝ ով որ 'ի հետն Լալ պահէ, ամէն մարդոյ աղէկ է · միջնացաւի լաւ է · մարդկան աչաց աղէկ երեւնայ · վատ երազ չտեսնու · որոց հետն պահել չէ լաւ, գիտաց այլ աղէկ է · 'ի մաջունն խառնեն՝ ուրախ առնէ · երեսի դոյնն կարմիր լինի · միտն բանայ »։

«Զմրուխտն՝ թէ մարդոյ որ զէհիր տուած լինին, երկու ղիրաթ ռամանի ուղտի կաթնով տան, նա ազատի Աստուծով · քրտունք 'ի դուրս ձգէ · և թէ վիշապ օձ տեսնու՝ 'ի դիմացն բռնէ, օձու աչքերն պատառի · թէ կարիճ կամ օձ խայթէ, վարդեջրով հմայեն, 'ի վերայ քսեն, ողջըննայ · ցնորք չքաշէ կամ հոգայ »։

«Մարգարիտն՝ խասեաթն սուր է ու թաց է · չաւքօուրին աղէկ է՝ աչաց եռալուն · թէ ալաճայ լինի մարդ՝ աղկեն ու քացախով քսեն, ողջըննայ Աստուծով »։

«Փանզահրն 'ի հետ պահել շնորհաւոր է, ծոմօլի հոյոնի ասեն · որ չարաթն վեց ղիրաթ հարնէ 'ի վերայ քարին՝ ուտէ, իւր ժամանակն հարիւր և քսան տարւոյ լինի · ցաւ չտեսնու · ով ուտէ կամ 'ի հետ պահէ՝ սրտով լինի · վատ աչք չբռնի · օձ կամ

իժ չխայթէ. ով որ ամեն օր կէս տանկ ուտէ, խլսի յամենայն չար վտանգէ, և յամենայն մահացու դեղոյ. օգտէ ամենայն գազանահարի, և զչարութիւն խափանէ»։

«Մարջանն՝ մռուացկոտին աղէկ է. գըլուխն չժամի. սրտի ոյժ տայ. 'ի թուլթիայն խառնեն՝ աչից աղէկ է»։

«Աղեղն՝ չարկամին յինքն հայիլ աղէկ է. տղացկանի հետն՝ աղէկ է»։

«Յեաշմ՝ ով հետ չպահէ՝ յայն տեղն ('ի Չին) էհտիպար չեն ըներ. ով հետ պահէ, ժաժկ չի լինի. մարդոյ սիրտ չի թըռնայ. կայծակի աղէկ է։» եւ։

Հարկ չկայ օտար ազգաց պատմութեանց և ժողովրդոց դիմել այսպիսի օրինակներ հաւաքելու համար, որով լի են. մինչև իսկ Աստուծոյ ժողովրդեան պատմութիւնն, Աստուածաշունչ, խորշած չէ իր սրբազան էջերու մէջ զետեղել զանոնք տեղ տեղ։

ՇՆՈՐՀՆԵՐ

Երեք փշուր գրքոյկներ 'ի լոյս ածինք 1874—75 թուականին, որք համակրութեան արժանացան այնքան, որքան չէին արժանի։ Իբր 'ի քաջալերութիւն մեր տկարութեան ընդունելով ինչ որ խրախուսական և գովասանական խօսքեր, նամակներ, և հրապարակական գրուածքները տեղի ունեցան թէ' խմբագրաց և թէ' մասնաւորաց կողմանէ. ամենեցուն բարեացապարտ' իմ սրտագին շնորհակալութիւնս կը ձօնեմ, սկսեալ Սիօնէն, Արև. Մամուլէն, Կ. Պօլսոյ համայն Հայ լրագիրներէն' մինչև Թիֆլիզի Մեղուն և Մշակի Մէլիքզատէն, որ մկրտեցին, օծեցին իրենց զգացման աւիւնով և շնորհաց իւղով մեր երախայ գրիչը։

Համբուրեմ զաջ Ամենապատիւ Տ. Ներսէս Ս. պատրիարք հօր, որ իւր միւռոնահոտ մատերով հոտաւորեց իմ անհոտ «Շուշանս»։

Համբո՛յր Պատկանեան տէր Գաբրիէլ ծերունի հօր, որ իւր նարդոսածոր գրչով իւղ անոյշ և ցօղ սրսկեց նոյն վայրի «Շուշանիս», և զուարթացոյց և բուրեցոյց զայն։

Համբո՛յր Հ. Ղ. Ալիշանեանի, որ իւր հայրենաշունչ շնորհաց արժանի ըրած է իմ անշնորհ «Գրոցն ու Բրոցն»։

Ողջո՛յն Պ. Յ. Շահնազարեանին, որ իւր ոգեւանդ խանդով և բարձրաթռիչ մտքով ոգևորած և թևաւորած է նոյն «Գրոց ու Բրոցիս» քօղեալ և թաղեալ իղձեր ու մաղձերը։

Օրհնութիւն և գոհութի՛ւն Աղայ Յովսէփ Իզմիրեանին, որ 'ի գլխ և 'ի գանձ հանդիսացաւ ինձ Մեկենաս. գնահատեց իմ գնոց անարժան «Հնոցն ու Նորոցն», և լոյս ու խրախոյս ընձեռնեց նոր նոր վաստակոց, ոչ միայն ինձ, այլ և ամեն գրասիրաց լինիլ մրցանակող։

Ջորս յանուանէ շնորհակալեցի, նոցա շնորհաձիր գիրերը կը շարեմ աստէն, որպէս զի նոցա պատուականութեամբ գրքոյկս պատուի, նոցա համով Մանանայս համեմի։ Հօսկ՝ իմ մէկ ուղերձն կը կցեմ։

. . . Գարեգին Վ. Սրուանձտեանց.

Աիրելի եղբայր 'ի Քրիստոս.

Ինձ մատուցած «Շուշանդ» ընկալայ. անմահն Եղիշեայ դպրատանէն քաղելէիք. ճանչցայ և համբուրեցի զցօղ, որով ցօղեալ

էր Ձեր փունջն․ հառաչեցի Եղիշէի և Ձեր՝ որ անոր թոռն էք՝ սրտերէն ելած հառաչանքով․ օրհնեցի զՁեզ՝ որ այսպէս պարզ ու գեղեցիկ թարգմանեցիք զՄեղուաչութն Եղիշէն․ և աղօթեցի՝ որ Հայոց խօսնակին զգացմունքն՝ և նորա հռչակած Հայ խոստովանողաց և արիագունդ նահատակաց սիրտն ու ոգին 'ի Ձեզ հանդչին ընդ միշտ․ և զչունչ յետին՝ Աւարայրի սուրբ դաշտին հաւատարիմ քրիստոնէական մշակն լինիս 'ի ցնծութիւն և 'ի միխթարութիւն հոգւոյ մերոյ և ամենայն Հայաստանեայց ։

Աղօթարար

Պ․ Կ․ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1875 Յուլիս 12

Պատրիարքարան Հայոց

․․․ Գարեգին վարդապետ․

Սիրելի Ազատուածային Հոգւոյն․

ԶՇուշանն Շաւարշանայ՝ կապեալ 'ի փունջ՝ ընկալայ 'ի զմայլումն երիթացեալ հոգւոյս․ որ 'ի բազմաց հետէ զրկեալ է 'ի հոտաւութենէ, յապղեցութենէ սառնամանեաց․ այլ անուշութիւն բուրմանց

նորին, և անարատ սպիտակութիւն լուսա-
տեսիլ փայլմանց, յորս նիշք բոսորայինք
'ի կայլականց արեան մերոց խնկաւորեալ
դիւցազանց, որք սկզբնաւորեցան Վար-
դանաւ և վերջացան Գարեգնաւ, նման
երկնատեղաց ցօղոյ՝ դիւրաքանչիւր թեր-
թիկ նորին որպէս յակնթօք գոհարաց զար-
դարեալ, նորոգեաց որպէս արծուոյ զման-
կութիւն իմ. և շարժեաց նախանձ՝ ագահիլ
առ մէն մի ակն յեռեալ 'ի նոսին:

Հրաման տուր՝ ե՛րիտասարդ արդիւ-
նարար, զառամեալ և անսպիտանացեալ
ծերոյս, ձօնել համբոյրս ջերմիկս այնոցիկ
մատանց, որ 'ի վերայ Գրոցին և Բրոցին,
Հնոցին և Նորոցին, զայս նոր փունջ Շա-
ւարշանեան Շուշանին բոլորեաց, և հայցել
յամենապարգևն շնորհաց Վերնոյն՝ կազ-
դուրել զնոսա 'ի պէտս կարեաց ազգիս
և եկեղեցւոյ նորա. և ընծեռել նոցա զայն
զօրութիւն, զոր եդեալ էր 'ի թաթն երե-
ւեալ յակումբ խրախճանացն՝ որ 'ի Բա-
բիլոն:

Հա՛յր սուրբ, դուք Շուշան Շաւար-
շանայ արարեալ էք զՎարդան և զընկերս
նորա, և ընտրեալ էք զմասն բարի, որ
և ո՛չ բարձցի 'ի ձէնջ, այլ ծերունիս զա-
ռամեալ՝ Շուշան Շաւարշանայ արարեալ էր
զՅանդուխտ, զՊատարագն նորա նկարա-

գրելով յանձուկ դաստառակի ։ Արիացի՛ր՝ միա՛կդ 'ի բազմաց ականկալեալ , և ուրախ արա՛ ղծերոյս ղառամելոյս թախծեալ սիրտ , որում անդադար լսելի լինի ձայն հոգւոյն , թէ՝ Նմա պարտ է աճիլ և քեզ մեղմանալ ։

Միամ . . .

Ծերունի Գաբրիէլ Պատկանեան .

1875 Յուլիսի 25
Ս. Պ. Բուրգ .

Ս. Ղազար , 16 Յունվ. 1875.

. . . Տէր Վարդապետ .

Քաղքիդ լրագրաց մէջ նախ կարդալով Ձեր Գրոց և Բրոց ծանուցումն՝ գրեցի առ թղթակիցս խաւրել ինծի օրինակ մը . բայց իրմէ առաջ ընդունեցայ Ձեր իսկ ընծայածը , որով կ'իմանաք թէ ինծի քանի՛պատիկ հաճոյ եղաւ , և ո՛րքան չնորհակալ եմ , թէ՛ ընծայելուդ և թէ՛ ընծայիդ . որ աւելի հաճոյացաւ երբ կարդացի , և երբ իմ ընկերակիցքս ալ նոյն հաճութեամբ կարդացին ։ Շատոնց իմ երթևեկ փափա-

քանացս մէկն ալ էր լսել 'ի զանազան կողմանս Հայոց աշխարհի զտեղական աւանդութիւնս և հաւատարմութեամբ նշանակել. և ահա նոյն է Ձեր ըրածն ալ. և ուրիշ քանի մ'ազգասէր վարդապետաց, զոր յիշէք, և որոց հաւաքման հրատարակութեանց ալ սպասեմ փափաքանօք, և արդէն շատ ալ սպասած եմ, որովհետև տարիներով առաջ խոստմունք եղած էր՝ յազգային լրագիրս՝ այդպիսի հրատարակութեանց, յորոց մէկն ալ էր Ղևոնդ վարդապետի հաւաքեալ Յիշատակարանք Ձեռագրաց։

Ձեր հրատարակեալ աւանդութեանց մէկ մասն արդէն ծանօթ էր ինձ՝ մեր Հ. Ներսէս վարդապետի ուղևորութեամբ, բայց գտայ և նոր գրոյցներ Ձեր քով։ Միայն թէ ես այդչափով գոհ չեմ ըլլար, աւելի մեծ Բրոցներ կ'ուզեմ որ Գրոցն ալ աւելի ընդարձակ ըլլայ։ Ունէի քանի մը հարցունելիք ալ, այլ գրքոյկդ ուրիշի քով ըլլալով՝ մնաց ուրիշ առթի։ Միայն յիշեմ որ յ'85 երես երգ մը յիշես, փափագէի այդոր օրինակն ունենալ։ — Ց'82 երեսն ալ յիշէք Կապուտան ծով մը. իմ գիտցածս նոյն պէտք է ըլլայ ընդ Ուրմիայ ծովուն։

Փափագէի ևս որ Դաւթի պատմութեան մէջ գրուած քանի մը բառից ծանօթու-

թիւն ըրած ըլլայիք, որք ինծի պէս 'ի պանդխտութեան ծնած և ապրածի անծանօթ են ։

Ընդ թղթոյս խաւրեմ Ձեզ յիշատակ գրքոյկ մ'ալ (1) զոր հաճեցէք ընդունիլ․ և ողջ լերուք ։

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշանեան.

1875 Մարտ 4, Կ. Պոլիս
Մէքթէպի Սուլթանի.

... Գարեգին վարդապետ․

Ձեր Գրոց ու Բրոց գրքոյկն է այն ազգի գրութիւններէն՝ որք շատ քիչ անգամ 'ի հրապարակ կ'ելլեն, և որք իրենց պատուականութեան համար միշտ փնտռուած ու կարդացուած են ։ Ընթերցողն ձեր գրքոյկին մէջ չգտներ միայն վէպեր, զորս պարզ ու կարճ կերպով կը գրէք կ'անցնիք, բայց 'ի պայծառութենէ մի որ ունի շատ մը նուրբ և կորովի դարձուածքներ, կը գտնէ նա ամեն տեսակ նիւթոց առատութիւն մի՝ իր ուշադրութիւնը գրաւելու արժանի ։ Երկրաբանին կը ցուցնէք իրեն անծանօթ

(1) Ներսէս Շնորհալի և Պարագայք իւր ․

բոյսեր․ Աշխարհագիրին ընդարձակ ու ցանկալի տեղեկութիւններ կուտաք սիրելի երկրի մի վրայ, որոյ ոտքերդ կոխեր է հողն, ու բերանիդ շնչեր է օդը․ Հնախօսին սիրտը եռանդ կը ձգէք խուզարկութիւններ ընելու այն երկրին մէջ, ուր շատ քաջութեան հետքերն ընդ հողով ծածկեալ՝ դիպուածով միայն յերևան գան մերթ ընդ մերթ․ իսկ Բանաստեղծին կը վառէք կը բորբոքէք սիրտն ու խանդը, երբ չնորհալի առասպելները քաղելով բնակչաց շրթներէն մեզ կը պատմէք։ Բայց ի՞նչպէս յայտնեմ Ձեզ այն ազդեցութեան ոյժն ու սաստկութիւնը, որ Գրոց ու Բրոց առջի տողէն սկսեալ մինչև յետինը կ'ազդեն ազգասէր սրտից վրայ։ Բանահիւսն մինչև ցարդ յուսակտուր ջայլեր արձակելով իր աւերակուռ աշխարհին վրայ չընդարձակէր, չսաստկացնէր 'ի մեզ ա՛յլ զգացմունք մի, բայց միայն ծանրակիր անյուսութիւն մի․ Դուք՝ թէև նման անոնց ունիք իբրև առարկայ ձեր խօսից զհողն ու ջուրն այն տխուր երկրին, Դուք տարբեր ազդում մի կը գործէք կրծքի և երևակայութեան վրայ, վասն զի յանդիման կարծես մեր աչաց կը բերէք Դուք կը դնէք գրութեամբ մի կարի յոյժ սիրելի երկիր մի՝ իր բոլոր աւերակներովն, ուր միանգամայն վեհա-

գլուխ սարերու ստորոտն փռչւող հետ խառն տեսնելով սնոտապաշտ ցողուններ ու թաւ-րուննակներ, մեր կենդանի յոյսեր, արտմե-լու փոխան կը քաջալերուին ու կը զուար-թանան ։ Այսպէս ես, և հաւանականա-բար շատերն ալ ինձ նման, երբ կը կար-ծէի թէ Հայերն Հայաստանի մէջ ընկճուե-լով հալածական թշուառութեանց տակ, կորսուած ըլլային իրենց հարանց դրոշմն ու բարբառը, և ասոնց հետ մէկտեղ ամէն մտաւորական գոյութիւն, սքանչացած կը կարդամ այն սիրուն առասպելները, ուր կ'ըսուի թէ «Հայաստանի լճակներ և գե-տերը հրեղէն աղջիկներ ունին իրենց ալեաց մէջ» ։ Չգիտեմ ասո՞նք աւելի գեղ ունին արդեօք թէ Յունաց Նայեադք ։ Երևակա-յութեան շատ ընտիր մի ծնունդ է այն Մշոյ մշուշին բացատրութիւնը․ «Ահա՛ չքնաղ Աստուածուհի մի, որ կը լոգանայ, ահա՛ սրտատրոփիկ պատանիներ լերանց բարձանց վրայ խարոյկ արկանել կ'ուզեն կրակին լուսով դիտել այդ գեղեցկութիւ-նը, որ սրամտած հրաման կուտայ իր աստուածային իշխանութեամբ մուայլնե-րու՝ մշուշներու՝ իջնալ պատել, իբր պա-տիժ, այն անոյշ ջրերն ու հողերը» ։

Միտքս իրաւապէս կը յափշտակուի երբ կը կարդամ այն խորհրդային բանաստեղ-

ծութիւնը, որ մեզ իբր «մի հրաշալի դի-
տարան կը ցուցնէ վարագայ Սարը, ուր
ելլողը կը տեսնէ եղեր թէ ի՞նչպէս օրուան
թագաւորն ցերեկին՝ և թագուհին ալ
գիշերային՝ իր աստղաճաճանչ նաժիշտնե-
րով լուելեայն, ամչկոտ, ու քօղ ձգած
երեսին, կ'ընթանան երկնից գաւառնե-
րէն․ թէ այն աղօտավառ լոյսերն որ կը
տեսնուին Յարդգողին մէջ՝ ի՞նչ են»։ Ո՞ր
խօսքն աւելի յարմար է արևուն զօրու-
թիւնը իմացնել տալու քան այս խօսքը․
«Այդ լերան լուսեղէն ճայռթներով ճառա-
գայթի պէս կը զարնեն. ԼԵՌԸ ԿԸ ՑԱԾՆԱՑ,
ԱՄԷՆ ՍԱՐԵՐՆ ԻՐԵՆՑ ԳԼՈՒԽԸ ԿԸ ԽՈՆԱՐ-
ՀԵՆ»։ իսկ մրրկի գոռում գոչումը, փայ-
լակը, կայծակը և ծիածանը՝ մէկմէկ մտա-
ւորական վսեմ յղութիւններ են։ Ասուպ-
ներու տեղափոխութիւնն այնչափ չնորհալի
բանաստեղծութիւն մի կ'երևայ ինձ իր
պարզութեան մէջ, որ անհնարին է
զգացմանս աստիճանը յայտնել ձեզ։

Միևնոյն ժամանակը որ գրիչնիդ հա-
րևանցի դասոնք գրելով կ'երթայ յառաջ,
կաթիլ մի մաղձ հոս և հոն թափելով կը
սահի կ'անցնի։ Չկայ թերթ մի, որ՝իր տխուր
մասը չունենայ զգացող սրտին համար, և
եթէ այդ ստորագրութեանց մէջ երբեք
երբեք կարճ բացագանչութիւն մ'ալ տես-

նուի , բաւական է ան 'ի վեր 'ի վայր յուզելու միտքն ու սիրտը ։ Ո՞րչափ խորունկ կը հնչէ սրտից մէջ այս խօսքը ․ «Ո՛հ, միթէ կարելի՞ է գերեզմաններն ալ կրօնափոխ ընել» ։ Է՛հ, միթէ մնա՞ց ուրիշ բան մ'ալ, այդ քարերուն սրբութի՞ւնն ալ կողոպտել կ'ուզեն ։ Լոկ անուն մի , որով կը պարծենանք , տեսէք ահա եղծանել , փոխել կ'ուզեն զայն ալ․ «Քիւրտիստան կը կոչեն առաւել անգթութեամբ քան թէ անգիտութեամբ այն երկիրը , որ տակաւին մինչև այսօր և մինչև յաւիտեան Հայաստան է ու Հայաստան պիտի մնայ» ։ Ո՛հ, որչափ ալ դժնդակ է այն ցաւը , զոր կ'զգայ Հայու սիրտն իմանալով՝ որ իր եղբայրք կը նուիրեն իրենց հանճարը օտարին , թէ «Քրտերու և Տաճկաց կեանքին վերաբերեալ խաղերէն ալ շատը՝ կը յօրինեն Հայեր»։ Թո՛ղ, թո՛ղ կարկամ մնան այն ատեն շրթունք ։

Աշխարհագրական տեղեկութիւնները շատ թանգագին են մեր ազգաց առջև․ սակայն կարծեմ թէ ինչպէս ինձ, նոյնպէս շատերուն ալ շատ փափաքելի է ունենալ աւելի ընդարձակ տեղեկութիւններ «Հասնանցի կամ Մըմըկանի Քրդից վրայ որ Մամիկոնեան տունն ենք» կ'ըսեն․ նմանապէս Պըլըգցւոց վրայ որ «Հայ եմք եղեր, կ'ըսեն,

ու մեր ազատութեան համար զէնքը չձգեցինք, հաւատքը փոխեցինք»։ Դարձում մի, որ ազատասէր սիրտ մի չկարէր շատ պարսաւել։

Մեծ զարմացման մէջ ինկայ, երբ կարդացի այն տողերը ուր կ'ըսէք թէ «Կինճ լերանց բնակիչք 'ի հնուց մինչև ցայժմ անկախ վիճակ մի ունին, թէ Սասնոյ և Խոյթայ ներկայիս բնակիչք իրենց զէնքն ու վառօդը իրենք կը շինեն, և որոց կանայք իսկ զէնք կը կրեն»։

Հոս կանգ կ'առնում, և առանց քաղաքավարութեան ստապատիր ձևերը գործածելով խօսքիս մէջ, կ'աղաչեմ ձեր ազգասիրութենէ տալ ինձ մի քանի ուրիշ տեղեկութիւններ այս երկիրներուն մարդոց կենցաղավարութեան վրայ. «Հարկ է մեզ զմեզ լաւ ճանչնալ», նոյնպէս և մեր երկիրը ու իր այլ և այլ ազգերը։ Չեմ նայիր որ Դուք ամենևին զիս չէք ճանչնար, նոյնպէս և ես զՁեզ. մի գրութիւն կամ մի տող գիր կամ մի խօսք միայն բաւական է գրողին սիրտը ընթերցողին առջև գրքի մի պէս բանալու որ մէջը կարդայ։

Ու այժմ այսչափով գոհանալով կը մնամ յարգանօք.

Յ. Շահնազարեան.

4/16 Մարտի 1875, Ս. Պետերբուրգ.

. . . Հա՛յր.

Ի վերջարանի Ձեր սպատուական գրքոյկին որ կոչի «Հնոց և Նորոց»՝ ուրախութեամբ սրտի կ'ընթեռնում որ դուք մտադիր էք շարունակել Ձեր հրատարակութիւնքը, եթէ ազգայինք մեր դրամօք քաջալեր հանդիսանան Ձեզ առ այդ։

Արդ որպէս համակրող Ձեր արդիւնաւոր վաստակոց՝ ես ևս կը ցանկամ նոցա տպագրութեան ձեռնտու ընթերցողներէն մին լինել և յօժարութեամբ կ'առաքեմ սոյն 200 ֆրանկի մուրհակը, զոր կ'խնդրեմ ընդունել իբրև դուզնաքեայ՝ բայց անկեղծ նպաստ վասն յաջողութեան Ձեր փութաջան երկոց և իբրև համեստ նշան յարգանաց առ անձն Ձեր մեծարոյ, որոյ հայրական օրհնութեանց

Միամ միշտ կարօտ

Ցօլէֆ Իւշիբեան.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Առ

Մեծապատիւ Աղայ Յովսէփ Իզմիրեանց․

Եօթանասնամեայ ծերունւոյ մը՝ որ արմաւենի կը տնկէր, կը պատահի Տաճկաց Սուլթան Մուրատն յԱսորեստան ։

— «Կը յուսա՞ս, ո՛վ ծեր, քառասուն տարի եւս ապրիլ եւ տնկածիդ պտուղը վայելել», կը հարցունէ Սուլթանն ։

— «Ապրիմ չապրիմ՝ Աստուած գիտէ․ բայց որովհետեւ ուրիշներու տնկած արմաւենիէն վայելեցի ես, պէտք է այլոց համար ալ ես տնկեմ», կը պատասխանէ ծերն ։

Սքանչացած այս զրուցուածքին, եւ աշխատութիւնը քաջալերելու նպատակաւ՝ ափով մի ոսկի կը պարգեւէ ծերոյն Սուլթանն, որում կը փոխադարձէ տնկողն այս ոսկեղէն խօսքը ։

— «Տէ՛ր, ահա տնկածիս պտուղն այժմէն իսկ վայելեցի լիուլի» ։

Ծերոյն պատահումն պատահեցաւ ինձ։ Նայելով իմ փանաքի երկոցս, Ձեր ըրած քաջալերն լիուլի վարձատրեց զիս․ եւ արդարեւ արքունական բարձր գաղա-

փարով մի ընդհանուր գրիչները մրցանակել կ'այցելէք դուք ահա Ձեր միւս իմն վսեմ Նամակաւ, զոր հրատարակեց Մասիս պատուական լրագիրն իւր 1661 թուահամարաւ :

Ես կու գամ այժմ շնորհակալել ձեզ ոչ միայն իմ անձինս կողմանէ, այլ յանուն ազգային գրական կաճառոյն, որոցմով 'ի ձեր խրախոյս մեր հայրենեաց քարերը քնարի պիտի փոխուին, և բրիչները գրչի։ [Ո՛վ իմաստուն վաճառական, որ զՀայս և զՀայաստանեայս գլխովին կը գնահատես։

Ներեցէք ինձ, որ այս առթիւ իմ շնորհակալիքս յայտնեմ նաև այն ամեն պատուարժան Ազգայնոց, որ զիս քաջալերեցին դրամով։ Շնորհակալի՛ք Խմբագրաց, Բանասիրաց, որք 'ի գիր և 'ի բան խրախուսեցին զիս, քան զոր չէի արժան. և ես մեղայ, զի չէի երբէք յուսար։

Չէի յուսար, վասն զի գրել գիտցողը՝ մուրացող է մեր մէջ. և ոչ ոք է՝ որ օգտակար գրուածք մը հրատարակեց ու պարտուց մուրհակ մը չստորագրեց, արհամարհանքներ չկրեց։ Անփորձ չէի ես, և իմ բաժինս ալ ստացած եմ բազմիցս։

Բայց արդ կ'առատանամ յուսով. կ'առատանամ, վասն զի այնպիսի մութ անդունդներէ ձայներ լսեցի կենաց, ուր

գերեզման կը կարծէի · այնպիսի սրտերէ ուղերձներ ընդունեցի , զորս օտարացած կամ դիակնացած կը կարծէի · այնպիսի անձերէ համակրանք և թերկրանք գգուեցի , որոց զգացմունքը ցամաք էին ։ Գիտէի, բայց ինչպէս շատերը խօսեցան ինձ թէ՝ մենք չէինք կարծեր որ Հայաստանի մէջ Հայոց կեանքը, արարքը, աւանդք , բանք , և այլն գտնուին մինչև այսօր , նոյնը և ես՝ չէի կարծեր՝ որ 'ի հիւսիս և 'ի հարաւ գաղթեալ Հայոց մէջ, արդի քաղաքակըրթութեան գաղափարով տապակուած ազգայնոց մէջ գտնուէին անձինք , որ զգածուէին հայրենեաց սիրով , համակրուէին հայրենեաց ձայնին ։ Թէպէտ ճպուռի մը երգեր էին իմ Գրոց Բրոցն , ու Հնոց Նորոցն , բայց գտած ընդունելութիւնը մեծ եղաւ ։ Մեծ անոնք էին՝ որ զայն մեծարեցին ։

Իսկ ի՞նչ պէտք է ասել ձեր մեծ գաղափարին համար , որ ընդհանուր գրասէրները կը վարձատրէք ։ Ո՞վ էք դուք , ի՞նչ հոգի կը կրէք 'ի ձեզ ։ Կը յիշեմ զվաղարշակ , որ իմաստուն օրինաց և փառաւոր յաղթանակաց հետ գերազանցեց մտածութեամբ մը , բարձրացոյց և վսեմացոյց իւր համբաւը , սխրալի և անմահ կացուցանելով իւր անձին հետ՝ նաև հայոց ար-

մատոյն և պտղոց՝ Հայկայ և Հայկազանց յիշատակները հանել տալով 'ի լոյս, որպէս զի հասկնայ թէ «Ո՞յք և ո՞րպիսիք իցեն լեալ յառաջ քան զինքն Հայաստանեայք»։

Այո, հա՛րկ է որ մենք զմեզ քաջ ճանաչենք, մեր հայրերը ճանաչենք, մեր հայրենիքը ճանաչենք։

Այս վսեմ մտածութիւնն էր Սահակայ Բագրատունւոյն առ Խորենեան ծերունին։ Այս բարձր միտքն ունեցաւ Վռամշապուհ, օժանդակելով Հացեկեցւոյն բանին և Նպատակին. և մէկէն միտք, միւսէն ջանք, մէկէն գանձ, միւսէն վաստակ՝ միանալով ծաղկեցուցին Հայկազանց դաշտերն ու հովիտները. արձակեցին սրտի և խորհրդոց կապանքները. լեզու, պատմութիւն, կրօնք, երգեր աւանդեցին մեզ, որոցմով ապրեցանք ու կ'ապրինք իբրև ազգ և իբրև ժողովուրդ։

Հա՞րկ է յիշել Մեկենասն և Մեկենասներն որ յօտարս և 'ի մերս, 'ի հինս և զարդիս. հա՞րկ է ճառել այս անկշիռ և անկորուստ շահուն ու անփշրելի գահուն նկատմամբ, որոցմով պանծալի ու անմահ եղած են ազգերն և ազգ մեր։ Այս հոգին, այս ճանաչումը մեր օրուըս ալ ահա պայծառ կը փայլի դարուս և լուսաւորեալ աշխարհի ազգաց էութիւնը հասկցող և

անոր հսկող ու մշակող գաղափարաց մէջ։ Կ՚լինան , այո՛ , Թագեր , կը փշրին սուրն ու սուխն · բայց այս գաղափարը կը ծաւալի ։ Թիւլլըրիի կայսրն անձնատուր կը լինի , Ակադեմեան կը շարունակէ · հողեր կը գրաւուին , միտքերն ազատ կ՚ընթանան։

Ո՞վ և ՚ի մեզ մտածէր քեզ պէս , Թողուլ Թօթափել մեր գրական հրապարակին փուտ և փուչ խնդիրները , սին վէճերը , կեղտոտ կեղտոտ մէկ մէկու երեսին Թքնելը , ազգն և ազգի անհատները յիշոցներով նախատելը · իսկ աւելին քան զայս՝ ոչինչ ։ Է՛հ , այսպիսի ազգի մը ոչ միրաց դեղ են դոքա , ոչ պատուոյն վայելուչ · դժբաղդաբար քիչեր կան ազնիւ՝ ծառայող գրական վեհ Թագաւորութեան ՚ի մեզ։ Ու առ այս մեծ եղաք դուք , որ գրեթէ զառաջին հանդիսացաք , իբրև զօրագլուխ առաքինի, դրօշակ պարզել, մարզել և պսակ բաշխել կամակար և մտադիւր զինուորողաց , հայրենի յիշատակներն և աւանդները սրբելու և փրկելու ծառայողաց , գրագէն կամաւորաց ։

Ինչպէս ընտիրն և լաւն վարձուց ու մրցանաց արժանի կը սեպուին գրուածքները , երանի՛ Թէ լինէին այնպիսիք , որք սահման դնէին պատիժ տալ յոռի և մոլի գրիչներուն ։

Քաբիրացի ծեր Դիւցազնոյն կը հայէր և կը հիանայր, որ ողջոյն Իտալիոյ և իւր ազատելոյն Հռովմայ դամբանները, պսակները, դրուագները, ոսկիները, պատիւները՝ անձին նուիրեալ, որոց արժանի էր, կը վերադարձընէր ժողովրդեան. և ինքն Տիբերեայ Ջրոյն կը նուիրէր իր ուշն ու խիղճը, կրկտելու և յարև հանելու դարաւոր ալուց խորերը ծածկուած Հռոմուլոսին և յաջորդաց յիշատակները, ժողովրդեան և ազգին անեղծ փառքերը: Կա՞յ արդեօք ատեղաց ներքև գործ մը, որ 'ի կշիռ գայ այսպիսի մեծագործութեան մը:

—Ի՞նչ նպատակ ունէին այսպիսի հոգիք:

—Կենդանութեան և անմահութեան գաղափար ընծայել ազգաց, թէ՝ Ազգ մը չմեռնիր —:

Հողերու խաւերը, ջրերու խորերը, շինից փլատակներն ու աւերակները փորփորել և խառնել պէտք է բրչով ու գրչով, և ազգ իւրաքանչիւր՝ իւր նախնեաց անձանց և արարոց ծանօթ առնել. Հայ ազգն մանաւանդ, որոյ հայրենիքը Դրախտին և Ջրհեղեղի մարդոյն բնակադաւառն է եղած, և նշանաւոր դարերով ու արարքներով ապրած: Հարկ է որ մենք զմեզ քաջ ճանաչենք. պէտք է որ ուշադրութիւն և փոյթ նուիրենք մեր անցեալ և ներկայ

կեանքին. բեղմնաւորենք մեր գաղափարը։ Առանձին ճանչցուած հասարակութիւն մ'ենք. ազգ մը ու ժողովուրդ ենք. կայ մեզ լեզու, հայրենական երկիր և անուն, նախնիք, լիճեր, լեռներ, տաճարներ. բայց ո՞ւր են մեր մտաց և հայրենեաց պատմական ու գրական բերքերը։ Շատ քիչ, շատ քիչ։ Կը զարհուրիմ ասել, գրող և ընթերցողներ ունինք բաւական շատ, սակայն անոնցմէ շատերն անգէտ են ազգային հին պատմութեան և ներկայ կենցաղավարութեան. Ներուի ինձ ասել թէ՝ անգէտ են նաև անոնցմէ շատերն, որ այսօր ազգին օրէնսդրի կամ կառավարողի պաշտօնն ունին։

Ուժգին զարկ մը պէտք է սթափեցնելու համար զմեզ մեր խորին թմրութենէն և ափշութենէն։

Հայք հարստահարութենէ փրկելու համար, իրենց ճանչցնել տալ պէտք է զիրենք. Հայք անտարբերութեան գերեզմանի ափէն ետ դարձնելու համար՝ իրենց հայրենական բարբառով կանչելու է զիրենք։ Մասեաց սրինգները հնչեցնելու է իրենց ականջին. ժամ է սրբել մեր քնարից փոշիները. կքել լարել անոնց թոյլ և կտրտած լարն ու թելը. 'ի գործ դնել տպագիր մամուլը, և անոր միջոցաւ հան-

դերձի և հացի պէս տարածել ազգային տաղերը, վէպերը, գրաքննական և հնախօսական գրուածներն ու ասացուածները, անհատական և ժողովրդական կենսագրութիւնները և տեղական նկարագիրները· կրօնական պարզութեան և սրբութեան վրայ, ընտանեկան և ընկերական բարոյականին վրայ գաղափար և ճառագայթ սփռել, որոց պէտքը կարի զգալի է այս դարուս մէջ· բանալ և զգուշացնել Բիւզանդական և Միարարական խաբող և կործանիչ խորերն ու խմորները, զորս Յունաց և Լատինաց քաղաքականութիւնը՝ կրօնի, խաչի, սիրոյ դրօշակով կը բերէր և կը բերէ 'ի մեզ, ապականելու կամ կլանելու զմեզ։

Միտքեր կան մեր մէջ, միտքեր եռանդուն և զեղուն· բայց գրագէտ լինելն՝ աղքատ և աննշան լինել էր մեր մէջ· և ասոր հետևանք՝ լքումն մտաց, փտումն գրեանց։ Գնահատել գրականութիւնը, դաստիարակութիւնը մշակել և պտղաբերել կը նշանակէ։ Դուք, ազնի՛ւ Իգմիրեանց, Ձեր անհատականութեամբ անդրանիկն եղաք դարուս Հայկական մուսայից պսակադիր բազմիլ յաթոռ։ Ո՛հ, անհատները շատ կը գործեն, եթէ գործեն· ժողովքները միայն կը վիճին և իրենց

խորհուրդները կը գահավիժին։

Եկած հասած է Հայոց համար պայծառ ապագայն, եթէ Իզմիրեանցները յառնեն, որք ազգին մէջ գիր և բան տարածելու պանծալի վաճառականութեան ձեռնարկեն։

Այո՛, ազգ մը՝ գրողներէ և խօսողներէ կը զարթնու և կ'ուղղուի, գործողներով կը շինուի, և խորհողներով կը փրկուի։

1875 *ապրիլ* **16**
Կ. Պոլիս.

Սրուանձտեանց
Գարեգին Վարդապետ.

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՄՆ ՈՒ ՀՈՏ

Ա·

Վանայ այգեստանք, որ տեղական բարբառով կ՚ըսուին էջէօփօր, բնութեան և բնակչաց ձեռքով վայելչագեղ զարդարած երանաւէտ վայրեր են . ուր իւրաքանչիւր տունը իրեն կից ունի ծառաստան, այգեստան, բուրաստան· և իր դրան առջևի փողոցին երկու եզերքը՝ առուներ ջրալից, որոց ափերը կարգաւ տնկուած են սաղարթախիտ մանրատերև ուռիներ, տեղ տեղ ևս բարդին, կաղամախ, հացենին, թեղին : փողոցներու մէջտեղը՝ հասարակաց ընդարձակ ուղին, և ճղապարդ ծառոց թևերն ու տերևները այսևայն կողմէն իրարու գրկուած խռնուած, սքանչելի հովանոց կը կազմեն անցորդաց · որոց մէջէն արևու ճառագայթները մանր մանր հողմածըփիկ ստուերու նման կը ծագին գետնին վրայ, անցնողին կամ նստողին գլխուն ու

երեսաց վրայ ծածանելով, ինչպէս խաղաղ գիշերուան մը մէջ Լուսնոյ հով ճաճանչները կը փայլեցնէ զեփիւռը ծովուն ափանց մօտ եղած նոսր ջրերուն ծոցին։ Նոյն ծառերը՝ որոց կանանչ ու դալար վարսեր կ՚օծանին օդին ցօղով և արևուն ջերմով, իրենց արմատները ՚ի գնացս ջուրց կ՚ուռճանան․ ջուրք խոխոջելով, գլգլալով կ՚անցնին, լզելով այն ծառոց ոտները, ոռոգելով իւրաքանչիւրին սահմանեալ այգին, պարտէզն ու բուրաստանը, մատակարարելով առ հասարակ տանց ՚ի լուացումն, ՚ի յըմպելիս և առ ամենայն պէտս։

Այն տեղի առաւօտը՝ ոչ արևածագումն է, և ոչ քաղաքակրթեալ տեղերու պէս՝ արևածագումէն քանի մը ժամ ետքը․ այլ՝ երբ Լուսոյ աստղը իր գլուխը կը բարձրացընէ Վարագայ Գալիլիայէն, վայրկեան մի ևս, և ահա կը հորիզոնանայ Շուշանից գագաթան Զիաթունեկին վրայ, ուր Կարմրուորայ վանից գմբէթի խաչն առաջին անգամ բաքի լոյս կուտայ կ՚առնու, և մթնանշմար կը փէլկտայ․ այս վայրկենիս Այգեստանեայց եկեղեցեաց ժամհարները տանիքն ելած՝ երեսները երկցս կը խաչակնքեն․ «Գողու ժամ» կը զարնեն — դողերը կ՚անհետանան —․ դևերը կը հա-

լածուին , և դազանները որջերը կը քաշուին ։ Ժամհարը ժամին դուռը բանալով երեք բերան «օրհնեալ ես Աստուած» կ'ըսէ. ու կ'սկսեն ձեռաց կոչնակները դըգըլ դըգըլ հնչեցնելով թաղէ թաղ շուրջ գալ, ամէն Հայ Քրիստոնէի դրան ճկիկը զարնել և «Ողորմի՛ Աստուած» կանչել. երբ իրենց շրջանը լմնցնելով ետ կը դառնան , իրենց ետևը ձգելով կը բերեն խուռներամ մանկտիները, անոնք որ հայր կամ մեծ եղբայր չունին տան մէջը. իսկ որք ունին , կը ստիպեն կը յարուցանեն ծնողք կամ եղբարք, որք ձեռքերէն բռնելով կ'երթան դէպ եկեղեցին «Ջարթիք» կարդալու ։

Արուսեկին ծագումը և ժամհարի կոչնակն՝ ընդհանուր ազդեցութիւն կ'ընեն մեր աշխարհի բնակչաց. ընդհանուր նշան է այդ կէտը ; այդ պահը , սթափելու 'ի քնոյ ։ Ճիշտ այն րոպէին երկրագործի գոմէշն ու եզն իր խոնջանքը անցուցած լինելով, ընկողմնած տեղէն փքալով փրնգափրնգալով յոտին կը կանգնի. կովն իր բառաջը կ'արձակէ. այծը կը մկմկայ. մաքին կը բըռայ. ձին կը տրոփէ և կը վրնջէ. էշն իր անձոռնի զռռնան կը փչէ ։ Աւագ մշակն արդէն ելած է , մշակները՝ իրենց տեղէն

(չուանէ և փայտէ կազմած սանդուխ) վար կ'իջնեն, ջուր, խոտ և դարման կը մատակարարեն։

Ճիշտ այն րոպէին, երբ Վանայ Երկատասան եկեղեցեաց կոչնակները որոտալից կը հնչուին, ագլօրն իր թևերը թափ ու ծափ տալով իր «կուկլուկուկուն» կը կանչէ. և որովհետև տուն չկայ որ ագլօր չունենայ. — ագլօր՝ որ Արարչի շինած ու լարած ոգևոր և կենդանի ժամացոյցն է, որ անվրէպ իր վայրկեաններուն կը հսկէ ու իր պահուն կը կանչէ, և իր իմաստութեան հետ ունեցած գեղեցկակերտութեամբն ալ փառք անձին կը համարի, պարտք բնութեան կը համարի, անսխալ և անթերի կատարել իր պաշտօնը, որով և իր Արարիչը կը փառաւորէ —. այսպէս խուռն բազմութեամբ ձայնից ագլօրներուն ընդհանուր աղաղակաւ կը լնանի բնակչաց տունն ու թաղը. և կը դղրդին ականջները։

Մեր Այգեստանեայց ծառերու ոստերէն կախուած, կամ անոնց ճղերու արմունկներուն վրայ հաստատուած են բոյներ զանազան թռչնոց. որք իրենց ձագերով ծուարած կը թառին հոն. զեփիւռը կ'երերէ զիրենք, և 'ի ներքուստ գլգլալով գնացող առուին ջուրը քաղցր օրօր կը

սուլսուլէ · Լուսոյ աստղ իր շառաւիղը կը ծագէ չծագեր, իսկոյն կը բացուին ատոնց բիբերը · հաւկոր կեղևը կ'իյնայ անոնց աչքերէն, ծագման շողէն կը շողշղայ կէծելէ պէս անոնց լոյս պտուղը · մեր այս քնացած քնարներ կը սկսին գեղգեղել հազար ու բիւր եղանակները ։

Տուներու մէջէն ընդհանուր շարժման ձայներ և նշաններ կ'ելլեն ։ Մանկիկը ար- թընցեր կուլայ, մէկին մայրը կաթ կուտայ, մէկ՝ կ'օրօրէ դար դար ասելով ։ Ձոչ մամէն՝ չախմախ և կայծքար իրար կը զարնէ, որ կրակ հանէ, հրապ վառէ ։ Քեռ մամէն՝ չապիկ մխմէլ (ողջոյն սաստան) հագեր կ'ելնէ ժամ երթալու ։ Տանտիկին՝ թոնիրը կպու- ցեր կը վառէ ։ Հացթուխը՝ թոնիրի չուրթը նստած հաց կը կողէ, Նոյն հացի և գիշ- րաեփի հոտը չորս կողմը բռներ է ։ Մէկ թաղ՝ հաց կը բաժնեն փողոցէն անցու- դարձին. մէկալ տեղը՝ մատաղ. ուրիշ տեղ մը՝ հարիսայ։ Դեռ Լուսոյ աստղը մեր ցոյց տուած հորիզոնին վրայ կեցած՝ այս ամենը տեղի կ'ունենան ։

Տունէ մը ճախրակ մանելու ձայն կու- գայ· տեղ մը՝ կտաւ կը գործեն ։ փողոցէն Ջուրըլվեր երթացողներ կ'անցնին . եթէ

հայ են՝ շատ մեղմիկ կը մրմնջան, իսկ եթէ տաճիկ՝ մեծ ձայնով մանէ կը կանչեն ։

Ամեն դուռ մէկ աղջիկ կամ հարս կ'երեւան, որոնք ձեւ ձեւ ջրջանք (Ջըջան+) ըրած են, եւ ներսի բակերը աւելէն զկնի եկած են փողոցներն աւելելու. — Ժամանակ մը երբ իբրեւ զարդ Երուսաղէմէն բերած չիչ ապարանջաններ կը չարէին իրենց բազուկները ամեն նորահարսներ, մի նոր ներդաշնակութիւն ալ ասոնց աւել ըրած ժամանակ այն չիչերու չընկչընկոցէն կը յօրինուէր — ։ Ամեն տուներու եզերքը լի են արք, կանայք, մանկտիք, որք իրենց երեսները կը լուանան, եւ իրենց անգիր աղօթքներ կը մրմնջեն դէպ՝ աղօթրան դառնալով եւ խաչակնքելով։

Եթէ օրն ուտիք է կամ տօն է, գլխաւոր փողոցներու հրապարակները, — զոր տեղացիք՝ փօղնէֆէլը կ'անուանեն, եւ փողոցը՝ փօղան. — մեծ լուսով ճրագներ կ'երեւին, ուր ճրագուն կը վառեն մսագործները. եւ ճիշտ ժամհարի ժամուն կը զենուն պատրաստեն միսերը, որպէս զի թոնէր վառելուն հասնի, եւ մինչեւ ժամէն ելնելը եփուի ։ Ուրեմն դի՛ր վեր նկարագրածիս կարգին նաեւ փօղնի գլուխներու

շանց հաչիւնն ու շառաչիւնն և կատուներու բազմութեան մլաւուները · հոն արդէն եկեր պաշարեր են ագռաւները, ցիները, անձեղները դաս դաս, երամ երամ, ո՛ր յիսուն, ո՛ր հարիւր, մորթածէն ասոնց բաժիններն կան · սարսափելի յարձակումներ կ'ընեն մորթողին, որ շատ սոսկալի և սխրալի տեսարան կը դառնայ· շունն իրեն համար կ'ուզէ խլել, իրար հրելով, լեզուներով իրենց շրթները լզելով, և մերթ գռմռալով, մերթ հաչելով և պոչը շարժելով · կատուն՝ թագնաբար թոքէն կ'ուզէ յափշտակել · անձեղն ալ որ հասնի կտուցը կը զարնէ · և մորթողն ոչ իր հաստ ձայնով, ոչ իր դանակով, ոչ վաղակաւորով և ոչ տապարով չկրնար այս բանակին յաղթել · ամեն կողմ կը դառնայ զարնելու, ոչ մէկին կրնայ զարնել, եթէ մէկին տարածին ետևէն վազէ, մէկալոնքը մնացեալն աւար կ'ընեն · ղասապը կը բոռայ, և իր չորս կողմն գռմռոց, գվգվոց տիրած է ։

Ջրբաշխ՝ քար մը դրեր գլխի տակ և իր ճեռքի փայտը դրկած պառկեր փողոցի ծառերու մէջ, ականջ տուեր ջրի ձայնին կը խորդայ · և իր վրայէն, ոստերու անտառէն կը լսուի սոխակին դայլայլիկը · ճախրակմանիկն ([illegible]) «ճի՛վի ճի՛վի» փա-

փուկ ձայն կ՚արձակէ • ծիծեռնակը «ծի՛ծռ՛ ծի՛ծռ» ծըլվըլալով՝ հողմոց չափ արագաթեւ անցուդարձ կ՚ընէ • և սարեկը՝ իր ամենարուեստ եղանակաւ հրեշտակաց նախանձը կը շարժէ •

Ահա եկաւ տօնին Ումրչատն կուգայ տաւուն չիթերը լուանալու ։ Խիտաք (Ձուլըհով) տօնին Պատուրն՝ ստեծները (ֆեւրին ցցուած ֆոյրեր) կը շարէ հինած հինելու ։ Սարակները՝ բահը թեւերուն վրայ դրած կ՚երթան ժամու դուռը, այգի փորելու համար վարձուելու ։ Պատ շարողներ, աղիւս կըտրողներ՝ ետեւէ ետեւ կ՚երթան ժամ, քանի մը ծունր աղօթք ընելու և երթալու իրենց գործին ։ Հատ հատ ձիաւորներ կը տեսնուին, որ կ՚երթան գեղերը իրենց արտերուն նայելու ։

Իսկ գեղացիները՝ արդէն սթափած են այն փոքրիկ թռչնիկի ազդաձայնէն, որ կուգայ կը նստի երդիքներուն վրայ և կը կանչէ «ըծէ՛ ըծէ՛» • արդէն պատրաստած են իրենց հարօրներ և լուծերը, երկիրը բաւական հերկեր են ։ Տուներու մէջ մատակներ, կովերը կթեր են և ծծում կը զարնեն ։ Ոչխարի հոտ գիշերուան ցօղով թրջած մատղաշ արօտներէն քաղցր նախա-

ճաշ մը ճարակեր է ․ և Տանտիկին Մամիկը տան մեծին ու պզտիկին ակրատ (խահվալթը) բաժներ է ուտելու ․ և ահա Նախիրն ու որթիկները կը հանէ ։

Գայլն ու ղազան փախեր են դաշտէն ու լեռներէն , հովիւներու և հօտաղներու հետ գնացող շուներու ոտն ու հոտն հալածական ըրեր է զանոնք ։

Գեղի աղջիկներ մէջպարներ (շալէ բօղչա) կապած երամ երամ կը քալեն դէպ 'ի մարգահովիտները , ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրարու վրայ ցանելով, ծիծաղելով, խայտալով․ կը պատահին կաքաւներու երամին, լորին, արտուտիկին , որք իրենց ձագերով կը գվգվան և խոտերու տակէն կը թռչտին թուփէ թուփ , տերևէ տերև ․ Նմանել ուզելով իրարու․—Դու սաս, թէ ո՞ր որոց, աղջկո՞ւնք թէ աւոր թռչնոց, թէ թռչո՞ւնք ոտնաթափկ աղջկանց—։ Եւ կ'անցնին կ'երթան յառաջ՝ բանջարները ժողվելու , իրենց արձագանք տալով առնելով զեփիւռին , աղջկունք՝ «քա՛, քա՛, քա՛», կաքաւունք՝ «գա՛վ, գա՛վ, գա՛վ» ։

Կռունկն երամով կարաւան է կազմեր սլաքաձև , բարձր օդերէն 'ի վեր կ'անցնի

«կռո՜ւ, կռո՜ւ» կանչելով․ — ծառայ եմ ձայնին — ։

Կոտ կոտ Առագէլ, որ է Արագիլն, երկան սրունքները քշտած, կտուցը սրած, «հօ՜դ, հօ՜դ» ձայնելով իր բունէն ելեր 'ի դաշտ կը վազէ՝ ջրի և ցամաքի օձերը ձերբակալելու և սպաննելու, իբրև ոստիկան և իբրև դատաւոր ։

Ջորթան տարուկ՝ գողի պէս շինականի տանիքներուն վրայ և բակերուն մէջ պահկըտուեր, որպէս զի չորթան մը յափըշտակէ ։

Կոր բուն այս ժամուս իրեն համար բոյն մը կ'որոնէ, որ ծածկուի ծուարի այն տեղ, դադրեցնելով իր գուժարկու «վա՜յ վա՜յ» ձայնը, զոր կը հնչեցնէր՝ չորցած ծառի մը կամ դերեզմանաքարի մը վրայ նստած ։

Ցին՝ 'ի վեր և 'ի վայր կը խորանայ կը խոյանայ սուր ձայնիւ «ցի՛ննիննինի» կանչելով․ և Ջկնկուլն՝ գետերու ափերը կը դիմէ, և «ձըկ ձըկ» ձայն հանելով ձուկ մուկ կ'որոնէ կլլելու ։

Արօս, Բադն, ու Ղազ՝ ջրերու վրայ նստած՝ կայտառ նաւաստիներու պէս կը թռվռան և կ'եղանակեն ։

Սանդրակատար Բուբուն անհանգիստ կ'ոստոստէ և անդադար կ'աղաղակէ «բո՜ւ, բո՜ւ» ։

Դեղնապորտիկն՝ Եւրոպացի օրիորդաց նման փափուկ և մաքուր շղարշներ հագած ճերմակ ու դեղին, և Հայաստանի հարսներու նման իր աչքերը Թուխ դեղով ծարուրած՝ մանր մացառներու մէջէն կամ խիտ խոտերէն իր ձայնը կը լսեցնէ, իր դէմքը կը ցուցնէ ու կը Թագուցանէ, բուլբուլին անճանաչ եղողներուն ինքզինքն իբրև բուլբուլ կը ծախէ ։

Բուլբուլին ձայնը ամեն եղանակողաց ձայնին հետ կը լսուի. Նորա շունչը բնութեան համայն երաժշտական գեղգեղանաց զսպանակն է ։

Բարբարոս Բազէն, որոտընդոստ ձայնիւ և չեչտակի սաւառնմամբ օդէն 'ի վար, օդէն 'ի վեր սաւառնաթև կը սլանայ, անմեղ ու անզգոյշ Աղաւնի մը կամ Տատրակ մը պատառելու ։

Անգղերը՝ լօռ (Լէշ) ուտող քիւրդերու պէս ընկեր ընկեր կ'անցնին, հոտ առած են մեռածի մը կամ մեռուցածի մը, աւարելու կ'երԹան և կողոպտելու անոր դիակին միսերը ։

Արծիւն հազիւ ուրեք կ'երևի. անոր հզօր Թևոց բաղխումէն, օդը շառաչմամբ պատռելէն բոլոր Թռչունք կը լռեն վայր մի, մինչև անցնի այդ ահեղ և փառահեղ արքայն ։

Շինական հարսները երեսները փաթաթած՝ բազուկները բաց, սափոր մի ուսին և սափոր մի 'ի ձեռին՝ կ'երթան աղբիւրէն ջուր առնելու. իսկ պառաւ Դադէն քարի կտորի մը վրայ կռնակ դրած, վրան պտուղ մը խունկ, խաչքարի մը առջև կը տանի, և ինքն իր երեսները հողին վրայ դնելով, 'ի ծունկս նստելով, երերալով մաղուելով, բռամբ իր կուրծքը կը ծեծէ. և խիստ սրտառուչ մորմոքելով մը՝ «Տէր ողորմեա» կ'ըսէ։

—Այս կերպն է աղօթից այն ամեն գեղերն ու տեղերը, ուր կա՛մ եկեղեցին աւեր է, կամ տէրտէր չունին։ Մամիկն հարսներով ու աղջիկներով, պապիկն երիտասարդներով ու ճժերով կը դիմեն խաչքարերը կամ եկեղեցւոյ չէն ու աւերակ պատերուն մէջն ու քովերը. իւրաքանչիւր իր սրտէն բղխած կամ իր մեծէն ուսած աղօթք մը կ'ըսէ ու կ'երկիրպագանէ Աստուծոյ—։

Բ.

Այսպէս ընդհանուր շարժում, արթնութիւն, և փառաբանութիւն կը սփռէ բոլոր մեր աշխարհի արարածոց մէջ Արու-

տեակն լուսաբեր ․ և ահա Արշալոյսն անոր ետևէն կը սկսի բացուիլ , զոր «Աղջիկան» կ'անուանեն տեղացիք ։ Արշալուսին ամեն տուն ընկողմանք վերցուած են ․ թոնիրն իջած է վառուելէ ։ Ի գարնան , այս պահուս , Այգեստանեայց փողոցներէն ետևէ ետև ձայներ կը լսուին ․ «Ջո՛ւկ առէք , ձուկ» ։ Այս ձայները ամեն տարի Ապրիլ կիսէն մինչև Յունիսի կէսը կը շարունակուին ․ քանզի այն միջոցը միայն Վանայ ծովը , Հայկայ լիճն , այս միակ ու համեղ տարեխ ձուկն կ'ընծայէ բնակչաց այնքան առատութեամբ , որպէս Ապրիլի ամսոյն հարաւ քամիին հալեցուցած ձիւներուն լեռներէն 'ի վայր 'ի լիճն հոսող հեղեղները ։ Ջուկ ծախողները կառավարութեան սակ կը վճարեն , գրաստով բառնալու բերելու վարձք կը վճարեն , իրենց աշխատանքն ալ վրան դիր ․ ու կը վաճառեն հինգ ձուկ՝ մէկ փարայ , և երբեմն մինչև տասն ձուկ մէկ փարայ ։ Ամեն տունը կը գնեն հազար հազարներ , աղը դնելէն զկնի ․ քանի որ նորը կուգայ , կը գնեն , թոնիրի մէջ կը կողեն , կամ կը վազեն տան մէկ անկիւնը՝ հաւի նոր ածած տաք տաք ձուն կը բերեն , ու ածուէն դալար բանջար , կը տապակեն արդար եղով ․ ժամէն դարձողները ձկան հոտով կը լնանին ․ փողոցները

կը բուրէ անոյշ հոտով ։ Հո՛ն՝ որ մինչև հոս յիս կը բուրէ, քիմքս կը գրգռէ, և բերանս ջրով կը լեցնէ ։ Բայց, ո՛հ, անոնք կ'ուտեն, ես կը հալիմ ։

Արշալոյս է ։ Գեղերէն աղջկանց ժողուած բանջարներըը բերեր են փողնի գլխները և ժամու դռները դիզեր են, Աւետկու բանջար, Եղրջայ, Սուխուկ, Մանդակ, Եղնջնակ, Ախտորուկ, Պառուկ, Պողիկ, Ճախ, Կանգառ, Շրէշ, Նուբիկ, և այլն ։ Մէկ կողմը դիզեր են իրարու վրայ նոր պանիր բլիթ բլիթ, որոյ մէջ դրուած Ուռցն, Դաղձն և ուրիշ հոտաւէտ բանջարներն՝ պանիրներն ու հրապարակը հոտաւէտած են ։ Հոն է Մանդկով ճաժիկ, Չինթան, Ջորթան, Մածուն, Կարագ, եղ, և ամեն դեղջկական բերքեր, զորս կը գնեն ժամէն ելողները ։ Այս բերքերէն եզներու վրայ բարձած, կամ իրենք շալակած, թաղէ թաղ ալ կը պտըտցունեն ։ Մեծ պահոց՝ Ոսպ, Գլրուլ, Կանճրակ, Կանափատ, Բանգլայ, և այլ տեսակ տեսակ հնդեղէն, և ընտիր Մեղր, Բուք, և Նարդանգ, եւն ։

Իսկ Աշնան՝ աւելի զանազան են այդ բերքերը ․ ինչ որ արտն ու բոստան դեղջուցոյն տուեր, հոս կ'իջեցնեն ․ և այ-

գետանեայց բերքերէն գեղը կը փոխադրեն։ Աշնան արշալուսին՝ ցորեանները սայլաբարձ կուգան ճռնչալով. և անասնոց համար խոտ ու յարդ բեռնաւորած դըրաստներով. Ջաղացներ աղուն կը ղրկուին և ալիւրներ կը բերուին. Հատիկ կը խաշեն, ծաւար ու կորկոտ կը ծեծեն. Ղաւուրմացուներ կը մորթեն, և անոնց ախկերը հանելով նոր գինիներ (շիրա) կը կրեն անոնցմով։ Ցան, ցախ, փիթիր, քակոր, պտըտուր, գազ՝ բարձած եզանց փողոցէ փողոց կը շրջին գեղացիք՝ ծախելու համար. և այգեստանցիք այգիներու մէջ ու փողոցները ծառերէն թափած չորցած «տերևները» կ'աւլեն, և ծառերու չորուկները կ'խառկեն։

Արշալուսին ամեն մարդ իր գործն սկսեր է։ Արևը կ'ելլէ իր գահոյքէն, և Վարագայ Սարը՝ իբրև իրեն սեմու սանդուխտ՝ ոտքը կը կոխէ, ու կը բարձրանայ երկնից աթոռը։ Այս րոպէին ոչ ոք 'ի քուն պիտի մնացած լինի. ապա թէ ոչ՝ օրուան քաղցրէն ու ըլիմանէն կը զրկուի։ Միտ դիր, ընթերցո՛ղ, այս բարոյականին, այս խորհրդական բանին։

Ցերեկուան զբաղումներն յայտնի են։

Էրիկ մարդիկ առհասարակ շուկայ գնացած են․ և որոնք տունն են՝ տունը կը գոր-ծեն։ Կանայքն ալ զբաղուած են իրենց լուացքին, կար ու ձևին, ճախարակին, մե-ջան քրքրելուն, բուրդ և բամպակ գզելուն․ և կ՚աշխատին իրենց ածուները փորելուն և անոնց մէջ ծաղիկ և զանազան բան-ջարները ցանելուն։ Մեծ աղջիկներն իրենց մօր կ՚օգնեն, իսկ պզտիկներն ծաղիկներ կը քաղեն կը փնջեն, և իրենք վայելելէն զկնի, իրիկուան հայր կամ եղբայրը գա-լուն՝ անոնց կ՚ընծայեն։

Գ.

Կուզա՞ս, բարեկամ, քեզի տանիմ շրջեցունեմ մեր Այգեստանները։ Ահա Այգեստանեայց Արևելեան ծայրը, Վարա-գայ լեռը՝ ճիշտ Արծուոյ օրինակ կեռ գլուխ մը կը ցուցնէ բարձրասար, և թևերը տա-րածած 'ի հիւսիս և հարաւ․ իր ծաղկա-զարդ ու դալար պարանոցն, իր սաթենի քիթ, խնծորենի բերանն, ու մեղրոտ կտուց դէպ արևն է դարձուցած․ իր կոկորդէն կախուած թնթուխ թթուցը Քէշիշ Գօլն է․ իր աչերը Տօնեայ Գէլին և Սուլբիան Խայլաբն, յորոց կը բղխին կայլակ կայլակ, վտակ վտակ պաղ և ջինջ ջրեր․ իր դէմքը կը

նայէ Հայոցձորոյն վրայ, իր գագաթին ունի իբրև թագ՝ արիւնագոյն քարեր Գալիլիային, և իր պուճուճակ՝ Վերին Վարագայ լեռնահովիտն ։ Շատ գեղեր, անթիւ թռչունք, անհամար ծաղկունք, անասունք, էրէներ, ոչխարներ, կովեր և եզներ, որսորդներ և հարօրվարները կը զարդարեն իրեն թև թիկունք ։ Սև է իր քարերու գոյնը Արծուոյ փետուրներուն նման. և տեղ տեղ պրակներ ու անտառակներ կը կրէ ։ Աջ թևին վրայ շինուած է մեր արդի Վարագայ վանքը, ձախ թևին վրայ՝ Սուրբ Գրիգորի վանքը, և ուսոց ներքև կռնակին վրայ՝ Կարմրուորայ վանք. իսկ Արևելեան կողմը ճիշտ սրտին կամ պորտին ուղղութեամբ Խէք (Հոյկ) գեղն է. և անոր կից՝ Ղևոնդեանց աշակերտ երանելի Արահամու խոստովանողին մատուռը կամ ճգնարան ։ Իբրև չորս պորտէն կամար՝ առջի երեքը գմբէթայարդար, իսկ վերջինը անշուք, կը կապէ այս վանքերը Վարագայ լեռն իր գօտին ։

Կարմրուորայ վերևը նայէ, սա հարթլեռնակը, որ հեռուանց կից կը թուի Վերին Վարագայ և անոր՝ իբրև փետրաթևիկ ուսոց ձև մը կուտայ, Ջիաթ-ռնուկն է այն ։ — Թերևս յիշատակ մը ունի իր

Հետ այս անունը, քաջ ձիաւոր մը թռած լինի այս լեռնէն —։ Կարմրուորայ մէկ քովն է Շուշանց գետը։ Դիտէ սա հովիտը, որ կը սկսի Կարմրուորայ տակէն և կը հասնի մինչև Այգեստանեայց շուրթն. բոլորն ալ մշակեալ արտեր են, և այս ընդարձակութեան երկու կողմէն ու մէջ տեղէն վազած մեծ ջուրերը՝ Քէշիշ գէօլին և Ցօնիայ գալիին, վարագայ սարին ջուրերն են. որք շատ մը գեղերու բաժին լինելէն զկնի, այսքան կ՚աւելնայ և մշտահոս կուգայ Այգեստանները ոռոգանելու։

Այս տեղ՝ ուր մենք կայներ ենք, Ուրբաթ առուն է։ Ցես ո՞րքան հորեր կան բացուած, և քանքաններ կը բանին. աղոնք ալ Այգեստանեայց և քաղաքին մէջ հանուած տասն և երկու քանհրէզներու ջրոց ականց հորերն են։

Այժմ դարձունենք մեր երեսը դէպ յարեւմուտս։

Ահա տափարակ և ընդարձակ դաշտ մը, զարդարուած ծառաստաններով, և բաժանուած զատ զատ պարտէրով. պարտէրուն կից երկու կողմնէ ջուր, մէջ տեղ առողոտայ և վրան ծառոց հովանի։ Ունին դիր թռչնոց դայլայլիկին, անեղեաց սօսափիւնին, ջրոց զղզղուն ձայնին։ Աւելց

կը բաժնուին Այգեստանեայց փողոցներէն։ Մէկ կողմը յառաջ երթալով Աւօյի դարն է. ուսկից կ'իջնան Ձալղի փողան։ Քիչ մը անդին Արարուց ձէյրան, ուր չհասած տաւկաւին՝ այդ աւազուտ ասպարէզը կը տեսնա՞ս. Աւզնոց կ'ըսեն ադոր. այդ տեղ ամէն տարի Զատկի Նոր կիրակիին հայ ու տաճիկ՝ նոյն աւուր համար պահուած իրենց նժոյգ ամէնի ձիերը հեծած կուգան ջիրիտ կը խաղան բաւական կանոնաւորութեամբ, բայց յանդուգն յարձակմամբ. այնպէս որ չատ անգամ անձանց վնասներ կը պատահին. տեսնալու բան է այնքան բազմութիւն արանց և կանանց, որ ճանճերու նման կը լեցուին այդ ասպարիզի շրջապատը և դատաւոր կը հանդիսանան խաղցողներուն. Նախատանաց քըքիջներ կ'արձակեն ինկողին կամ զարնուողին. և խրախուսանաց աղաղակներ կ'ընծայեն ճարտարին, յաղթողին. մանաւանդ անոր՝ որ ամենէն վերջը տէր կը հանդիսանայ ասպարիզին, և սիգապանծ ինքն 'ի նժոյգ կը ճեմէ միայնակ յայս և յայն կողմն ճօճելով, հայելովք նշաներն՝ ընդհանրապէս միշտ յաղթող կը լինէին Տ. Ցուսկանորդւոյ վանից Գաբրիէլ Վ. կամ Արջունից վանից Տէր Յովհան. կամ Արճիշեցի Յօհ. Կայծակ վարդապետն։

Արարուց անդին Մանուկ աղենց թաղն է. ալ անդին մ՚երթար, դաշտ է և Արարուց ու Կենդանանից սարը: Դարձիր մէկալ կուշտդ. այս մեծ պողոտան Աղդայու ջաղջէն է, Այգեստանեայց ամենէն ընդարձակ ու վայելուչ փողոցն. անոր անդին՝ Փշով փօղան, որուն եզերքէն կ՚անցնի Ցանկուաներու գետ. և անոր միւս երեսն է Ջըմէ ղըմէ ճաղարքէն, Սև քըռէն, Մհերի դուռն և Ակրիփու սար: Իսկ մենք ուղղակի մեր կեցած տեղէն պիտի յառաջ երթանք: Մեր երկու կողմն եղած այգեստանեայց այս մասը՝ Նորատունկներ կ՚անուանին. և քանի՛ յառա՛ջ երթանք, այնքան տուներ և բնակիչներ կը շատնան:

Դ.

Այսօր կիրակի է ըսենք: Կը նայի՞ս ինչպէս ամենուն դրան առջևն ալ ջրջնած ու մաքուր աւելուած են: Ահա հասանք Ճոչ Քէնդըրչի ըսուած ջրի ակն. Նշանաւոր փօղնիգլօխներէն մէկն է այստեղ: Կրնանք քիչ մը նստիլ այս ծառոց հովերը, ջրի ափերը, ուր այնքան բազմութիւն կայ մարդոց. որք նստած սուրճ կը խմեն, ծուխ կը ծխեն, և խումբ խումբ եղած կը խօսին կամ կը զուարճանան:

Դիտէ սա մանկտիներ, որ մէկ շապիկ վրաներ՝ առուի քովը ջրերու մէջ կը մտնեն կ'ելլեն. և քեղ խոտէն ջրապղտիկ շինած՝ անցնող ու դարձողին վրայ ջուր կը պղտա-ցընեն։ Մէկալ խումբին նայէ, որ քարեր ու գզգիլներ ժողված և փայտի կտորներ, պզտիկ մզտիկ տուներ կը շինեն. —Մանո՛ւկ Ճարտարապետներ—։ Ուրիշ խումբ մը՝ ջրի աւազներէ թումբեր կը կազմեն, և ակօս ակօս բաժնելո՛վ կամ խաղողի այգի, կամ վարունկ ու դդում ևն, կը տնկեն, կը ջրեն. —Այրո՛ւն այգէգործներ—։ Խումբ մ'ալ՝ թոնիր կը շինեն գետինը փորելով. ահա կրակը վառեցին, ալիւր խմոր են շաղա-խեր, պապաճիկ հաց կը թխեն և ձուկ կ'եփեն կուտեն. —Ջժո՛ւկ տնտեսներ—։ Խումբ մի ևս, գետնի փոշիներ հաւաքած ջրով կաւ շինած են, և ձեռները վրան քսելո՛վ՝ մէկ կողմէն չոր հող կը ցանեն վրան և կը պրտեն ու միաձայն կ'ըսեն «Քարաքոսիկ մաղաքուսիկ». կլոր բլրաձև բերդ մը կը յօրինեն. —Թզո՛ւկ Տրովա-ցիներ—։ Մէկալոնք ալ թղթէ կամ կուէզի թաւէ նաւակ շինած, չիր ու չամիչ մէջը դրած, ջրի երեսին ձգեր են կը տանի. —Պզտի՛կ նաւավարներ—։

Քիչ մը աւելի հասակ առած մանկտին անդին պատին տակ փոսեր փորեր և պնդուկ կը խաղան․ խումբ մը ևս ճան (Ճէֆ) կը խաղան՝ մէկ քանիններն ալ նստած են՝ ճանով «Պարոն գզիր» կը խաղան ։ Գիտե՞ս ինչու նա մէկ տղային գլուխը ծուեցուցեր ու կռնակին կը զարնէ ուրիշ մը ։ Ճանը չորս կողմ կամ երես ունի․ չորսն ալ իրենց անունն ունին․ երկու բարձր կողմերու մէկին կ՚ըսեն «ճուկ», մէկին՝ «թաւ»․ իսկ ցած կողմերուն՝ մէկին՝ «սալ», մէկին՝ «կոռ» ։ Կարգով տղաքները ճանը կը ձգեն, որին որ ճուկ գայ, նա՝ պարոն կը լինի․ որին որ թաւ գայ, նա՝ գզիր կը լինի․ որին որ սալ գայ, ոչ չար է՝ ոչ բարի․ իսկ որին որ կոռ գայ, նա գող կը համարուի ։ Ահա ուշ դիր․ նորէն կոռ եկաւ․ գզիր՝ ճանը խլեց և պարոնին դառնալով կ՚ըսէ․

— «Պարո՛ն, պարո՛ն, գող մ՚եմ բըռ-ներ»։ Պարոնը կը հարցնէ․

— «Ի՞նչ է գողցեր»։ Գզիրը գողին կը հարցնէ․

— «Ի՞նչ ես գողցեր»։ Գողը կը պատասխանի․ (Օր․—)

— «Ցանձ մ՚եմ գողցեր»․ կամ ինչ և իցէ բանի մը անուն կուտայ ։ Եթէ ծանրակշիռ է ըսած բանը, պարոն հրաման

կ՚ըսէ՝ տասն գօմի (բոնջէ) զարնեն, կամ աւելի․ եթէ թեթև է, թեթև․ շատ անգամ ալ պարոնական վեհանձնութեամբ ներողութիւն կ՚ընէ ։ Այսպէս կարգով ճանը ձգելով եթէ ճուկն ուրիշի մը գայ, սա կը լինի պարոն․ և նախկին պարոնը իր իշխանութենէն կ՚իյնայ ։ Ճանը նաև երբեմն բաղդ փորձելու ալ գործ կ՚ածեն․ ի՞նչ խորհուրդ որ ըրած են՝ եթէ ճանը ճուկ եկաւ, յաջող և բարի է․ իսկ եթէ կօռ՝ շատ ձախորդ է ։

Նայէ մէկալ խումբերուն, որ աւելի հասակաւոր են ։ Մէկ դասը՝ Խըռ կը խաղայ․ մէկալոնք՝ Կտրոց կը խաղան․ ի՞նչ ճարտարութեամբ ու հնարքներով իրարու ետևէն կը վազեն, խաբս կուտան, տաչփիկ կ՚ընեն, վրայ կը դառնան, տղայական բանակ և ռազմ է ։ Դու կ՚ասես փրանգօ —Բրուսական ճակատամարտն է ։

Անդիիններն ալ Տուշ փէտ կը խաղան․ Թօփ կը խաղան ։ Ասոնք նայէ, որ մեծ եռ (ֆէծ) մը կլորաձև գծեր են, և մէկը ներս՝ մէկալոնք դուրս․ ամենի ձեռքն ալ թուրայ կայ, կը զարնեն ներս կեցողին․ իսկ նա եռի կեդրոնը կը դառնայ և որին որ իր թուրան զարնէ, ինքն կ՚ազատի, զարնուողն ներս կը մտնէ․ կարծեմ՝ Կրակ-

տարոց կամ Ջուանոցիկ կ'ըսեն աս խաղին։
—Կը հաւնի՞ս այս ժիմնաստիկներուն ։

Գզտիկներուն նայէ․ սուտիկ մուտիկ հարսուփեսայ են եղած, և ուռի դալար ճիւղէն կամ ոստի մը կողակէն, կամ մասուրայէ մը տուտուկ շինած զուռնայի պէս կը փչեն․ դափ կը զարնեն, տամբլաբազ կը տփեն, խաղ կ'ասեն, տաղ կ'ասեն, փայտէ ձիեր հեծած կ'արշաւեն, փայտէ թուր՝ թղթէ վահան բռնած թրախաղ կը խաղան 'ի հանդէս հարսանեաց ։

Աղէկ դիտէ աս մեծ ծառի տակ նստող պատանին, որոյ շրջապատը բոլորեր են այնքան պատանիներ ։

Նստողը կերպ մը հանելուկ կ'ըսէ թռչնոց վրայ․ ահա ըսածը․

—«Հաւքմը հանեմ էսքանդարի» (այսփան է)։
Բոլորը միասին կը պատասխանեն
—«Ագամդարի»։
—«Ուր ուտելքըն էսքանդար ի» ։
—«Ագամդարի»։
—«Ուր խմելքըն էսքանդար ի» ։
—«Ագամդարի» ։
—«Ուր տօտիկներ էսքանդար ի»։
—«Ագամդարի» ։
—«Ուր կտուցիկ էսքանդար ի» ։
—«Ագամդարի»։

—«Թէ կը բանայ էսքանդարի»։
—«Ագամդարի»։

Ամեն մէկ ըստծի քանակութիւնը՝ իր ձեռներով, մատներով, ափերով կը ցուցնէ։ Լաողներէն ո՛վ որ ճարտարամտութեամբ կրցաւ իմանալ թէ ո՞ր հաւքն էր, իսկոյն իշխանութիւն կ՚առնու խօսքի հեղինակէն, որ թուրայ մը կուտայ ձեռքը. և նա անով կը վարէ կը զարնէ մէկալ բոլոր հոն կեցող ժողովը. մինչև յանկարծ հեղինակն յետս կոչէ զվարիչն, որ կը նշանակէ պաշտօնանկ ընել, որ այնքան արագոտն սիտի վազէ և դառնալով զինքը կը ձգէ հեղինակին քով յապաստանի, ուր ապահով կը մնայ. իսկ եթէ 'ի փախստեան՝ հասնին իրեն՝ իրմէն վարուածներն ու բռնեն, սարսափելի վրէժ կը հանեն։ — Կարծես Պարսից Շահին կուսակալ կամ կառավարիչ կարգելուն խաղն է կը խաղան....։

Ե.

Եթէ հաճիք, ելնենք քիչ մը յառաջ քալենք։ Նայէ՛ սա պատերուն վրայ փռուած մրգաբեր ծառոց ճըղերը, որ ծաղկեր են, ու տեսքով և հոտով այս փողոցները զարդարեր են։ Վարդափառէն եսքը մինչև

աշունը, այս պատերու տակերը ատոնց պտուղները կը փռուին, փողոցէն անցնողներուն բաժին. շատերը կը թափին ջուրերու մէջ. մէյմ՝ ալ տեսնես ծիրան, ալուչայ, տանձ, խնձոր, եւ. ջուրերու մէջ լող տալով կ'երթան։ Ի՞նչ կը քաշեն այս ողորմելի ծառերը չարաճճիկ տղայոց ձեռքը, որ քարալեխ կ'ընեն։ Ահա արդէն ուռի ծառերուն քարեր կը զարնեն, որ մեղրածըծուկ ձգեն, ծըծեն։

Սա քովերնուս մէկ առուն նոր ջուր կապեցին. պզտիկ ճժեր՝ նայէ, ի՞նչ կ'ընեն. կը վազեն ջրի ծայրը պագելու. «Ո՛վ որ յաջողի յառաջագոյն պագէ, անոր մայրը լաճ մը կը բերէ»։

Աս մէկալ ճժերուն նայէ, որ ճչալով քըրքըրչալով կը դիմեն խաս Մորըփներուն (ֆնդըխներուն), որպէս զի անոնց միսը կըամրեն. վասն զի «Մորփի միսը կըսմռազին ձեռքը կը դիւթուի, դանակ, տապար, ուրագ եւ. սրելու ձիրք կ'ստանայ»։ Այն ինչ այդ Մորըփներու կնիկները մեր տղայոց մայրեր և քոյրերը կը խաբեն ֆօլով, թիզ չափելով, գարի ձգելով բաղդը նայելու, տղաքներն ատոնց միսերը կը փրցունեն, ծաղր ստնելով անոնց դիւթութիւնը։

Կը տեսնա՞ս որքան ձեռ պետ (մանր ու-
խուղեր) տղաք կան փողոցներու մէջը, այն-
քանէն աւելի ալ տուները և այգիները
կը զբօսնուն։ Վանը այս մասին օրհնուած է։
Կը պատմեն թէ, ժամանակով էջմիածնի
նուիրակ մը յարևելս յարևմուտս ամեն
քաղաքներ՝ ուր որ հայ կայ, շրջեր, և
ամեն քաղաքի մէջ վանցիներ տեսեր է.
Հնդկաստանի էն վերջին ծայրը հասեր,
լսեր է թէ կաղ հայ մը կայ. երբ «Ո՞ւր
տեղացի ես» հարցուցեր, «Վանցի եմ»
ըսեր է։ Ուստի առած եղած է թէ՝ Վան-
ցւոց կաղը մինչև Չինաստան է հասեր։

Բայց դու դիտէ որքան բազմա-
թիւ անձինք 'ի Պօլիս և յայլուր պան-
դըխտած են. մեր գիտցածները՝ անշուշտ
կնոջ տէր և տղոց հէր են։ Վան զի
երբ հարկն կ'ստիպէ որ մէկը պարտուց և
կարօտութեան երեսէն պիտի պանդխտի,
անոր ծնողք կամ ազգականները կ'աճա-
պարեն «Աստուծոյ կամօք» աղջիկ մը կը
պատրաստեն, կընշանեն, և պարտք մ'ալ
անոր հարսանեաց համար կ'առնեն, կը
կարգեն. «Ոտքը կապենք, որպէս զի դառ-
նայ» ըսելով։ Արդարև որքա՛ն դժուարա-
յնուհետև պսակեալն կը մեկնի իր առա-
գաստէն, ու թէպէտ իւր ոտքը կ'երթայ,

բայց սիրտը կապուած կը մնայ պսակա-
նարօտին կապով. կ'անձկայ պանդխտու-
թեան մէջ թուղթ մը ստանալ, որոյ
գլուխ գրուած է «Յիսուսի Քրիստոսի
ծառայ քո տան անդիւորից (անուանքն) շատ
սիրով և յոյժ կարօտով բարև իմ երկու
աչաց լոյս աղիզ գլխաւորին»։ Եթէ ինն
ամիս անցեր է իրենց ամուսնութեան,
նոյն թղթի մէջ այս սիրտը խշխշացնող բա-
ռերն ալ կ'ընթեռնու. «Ես քո նորաբոյս
ծաղիկ, քո սիրոյ պտուղ, անուշահոտ վարդ-
վարդանից, կամ Մանուշակից»։ Եթէ
տարիներ վրայ անցեր է, կը յաւելուն «Որ
բուլբուլի պէս կը խօսի. որ հրեղէն հրեշ-
տակի աչքեր ունի. որ արեգական պէս
կը փէլկտայ. որ սարեկի պէս կը ճխայ,
կը թռվռայ. որ կաքվու պէս կը գվգվայ.
ա՜խ, կ'ասի, ե՞րբ կուգայ իմ խէրիկ»...
եւ։ Իրաւ է ծնող մայր, ծերունի հայր,
դրացիք, բարեկամք, քորք, եղբարք,
այգին, ջուր, ծառ, տուն, տեղ, և այլն,
ասոնք ամէնքն ալ կը յիշատակուին պան-
դխտին թղթին մէջ. և իւրաքանչիւրն
իւր խորին ազդեցութիւնը կ'ընէ, բայց
անոնց բուն կապը, որ զիրենք կը ձգէ և
կը վերադարձնէ 'ի հայրենիս, բուն բոյն
ու կրակը, որ գիշեր ցերեկ անոնց Չէֆերը
կը խորովէ, Տան Անտիւորն է և անոնց

սիրոյն անուշահոտ Պտուղն ։ Ա՛յս միայն է, որ այն ամէնի Սև ծովու ալիքը և լերանց սառնամանիքը, զանազան վտանգներ և տագնապները կը քաղցրացնէ մեր հայրենակցաց, առ ոչինչս կը համարին Պոլսոյ փափկութիւնը, բարեկեցութիւնն ու ազատութիւնն, որոց թէև հարկ լինի՝ հինգ, վեց, եօթն, և ալ աւելի անգամ դիմել Պոլիս, նորէն կը վերադառնան. ու այսքան մանկանց հայր կը հանդիսանան ։

Օրհնեա՛լ պառաւունք. օրհնեա՛լ հարսունք. օրհնեա՛լ մանկունք, որ այս կապը հնարած և յօրինած էք, և բուն կապն եղած էք. ապա թէ ոչ, արդ մեր շրջած այս գեղազարդ այգեստաննեայց փողոցները կամ թափուր կամ անհայ պիտի գտնէինք։

Նայէ սա մանուկը՝ իր երեսներուն վրայ էրէթիկ, ջրջրուկ (Նարպայ) ունի. մայրը ձեռքէն բռներ կը տանի Պարոնկանց տունը, որ կայծքար ու պողպատ (չաք ու չախմախ) զարնել տայ Նարպային վրայ, և փչել տայ, որ առողջանայ. վասնզի Պարոնկանց Ուսէփ ախբէր քանի մ'անգամ Պոլիս գացեր եկեր է Եփրատին վրայէն անցնելով։ «Ով որ դրախտի գետէն անցած ու խմած լինի, անոր տրուած կը լինի այս կերպով եարան առողջացնելու շնորհն» ։

Սա Մամիկը Ռեշիդէնը թեւն անցուցած նստեր դրան մէջ, և մանուկ մը առջեւն առած . անոր երկու բազուկները բռնած է ու իր բոյթերով ու մատերով տղայի բազկերակները կը ճնշէ, կը շօշափէ, բազուկն 'ի վեր և 'ի վայր մատները կը տանի ու կը բերէ . իր աչքերը անթարթ մանուկի աչքերուն յառած է . և երբեմն ալ արմուկներէն վեր՝ թեւերը կը ճմլէ, կը դառնայ տղայի երեսն 'ի վեր կը խաչակնքէ, և ձեռքը պորտին ու կուրծքին վրայ դնելով՝ բոյթով կը ճնշէ . վզին մայր երակները կը ճմլէ . ճակատը կը շփէ . երբեմն երբեմն ալ երեսին կը փչէ, և միշտ կը պտպտայ, աղօթք կ'ընէ ։ Յաճախ տղան կը յօրանջէ, և ինքն կը յօրանջէ ։ — Կը մագնիսացնէ՞, կ'ելեքտրականացնէ՞, թէ աղօթիւք հրա՞շք կը գործէ — ։ Վերջապէս այդ տղան հիւանդ էր, և կ'առողջանայ . քանի մը առողջապահիկ պատուէրներ կուտայ մօր, և կը պարտաւորէ որ այս ինչ Սուրբին, կամ Եկեղեցւոյն, կամ Խաչին, կամ Մասունքին կամ Աւետարանին ուխտի տանի, և ըստ կարողութեան՝ խունկ, մոմ, մատաղ, եւն, նուէրներ տայ . վասն զի տղան «Աչք առեր է», կամ «Զարոց պատահեր է»։ Իսկ եթէ վախէ յառաջ եկած

հիւանդութիւն է, «վախերակ» կը բռնէ, կ'աղօթէ, և կը պատուիրէ որ «ժամը տանի եօթն գլուխ Աւետարան կարդալ տայ վրան, և եօթն դոյլ ժամի ջրհորէն ջուր թափէ վրան, եօթն մոմ վառէ, կամ տղու հասակի չափով մոմ մը տանի Նարեկայ, կամ Տիրամօր, կամ Ս. Նշանայ»: Աչք առածի համար նաև «կապոյտ ուլնիկ» մը, զոր «աչքից ուլնիկ» կ'ըսեն, կը պատուիրէ կարել տղու գտակին (ֆըխտըկին) կամ կռնակին վրայ: Եւ իր այս ամեն բժշկութեան, գուշակութեան, աղօթարարութեան վարձքը՝ մի միայն կտոր մը օտղօն, կամ թափթափայ հաց մը, կամ բաղարջ մը, կամ քիչ մը միրգ, կամ այս տեսակ փանաքի արժողութեամբ իր մը, ի՛նչ բանի որ նա պէտք ունի, և ինչ բան որ տղու մայրը կարող է տալ. մինչև չախու, դերձան, ասեղ, եւ: Իսկ եթէ տասն կամ քսան փարայ տան՝ իբրև անոր քաշանքին գին, աւելի ուրախ կ'ընեն զինքը:

Այս կարգի Մամիկներուն կը բերեն աղօթելու ընդհանրապէս երբ մէկը «քան զմեզ աղէկներէ» (օֆըներէ) զահահարած լինի, կամ «հրեշտակակոխ», կամ «գրողի զարկած»:

Նայէ սա երիտասարդին, որոյ բազկին կամ պարանոցին վրայ պալար մը կամ խոց մը կայ, կ՚երթայ աղօթել տալու. և Մամիկը աղօթելէն զկնի, կը փչէ, ապա քովի առուի եղերքէն Նշանլեղու բանջարէն տերև մը կը կտրէ, վրան կը թքէ, և զայն դնելով խոցին վրայ կը կապէ, կ՚երթայ ու կը բժշկուի։

Նա տղան Մատիշուրթն ըսուած վէրք մը ունի մատին վրայ, հաւկթի դեղնուցէ և մեղրէ շինած սպեղանի մը կը քսէ վրան, կ՚աղօթէ, կը կապէ և կը ղրկէ։

Մէկալ տղայի ոտքը ջնջխուեր է. առւոյտ խոտը կը ծամէ, կը դնէ վրան, կը կապէ, և կը ղրկէ։

Սա մարդը տանիքէն վար ինկեր, սրունքի ոսկորը ջախջախուեր է. Մամիկը կը մաժէ, և տեղնի տեղը կարգադրելէն զկնի, անլուայ կտաւի վրան շրէշ կ՚անցունէ, անով կը պատէ, և տախտակի մանր կտորներով պինդ կը կապէ, որ չը խաղան կոտրած մասերը։

Հրաման կուտայ աղօր, որ եօթն օրէն ետքը ելնէ իր գործին աշխատէ։

Գ·

Եթէ կենանք նայինք այսպէս բաներու, չպիտի կրնանք ճամբայ երթալ, թող Միան· ուրիշ առթիւ քեզ շատ բաներ պիտի պատմեմ։ Քալե՛նք։

Միւստակ մօրուս հալիւորը դմփիկ (Պնդէզ) ձգեր հինաւուրց բօղացած մեծ ուռենույն տակը նստեր, կռնակը զարկած այն ծառին, որ իրեն պէս զառամեր և թառամեր է· բայց ջուրը՝ որ ատոնց ոտքի տակով կ'անցնի, աճեցութիւն կ'ընծայէ ուռենույն, և զուարթութիւն՝ ծերունույն։ Հոն կարգ մը հասակաւոր մարդիկ նստած զանազան առարկայից վրայ կը խօսին· սովորաբար թաղի տուրքերուն, կամ հասարակաց պէտքերուն խորհրդարանը փողնիգլիաներն են, որ 'ի գիրս կը կոչուի «Հրապարակ ծերոց»։ իսկ մեր ալևորն մէկ երկու իրեն նմանները գտած, կը պատմեն իրարու իրենց երիտասարդութիւնը, իրենց ըրածներն ու տեսածներն· վանայ տիրապետող հին փաշաներու անուններ ու անոնց ըրածները· Հայ Գօճաբաշիներու գործքերն ու ազդեցութիւնը· Առաջնորդաց, նշանաւոր վանականաց և Տէրտէր-

Նայէ սա երիտասարդին, որոյ բազկին կամ պարանոցին վրայ պալար մը կամ խոց մը կայ, կ'երթայ աղօթել տալու. և Մամիկը աղօթելէն զկնի, կը փչէ, ապա քովի առուի եզերքէն Եզանլեզու բանջարէն տերև մը կը կտրէ, վրան կը թքէ, և զայն դնելով խոցին վրայ կը կապէ, կ'երթայ ու կը բժշկուի:

Նա տղան Մատիշուրթն ըսուած վէրք մը ունի մատին վրայ, հաւկթի դեղնուցէ և մեղրէ շինած սպեղանի մը կը քսէ վրան, կ'աղօթէ, կը կապէ և կը ղրկէ:

Մէկալ տղայի ոտքը ջնջխուեր է. առւոյտ խոտը կը ծամէ, կը դնէ վրան, կը կապէ, և կը ղրկէ:

Սա մարդը տանիքէն վար ինկեր, սըրունքի ոսկորը ջախջախուեր է. Մամիկը կը մաժէ, և տեղնի տեղը կարգադրելէն զկնի, անլուայ կտաւի վրան շրէշ կ'անցունէ, անով կը պատէ, և տախտակի մանր կտորներով պինդ կը կապէ, որ չը խաղան կոտրած մասերը:

Հրաման կուտայ ադոր, որ եօթն օրէն ետքը ելնէ իր գործին աշխատէ:

Դ.

Եթէ կենանք նայինք այսպէս բաներու, չպիտի կրնանք ճամբայ երթալ, թող միանուրիչ առթիւ քեզ շատ բաներ պիտի պատմեմ։ Քալե՛նք ։

Սպիտակ մօրուս հալիւորը դմփիկ (Ծնօրէր) ձգեր հինաւուրց բողացած մեծ ուռենւոյն տակը նստեր, կռնակը զարկած այն ծառին, որ իրեն պէս զառամեր և թառամեր է․ բայց ջուրը՝ որ անոնց ոտքի տակով կ'անցնի, աճեցութիւն կ'ընծայէ ուռենւոյն, և զուարթութիւն՝ ծերունւոյն։ Հոն կարգ մը հասակաւոր մարդիկ նստած զանազան առարկայից վրայ կը խօսին․ սովորաբար թաղի տուրքերուն, կամ հասարակաց պէտքերուն խորհրդարանը փողնիգլխներն են, որ 'ի գիրս կը կոչուի «Հրապարակ ծերոց»։ Իսկ մեր ալեւորն մէկ երկու իրեն նմանները զտած, կը պատմեն իրարու իրենց երիտասարդութիւնը, իրենց ըրածներն ու տեսածներն․ Վանայ տիրապետող հին փաշաներու անուններ ու անոնց ըրածները․ Հայ Գօջաբաշիներու գործքերն ու ազդեցութիւնը․ Առաջնորդաց, նշանաւոր վանականաց և Տէրտէր-

նէրաց պատմութիւնը կ'ընեն։ Քովինատողն ալ խան Ապտալին և խան Մահմուտին ժամանակը, անոնց բռնաւորութիւնն ու ձերբակալութիւնը կը պատմէ ։ Տես ի՛նչ կ'ըսէ ։

— « էն տարին որ խան Մահմուտ եկաւ Շուշանց գեղը նստաւ իր ճէլճնէրով (ժըրժըրով), սխտի Այգեստան և քաղաքը թալանէր · չորս դեհէն գեղացիք եկեր լցուեր էին քաղաքը, փաշան քաղաքի դռները փակեր էր · Այգեստանեայց տուները մէկ մէկ ամրոց դարձեր էին · կնիկ, մարդ, ճիժ, բիժ տանիքներ ելեր էին արապահներու ետեւը կեցած, փողնի քարերը, կռէթներ (հօղէ ըըր նօշըր), հող, փոշի և կրամոխիր կուտած էին, որ ճէլօներուն գլուխին և երեսներուն զարնեն, մարտակ, ձողին, թոնիրի շիշ, կրակ, ուրագ, դանակ, ինչ որ ձեռքերնին գըտնուէր · վասն զի՛ «Արգիլուած էր Հայերուն զէնք ունենալ» . . . . ։

—ի՞նչպէս, կը հաւնի՞ս մեր Սպարտացի Այգեստանցւոց ։

Նայէ ի՞նչ կը պատմէ սա մէկալ ծերը ։ «Երանե՛կ էր էն օրերուն, որ կ'երթայինք ուխտ Տիրամէր, Տէր Յուսկանորդին (վանքը), Ականից Լուսապտուղ Ս․ Սահակը, Մեծոփ, Արծուաբեր, Աքանչելագործ Սու-

սուն խաթուն (Տ. Ցուցակագրութեան վանքէց տետրակին մը, Նշանաւոր ժողովածոյ) ձին հեծած, տունէն գլուխ կրակ ու օճլաղ, մէկ ձեռքն. էլ մըզրաղ, կուգար կը ժողվէր ուխտաւորները, ինքն կ'առաջնորդէր. էն արունթերան քրդերէն ո՞րն հոգի ունէր Սուսունի դէմն ելնէր. Սէյտանցիք, Եզտիք, Հէյտարանցիք, Հասնանցիք ըմէն կը դողին Սուսունի անունէն. Էջմիածնայ ուխտաւոր կը տանէր, Մշոյ Ս. Կարապետի ուխտաւոր կը տանէր, Փութկու Ս. Գէորգ, Նարեկ, Հոգւոց վանք կը տանէր կը բերէր։ —Դէ՛ իղի՛ ժամանակներ, դէ՛ —։ Քրդու դավր (դոր) էլ աղէկ հաւատք կէր. Աստուածն էլ շատ կտրիճ մարդեր ու կնիկներ կը հանէր։ Միտըդ կուգա՞յ Ձափկըն (հայ մ'է), որ թօխաթ ու ճանապարհով տասն օր քէլելով Ստանբօլ կ'երթար, տասն օր ետ կը դառնար։ Խթման իրիկուն մը ժամեր կը զարնեն, Ձափկընի կնիկ թոնիր կը վառէ. ճաշ պիտի եփէ, եղ չը կայ. Ձափկըն կ'երթայ Արջակ գեղէն եղ կը բերէ կը հասցնէ, որ վեց ժամու ճանապարհ է. ու խթման պատարագին էլ կը հասնի»։

Կը գովեն և կը գովաբանեն իրենց հին ժամանակը. «Մեր օրերը Աստուծոյ չէնք

շնորհք կար, մկայ (հիմա) ղորդ է ըսող չը կայ. ոչ էլ սէր կայ, ոչ աստուր (երկրա-ջին) ուրախութիւն կայ, ոչ էլ Աստուած յիշող կայ։ Էն կրակ օրերու մէջ ի՞նչ կտրիճ-ներ, ի՞նչ հունարի տէր մարդեր կ'ին (կային) մեր հայերաց մէջ։

Միտըդ կուգա՞յ Ջանկայ Պուղոս (Ջա-նիկ՝ գեղ է), որ չորս գոմշու ոծ (այծ) ունէր։ Իստակ փաշի (փաշայի) օրով Աճմու ֆահլէվան էկեր էր վան, «Էտ մէկ բե, որ ֆեռաշէն թուներնք (ըմբշամարտին), եա էպքանդար ճաշ ու խալնայ կ'ուզեմ» կ'ասէր։ Դէւու նման անհաւատ գազան մարդ մ'էր. ո՞վ ո՛ւր հոգուցն ընցեր էր։ Ջանկայ Պուղոս որ լսեց, «Էտ՛», ասաց, վանայ երկիրն ըսկուն (այսպէս) աւերաւ, որ Աճմու Ֆօլընգէ մը գայ վանայ թալա՞նը տանի»։ Քշեց Պու-ղոս էկաւ փաշին. փաշէն էն օր պիտի ֆահլէվանի ուզածը տէր (տայր), դարդից ու վռստվանից թթուեր աչք սիրես դարձեր էր բաղլի ջուր. քիթմռթէն լու մը կյնէր գետին՝ հազար կտոր կ'ըլնէր։ Ի՞նչ անէր. ֆահլէվան շատ կէր, կը քաշուին էս Աճ-մուց։ Աճամ մ'ասե, Աժդահար ասա։ Դոր որ գնացեր էր, անուն հաներ էր, բերնի բռնածն (ուզածն) առեր էր։

Պուղոս կ'էլնի մէյդան, կը կանչի ֆահ-լէվանը։ Հողագործ մարդ էր Պուղոս, չա-

լաքի չալվար մը, խամաքի զըպուն մը ու քաղախիկ մը հագած, դաշտից՝ գերընդին դրեր գետին, էկեր էր։ Քանի մը տակ (փաթոյթ) մէյտանի մէջ կ'երթայ կուգայ Ա-ճամն, խօսք կը թալի, ձեռ կը թալի, միշտակի նաժոտ կը բռնայ։ —ինչի՞․— վախ-ցուցի Պուղուսուն—․ Մէկէլոր իրար կու-գան, Պուղոս կը վերու Աճմուն կը զարնի գետին, քանձ վիշապ մ'իյնի երկնուց, կը դրմփայ, իդոր փորի ձէն կ'երթայ չուռ իրան ու Թէհրան։ —Ա՛ռ քե ծով ու խա-ջնոյ․ դէ՛ գնա՛ մարդ ճանչցի —։

Բերէք, կ'ասի Պուղոս, ես՝ կնկան հա-լաւ հագուցեմ իդոր, թող ճանչնայ ուր քեռին, թող հասկնայ թէ՛ վանայ խայեր, խոյայ խաներ չեն»։

Պուղուսուն չատ խալաթներ կուտայ փա-չէն, վեց լուծ գոմէշներով գութան մը։ Առաջ էս տեսակ մարդեր կ'ին, բաներ կ'ին․ մկաւան (հէմոկոստն) մարդերն էլ մա՞րդ են։

—«Էն տարին որ Ս․ Կարապետ գնա-ցինք, վրայ բերաւ ուրիշ մէկը, Մշոյ դաշտի մէջ Ցրօնք գեղին մօտ գեղ մը կէր, — անունը ի՞նչ է, գիտե՞ս —․ լե-զուխս ծէրի վէրէնի, չեմ կարնայ ասե։
—Դո՛ւ ասա, Բաբիկ ախբէր։

—Արբհա՛ր— ։ Հը՛ ։ Մարդ մը կէր (կայր) էն տեղ, որ կ՚ասին ․ Ջաղցի քարեր մէկ ձեռնով կը վերուցի ․ կ՚խնի քրդերաց եան, ձիերու պոչէն կը բռնի, պոչ դուրս կը քաշի ․ չորս գոմէշ լծած սէլը (սայլ) ի-տեւանց կը քաշի կը դադրցուցի ․ շատ այլ և այլ բաներ կը պատմին ։ Անուն ի՞նչ էր, դու ասա ։ — Ալօ՛— ։ Հը՛ ․ Ալօ՛ ։ Հայ ջաղց-պանի մը տղայ է եղեր» ։

— Իդոնց ուժ տուածուրիկ ի (երկնային փառք), մճռանկի կրկնեց ամենէն ծերու-նին ․ «Ով եօթն տարի Սուրբ Կարապետի պահս պահի, եօթն դիր (անգամ) երթայ Սուրբ Կարապետի գերեզման համբուրի, ինչ որ ուզի, կ՚առնի» ։

—Խաս դավր ո՞վ միտք կ՚անի ուխտ, ըրբեր, հունար ։ Քօռ օղլին ասեր ի- «Թփանք իշխան օլտի, իգիթլըղ բաթտի» ․ մերն էլ՝ վարժատընեբ, ղաղաթանեբ ե-լաւ, ըմէն բան ջուր տարաւ» ․ ․ ․ — ։

Կը գովեն իրենց կեանքի մէջ ունեցած սովորութիւնները, այսինչին ծնունդը, այնինչին մահը կը պատմեն ․ մէկին հար-սանիքը, եօթն օր եօթն գիշեր ըրած ու-րախութիւնները՝ դաշտ ու մաղ կախելը․ մէկին չափազանց գինի խմելը, որ քա-ջութեանց կարգին է ։ Միւսին նոր նոր ու հանճարեղ խաղեր հնարել և խաղալ ։

Մէկին ճարտարախօսութիւնը ։ Միւսին ճարպիկ ձեռնածութիւնը ։ Մէկն իր ուղեւորութեան արկածները կամ ըրած քաջասրտութիւնը կը ճառէ , միւսն իր երիտասարդութեան օրերն, և երիտասարդաբար ըրածները ։ Կը դառնան նորէն իրենց ներկայ կեանքին վրայ խորհրդածել ու անցելոյն հետ բաղդատել , և զայն ըստ ամենայնի անմխիթար կը գտնեն ու անհամեմատ իրենց ժամանակին ու ճաշակին։

Է.

Քալէ , բարեկամ. բաւական շատ յապաղեցանք հոս , յառաջ քալէ , տեսնելիք ու լսելիք շատ ունինք ։

Ահա մէկ ջրի ակն ալ , ասիկայ խմոր քասան կ՚ըսուի ։ Մեր աջ թևի կողմի փողոցը կը հանէ Սղգայու մեծ ջաղացին . մենք նորէն ուղղակի պիտի երթանք ։ Ական վրայի սա տունը «Թուղթ իրիշկող» (հօա-յող) Բարդաղիմոսը կը նստի , որ ռամ թալել ալ գիտէ ։ Ահա երկու ինկի ելան այդ տունէն կ՚երթան խօսելով . մենք կամաց կամաց անոնց հետեւինք և մօտիկ ընենք ։ Զգո՛յշ, եթէ իմանան թէ իրենց ձայնը կը լսենք , կը լռեն ։ Արդէն կը տեսնաս ինչ-

պէս ոտքէն մինչև գլուխ ծածկուած են կարմիր չիլայ շապիկով, և վրայէն ճերմակ սաւանով մը, իրենց գլուխը, երեսները և բերաններն ալ ամուր ամուր փաթթը-թած են։

— Շողեր խաթուն, ուրբաթ գիշեր հաւախուսացին (հաւախօսն) փօղնի չները գարշել գարշել կ'ոռնային․ մեր դրկցենց տան Նարգիզ խաթուն հիւանդ էր՞, «Գրողը իկեր էր դեհ ինոր արև, չներըաց ոռնալուց իմցանք»։ Իմ տէգէրկինս (տագեր կին, Էրկան եղբօր կին) հիւանդապահ էր գնացեր էն գիշեր․ Գրողի էկած քահ (դահան) պառկուկ կ'էլնի, աչք կ'առնի Գրողին, կը զահահորի (ղահէ հօրխան)․ Գրողն ու հիւանդ շատ կուտան կ'առնեն, հոգին չիտայ․ իրեք օր ի որ հոգեդարձ ի։ Տէգէրսկնկան լեզուն կապուե, կեռիկ փակուե (կարկամել), խելք թռուցե․ ոչ կանայ նստել, ոչ պառկել, ոչ կայնել, ոչ ուտել խմել․ էլե կտոր մը կոճ ինկե տուն։ Կ'ասեն հրեշտակակոխ էլե․ սուրբ սրբերէնք չմնաց կանչեցինք․ խաչ աւետարան հանել տուինք․ էսօր էլ էկայ թուղթ մը անել տուի, թուղթ իրիշկողն էլ ասաց․ «Գրող տիսե վախէցե․ Խաթուն Տիրամօր ըխտաւոր արէք»։

— Թաւիկ խաթուն, աւատա որ ըսկուն ի : Նարգիզ խաթուն գրողներաց հետ կ'առնի կուտայ (յորոբէլրոնիկոն ունի), աշխարհ գիտի : Քանի՛ քանի՛ գիր լսեր եմ ուրնից (նըմէն) որ կ'ասէր. «Գիշերս գրողներաց գլխաւոր կանչեր էր, գնացինք] խորհուրդի, երբ ուր ձեռաց հրեղէն կանանչ ճպոտ իրեք դիր իզարկ դետին, հազար հազար գրողներ մէկ աչքը թարթի մէջ ժողուան էկան : Ինոնց ժողված տեղ՝ ինչխ որ Բաղդադու աշխարհն ըլնի, քանի՛ աչքդ կտրի անոռ անգլօխ մութ դաշտ մը, ոչ կանանչ կը գտնուի, ոչ էրունք թուչունք. սև քարեր, աւազէ սարեր : Գրողներաց գլօխ ամպերաց մէջն ի, ոտքեր գետնի տակ անդունդք հասեր ի. իդոնց երեսներ սև՝ քանձ Ադամայ մութ, իդոնց մրութներ կախուերի չուռ ուրենց ծընկուեր. բերըններ քանձ վանայ ծով. լեզուըներըը մէջ քանձ վանայ բերդ. քիթ՝ քանձ Սիփանայ սար : Խօզու պէս մազոտ ի իդոնց լէշ. ըմէն մազից բոց կ'էլնի, կրակ կը թափի : Հաւքու պէս թև ունեն կը թռնեն, խանի պէս կը քէլեն. մէկ ոտ Բաղդատնի, մէկ ոտ կը թալի Սև ծով. մէկ ձեռ կը խասնի Չինմաչին, մէկ ձեռն կը պարզի Ֆրանգստան : Ուզեն կը պատիկ-

նան կ'ելնեն քանձ լու մը ու անիծ, ուզեն կը դառնան քանձ երկինք գետին պատող սեւ ամպ մը։ Ըմէն գրողն ուր օճոցն ունի, կը պտտեն, ռասա էկածին կը զարնեն․ չե՞ս տեսեր, մեռնողներաց որու ոտքը, որու թեւ, որու քամակը, որու երեսը, որ ուրիշ տեղ մը կը կապուտնայ, գրողի զարկած ճպողի տեղնի։ Նոֆահման մէկը կը հիւընդնայ, մէկը կ'լյնի կը մեռնի․ էն ի՞նչի․ — Գրողից զարկուած կ'ըլնի —։ Մէնակ վիր (ոչէ) տուն որ աղօթք արող կայ, ո՛վ որ առաւտուն իրիկուն Նարեկ կը կարդայ, Սաղմոս կ'ասի, Ներսիսի կ'ասի (24 տուն Հաւատով), օր քանը չորս ծունր կը դնի․ ո՛վ որ կիրակմուտ գիշեր ճրագ վառ կը թողնի, կիրակի իրիկուն խունկ կը ծխի, չորեքշաբթմուտ, ուրբաթմուտ կը պահի, վիր տուն, վիր վէրէն որ համայիլ կայ, գրող էն տներաց փախսի․ պահապան հրեշտակից կը խափանուի »։

—Համայիլը՝ քանի մը կանգուն երկայնութեամբ թուղթ է, որոյ մէջ գրուած կայ շատ մը հրեշտակաց անուններ, զորս 'ի պահպանութիւն կը կոչէ զայն կրող անձին։ Աստուծոյ հազար ու մէկ անունները գրուած կայ․ « եղիցի օգնական պահապան [illegible] [illegible] ծառային »։ Նարեկացւոյ

աղօթքներէն «Բարեբանեալ», և Որդի Աստուծոյ» գլուխները, «Հաւատով խոստավանիմ» աղօթքը, և «Կիպրիանոսի վարքը», յորում սատանաներու անունները կան. և ամեն մէկ սատանան ի՛նչ չարեաց պաշտօն ունի, ու անոնցմէ ամեն մէկի դէմ՝ ո՛ր հրեշտակ կարգուած է յԱստուծոյ պահպան հաւատացողին, գրուած է։ Այսու՝ Սատանաներ կամ Գրողներ կը լինին Խարաբանոյ դեւերը, զորս Պարսից կեշտ կամ Զրադաշտին օրէնքը կը սահմանէր, և որոց վրայ բաւական գրած են մեր Եղիշէն՝ իր պատմութեան մէջ, և Եզնիկ՝ Եղծ աղանդոցին մէջը —։

Նարգիզ խաթունի պատմութիւնը կը շարունակէ Շողերն։

«Ո՛ր տեղ որ սով, մահ (մահտարաժամ), հեծել (աղտարակ) կը պատահի, Գրողներաց գլխաւոր կ՚իմնայ որ Աստուած ուր ձեռ քաշե էն տեղից, էն մարդուց, ինոր անուն կը գրուի գրողի դաֆթար. գրողները կը ժողվի կ՚օրօխկի էն տեղեր, որ կ՚երթան տրտեր կ՚ուրեն, հասածին կը զարնեն հոգին կ՚առնեն։ Տղաքեր ծննդական կնկան շատ թշնամի են. թէ որ ինոնց քարձի վէրէն համայիլ, Նարեկ, Սաղմոս,

Աւետրան, աղօթագիրք մը չտեսնան, մէ-կեցմէկ կը զարնեն: Մէկէլ ծննդականի պառկած տան պատերուն վէրէն խաչ կը քաշեն, խաչից կը խափանուին: Մարդ-որ օրօչկտայ, բերնի վրէն խաչ չհանէ, դրողներ կը մտնեն մարդու փոր կը դիւա-հարցուցեն: Մութ ժամանակ ծառերաց մէջ, ջրի ակներաց մօտ, ծուծակներաց մէջ, ջրի հորերու մէջ, աւեր տներու մէջ կը բնակուին. ո՛վ որ էն տեղերէն ընցնի «Յիսուս Քրիստոս» չասի, չար կը հասու-ցեն: Գօռերաց մէջ կը մտնեն, ո՛ր մեռլի վէրէն որ «փառք ՚ի բարձունս» չասեն, էն մեռել գօռնաղար կ՚անեն:

—Մէջ Ակրփի մէջ Շաղբաղի հին գօռեր կան. ընցած տարուընտանք Լ. Բ. գիշրանց էլեր էչ հէծե կ՚երթայ՝ պիտի երթայ Շաղ-բաղի ուրենց իգին ջրել. մէկէլ կը տեսնայ որ ճամխի (ճանապարհէ) բերան կատու ճագ մը, ինքն ինք կը մէգի (մօռթէ) կ՚ասի, տես-նաս վի՞ր (ո՞ւր) կատունի գողցեր տարեր են՝ դառձե կ՚երթայ տիրոջ տուն. կը տեսնայ որ չէ՝ կատուն կը պէտնայ (մեծնայ) կ՚ըլնի ղուղու (ղուղէն չափ). դէ՛, դէ՛, կ՚ըլնի քանձ ձուղէ (ձորւոլ չափ) մը. դէ՛, դէ՛, դէ՛, կ՚ըլնի քանձ էչ մը. Բ. ի թուք մէջ բերնին կը չորնայ ահու. մէկէլ ի՞նչ տեսնայ, գօ՛

(ոհա) մօրէ մերկ մարդ մը էլե հէծեալ իշու Նասրէտին: Աստուած փրկի ազատի՝ ահաւ կը չորնայ, չուամ գողու ժամեր կը զարնեն, գօռնադաբ կը խափանուի. ամա՛ Բ. Է գլխու մազեր կը դիզանան, գագթից մուխ կուտայ դուրս. անձն փուշ փուշ կ'էլնի, լեզին կը պատուի. ինոր վէրէն ծառաւ, կեռիկ փակուաւ (ակըաններ էյրարճըրայ նը ֆակոաքին), քառուսուն օր ոչ զրուցեց, ոչ կերաւ, ոչ խմեց, ինչքանդար ջեն, ծոյլայ, տէրտէր, անբախտի (ուշխուրհակաւ) Թուղթ արող, աստղ իրիշկող (Աստղագէտ) կէր՝ էկան, ճար մը չկարցան անել: —Մեռնեմ ուր զօրաց — կենդանանից աւետրան բերին, Կարմիր աւետրան բերին, Շէկ աւետրան բերին, Թագաւոր աւետրան բերին, Նարեկ հանին, Կիպրիանոս կարդացին, համայիլ գրեցին, աւազանի ջրեր բերին, Հոգւոց վանից գեղարդ բերին, խաթուն Տիրամօր գերեզմնից հող բերին Ջրով տորորիցին լցին բերան, չէլաւ չէլաւ, իտրին դրին Սբբ Նըշանայ բալնիս բերին միրցին (խօրնեցին) բերան, կեռիկ բացւաւ. երկու տարի տեղով ջլով (յանկողին) պառկաւ, հազար ջորով ([illegible]) աղէկցաւ»:

—Գօռնադաբներու հաւատք ընծայող չատեր կան Հայաստանի մէջ: Առաջէլ

պատմագիրն այլ իբրև իրողութիւն կը պատմէ հետևեալը . . . :

. . . « Յետ չորից աւուրց ուրանալոյ իւրոյ սատակեցաւ Ղարաչօրակն, և յետ չորից աւուրց թաղման իւրոյ՝ յաւուր միում ընդ մերձենալ երեկոյին տեսին զՂարաչօրակ ուրացողն, զի ելեալ էր 'ի վիհէն յորում թաղեալն էր, մերկ և խայտառակ և գարշադէմ և այլագունակ, իբրև զշուն կատաղի. և զպատանն իւր արկեալ 'ի վերայ ուսոց իւրոց գայր ընդ մէջ քաղաքին 'ի շուկայն և 'ի կրպակն շրջէր. և որք տեսանէին՝ զահի հարեալ ահարեկ լինէին, քանզի ամենեքեան ճանաչէին զնա . . . : Եւ յամենայն աւուր ելանէր ընդ մերձենալ երեկոյին . . . և մինչ 'ի լուսանալ առաւօտուն շրջէր. և ընդ մերձենալ առաւօտուն գնայր 'ի դիրն իւր մտանէր: Եւ վասն ստուգելոյ թէ նա է Ղարաչօրակն, յորժամ նա եկն 'ի շուկայն, միաբանեալ արք տասն, գնացին 'ի վիհն, և տեսին ոչ էր անդ Ղարաչօրակն. և զայս արարին չորս անգամ: Յաւուրս եօթն այսպէս առնէր, յորոյ զարհուրելի տեսլենէն զարհուրեցաւ քաղաքն (Նախիջևան), և յորում ժամու ժամանէր ժամ գալստեան նորա, թողուին ամենեքեան զխանութս և զգործս իւրեանց և

փախչէին ։ Այլ և դասք գիշերապահից , որոց Հասաս ասեն , լռեցին 'ի գիշերի շրջելոյ ։ Ապա ընտրեցին զարս արիասիրտս և զքաջազօրս և զկորովիս աւելի քան զերեսուն , և վառեցին զնոսա զրահիւք , զինուք պատերազմականօք , նետիւք և աղեղէիւք և սուսերօք , և պատուիրեցին նոցա սպանանել զՂարաչօրակն ։

' Եւ յերեկոյեան պահուն տեսին զի գայր , պատրաստեալ արքն ընթացան առռաջի ։ իսկ նորա զփախուստ տուեալ գնացեալ եմուտ 'ի յորջն յորմէ ելեալն էր ։ իսկ զկնակրից արանց հասեալք 'ի տեղին անդէն խողխողեցին զնա սրով և կտրեցին զգլուխն , տարին յայլ հեռաւոր տեղի և և կորուսին » ։

Վանայ մէջ ալ ընդհանրապէս գօռնագաբները « բահով կամ փայտատով մինչև գլուխները չկտրեն , անհետ չեն լինիր » կ'ըսեն ։

Շոզերն ու Թառիկ տիկնայք իրենց երեսները կը խաչակնքեն ․ կուրծքը ծեծելով՝ յԱստուծոյ կը խնդրեն , որ փրկէ ազատէ զիրենք և իրենց պարագայքը և համայն Լուսաւորչու ազգը այսպիսի չար պատահարներէ ։ Ապա կը հարցնէ Թառիկը ․

— « Շոզեր խաթուն , կ'աս'ինչ ա-

պատմագիրն ալ իբրև իրողութիւն կը պատմէ հետևեալը . . . ։

. . . « Ցետ չորից աւուրց ուրանալոյ իւրոյ սատակեցաւ Ղարաչօրակն, և յետ չորից աւուրց թաղման իւրոյ՝ յաւուր միում ընդ մերձենալ երեկոյին տեսին զՂարաչօրակ ուրացողն, որ եղեալ էր 'ի վհէն յորում թաղեալն էր, մերկ և խայտառակ և գարշադէմ և այլագունակ, իբրև զշուն կատաղի. և զպատանն իւր արկեալ 'ի վերայ ուսոց իւրոց գայր ընդ մէջ քաղաքին 'ի շուկայն և 'ի կրպակսն շրջէր. և որք տեսանէին՝ զահի հարեալ ահաբեկ լինէին, քանզի ամենեքեան ճանաչէին զնա . . . ։ Եւ յամենայն աւուր եղանէր ընդ մերձենալ երեկոյին . . . և մինչ 'ի լուսանալ առաւօտուն շրջէր. և ընդ մերձենալ առաւօտուն գնայր 'ի դիրն իւր մտանէր ։ Եւ վասն ստուգելոյ թէ նա է Ղարաչօրակն, յորժամ նա եկն 'ի շուկայն, միաբանեալ արք տասն, գնացին 'ի վիհն, և տեսին ոչ էր անդ Ղարաչօրակն. և զայս արարին չորս անգամ։ Ցաւուրս եօթն այսպէս առնէր, յորոյ զարհուրելի տեսլենէն զարհուրեցաւ քաղաքն (Նախիջևան), և յորում ժամու ժամանէր ժամ գալստեան նորա, թողուին ամենեքեան զխանութս և զգործս իւրեանց և

փախչէին ։ Այլ և դասք գիշերապահից, որոց հասաս ասեն, լուեցին 'ի գիշերի շրջելոյ ։ Ապա ընտրեցին զարս արիասիրտս և դքաջազօրս և զկորովիս աւելի քան զերեսուն, և վառեցին զնոսա զրահիւք, զինուք պատերազմականօք, նետիւք և աղեգէիւք և սուսերօք, և պատուիրեցին նոցա պահպանել զՂարաչօրակն ։

' Եւ յերեկոյեան պահուն տեսին զի գայր., պատրաստեալ արքն ընթացան առաջի ․ իսկ նորա զփախուստ տուեալ գնացեալ եմուտ 'ի յորջն յորմէ ելեալն էր ․ իսկ զինակրից արանց հասեալք 'ի տեղին անդէն խողխողեցին զնա սրով և կտրեցին զգլուխն, տարին յայլ հեռաւոր տեղի և և կորուսին» ։

Վանայ մէջ ալ ընդհանրապէս գոռնադարները «բահով կամ փայտատով մինչև գլուխները չկտրեն, անհետ չեն լինիր» կ'ըսեն ։

Շողերն ու Թաւրիկ տիկնայք իրենց երեսները կը խաչակնքեն ․ կուրծքը ծեծելով՝ յԱստուծոյ կը խնդրեն, որ փրկէ ազատէ զիրենք և իրենց պարագայքը և համայն Լուսաւորչու ազգը այսպիսի չար պատահարներէ ։ Ապա կը հարցնէ Թաւրիկը․

— «Շողեր խաթուն, կ'աս'ինչ ա-

սաց (Ֆուլյեօ ն'ըօեն) ինչքանդար չըլնի, դու քանձ ծիկ (թան գյէօ) շապիկմ' երկու աւելի հագերես (մէծ և փօշմանոււ եմ) · էս երկու տարի ի որ մեր Թաղի Գրողի Գըղիրենց (դուան և դոնձի անուան է) Պարիկ (մօրբուս անուան է) ինկաւորուեր ի (ըսպանօրեց է), գիշեր մը աղուն բարձե կ'երթայ ջաղաց, մարդագէլ (մօրբաքօյլ) կը տխնայ ճանբախ · խնօրից կը պրծնի կ'երթայ աւեր ջաղցի մը ջրտան (ջրպան ն'օլսուն, սաբօհ ջրբըղլցէկի ջօրբը անխաներան ըպրնօսելով և թօբէր րոբյաներով արբատօ նը հօսէ) բերան կը նստի կտոր մը հանգ (հանթխօպ) առնի · լուսնակ նոր գլօխ կը բանձրացուցի, մէկէլ կը տխնայ որ Նաւլօւբ Նաւլօւբ ձէներ կը լսի · ես ասեմ հարիր (հօբէօբ), դու տաս հազար, սև սև ջօբէ պատուընեբ մէկ մէկ օձ բռնած ուրենց ձեռք կուգան կը մտնեն էդ աւեր ջաղաց · Պարիկի սուսունք կը դողայ (Բօլըբ անձ կը թօբմէօ) ։ Մէկէլ կ'իրիշկի որ ի՞նչ · դետի ջրից կ'ելնեն անթիւ տղջիկներ հուրնի ի հրեղէն մազերով, ուրենց իրես դարնան լուսնկի պէս պոծառ, կ'ելնեն կը փռուլին սար ու ձոր, դեղն ու քաղաք ։ Մարդ կը զարմանայ, ի՞նչ պիտի ըլնին խօսնք ։

—Ավա՛ր, քա՛, դու էդ աւուր հասեր ես, դէլ ալա՛ (ջէօ ցօրբ) չե՞ս գիտե ։

էն և պառվըներ գիշըրուան մէրերն (մայ-րերն) են․ ուեր ջաղցներ, ցամաք հորեր կը մտնեն ցերեկները, էն տեղեր ճանբախ են չինե կ'էջնեն (կ'իջնան) ջուր գետնի տակ, ծովու տըկներ աշխար երկիր կայ, կ'երթան կը փուան (շըքին), իրիկուըներ սարերաց տակէն կ'ելնեն մեր աշխար։ Աստծուց անիծած, Աստծու իրեսանց ին-կածներն են իդոնք․ էն օձեր ղըլըղըմ են․ թէ որ արևու իրես տեսնան, հողի իրես մարդ չմնայ՝ ըմէն կը փչացուցեն, օձերով կը լցեն։ Ադամայ տարուընէ բաց (հետէ) Արեգական իտև կը պտտեն․ Արեգակ կը քէլի (քայլէ), ինոնք կը քէլեն, չեն կանա հասնե․ իրկուըներ կը հասնեն մեր աշխար, կը տեսնան որ արև մտե, մեռլի արևն ի (վերջնալոյս) մնացե, մէկ բերան կը փչեն մութ խաւար արարած կը բռնի․ սար, քար, տուն, տեղ, դեղ, քաղաք ըմէն տեղ կը մտնեն կ'ելնեն, գիտեն թէ Արե-գակ տեղ մը պահկուեր ի, չեն գտնե (գտնէր), կը մտնեն գետնի տակ փտրտեն․ ինոնք կը մտնեն չեն մտնե, աղօթրան կը մաղկտայ (արշալոյս կը ծագանի), արեգակ գետնի տըկէն (տակէն) կ'ելնի․ գիշերուան չարեր ըմէն ինոնցից կուգայ խօնի գլօխ․ անդա՛ր (անօրէն) հազար են ինոնք, աշխար արարած բռներ են»։

էն մէկէլ աղջկըներ փարի (Բուրէ կամ ֆուրէյէ) են . ինոնցից դաս մը կայ որ տըղաներուց մէջ կողուանքներուց (անկողնոց) տակ մութ սուճախներ կը բնակին . գիշերները քընու դեղ կը թափեն վէր մարդու , մարդու աչքերուց թարթափներ կը խփեն, մարդու ճակատն ու փիրա սակատը (կուրծք կամ լերդը) կը մաժեն (շփեն) , բարի քաղցրեն երազ կը տխնայ մարդ ։ Դասմ՝ էլ կայ , որ ջըրերուց մէջ կը հունաւորուին . Լուսնըկին եա Լուսոյաստղի շառաւեղք որ տխնան , կ՚ելնեն ի՛նչքանդար Աստծու ստեղծած ծաղիկ ու կանանչ կայ , կը ջրեն . տառաւորման էն մեղրահամ զըզըղուն հով քամին (օդ-քն) ինոնց նաջաւն (շունչը) ի » ։ — Աստծուն մեռնեմ ուր անուան . ինքը մէկ , ուր ստեղծածը՝ հազարը մէկ — ։

—Ութիս էսօր գնացերինք Ցակառուց ժամ . Ցատմէր (պատմէր) Ասլիկ խօ գի՞տես , ի՞նչ բաներ ասաց , ի՞նչ բաներ ասաց ։ Ուրբաթ օր գնացեր էր Տէղէլք . (Տեղեր կ՚ըսեն , երբ էէր մէկը հոգւով կը յափշտակուի ընդ օդս կամ յանդընդս , ուր զանազան տեսիլներ կը տեսնէ , եւ մարմինը կը մնայ անշշնչ) . իմ օղորմած կիսուր տխներ էր ։ — Վա՛յ , Աստո՛ւած , Նշանց (ցոյց) չիտաս — ։ Շատ խշունց (չէշոց , հայհոյանք) կուտէր (կուտար) ,

տղքըտի , քանհանի հետ շատ քարսիրտ էր․ ո՛վ ինոր անուն տայ , կ'ասի «Օղորմիս հոգին , չհասնի կողին» ։ Դատմէր Աղիկ կ'ասէր․ Հասայ հրեղէն գետ , տեսայ Մազէ կարմունջ կապեր են․ էն գլօխ դրախտն էր , էս գլօխ դժոխք․ Կիսուրդ մնացեր էր բիւր բիւրոց սատանի ձեռ․ մէկ՝ առճինճ (ճամաշ) հարէզանով (եղ չորեղա մորաչ) կը զանէր , մէկ՝ պողպատէ շիշեր կրակցուցեր՝ ինոր կող կուշտ կը դաղէր , մէկ՝ թալքանով (օթցան) մսեր կը պոծուցէր․ Աստուած տղատի՝ բերնի մէջ խլին որդ էր, խուե՝ եօթն գլխէն հրեղէն վիշապ բերան բացեր էր որ կուլ տէր․ էն գահ ինչ կը փշէր (ճճէր) բոց կ'էլնէր էնի կը վառէր․ կ'ուզէր փախնիլ , առջև՝ հրեղէն գետն էր․ ոտ կը դնէր մազէ կարմնջի վերէն , մեղք ծանր էր , մազ կը կտրէր կ'ինէր գետ ։ Կրճեղատամն («Անդ եղիցի լալ և կրճել ատամանց» խօսքին անյատուկութեան դառնալ էն) ուրագի պէս ատամներ կըրճըտած խնոր միսը կը ծամէր․ կուպրի կարասներ պռկապռուկ (մինչև շրթունքը լի) եռման կուպրեր լցած շարեր ին էնտեղ , մեղաւոր հոգիք շուռ վիզ դրեր մէջ կ'իփեն։ էն գեհ՝ Բարիդրկցեց (դառն անուն է) հարս դրախտի մէջ հազար հազար հրեշտակներ ուր կողկուշտ (շքեղապէս) անձեռ-

չեն փախչիր․ ոչ ֆէրաճայի պէս ծանկող սաւաններ ունին, և ոչ վրայի չապիկ ու մխմէլ․ ուրեմն քաղաքաց կանանց այս միճակը, քաղաքաց արանց բարոյականին հետեւանքն է ։ Սակայն, եթէ չեմ կրնար յայսմ պաշտպան հանդիսանալ այս սովորութեան, ներուի ինձ դիտել թէ, չեմ ալ ուզեր մէկալ ծայրայեղութեան հասած տեսնել կանանց սեռը, որ ըստ ամենայնի հոլանի երևին, և իրենց մայրեր ու սկեսուրներն աղախնոյ պէս ծառայեն, հարսն ու աղջիկ կուռքի պէս հտպտանօք զարդարուի ու բազմի, կամ իրենց ծնողք, եղբարք, էրիկները՝ սպասաւորի մը պէս անոնց ետևէն ընթանան, անոնց հրամանները կատարեն․ ինչպէս են կիսաքաղաքակիրթ տեղերը, որ Աստուածային և բնական օրինաց ու կարգաց հակառակ է իսպառ ։

Ահա մայրս կուգայ ։ Արդի թնդումէն կականաբարձ կուլայ․ և թևերը բացած կը թռի յիս համնելու, զիս գրկելու, կրծոց վրայ սեղմելու և համբուրելու․․․ ։ Երթամ ձեռքը պագնեմ ։ Ետևէն եկողներն ալ եղբարքս են․ և այն երամով թռվռացող կանոյ ու գլուխները (ճանըքլի ճանկօրէ+) եղբարցս զաւակներն են ։

Թո՛ղ։ Ներէ ինձի վայրկեան մը ծնողական և ընտանեկան երանութիւնս վայելեմ, բարեկամ։ Ա՛հ, բաւակա՛ն չատ միջոց եղաւ կարօտի և անձկութեան կրակը սիրտս կը լափէ... մի քանի պուտ (կօբնէկ) արտասունք ալ իմ աչերէս... Թող կաթին... որ հովանայ հոգիս....։

Ցո՛ւչ, առ հասարակ պանդուխտները.. Ցո՛ւչ հեռացելոց և միացելոց սրտի վիճակը, մորմոքումն ու լացը։

Աստուած հանէ ամեն սիրտերը արեան կարմիր ծովեն։ Աստուած փրկէ ամեն անձերը կամաւոր գերութենէն, ղուրբէթ ղուրբէթի կարօտ քաշելէն....։

Ես, թէպէտ ամենուրեք մարդասիրաբար ու պատուասիրաբար հանդիստ գտած եմ, այլ սակայն չէի կրնար մոռնալ ոչ մեր փողոցի ծառն ու ճիւղ, ոչ ջուրն ու հող, ոչ շոգն (արևան թաս) ու հով, ոչ ժուռն (ճշտած մէջք կամ աղօխ) ու խաղող, ոչ տանձն ու խնձոր, ոչ ծիրանն ու սալոր, ոչ աղբիւրն ու ջրհոր, ոչ դաշտն, ոչ սար և ոչ ձոր։ Երբ ուտէի հաց ու կեր (կէրանքսար), կը յիշէի մօրս եփածները. երբ 'ի պարտէզ և 'ի բուրաստան մը հրաւիրուէի, կը յափշտակուէի հոս։ Չկրցի երբէք զոհ ընել զիս, և մոռնալ տալ սրտիս ու մտքիս այս հողաշէն անշուք խրճիթը, որ

իմ հայրենական տունն է, յորում ես առաջին անգամ աչերս բացած և արև տեսած եմ։ Զկրցի մոռնալ տալ այս չուքերը, որոց ներքև իմ օրօրոցս օրօրուեր և իմ ծնող մօրս սրտաբուղխ ձայնով խաղեր և դարդարներ եմ լսեր. մոռնալ այս ճղերը, որոց վրայ ելլելով ձեռօքս միրգեր եմ քաղեր և կերեր. մոռնալ այս դալարաւէտ և ծաղկաբոլոր վայրը, ուր ծնողացս, եղբարցս, և հիւրերու ու ընկերաց հետ նստած հաց կերեր, ծաղիկ փնջեր, մանկական խաղեր և զուարճութիւններ անցուցած ենք։

Ո՜ մանկական երանաւէտ օրեր և ժամեր. այսօր Ձեզ կը հանդիպիմ վերստին, և շատ դիւրութեամբ մէկէն կը մոռնամ տեսածս սքանչելի շէնքեր, պալատները, պարտէզներ, ջրեր, ճոխութիւնք և վայելչութիւնք պայծառ և մեծամեծ քաղաքաց, որք իրենց ամեն պերճութեամբ և չքեղութեամբ չկրցան մոռցնել տալ զձեզ ինձ. այլ յաւէտ առ ձեզ կը գտնուիմ յափշտակեալ։

Եղան՝ թերևս ծնողքէս աւելի խնամածուք ինձ, եղան եղբայրներէս ու մանկական ընկերներէս առաւել սիրողք և մտերիմք ինձ. այլ չեղաւ հնար որ միևնոյն յարգանք ու համակրանք գրաւէին, ինչ-

պէս-այս պառաւ մայրս, այս հասարակ մարդ երեւցած ընկերքս և եղբարքս։

Քանի՛ բուռն է բուն վայրն ու տուն, բուն հայրենիք մարդուն։

Աստուած դարձնէ ամեն ղարիբ ղուրբաթն իւր տեղն ու տուն։

Այս տեղը, սիրելի բարեկամ, ուր նստեցանք մենք, աչերդ վեր առ, տես ի՛նչպէս մրգաւէտ ծառոց ճղերը իրարու պլօլուած հով գործած են մեր վրայ. աչերդ շուրջ ած, բոլոր բոլոր վարդի թփեր են, և ահա որը բացուած, որը կոկոն, քաֆուր վարդ, սիւտակ վարդ, դեղին վարդ, կարմիր վարդ, բող վարդ՝ որոյ թերթի մէկ երեսը կանանչ է, մէկ երեսն՝ բոցագոյն կարմիր. տես լէլաղ ծաղկի ծառերը վարդենեաց շրջապատն, իսկ ստորոտները կարմիր կակաչ, դեղին կակաչ, մանուշակ, սուսամբար, բարդխաբաղ, զումբուլ, նօնօֆար. այս ծաղիկները որ իւրաքանչիւր ամսոյն կարգ 'ի կարգ կը ծաղկին, իրենց տեսքով ու հոտով դրախտի մանրանկարը կը կազմեն։ Բարակ առուով մը ջուրը պտոյտ կ'ընէ այդ փոքրիկ դրախտին շուրջը, և կ'անցնի ոռոգելու քովի ածուները, ուր ցանուած են ռէհան, նանա, տըրխուն, նարգիզ, համեմ, սև

սունիչ, բաղրաքա, դինձ, կարօս, բողկ, սոխ, սպանախ, բաղուկ, շողգամ, ղը-գում, վարունկ, սխտոր, կանճրակ, գլուլ, բադլայ, տապզին, ևն.

Իսկ առուի եզերքները խոտերու մէջ կը բուսնին ուտելու բանջարներէն՝ կոմու ճակտիկ, պառվու մէզար, սիւեղ, աղջըկուստակ, գառուգմակ, մատուկ, աւելուկ, փշփշուկ, ճնճղկու պաշար, խինձ, թանի բանջար, ճարճրտուկ, եղինճ, ևն.:

Այս կարգով ու ճաշակով յօրինուած են մեր այգեստանեաց ամեն այգիները: Վերը նայէ, խնձորենին, տանձենին, սալորենին, ծիրանին, կեռասը, շարտաղուկն (դեղձ) իրենց ճղերով կանանչ երկինք մ'են կազմեր մեր վրայ. և այս կամարէն կախուած են պտուղներ գոյնզգոյն, ո՛ր ժուռ, ո՛ր հասուն: Շրջապատող անուշաբոյր հոտերէն չե՞ս զմայլիր: Հո՛ս, այս տեղ կը դնեն մեր մայրերը իրենց մանկանց օրօրոցները, և ծառերու ծաղկած օրերը՝ ծաղիկներով կը ծածկուի մանկան օրօրանը, հոտաւէտ խոտերու և ծաղկանց հոտով կը շաղախուի մանկան ծծած օդն, երբեմն կ'արձակէ մայրիկն տղեկի պինդերը (ողջն օրօրոցի մէջ կապելու կապն), և կը դնէ իր ծաղիկը այս ծաղկանց ծոցը, որ գլորուելով թաւալելով ծաղկանց թերթերը

կը ճամփէ, ուր փմփիուս կատուռ ձագ մ'ալ իրեն նման փափուկ մանկիկին թաթիկներուն հետ խաղ կ'ընէ, մէկ կողմէն ալ ճնճղուկները աչքի տակով կը դաւէ։

Այգեստանեայց այգիներու ձեւը միապէս են. ինչպէս կը տեսնաս, չորս կողմը ուղղանկիւն պատ մը կը գործեն. պատերէն մէկ կանգուն հեռաւորութեամբ ջրի առուն է. առուներու երկու շրթները բարդի ծառեր են. պարտիզին մէջտեղը՝ ծառոց հովերէն հեռու՝ խաղողի այգին է՝ թումբ թումբ բարձրացած. որուն «Ափներ» կ'ըսեն, որոց վրայ է որթատունկն. և խաղողները կը պառկին արևուն հանդէպ ու կը ջեռնուն ափներու հողերուն վրայ. ափները կը փորեն ամեն գարնան. թումբերու միջոցները փոս առուներ կը մնան, որոց մէջ ջուր կը կապեն որթերու արմատը ջրելու համար. այգէկութին՝ այս փոսերու մէջ կը կայնին խաղողներ կը կթեն, որ ողկոյզները չտրորուին։

Նորպատունկները՝ այգիներու մէջտեղը աշտարակաձև շէնք մը ունին եռայարկ, հնձան է այն. որոյ բարձր տանիքէն կ'երևայ այգիին չորս կողմը. խաղողի հասած ամիսը Նորատունկներու մէջ մեծ ուրախութիւն կ'ընեն երիտասարդները,

հրացաններով կը հաւաքուին այդ աշտարակները, և գիշերուան գողերէ կը պահպանեն այգին՝ հնձանի տանիքէն ելելով ։ Լուսնակի լուսոյն՝ պատուական տարեխ ձուկը, սունկով ջըլբուր, և մսի խորովածը չամիչի արաղով և տարի մը առաջ այգիի մէջ ռուճիկով թաղած կարմիր գինիով կը ճաշակեն, խաղ ու տաղ կը կանչեն, հրացան կ'արձակեն ։

—Բերէք, հոգիմունք, այդ կրակի ծուխն ու հոտ, այդ աղաղակի ձայնն ու դղրդը, հասուցէք ինձ մօտ — ։

Խաղողի ափներէն հեռու մինչև պատերուն քովի առուն չորս դեհէն ածուներ կան. զորս փորելով ամեն գարնան՝ զանազան հունդեր կը սերմանեն և այն ածուներու ծյած թումբերուն եզերքը կարգ 'ի կարգ տնկուած են ծառեր սերկևլի, քաղցրակողինձ և դառնակողինձ ծիրանի, դամոնի, շարտագուկի, ամառնուկ և ձմեռնուկ խնձորի, կէօսիկ և թթու ալուչայի, պնտուկի, ընկուզի, կեռասի, բալի (ֆիշնէ), տանձի ։ Ցանձի տեսակները և անունները տարբեր են. զոր օրինակ, վաղահաս (Բեդրէյէն) տանձ, մեղրուկ տանձ, ճենճուկ տանձ, ղըղդըղեկ տանձ, պռկօշ տանձ, մարտիրոս տանձ, չալաբիկ տանձ, մոկաց տանձ, մալաչիկ տանձ, մէրնիկ տանձ,

ռունեկ տանձ, մալաչի տանձ։ Մալաչին՝ պատիւ ունի անուանիլ տանձից արքայ, թէ՛ իր համեղութեամբ և թէ մեծութեամբ։

Այս մրգերը, մանաւանդ տանձն ու խնձորն, սկսեալ մայիս ամսէն մինչև հոկտեմբեր իւրաքանչիւր տեսակներն զատ զատ ամսոց մէջ կը հասուննան. աշնան հասածները «ձմեռնուկ» կ՚ըսուին, զորս կախուան (ճըլըզ) կ՚ընեն սենեակներուն մէջը կը կախեն, և մինչև նորն հասնի, դեռ հինէն կը ճաշակեն։ Ամռնուկներէն ալ տապակ տապակ, շերտ շերտ կը կտըրտեն, կ՚իստակեն, «չիր» կ՚ընեն, կը չորցընեն կ՚ուտեն. ինչպէս նաև ծիրանն ու ալուչան կը չորցնեն, կոռօվայ (բէօրէկ) կ՚ընեն, և կերակուրի մէջ գործ կ՚ածեն. ծիրանի չիրէն «մուժրաճայ» կ՚ընեն, մարդու կերպ, թռչնոց կերպ, և այլ զանազան ձևերով կը շարեն։ Քաղցր կողինձները ասեղով ու դերձանով շարելով հագնելու զրահ կը շինեն, տուրիկ (ղանլըօյ) կը յօրինեն, ևն։ Ամռնուկ տանձի և խնձորի քռուածք (Բօսուշէ) կը դնեն, որ շատ համեղ կը լինի. նոյնպէս խաղողի, սեխի քռուածքներ ունինք, որոց հետ ռէհան և այլ հոտաւէտ բանջարներ դնելով, և կամ քիչ

մը մեղր, կամ աշնան օրերը քաղցր գինի (շիրա) լեցնելով մէջը, աղոնց համին ու հոտին մարդ մշտակարօտ կը մնայ :

—Օ՛հ, բերանս ջրալիր կը չրփչրփայ . . . ուտողաց կմունքն (քիմքը) ակռկի — :

Խնձորենեաց ազնիւ տեսակներէն՝ Արտամետու խնձորն ամռնուկ է, կեղեւը շատ նուրբ, միսը փափուկ, խատուտիկ կարմրով և անոյշ հոտով : Ձմեռնուկները «Խլաթ խնձոր» ըսուած, որ քանի մը տեսակի կը բաժնուի, և որ նոյնպէս կարմրախայտ ու հոտաւէտ է . իսկ «Դալասմիկ խնձոր» կրնայ պարծիլ իբրև թագուհի բոլոր մրգեղինաց, որ իր վրայ կը կրէ ամեն ազնուական յատկութիւնը . մեծ, կարմիր, նրբակեղև, անուշահոտ և սաստիկ ախորժահամ . ասոր ծառին վրայ կ'ըլլեն լուսնակ գիշերները աղջիկներ ու հարսներն, դեռ աղէկ չհասած ժամանակ . և կարօսի (մօղբանօղէ) տերևիկները կը փակցունեն . երբ հետզհետէ հասուննայ, կարմիր կը գունաւորի, այնուհետև կարօսի տերևները կը փրցունեն վրայէն, և անոնց փակած տեղեր՝ ըստ գեղեցիկ ձևոց տերևոց կը մնան ճերմակ, այնինչ բոլոր մարմինը արեան գոյն կարմրած է : Սովորաբար, երբ բարեկամ մը կամ սիրելի մը պատուեն,

և յարգի ու հրաւէրի համար խնդրակ ըրկեն, կամ աչքի լուսի երթան, հատ մը այս խնձորէն իրենց ծոցէն կը մատուցանեն․ երբեմն նաև գինւոյ պօղիկի (հօղէ էպրըղ) բերանը կը դնեն, և ընդհանրապէս սեղանի զարդ և գինւոյ հօղէ է աս։

Թ.

—Մարէ (մայրիկ), ինչ որ պատմեցի մեր բարեկամին, գտնուածներէն հասածներէն բերել տուր․ քիչ մ'ալ հաց ու կեր, ինչ որ ունիս․ պօղիկ մը Շաղբաղու գինի, Չիբաշէնու (գեղ է) նոր կուռիկով (հողէ նոր գաւաթով) պիտի խմենք։

—Չարսներ կը պատրաստեն, տղէկներ հանդօ (ահա) առին էկան։

—Ախորժակդ բաց, ընկեր․ ի՞նչ բերանաքաց յափշտակուեր ես։ Մեր Շաղբաղու գինին՝ Շամքանիոյ գինին է Վանայ համար․ և ըստ մեզ՝ գերազանց եւս է․ նայէ սորա գոյնը, Քրիստոսի անարատ արիւն, բաժակի մէջ լեցուած ատենը ջինջ փրփուրը, անմահական հոտը․ իսկ խմած ժամանակ՝ հարկ չկայ ձեռքովդ 'ի բերան տանելու․ նա իր հրապուրիչ գունովը, հա-

տով, ու մզմզուն ձայնով կոկորդը կը դիւթէ, յինքն կը ձգէ ։

Բուռմայ մի (լօշի մէջ փաթթած խորոտիկ) սա կարմիր աղով պանիրէն, մաճառ (չէրօզ) ձուկէն, պաղ միսէն (ջէյչէ–շ), խորովածէն, մանդկով ժաժիկէն բըռնէ (հըրամէ)․ տես ի՞նչքան կը հրճուի ախորժակդ․ վանցիք՝ ասոնք կ՚անուանեն «Գինւոյ ֆէ–ըլ–անֆ» ։ Ահա սեղանի շուրջը շարուած են կանանչեղէնները, որ այս՝ և մէկալ կերակրոց հետ կ՚ուտենք ։

— Մարէ, մեզի գինի կը լցես, դու խսկի (երբէք) չես խմեր․ հատ մ՚առ խմէ, մեզի օրհնէ ։

— Դուք խմէք, մեռնեմ ձեր․ խուրի (հէ–րէ) առջև ամօթ ի կնիկ զաւակ ուտի խմի ։

— Նա օտար չէ․ Հայ է, և իմ սիրելի ընկերն է․ քո զաւակի տեղն է, մի՛ ամըչնար ։

— Աղէն էն ո՞ւսա ի (ուստի՞ է) ։

— Աստամբօլցի է ։

— Ես գիտեմ որ Խայերէն չգիտե ։

— Ծիծա՛ղ — ։ ,ինչի՞ կը ծծղաք․ «փան, ընդո՞ր, ըլլալ, չըլլալ, հօս, հօն, խուշոր, կօր ; սանկ, նանկ»․ ես ի՞նչ գիտնամ՝ Հազար ատանգ տուկը տակը ։

— Օրհնէ , օրհնէ մեզի՛ . գլխին ձեռքդ ա՛ռ , օրհնէ մեզի :

— Ձեր ողջութեան . Աստուած ձեր արև պահի . Նամարդի կարօտ չըլնէք , երկէն արև , սիպտակ իրես ըլնէք , չար աչքից , չար սատանից , չար մարդու չառից պարզիրես մնաք . երկնաւոր թագաւոր Աստուած ուր եօթն աթոռով ձե օրհնի , ձեր չարկամն կուրնայ , ձեր ոտ քարին չդէպնի . Աւագ Սըբ Նշան ձեր չարն՝ քարին դառնուցի . ի՞նչ բանի ձեռ թալէք՝ կանանչի . ձեր մէկ օր հազար անի , հոգուց մարմնուց չհանի . վատ օր չտեսնաք . էն խաթուն Ցիրամէրն եմ կանչե՝ ուր զօրքով ձե յօգ հասնի . Աստուան ձեր կանանչ արև բաշխի . . . :

Երկար օրհնութիւններ կը կարդան մեր մայրերը ամեն առթի մէջ իրենց զաւակաց և հիւրերուն կամ բարեկամաց տեսութեան : Բայց այս անգամ կարճը կապեց . աչքերը երեսիս յառեր , տեսնանք ուրիշ ի՞նչ ունի ըսելիք :

— Էստ եօթն օր էր որ աջ ականջս կը կանչէր . ես գիտէի որ բարի բան մը պիտի լսէի : Քիթ բերանս կը քորուէր . գիտէի որ սիրելիս պիտի համբուրէի : Աչքերս կը չռէր (անթարթ յառել) , պիտի բարի խուր մը գէր : Ցըմէն առաւօտուն կատուն

ուր թաթիկով իրեն կը լուար, տոտիկ կը
անկներ. ճամխից մարդ պիտի դէր։ Գինի
լցինք խմելու՝ վէրէն աչք (պապղպաջակ) կը
կապէր. երբ քու անուն տ'ինք՝ հետ հե-
տուն (իսկոյն) կը վմթխէր (կ'անցնէր). հաց
ուտ'ինք կը շարուէր, չուամ (մինչև) քե չը
յիշինք՝ կուլ չէր երթար. տղէկներուց
ըմէնի աչքն էլ կը խաղէր, սիրելի հեռա-
ւոր պիտի տիսն'ին։ Պատիկներուց ափին
մէջը կը քորուէր. քե համար կ'աս'ին պիտի
դայ փարայ տայ մե։ Ոտաց տակ կը քո-
րուէր, քե կ'աչկ'ին (կ'ակնկալէին) որ գաս
տեղ տանես պտըտցուցես։ Խաբրաբեր
ծիծռնակ կը մտնէր տանտուն (ներքին
տուն) կ'ելնէր։ Անծեղ՝ յըմէն իրիկուն
կուգար երդիսի վէրէն կը կրկչէր։ Էս
տարի ճոչ պահոց միջնոցին (միջինքին) կա-
նափատով հաց փուռնիկ բաժնեցինք.
բաղդն ու զըսմաթն քու բաժնի մէջն էլաւ։
Ձորս օր դիր մը երապի մէջ կը տիսն'ինք....։
Աստծուն մեռնեմ, որ մե չիթող հա-
րաթով —։

. . . .

Ի՞նչ կ'ըսես, բարեկամ, այս լածնե-
րուդ։ Անշուշտ ամեն երկրի բնակիչք և
ամեն ազգերը իրենց մէջն ունին այսպիսի
գուշակական հնարածին նախապաշարում-
ները, որոցմով իրենց սրտի իղձեր և կա-

բօթները կը պատրեն կը հանդարտեն ժուկ մը ։

Բնական բաները մինչև ցայժմ լսե-ցիր․ կ'ուզեմ քիչ մ'ալ նոյն տեսակ գու-շակական, կամ ինչպէս կըսեն գիտնականք, աւելորդապաշտական խօսքերը և արարք-ները պատմել քեզ, յորոց գուցէ իմաս-տասիրողները ազգի հնութեան և նախնի պաշտամանց հետքեր նշմարեն, զորս ժո-ղովրդեան ռամիկ մասը անգիտաբար կը պահպանէ, և զորս դարուս լուսաւորու-թիւնը անհետացնելու վրայ է ։

Երբ լուսինը միօրեայ կամ երկօրեայ է, «Նոր» կ'անուանեն զայն․ և առաջին անգամ տեսած ատենը՝ անոր նայելով իրենց երեսը կը խաչակնքեն․ միևնոյն վայրկենին ի՛նչ մարդու երեսը որ նային, այսպէս կ'ըսեն «Ցեռնանք բարեա՞ց ալխոփ հանդիպիմ թէ չարի, վասն զի լուսինը տեսած ժամանակի՝ առաջին անգամ քու երեսը նայեցայ» ։

Ինչպէս լսեցիր, անձրեը երբ գայ կրկչայ, նոր խաբար կը լսեն, կամ դա-ըրըներէն գիր կուգայ․ ընդհակառակն՝ երբ բուի ձայնը առնուն, կամ սև ագ-ռաւները գան տան մէջ կռկռան, վատ համբաւ լսելոյ նշան է ։

Ցերազի եթէ պայծառազգեաց կորիճ ձիաւոր և սպառազէն քիւրդ կամ տաճիկ տեսնան, սուրբը տեսած կը լինին. իսկ եթէ սևազգեաց տէրտէր կամ կրօնաւոր մը տեսնան, սատանայ է։

Ինչ և իցէ գործ մը սկսելուն, կամ ճանապարհ գնալուն, կամ խորհուրդ մը ընելուն՝ եթէ մէկը զոյգ փռնգտայ, խիստ յաջող է, զոր «ջախտ» կ'անուանեն. իսկ եթէ մէկ՝ կամ երեք, կամ աւելի՝ բայց անզոյգ փռնգտայ, «սաբր» կ'անուանեն, ետ կը կենան այն գործն սկսելէ. Նոյնպէս երբ տեղ մը երթալու համար ոտքի ելլեն և թափառս առնուն (իյնան) իրենք, կամ եթէ ձիով են՝ ձին թափառս առնու, անյաջողութեան նշան կը համարին, ետ կը կենան։

Ձիով տեղ մը գնացողները խիստ յաջողակ կը սեպեն իրենց, եթէ ձին աշխոյժ և զուարթ վիճակի մէջ լինի, խրխնջայ. և ասոր հակառակ՝ եթէ տխուր ու անձայն մնայ ձին, կամ ինչպէս կը նշմարեն եղեր շատ անգամ ալ կ'արտասուէ ձին, մեծ վտանգ գայ գալիքը.

Ագլոր եթէ իր ժամանակէն դուրս խօսի, կամ հաւն եթէ ագլորի պէս խօսի, իսկոյն կը մորթեն. վասն զի չարեաց գուշակ է.

Եթէ ուղեն մէկը իր գնացած ճանա-
պարհէն ետ չդառնայ, անոր մեկնած ժա-
մանակ՝ աման մը կը կոտրեն ետեւէն, եւ
կ'ըսեն «կրունկդ ըստէս (ասդին)». կամ
թէ «Երթալդ լինի, գալդ չլինի»։

Իսկ եթէ դարձին փափագին, ջուր
կը թափեն ետեւէն։

Տարուան մէջ օր մը յանուն «Թալա-
լոսի» կիրակի կը պահեն զաւկի տէր մայ-
րերը, որպէս զի իրենց մանուկները չը
թալկանան։

Նոյնպէս օր մը կիրակի կը պահեն, որ
մկները ջարդուին. եւ այն օրը կ'անուանեն
«Մկան կիրակի»։

Սիրոյ կամ չարոց թուղթ (դիւթ) ընել
տալու համար սեւ հաւ մը տանելու է
դիւթին, որ մորթէ եւ անոր արիւնով
գրէ. սեւ հաւու արիւն պըլճուղն է. (միան
ու դիւթի փորին պըլճուղն է)։

Ասոնց համար ալ մատաղցու սեւ խոյ
մը կամ մաքի կամ կով մը տանիլ աւելի
հաճոյական է։

Պարսկահայոց սահմանագլուխը Վաս-
պուրականի գաւառը Բաշգալէին մերձ է
Ս. Բարդուղիմէոսի վանքը. հոն միջանջե-
նապէս կը գտնուի զոյգ մը ճերմակ գոմէշ
արու եւ էգ. որքան ծնին. որքան մեռ-
նին, միշտ երկու հատ կը մնան. երբ մէկը

քանի մը տարի տենդով տանջուի, այն դոմէշներէն մազ մը բերեն իրեն, վրան պահելու լինի, մէկէն կ'առողջանայ ։

Հայոցձորի գաւառը Անգղ անունով գեղ մը կայ և անոր կից՝ Ս. Աստուածածնի վանք. սորը տաճարի ձախակողմը պատուհան մը կայ, որոյ 'մէջ դրուած խաչքարէ մը ձէթ կը բղխէր, և աչքացաւի դեղ էր. բայց հիմայ ա՛լ չբղխիր եղեր,

Տեառնընդառաջի իրիկուն ամեն եկեղեցեաց բակերը փայտակոյտ մը կը վառէին, և նոյն տարուան մէջ եղած նոր փեսաները կրակին չուրջը կը կայնեցնէին. այժմ միայն մոմ կը վառեն քաղաքաց եկեղեցիները. իսկ գեղերը նոյն են. բայց ամեն մարդ իր տունը տանիքի վրայ փայտակոյտ մը կը վառէ, և կերակրոց ու ըմպելեաց բարութեամբ զարդարեալ սեղան մը կը պատրաստէ. ամեն մարդու ձեռքը մոմ մը պիտի լինի. երիտասարդները կրակի վրայէն կը թռնին, հարսն ու փեսայն բոցերու չուրջը ձեռք ձեռքի տալով 'ի պար կ'ածեն. այն օրուան համար յատուկ շինուած աղանձ (բոված ցորեան), կանափոր, չամիչ, և զանազան քաղցրեղէնք ու մրգեղէնք կ'ուտեն. ամէնքը իրենց հագուստէն դրօշ մը կ'այրեն այն իրիկուան

կրակով, որպէս զի կախարդութիւն չներ-
գործէ իրենց վրայ · կրակի մոխիրէն կը
պահեն տուներու մէջ, որ այնպէս ցաւոց
և փորձանաց դեղ է · ածուներուն, ար-
տերուն, և այգիներուն վրայ կը սփռեն,
որպէս զի թրթուրէ և այլ վնասակար որ-
դերէ և ճճիներէ ազատ մնան ։ Եթէ փայ-
տակոյտի բոցն ու ծուխը դէպ՚ի աղօթրան
ծառանայ, շատ բարի տարի է · իսկ գիւ-
ղացւոց համար՝ եթէ ծուխն արտորէից
կողմը դառնայ, բարեբեր է · եթէ հա-
կառակ կողմերը, ձախորդ է ։ Նոյն իրի-
կուան վառած ճրագ կամ մոմերը եթէ
չսպառած մարին, անբաղդութեան նշան
է, եւն., եւն. ։ Այսպէս մեծ հանդիսիւ կը
կատարեն Տեառնընդառաջի ճրագալոյցը,
զոր կ'անուանեն «Տէնդառէջ» ։ Հայաս-
տանի համար ընդհանուր է այս տօնի վսե-
մութիւնը · Կաղանդին կամ տարեգլխոյն
այնքան հանդիսաւոր չէ, որքան այսօր ·
մեծամեծ խնջոյքներ և ուրախութիւններ
կը կատարեն, տաղերով, երգերով, պա-
րերով, ուտելիքով և ըմպելիքով կը զուար-
ճանան ։

Առաջաւորաց պահոց, որ Ս. Սարգսի
պահքալ կ'անուանեն, կանայք և աղջկունք
իւրաքանչիւր խորհուրդի մը կամ նպա-

տակի մը համար ծոմ կը պահեն. ոմն օր ըստ օրէ կը ճաշակէ, ոմն երկու օր միանգամ. ոմանք ևս հինգ օր ամբողջ անսուաղ կ'անցունեն աղօթքով և ծնրադրութեամբ. տան մեծ մամիկը՝ որ իւրաքանչիւրի խորհրդոց կը թափանցէ և պահողներուն կը հսկէ, և ըստ սովորութեան պաշտօն ունի վերջին երեկոյ ուրբաթէն 'ի շաբաթ լուսնալու գիշերը քաղցրով փոխինդ շաղախել ու դնել տան բարձր պատուհան մը. եթէ գոհ եղեր է անոնց սրտի խորհուրդէն և պահեցողութենէն, գիշերը գաղտնի պայտ մը կը դրոշմէ փոխինդին վրայ. առաւօտ կը տեսնան զայն և կը համարին թէ իրենց պահքը ընդունելի [illegible] րհուրդը կը կատարէ Աստուած, վասն զի Ս. Սարգիս աներևութապէս գիշերն եկեր ձիով կոխեր փոխինդին վրայ և անցեր է. եթէ այս նշան չկայ, ուրեմն ընդունելի չէ եղեր: Յայտնի է թէ աղջիկները ի՛նչ խորհուրդ կ'ունենան իրենց սրտի մէջ, իրենց սիրածը. և կանայք՝ զաւակ մը ունենալ, կամ իրենց զարիբին դարձը:

Մանուկ մը յուշ լեզու եղէ, կամ անձ մը որ պապանձի, անդրանիկ ծնած մէկի մը ճկոյթ կը խոթեն բերանը ու կը բացուի:

Օձի չապիկը վրան կրողը՝ օձահար չը լինիր ։

Դժնիկ չար փուշը որի տան դրան վրայ զարնուած լինի, չար (ոգի) այն տունը չը մտներ ։

Մանկանց և հասակաւորաց գլխարկին կամ սրտին ու թևին վրայի հանդերձին եթէ պողպատի մը կտոր կապուած կամ պահուած լինի, չարը չվնասեր անոր ։ Նոյն զօրութիւնն ունի՝ աչքց ուլնիկն, և Նուսխայի թուղթն ։

Չար աչքէ շատ կը վախնան, և զարհուրելի բաներ կը պատմեն · ինչ որ Խորենացին գրած է Երուանդ Բ· Արշակունւոյն վրայօք, կատարելապէս կ'ընդունին այսօր Հայաստանցիք · բայց աչքէն աւելի սրտի չարութեան արդիւնք կը համարին · զոր օրինակ · եթէ չար աչք մէկը՝ զոյգ մը ընտիր գոմէշ տեսնայ, ու ըսէ « օ՜ ինչ աղէկ են », իսկոյն կը պատռին անոնք ։ Եթէ ձիու նայի, ձիերը կ'իյնան կը սատկին · եթէ գեղեցիկ տան մը՝ պիտի փլչի այն տուն · եթէ մէկի մը յաջողութեան՝ պիտի ձախորդի անոր գործը · մարդոցմէ շատերը կը հիւանդանան, շատերը կը մեռնին · քար անգամ կը հալի · կանանչ ծառեր և արտեր կը գօսանան, ևն ։ Ընդ-

հանրապէս խիստ կապոյտ և կանանչ աչք ունեցողներ չար աչք կը լինին · զորս կ'անուանեն «Զալաղապտուղ» ։

Ցազ գլուխ (ֆուղալ), անմազերես (ֆօսայ), միականի, չլակն, կաղ մարդիկ՝ չարեաց մասն ունեցող և վտանգաւոր անձինք կը համարին ընկերութեան · և եթէ պատահին այնպիսեաց, ճախորդ է իրենց գործը · ղանազան մնասուց և հնարից վէպերը չինած կը պատմեն, որ այսպիսիներէ պատահած եղեր են ։

Եթէ մէկը վտանգէ մը ազատի, կ'ըսեն «Ձկան խաչ կար գլուխը» · ձկան խաչ ըսածնին՝ ձկան գլխու մէջ ոսկոր մը կայ խաչաձև, այն է ։

Իրէքնուկ խոտ, որ երեք տերև ունի և որ յաճախ ամեն տեղ կը գտնուի, մուրիկ մուրիկ կը փնտռեն անոնց մէջէն բոյս մը, որ չորս տերև ունենայ խաչաձև · և ալ այնուհետև ազատ կը լինին զայն իրենց վրայ պահողներն ամեն չարէ և կախարդանքէ ։

Եթէ խիստ կարկուտ տեղայ, որ մնաս կը բերէ արտորէից, այգեաց և ծառոց, խաչերկաթը կը ձգեն երկնքի առջև, կարկուտը կը կտրի,

Եթէ երաշտ լինի, անձրեւ չգայ, փայտի մը վրայ լաթեր կը փաթթէին եւ մարդակերպ ձեւ մը կուտային անոր, զոր «Խուրձկուլուլու» կ'ըսեն․ փողոցները եւ տուները կը շրջեցունէին, վրան ջուրեր կը թափէին, պայն ջուրերու մէջ կը թաթախէին եւ խիստ անարգանք ու չարչարանք կուտային անոր․ կարծես Հնդկաստանի չաստուածն լինէր․ եւ երկինք կապելուն համար, այսպէս վարուէին հետը․

Կան նաեւ տեղեաց տեղեաց բնակիչք, որք հրացաններ կ'արձակեն երբ արեւ կամ լուսին «բռնուի» խաւարի․ եւ այս հրաձակներով ու դղրդոցներով կ'փախցունեն մեր լուսոյ դէմը բռնողներն․ ոմանք եւս ջերմեռանդ եւ ողոքաւոր ձայնիւ Տէր ողորմեա կ'ըսեն, պղնձէ ամաններ եւ ծնծղաներ հնչեցնելով։ Աստուած կը կանչեն, որպէս զի խաւարման չար հետեւանքներէն, զոր կը գուշակեն, ազատէ զիրենք։

Այս սովորութիւնը, ինչպէս նաեւ մէկալ բաներն ալ միայն Վանայ մէջ չեն, այլ շատ գաւառներու մէջ կը տեսնուին․ մինչեւ 'ի Թիֆլիզ եւս ասկէ 12 տարի յառաջ տեսանք, որ այծու կամ խոզի մը գլուխ անցուցած փայտի վրայ, եւ լաթերով, ճիւղերով, փաթթած ցեխոտած թաղէ ցթաղ կը շրջեցնէին, եւ վրան ջուր կը

լեցնէին ։ Թէ այս և թէ քանի մը աւելոր-դապաշտական ու դիւթական բաներու մասին հատուած մը կարդամ քեզի, մեր խմբագրութեամբ հրատարակուած «Տարօնոյ Արծուիկ» էն 1865, թիւ 45 թերթէն, քաղելով այն նամակէն՝ զոր Սասնոյ և Տիգրանակերտու գեղերէն Աղձնեաց գաւառէն, (ուր հայերը քրդերէն կը խօսին և քրդաբար կը վարին), գրած էր Արժ. Յօհ. Վ. Մուրատեանն, արդի վանահայր Մշոյ Ս. Առաքելոց վանից ։

. . . «Հրզու քաղաք կոչուած՝ տասն քահանայ ունին. յորում 80 տուն հայ կայ ։ Ռընդվան՝ ինն քահանայ. 60 տուն հայ։ Ասոնց քահանայք մուրացկանութեամբ կ'ապրին գեղեր ու քաղաքները շրջելով. հասարակ կարդալէ անգամ տգէտ են. բայց շատերը կախարդութիւն կ'ընեն ։

«Այս կողմերու հայերը մեռելի վրայ սաստիկ ողբ և կոտորում կ'ընեն. եթէ անդրանիկ զաւակ է մեռնողն, յուղար-կաւորութեան ժամուն ձի մը կը զարդա-րեն, մեռնողին հագուստը ձիու վրան կը դնեն, անոր սուր, վահան, հրացանն ձիուն վրայ կը կախեն. մեռնողին կամ ծնողաց Հայ, Քիւրդ և Եզիդի բարեկամ-ներ կը ժողվին կուգան. երբ գեղին կը մօտին՝ սև ապայով, մաշլաղով մը գլուխ-

ները կ՚սքօղեն, և մեծ ձայնով կը բոռան «Κύριε ἐλέησον, Χριστὲ ἐλέησον»․ ստէպ կրկնելով այս վայերգը։

«Ցուղարկաւորութեան հանդէսը կ՚սկսի ամբողջ գիւղացւոց բազմութեամբ․ և դագաղի առջևէն իբր քսան կանայք անուշ ձայնեղ, սևեր փաթթած գլուխները, քիւրդերէն լեզուաւ ողբեր կը կարդան․ քանանէն աւելի ալ այրք և աղաները քաշած գլխներբ սգաւոր՝ ողբասաց կանանց ետևէն կ՚երթան․ մէջ ընդ մէջ կ՚ընդհատի կանանց ողբոց ձայնը, և սգաւոր մարդիկ միաձայն կ՚աղաղակեն «Κύριε ἐλέησον, Χριστὲ ἐλέησον»։

Թաղումէն մինչև եօթն օր այս հանդիսով կ՚երթան գերեզման կուգան։ Ով որ զննջեցեալ շատ կը սիրէ, շատ կը բոռայ։ Իսկ եթէ բարեկամները թաղման օրը զատ զատ գան, իւրաքանչիւրին զատ զատ կը դիմաւորեն զարդարուած ձիով, գոյժ և ողբ ՚ի բերան։

․․․ «Սասնոյ և Մոտգանու քահանայից գործն ալ կախարդութիւն է ըստ մեծի մասին․ փոխանակ Աւետարանի՝ մէկ մէկ Ախդարք ունին ծոցերնին․ գիւղէ գիւղ կը շրջին հիւանդաց թուղթ ընելու․ ոմանք ալ աղջկանց սիրտը՝ զինք սիրող երիտասարդին դարձնելու, կամ երիտա-

տաղտուկին սիրտը՝ զինքն սիրող աղջկան։

«Այրիլ ամսոյ մէջ անձրև չեկաւ Ներջին դաշտ. ընդհանուր կարծիք հասարակաց այս էր թէ՝ հարուստները կախարդութեամբ կապած են երկինքը, (որպէսզի իրենց ամբարած ցորենները թանկ-թանկ վաճառեն). ուստի որքան ժողովրդական կախարդներ կան կը ջանին ամպոց կապանքն արձակելու. որը՝ քարի վրայ բան մը գրելով կը ձգէ ջրին մէջ. որը՝ մեռելի գանգ գերեզմանէն հանելով գետը կը ձգէ. որը՝ իշու գլուխ ջրով կը լուանայ. սև էշ, ճերմակ էշ չմնաց որ չը լուացին. և ինչ որ ըրին, անձրև չեկաւ։ Ըլիբընկի գիւղացիք իրենց կանայք կ'սպառազինեն կ'ուղարկեն Խօշալայ գիւղին վրայ, և այն գիւղի կանայքն ալ սպառազէն առանց դէմ կ'ելլեն. երկու կողմէն հրացաններ կը պարպուին, վերջապէս Ըլիբընկցի կանայք կը յաղթին ոչխար մը աւարել, և կը բերեն զոհել, գլուխը կտրելով մեծ հանդիսով կը տանին ձգեն գետը, որ անձրև գայ։ Տիգրանակերտու մեծն ալ երեք Հրէի գանգ հաներ են գերեզմանէն ջուրը ձգեր են, բայց նորէն անձրև չգար, խորհած էին ողջ քահանայի մը կամ կարդացողի մը գլուխ կտրել ջրոց նուիրել. Աստուած տուաւ որ մայիս Ձին

առատ անձրեւ եկաւ, եւ կենդանիք զանձ ազատեցան։

«Այս կռիւները ծառայաշատութեան եւ Ցրուապաշտութիւնը ընդհանուր է Հայոց, Թրքաց եւ Եղիպտոսի մէջ։

—Պիտակելու է որ Տիգրիսի եւ Եփրատայ, շուրջ ընակողաց նկատմամբ է այս խօսքը—

«Քրդաստան գեղը չերթի մը կին կայ, որուն երեսը որ ուշադիր կայ փոխուած ցաւէն, կ'երթայ այդ խաթունի կօշիկը բերան կ'առնու, որ բժշկուի։

—Այս կարգի բաներ շատ կան, բայց մենք չենք կրնար դասաւորել—։

. . . «Քրիստոսի Ս. Մնացեան եւ Մկրտ-ասեան առաջարկ աւելի կողմէն գիտարկը կուսական Հայոց քահանայապետին կը հարցնեն. «Աստուած սիրէք, խօսէ՛ն ի՞նչ ըսաւ. այս տարին ձմեռը խի՞ստ պիտի լինի թէ մեղմ. տանուք մ՞ է թէ ձնեղ»։ —Երբէ Ս. Միտոնքը Ցրիւ եղանակին ծառայեր է, տարին բարեկամ—.

. . . «Այս կռիւները զանազան օձախանները կամ չերխերու անտուածը. առ որս կը զինեն զոհերով եւ ընծաներով արք եւ կանայք։

—Պաշտպանելու չենք թէ Շէխերը գիտող կամ՝ տաղերկ են այսօր. անոնք երկրի հայրերին են, եւ անխտիր խնամքը ու պաշտպանութեան կը վայելեն առանցմէ քրիստոնեայն եւ ոչ—քրիստոնեայն. զորս մարդա-

տիրաբար կ'ընդունին. և խիստ յանդիմանիչ են բանաւորաց, անօրինաց։ Հարկ չկայ ըսել թէ՝ մաս մ'ալ կայ անոնց, որ ընդհակառակն շատ միտասակար են երկրին ժողովրդոց ու նոյն իսկ կառավարութեանը։ Բարեխօսէր չեխերու և անոնց օճախին վրայ այնպիսի համարում ունին անեղացիք, և այնպիսի գերբնական գաղափար, որ շատ կը համեմատի Հնդկաց Բրահմաններուն. Ի՞նչ է Շեխ անուն՝ որ ամեն հին ազգաց մէջ նուիրական է —։

. . . «Ահարոնք գեղէն աղայ մը Հեղին գեղ երթալուն՝ անյայտ եղած էր. Ծնողք և ազգականք ամենուրեք խնդրելէն զկնի, կախարդաց դիմեցին. կախարդք յայտնեցին թէ Ցղան՝ ջիներ (ոգիք) յափշտակեր տարեր՝ ըրեր են վայրի էրէոց հովիւ։ Որսորդ մ'ալ կը վկայէ թէ՝ էրէ մը տեսայ լեռը, պիտի զարնէի հրացանովս, մարդաձայն կ'երևնար աչքիս. հրացանս վար դրի, էրէ եղաւ. նորէն առի զարնելու, մարդ դարձաւ. հարցուցի՝ Դու ո՞վ ես. ասաց՝ Ես Խաչօն եմ. ու աներևոյթ եղաւ»։

—Արդարև մինակ Արտաւազդ մանուկ չէ 'ի դիւաց յափշտակեալ. այլ մինչև ցայսօր կը հաւատեն մանկանց, որ Ջիները յափշտակեն տանին —։

Նոր պսակուածները դիւթութեամբ կը կապեն, որ տարիներով չկրնան հարսն ու փեսայն մերձաւորութիւն, զոր «կապս» կ'ըսեն. և ասոր համար փակուած կողպէք մը, կամ գոցուած շախտ մը, կամ համ-գոյց եղած բան մը կը կրեն իրենց վրայ նշանածները. որպէսզի կախարդութիւնը չբռնի իրենց վրայ՝ և որպէս զի պսակի հալաւ հագած ժամանակ՝ «Մի՛ իշխեսցէ 'ի սմա չար աղանդ դիւաց կամ կախար-դաց». վասն զի դէւեր մարդկային ազգի որդէծնութեան թշնամի են, և կ'ուզեն մեր ճեան ապառի:

Այս կապս քակելու իշխանութիւն ու-նին քահանաները, ուխտատեղիք, և չե-խերու օճախները:

Այսպիսի բաները, ինչպէս ըսի, մէկ գաւառի չեն վերաբերիր, այլ գրեթէ ընդհանուրին. բայց իւրաքանչիւր գաւառ իրեն յատուկ ու համբաւաւոր վանք մը, ամէն մը, վայր մը և օճախ մը ունի: Մեզ համար վանքերը, ուխտատեղիք, սուրբե-րը դիւթականաց կարգին չեն անտարա-կայս. այլ հէթանոսի քրիստոնէութեամբ և Աստուածպաշտութեամբ կը հաւատանք այն հրաշքից, որ կը գործուին ցայսօր յա-նուն Աստուծոյ և սրբոց և սրբերգինաց.

բայց խնդիրը հնախօսական լինելով , և մեր վանքերն ալ 'ի հնումն մեհենից անցեր էին ըստ պատմութեան , ուստի այսպիսի ակնարկներ ընել հարկ կը լինի երբեմն ։ Իբրև օրինակ խօսինք Թաթուն Ցիրանոր վրայօք ։

Վանէն դէպ 'ի հիւսիս իբր ութն ժամմու չափ հեռաւորութեամբ , Բզնունեաց ծովուն ափը , բարձրադիտակ դիրք մը ունի այս վանքը ։ և քանի մը տուն հայ գեղացիք կը բնակին անոր չուրջը ։ Ծովն իր երկայնութեամբ կը տարածի առոր առջևը , և իր եղջերաձև սպառուածքը նոյն դարևանդին ոտներուն ներքևն է ։ ուստի կ'ընդունի իր մէջ Բանդիմահուի գետը , որ է ձկանց առատն ։ իր առջևը կ'երևի Արճէշ քաղաքը , տակաւին չէն իր պարիսպներով , դռներով , շուկաներով , եկեղեցիով , և մինարայով մը , զոր շրջապատած է ծովուն ջուրը և դարձուցած է կղզի մը , բայց անբնակ ։ Արճիշոյ , որ նոյն է Քաջբերունեաց գաւառը իր գեղանի գեղերով , լեռներով , հովիտներով առանց քով դիր նաև Ալիւան լեռը , աչքիդ առջևն են , որք իրենց շնորհալի և շքեղ շուքը կը ձգեն ծովուն երեսը ։ Այս վանքը գերեզման մը ունի իր տաճարին մէջը , և կ'ըսեն թէ՝ Աստուածածնին հարազատ-

ներքէն մաս մը զետեղուած է հոն ։ Այս գերեզմանն է կ'երդնուն «Խաթուն Տիրամօր» անունով․ այս անունով օրհնութիւն և անէծք կուտան․ և շատ հրաշալի է․ հոս կուգան ո՛չ միայն Վանայ բոլոր գաւառաց կողմերէն, այլ և Պարսկաստանի և Խոյեանի ու Նախիջևանայ գաւառներէն ամէն տարի բազմախուռն ուխտաւորները ։ Ուխտաւորներու ժողով մը կայ անպակաս այս տեղ, որ զանազան աշխարհներէ կուգան, և քանի մը տարի կը ծառայեն, կ'աղօթեն․ ու գեղացիներէն կը ղրկուին այս և՝ այն գաւառները ժողովք ընելու բերելու զիրենք ղրկողին․ վասն զի գեղացիք բաժին ըրած են իրենց վրայ, մէկը՝ Վան քաղաք և անոր շրջապատի գիւղօրայք․ մէկը՝ Բաշգալան․ մէկը՝ Պարսկաստան․ մէկը՝ Մուշ․ մէկը՝ Տիգրանակերտ․ մէկը՝ Պայազիտ․ միւսը Երևան, մինչև Կարնոյ և Ախըլխայի կողմերը, ևն․ ամէն տարի իրենց մարդ կ'երթայ շրջելու, և յանուն Տիրամօր եղած խոստումները թէ՛ մոմ, թէ՛ խունկ, շուշփայ, խաչ, դրամ, կանանց խասսա ըրած արծաթի զարդերը, մատաղցու կենդանիքը, մանաւանդ «Տիրամօր նշան» ունեցող կով և եզ, որոց ճակատին վրայ ճերմակ նշան մը կը լինի, կը բերեն, և այդ գեղացիք կը առնեն ։ Ուրուկներ հետա-

զՀետէ կ'առողջանան ու կ'երթան, ոմանք ալ նոյն կը մնան, և հոն կը մեռնին։ Այսպիսիք կ'անուանին «Տիրամօր խեղճ». և իրենց ախտի անունն է «Տիրամօր եարա»։

Ամեն տարի Ս. Աստուածածնի վերափոխման տօնին անթիւ բազմութիւն կը հաւաքուին հոս 'ի հեռաւորաց և մերձաւորաց. Ուխտ ու մատաղ ընելու հետ, տաւատ կեր ու խում կ'ընեն, ինչպէս ամեն վանքերը ուխտ գնացողներ կ'ընեն. մերձակայ Քիւրդերը և Եզդիները կը զարդարուին և իրենց ձիերը հեծած, սպառազինած հոն կուգան ձի և ջիրիդ կը խաղան, որոց հետ կը մրցին թէ Ռուսաստանէն ու Պարսկաստանէն եկած և թէ տեղացի կտրիճ ձիաւոր հայեր։ Ասոնց մէջ մշտայաղթ դիւցազն է այս դարու՝ վանքին մօտ եղած Գործոթ գեղի հայ Մէլիքն. դեռ անոր դէմքն դարձնող և թեւն ոլորող մը չգտնուեցաւ։ Երբ այս անձն կ'ելլէ ասպարէզ, ամենքն ալ տայայ կուգան իրեն։ Իրօք ալ իր հասակը, իր դէմքն ու իր հագուստը տեսնողը կ'զմայլի։ Այս հանդէսը կատարելու համար Վանայ փաշայէն և առաջնորդէն հսկողներ կը ղրկուին, երբեմն ալ իրենք անձամբ կուգային։ Այս տօնը կ'անուանեն «Աստուածածնի տօն». և գեղն ու վանքը՝ մէկ տօ-

նունով «Աստարածին» կ'անուանեն․ այն ինչ զԱստուած՝ Աստուած, և Աստուածածինն՝ Աստուածածին կ'արտասանեն վանցիք, միայն այս տեղին Աստարածին անունը կուտան, կամ՝ խաթուն Տիրամէր։

Արդ այդ դիրքը, այդ արարողութիւնք, այդ անունը արդեօք հնախուզաց համար նոր լոյս մը չը՞նծայեր, թէ քրիստոնէութենէն յառաջ ի՞նչ վայր է եղեր դա։

Եւ միթէ Մշոյ Ս. Կարապետի վանքը իր վարդավառի տօնովը Զենովբի գրածին համեմատ նախնի Գիսանեանց և վահունեանց տօնը չե՞ն յիշեցներ․ ինչպէս նաև հօն մինչև ցայսօր Աշտիշատ ուխտի երթալը նոյն օրը․ ուր զոյգ մը սրբազան ոսկերաց գանձ ունինք, Պարթևին Սահակայ և Ղուշանայ՝ իւր թոռին գերեզմանք։ Այնպէս և Անձևացեաց գաւառի մէջ Հոգւոց վանից Դարբնաքարերուն ականջ դնել, կռանի ձայնը լսելու, և անկէ փոշիներ առնուլ 'ի պահպանութիւն անձանց, և այլն։

Բաւական երկարեցաւ մեր ճառը․ հիմայ մայրս կ'ըսէ «հացի վրայ այդքան չեն խօսիր, հացի հրեշտակ կայնած է, մեղք է»։

Մարէ, գեղացի մը ինձի պատմեց թէ, «Ջրացի հրեշտակ կայնել» խօսքը քաղքցիքեն են առեղծեր, որ ծառայողներ չափ չը

հողնին, կամ հիւրերը քիչ հաց ուտեն։ Օր մը, կ'ասէր, քաւորանց տունն էի, հացի վրան ըսին. «Մեռնեմ քեզ սանահէր» չոր արա, հացի հրեշտակ կայներ, մեղք է»։ Ես էլ գլօխս բացի. ասի, «Մեռնեմ հրեշտակին, ինչի՞ կայներ. թող նստի վէր իմ գլխու գօլօզին, չուռ ես կշտանամ»։

— Ո՞ւր կը նայիս այն կողմը, բարեկամ։

— Ի՞նչ կ'ընեն կանայք ժողվեր են այն տեղը։

— Հողը կը մաղեն չորցունեն, որովհետև Հայաստանը նոր ծնած տղայի վրայ աղ ցանելէն զկնի, տղայն խանձարրքին, օրօրոցին և ծանրմակին (չուանէ օրօրան) մէջ կապած ժամանակ, անոր տակ միշտ հող կը դնեն, կը պառկեցնեն. տղու անկողինը մաքուր, տաքուկ պահելու, և տղան առոյգ մեծնալու համար։ Նաև ամէն օր տղան լողացուցած ժամանակ, ճիտէն վերցնելով պզտիկ մը կը ցնցեն «Ջղլավզիկ» կ'ընեն, ջիղերը կազդուրելու համար. օրօրոցէն հանած ժամանակն՝ ալ, թևերը խաչաձև բռնելով փակուկ մը կը ձգձգեն, երակներն ու բազուկները արձակելու համար. կարգ մը այսպիսի խնամքներ ունին մանկանց սնուցանելուն։

—Մարէ, սա Կորէծի (Հայ կախարդի մը անունն է եղեր) պատմութիւնը ըրէ․ ես պիտի գրեմ, բարեկամս ալ մտիկ կ'ընէ։

—Կորէծ մեր դրկցենց ալնէն էր․ գօսկօ (անհաւատիկ) ինոնց տուն․ ինոր բայծուեր (վէպեր) շատ են․ վի՞ր միտ կուգայ։ Կ'ասեն «վէց խազարեկ» (վեց-հազարեակ) ասնէր․ ռամ կը թալէր, տատրանք կ'իրիշկէր․ մարդու արտէն ինչ որ ընցնէր՝ գիտէր․ երկնուց իրեն, գետնի տակ ինչ որ ըլնէր, գիտէր։ Արեգական խաւարումն, ժաժկ, սով, մահ․ ո՞վ պիտի մեռնէր, ով պիտի ապրէր․ ըմէնու ախտն ու բաղդն, կ'իմնէր։ փաշէք, աղէք, տուանց ինոր չ'էն մնե։ Գողութեն ըլնէր, մարդասպանութիւն ըլնէր, մէկէցմէկ կը հանէր։ փակած դռներ կը բանէր․ երդսից կը մտնէր տուներ կ'ելնէր։ Աստուած փրկէ ազատէ, մարդու խելք գլխուց կ'առնէր, թուղթ կ'անէր հարսներ կնիկներ մօրէ մերկ կ'ելնէին կը պտտէին։ Ով ուզէր՝ վէր տուն՝ կը մտուցէր կը հանէր։ ինք զըմէնք կը տեսնէր, մարդ զինք չէր տեսնէր։ Ցորեններ, պտուղներ քար ու հող կը դառցուցէր։ Ո՛ր երկիր ինչ բան կ'ըլնէր, էն սհաթին՝ էստեղ կը տեսնէր կը պատ-

մէր ։ Խաղնայ կը հանէր ․ գէմի գաղանի բերան կը կապէր ․ մարդը կաւ կապոյ կ'անէր ։ Մէյ դիր Ախմու աչքակապներ (ձեռնածուներ) էկած էին ․ ինչ որ արեր էին , կորէծն արեր էր ․ դառձեր կորէծն էլ բան մ'էր ասե , Թէ Երկնուց Արեգակն ու Լուսնակ, Լուսոյ աստղն ու Քարվանկորուս աստղ (այն մեծ աստղն է որ ճէճկալըներ կը ծածքէ և կը յառաջանայ յարևէն , որուն նայելով ըսեր այս կարաւան կամ ուղևորք կը խաբուին կարծելով թէ Արուսեակն է) ցածր ափար իջուցի ․ չեն աւատացեր ․ աշխար երկիր ժողվեր են Ասանուց չայիր (ծովափնեայ ընդարձակ մարգագետին) , մէկէլ տեսեր են որ Արեգակ բոլորակ քանձ սէլի ակն (անիւ) կրակոտ իջեր ․ Լուսնակ սեղանի պէս կլորիկ , աստղերն էլ մէկ մէկ ջաղցի քարի օրինակ խոնարհեր են ․ ի՞նչ արե՛ որ պղտիկցուցե իրդունք ․ Թէ չէ՝ Վանն ուր-աստուոր կը վառուին կը կործանին ։ Խաղք արե Աճամներըը , ետ ի դարձուցե ։

—Ցեսա՞ր բարեկամ, մեր աստղագէտ , բնագէտ , հնագէտ , և ճարտար ձեռնածուն աչքակապող կորէծ ի՞նչ հիանալի գերբնական մարդ է դարձեր ժողովրդեան մէջ , մոգ՝ որ ափշեցուցած է զամենքը ։

Ինկաւորներն ալ մեր աշխարհի մէջ

նշանաւոր են. բաց 'ի ճշմարիտ լուսնոտներէն, կամաւոր դաս մը կայ կանանց, «հնկաւոր» ըսուած, որոց թեւերն ու թիկունքը, նաև երեսներ ու ճակատները զանազան նկարներ ունին ասեղներով ծակած և կապոյտ գունաւորած. որոց իւրաքանչիւրը մէկ մէկ սուրբի, կամ վանքի, կամ անուանի հրաշագործ Աւետարանի մը ինկաւորներն են. տունէ տուն կը շրջին, և կանանց համար թիզ կը չափեն, աղօթք կ'ընեն, և կը յորդորեն անոնց ախտերուն կամ ուխտերուն համար իրենց սուրբին դիմել։ Երբ ուխտաւոր կանայք լցուեր են թագաւոր Աւետարանին առջև, կամ որ և իցէ ուխտատեղ մը, ինկաւորը առաջուց գիտակ եղած է անոնց իւրաքանչիւրի սրտի խորհուրդին, և անոնց ունեցած իրին, կամ վրաները կրած զարդին. ուստի յանկարծ կը փրփրի ու գետինը կ'իյնայ 'ի մեծ զարհուրանս ներկայից. կ'անշնչանայ պահ մը, և խաչը կը դնեն բերան, կը հանդարտի. ապա յափշտակեալ իմն՝ գուշակութիւններ կ'սկսի ընել. «Կատիկ խաթուն, քո սրտի խորհուրդն այս ինչ է, բարի է, իմ աղէն (նոյն սուրբը) քեզնից ('ի քէն) կ'ուզէ ճակտիդ մաղչան (արծաթէ զարդ է), կամ վզիդ ճտնոց ոսկին, կամ դինդերդ, եւն. որ քո սրտի մուրատը տայ»։

Երանելի կը դառնայ այն տիկինը, և մեծաւ զուարթամտութեամբ կը հանէ կը ձգէ հոն ուզած բանը։ Այսպէս իւրաքանչիւրէն ուզած կողոպուտը կամաւորապէս կ'առնէ թշուառականը․ վերջը Աւետարանի կամ խաչին տիրոջ հետը մէջերնին կը բաժնեն։

Այսպիսիք են, որ բազում շահս տան տերանց իւրեանց մոլելովն։ Իսկ իրենց մարմնոյ վրայ եղած նկարն և միւս ձևերն ու հնարքները աւելի հին և հնդկական կը թուին։

Երաշտ ժամանակ, կամ երկնային պատուհասի մը պատահած ատենը, սովորութիւն ունին բարեպաշտաբար մատաղներ ընել․ աւելի մեծ և հանդիսաւոր ընելու համար իրենց մատաղը, գեղի կամ թաղի ամբողջ հասարակութիւնը հաղորդ կը լինի հանգանակութեան․ և մատաղներ՝ կով կամ ցուլ՝ միջոց մը աղէկ կը պարարեն․ սահմանեալ օրն որ կը կատարուի ընդարձակ սրահի մը, կամ այգիի մը մէջ, կամ մարգագետնի մը վրայ, մեծ բազմութեամբ իրենց հանդէսը կը կազմեն, և 'ի ժամ զենման՝ երբ քահանայն աղ կ'օրհնէ, մատաղցուի եղջիւրները կը զարդարեն մոմեղինօք և կը լուցանեն․ շատ տեղ ալ շուրջառ մը կը ձգեն կովին կամ ցուլին վրայ,

իրենք ալ առ հասարակ մոմ 'ի ձեռին Թափօր մը կը կատարեն • մատաղի կաշի-ներն անգամ նուիրական են , զորս կը նուիրեն եկեղեցւոյն կամ վանքի մը ։ Սո-վորաբար իւրաքանչիւր գեղն , Թաղն , քաղաքն , իրենց յատուկ Սուրբ մը և պաշտպան մը ունին • ինչպէս արհեստա-ւորքն ալ՝ իրենց փիր մը , որոց ամեն տարի օր մը յատկացուցած են մատաղ մատու-ցանելու • և տաճիկներն ալ կը հաղորդուին հայոց հաւասար ։

Անհատնում են այս օրինակ բաները • և ես կը տեսնամ ահա թէ խիստ երկար եղաւ մեր խօսակցութիւնը ։

Ես միտք ունէի գքեզ տանիլ պտըտ-ցունել մեր տանտուննն , մառանը , օդա-ներ , երեսքացները , և մուծանել 'ի տուն գինւոյն • որով ծանօթութիւն մը կ'ունե-նայիր տնական շէնքերու ձևոց և բաժան-մանց վրայ ։

Ես միտք ունէի քեզի առաջնորդել Այգեստանեայց նշանաւոր տեղերը , և քանի մը գեղեր • քեզի ցուցնէի շատ մը հին բերդեր , որոց համար չեմ գիտեր ի՛նչ աւանդութեամբ է որ կ'ըսեն «Ձընը-վէզի ժամանակէ մնացած են» ։ Ես կը կար-ծեմ որ Ձընըվէզ՝ Ջենովացւոց համար չեն քսեր • վասն զի Հայաստանցւոց երբեք

ծանօթ չէր այդ ազգը․ և ոչ միայն այդ, այլ ընդհանուր արևմտեան ազգեր․ դեռ մինչև ցայսօր երկու ազգի անուան միայն վերջին Արևելեան պատերազմին ծանօթացաւ իրենց, այն է Ինգլիզ, Ֆրանսըզ․ և սովորաբար Հայաստանցիք՝ Հայէն զատ քրիստոնեայ ազգ չեն ճանչնար իրենց խօսքերուն նայելով․ վասն զի Քրիստոնեայ բառին հետ միշտ Հայ բառը կը կցեն․ զ. Սպանիացւոյն կամ Աւստրիացւոյն վրայօք բան մը պատմես, քեզ կը հարցունէ՝ «Հայ քրիստոնեա՞յ են անոնք»։

Այլ ինձ կը թուի թէ «Ձընըվըզի բերդ, Ձընըվըզի չէնք» անուանելով ամեն հնութիւնները, ինչպէս բևեռագիրներն ալ անոնց դարուն կուտան, և «կուպաշա ժամանակ» կը կոչեն․ այդ կը նշանակէ կամ Ջենուազն ազգ, կամ, որ աւելի կը հաւանիմ ընդունել, Ջինեբու (դէւեբու), Ջինուազն, Հսկայից, Տիտանեանց դար կ՚ակնարկեն։

Քեզի պիտի հանէի Վանայ բերդին գլուխը, և անկէ չորս կողմի տեսարանները ցուցնէի, սակայն թող միան անոնք ուրիշ տարի մը․․ երբ կրկին քեզի հետ Աստուած արժանի կ՚ընէ կուգանք այցելութեան մեր Հայրենեաց։

Վանեցւոց կամ Հայաստանցւոց կեանքն այսքան չէ․ անոնք ինչպէս գարուն և ամառն, նոյնպէս աշուն և ձմեռն ունին, ամեն եղանակի մէջ առանձին եղանակ է կենաց․ ձմեռն ալ իրեն զուարճութիւններն ունի, մանաւանդ հարսնիք, հարիսայ, խաչօրհնէնք, տօները ընդհանրապէս ձմեռուան վերապահեալ են․ ձմեռնային զբաղումն է Հայաստանցւոց շարունակ ձիւն սրբել տանիքներէն, բակերէն, ժամ երթալ գալ, ուտել, խմել և ուրախանալ։ Իրիկունները տաքուկ թոնիրին չորս կողմը շարուելով խաղեր կ'ըսեն, և խաղեր կ'ընեն․ մամիկը հէքեաթ կ'ըսէ, զոր մի անգամ լսելով կը սորվին պզտիկները․

Վանայ ժողովրդական կենցաղը, և իրենց շուրջ եղած բնութեան տեսարանը ազդած է իրենց լինել ճարտարամիտ և բանաստեղծ․ տեղ մը՝ որ ջրէն առնել գինի կայ, խոտէն առնել՝ ծառ և միրգ․ ամբերն անգամ վարդ ու ծաղիկ են․ յօդն անդադար թռչունք գոյնզգոյն և ձայն 'ի ձայն կը ճխան կը ճախրեն․ ծով և ձուկն ունին, բարձր բերդ և չէն քաղաք․ ծաղկաւէտ լերինք․ շուշանաւէտ հովիտք․ որսականով և որսով լիք․ Ջրհեղեղի դարէն յիշատակներ և գրոյցներ ունին իրենց մէջ․ աշխարհի փորձեր և մարդ-

կային զանազան հնարքներ տեսած անցուցած, ինչե՞ր չէին կրնար ստեղծել երևակայութեամբ կամ պատմել աւանդութեամբ ու աւելորդութեամբ․ որոց մէջ արդէն միշտ նոր և սովորական է սնոտիապաշտութիւն և ոգիներու երևոյթն ու գործողութիւնք մարդոց հետ․ հրեղէն մարդոց, ձիոց, և ամեն էակաց ու անմահական վայելչութեանց գաղափարն այնքան հասարակ է իրենց խօսակցութեանց մէջ, ինչպէս հացի և ջրի գաղափարն ։ Ամեն շարժումն, ամեն շունչ, ամեն երևոյթ ։ ամեն դիպուած իրեն հետևանք մը ունի այս ժողովրդեան մէջ, և իր ազդեցութիւնն ասոնց սրտին վրայ․ ասոր յառաջ եկած են կախարդական գրքեր, ախտարքներ, աստղագուշականք կամ ռամ գիրք, հաւախօսութիւն, երազահան, վիճակահան․ թէև լինին այս բաները շատ և շատ հին՝ մինչև «Ցցուառութա յուլունեան Համբրամայ» ։ Եթէ կարգ գայ, Մանանայիս մէջ բժշկարանէն և հաւախօսութենէն, այն է տեսակ մը հմայութիւն, իբրև 'ի զբօսանս հետաքրքիրներու պիտի դնեմ մաս մը․ նաև մաս մը խաղերու, ընտանի խաղերու, և կարճ կարճ զրոյցներու ։

Բայց յառաջ քան զամենայն քանի մը հատ տեղական բարբառով հէքեաթներ, վէ-

պեր կ՚ընծայեմ ընթերցողաց, յատուկ ուշադրութիւն հրաւիրելով բանասէրմտաց՝ անոնց մէջ պարունակուած գիւտոց, շարադասութեանց, ասացուածոց ոճոյն և դարձուածքներուն. ուր պիտի հանդիպին նաև նոր նոր բառերու, նորաձև բարդութեանց և կրճատութեանց։ Բաւական խնամ տարած եմ որ բառն և բանն նոյն մնալով, կարելի լինի նաև հասկնալի լինել ընթերցողին։

Զառամադէտները և հնադէտները յայտնապէս գիտեն թէ ոչ միայն անյիշատակ ժամանակները, այլ և մինչև միջին դարու մէջ տեղի կ'ունենային այս կերպ դէպքեր և փոփոխութիւնները ։

Ո՞ր դարէն մնացած են Հայաստանի մէջ Եզդիները, որ տեսակ մը արևապաշտներ են ։ Ո՞ր դարէն և ո՞ր կողմէն եկած ցրուած են Հայաստանի և Ասիոյ ուրիշ գաւառները՝ ազգ Գնչուները . — այս ազգանունն ալ չեմ գիտեր ո՞րքան տարի է յօրինած են . այլ իրօք անոնք կը յորջորջուին «Մըտրըբ, Չինկենէ, Բօշայ» — , որք զանազան դասեր կամ ցեղեր կը կազմեն . առանձին լեզու ունին, ամենքն ևս ուր որ բնակին միևնոյն կեանքն ունին, բացօդեայք, վայրաշրջիկ, թափառական, կաշէգործ, մաղագործ, գուսան, նուագածու, պարող և կաքաւող . դիւթող և կախարդող . ոչ հպատակութիւն ունին տէրութեան մը, և ոչ տուրք կը վճարեն, քանզի տուն և երկիր չունին . ոչ գիրք ունին և ոչ օրէնք . հին ազգ մ'են, և կարծանէս աւելի բազմաթիւ ։ Արդեօք Հնդկա՞ց մաս մը թէ Քաղդէացւոց մնացորդք են սոքա ։

Ինձ կը թուի թէ Քաղդէացւոց մնացորդքն են Քիլդանիք, որ առանձին լեզու

և ազգ մի էն, և որոցմէ բաւական մաս մը կը բնակին Տիգրանակերտոյ և Սղերդու կողմերը ։

Մեր քիւրդերէն մաս մը Ասորիք և մաս մը Հայք են․ բայց այնքան բազմաթիւ են, որ կրնանք ըսել թէ քան զհայս կրկնապատիկ, և ասոնց մէջ կան բաժան բաժան մասեր ։ Դաս մը Աղնուականաց, որ թօւուն կ'ըսուին, ազատ և ոստանիկ տուներ են իրենց արեանատուն ամբողջ սերընդով․ մաս մը ասոնց «Խուլամ» ղուլ ու ծառայ են իբրև պատրաստական անձնուէր զինուոր և կապարճակիր, որոց ձին, զէնք և հաց՝ թօռուններ կը բաշխեն ։ Այս կարգեր ոչ զօրք և ոչ տուրք կուտան տէրութեան ։ Մաս մը կայ, որ բոլորովին կը տարբերին վերոյիշեալներէն, ռայայ են․ տուն ունին, երկիր կը մշակեն, տուրք և զօրք կուտան տէրութեան, և միանգամայն ճորտ և ստրուկ են թօռուններուն ։ Ասոնց կրօնք մահմէտականութիւն է, բայց ըստ մեծի մասին Գըզըլպաշ են, և Զրադաշտական․ մեծ մաս մ'ալ Զազայ կ'ըսուին, որ շատ բազմաթիւ են և առանձին լեզու ունին։ Ասոնք կը բնակին Մշոյ և Տիգրանակերտոյ կողմերը․ Խնուս, Վարդօ, Ճապաղջուր, Քղի, Ցուծիկ լեռը, եւն ։ Մեր պատմութիւններ բան մը չեն ըսեր մեզի այս ազ-

դաց վրայ, և անոնց 'ի Հայաստան գալուն վրայ։ Լեզուաց ո՞ր արմատին կը պատկանի ասոնց բարբառը, կամ ազգը՝ ո՞ր ազգին. ի՞նչ բերանացի աւանդութիւններ կան մէջերնին, գիտնականաց հետազօտութեան արժանի։ Ա՞րդեօք Չինկիզ խանին, կամ Նետողաց ազգին, Թաթարաց արշաւանաց բերած ու թողածներն են, թէ աւելի հին՝ Վահեւունեանց ճետերն են. որք՝ առ ահին վեհին Տրդատայ՝ երեսանց մինչ քրիստոնեայ, իսկ ծածուկ մինչ Գիսանէին երկրպագուք կը մնային. ինչպէս դրեթէ դարերէ հետէ Տրապիզոնի լերանց մէջ ապրող «Կէս կէս» Ցոյները, որ առ երեսս կը կոչուին Մահմուտ և Մուստաֆայ, բայց իրօք Գէորգի են և Յահեայ. կը թլփատուին և կը մկրտուին. մօլլայ ալ ունին. քահանայ ալ ունին։ Կարելի չէ՞ արդեօք մեր Զազաներն ալ երկար ժամանակ քրիստոնեայ՝ միևնոյն ժամանակ և Գիսանեան քրմաց պաշտօնեայ մնային։ Զենովբ պատմիչին ցոյց տուած նշաններն ալ իրենց վրայ մինչև ցայսօր ունենալով, այն է հերաց գիսակներ թողուլ գլխոյ 'ի կախ, զորս արգիլեց Ս. Լուսաւորիչն խափանելու համար քրմականաց յիշատակը։ Եւ, այսու ենթադրութեամբ, ահա ասոնց Շեխեր, որոց վրայ այնքան դերբնական

կարծիքներ ունին, զորս մինչև անգամ 'ի Թէաս հրեշտակաց յերկինս կը ճեմեցուցանեն, կը լնին Բրահմանաց յաջորդք։ Արդէն յայտնի է որ Գիսանէ և Դեմետրէ երկու եղբարք 'ի Հնդկաց եկած են 'ի Տարօն, և իրենց անունով այն կուռքերը հաստատեր են. իրենց սերունդ և իրենց հետ եկած ժողովուրդն ալ բնակած են եզեր հազարաւոր տներով 'ի Կվարս, Մեղտի, Բազու, Բարեխ, եւ. ինչպէս կը պատմէ Զենոբ և այլ պատմագիրք. և գեղեցիկ իմն կ'իմաստասիրէ գիտնական Մեսրովբն Թաղիադեանց 'ի Սօս և Սօնդիպի բանաստեղծութեանն։ Արդէն սոյն հանգամանքն է որ Ճենազն Մամիկոն Տրդատէն ժառանգեց զՏարօն իբրև պաշտաճ հատուցումն իւր մէկ քաջութեան և տիրասիրութեան, այն էր Տարօնոյ Արուկ իշխանն սպաննել, որ իբրև անկախ նախարար՝ ապստամբած էր հայոց հսկայ արքայէն. և Հնդիկ Տարօնեցին Արշակունեաց դէմ ըմբոստ, Հնդիկ Ճենազն Մամիկոնեն հլու հնազանդեցաւ։

Եթէ այս մասը քիչ մը ընդարձակ խօսեցանք, մեր միտքն այն չէր որ մեր ազգային պատմական հնութիւնը կրկնէինք կամ բացատրէինք. այդ ամեն մտաւոր ընթերցողաց յայտնի է։ Յայտնի է

թէ Հայկազանց ժամանակ Քանանացիք, Արծրունի Ասորիք, Հրէից գաղթականք, Մարաց մեծ գերեվարութիւնը, Աժդահակեան ազգ և տոհմն, Գողթնեաց վիշապազունք, վեհազն Արշակունիք, եւ։ Ասոնք յայտնի են. որքա՞ն ևս առաւել Պարսկական, Յունական, Արաբական, Հիւսիսային և Հարաւային ազգաց հատուածք և պատառուածք եկած յարած են 'ի մեզ. է որ իրենց ազգային յատկութիւնք և պաշտօնք ընդ երկար պահած են, է որ յեղափոխուած են 'ի մեզ։

Ըստ այսմ է նաև ամեն ազգաց գոյութեան և քաղաքականութեան կենաց պատմութիւնն ու բնութիւնը։

Դեռ միջին դարու մէջ յԱրաբիոյ և յափանց Հնդկաց յառաջանալով ազգերը Եւրոպիոյ հարաւն ու հիւսիս մարդակուլ ըրին, և այս օրուան լուսաւորութեան աշխարհի ազգերը, որ ելած են Եգիպտոսի, Բաբիլոնի, Նինուէի, Եկբատանայ աւերակներէ և դրեալ կղմինտրները կը հետազօտեն, զուգադիպութեամբ մը գտայէ թուն իսկ իրենց ազգաց նախնի հայրենեաց սփառուքերն 'ի լոյս կը հանեն։

Գերմանացիք, գիտութեան մէջ մեծ ազգ, որ 'ի ծագաց արևելից եկած են գաղթական. Պէ ըրինի արևուն նեղքէ, իրենց

հետքերը թողած են Հայաստանի մէջ, մանաւորապէս Սիւնեաց աշխարհը, ուր մեծ հիւրընկալութիւն վայելած են. բաւական կեցած են, բաւական իրենց սերունդէն հոն ձգած և այն տեղի բնիկներէն իրենց ընկերացած մեկներ են:

—Կը հաւանիմ և կը հետեւիմ յայսմ՝ Շահն. գիտնական Կ. Վ. ի այս մասին գրածին. զոր տես 'ի Շարս Հայ պատմագրաց, 'ի Յառաջաբանութեան Ստեփաննոսի Օրբէլեան Պատմութեանն Սիւնեաց—:

Գերմանական ազգին կը մնար որ Հայաստանին բեւեռագիրներն հաւաքէր և ընթեռնոյր: Թէպէտ գիտնականն Մորթման 1871-ին քանի մը բան տուաւ, այլ բան մը չհասկցուց. վասն զի Հայաստանը շրջած չէր. վասն զի միայն Հայոցս գրաբառ և Պօլսեցւոց աշխարհաբառ լեզուներով լուծել կը կարծէր. այն ինչ բեւեռագրի լեզուին առջև գուցէ մեր գրաբառն այնքան տարբեր, նոր և բոլորովին հեռու ոճեր և բառից կազմութեան ու հոլովմանց ձևեր ունի, որքան արդի Պօլսոյ և զանազան գաւառաց աշխարհիկ բարբառն՝ գրաբառին առջև. մանաւանդ թէ մեր սուրբն Մեսրոպ կարգաւորեց իր քերականն և քերականութիւնն ըստ ալփաբետից և արուեստին յունաց:

Որովհետեւ մեր ժողովուրդն աւելի հին է քան մեր գրաբառն, ուրեմն ժողովըրդեան խօսած լեզուն աւելի մօտ լինելու է բևեռագրի լեզուին։ Խրաւ է, դարեր և դէպքեր փոփոխութեանց ազդեցութիւն կը գործեն ինչպէս ժողովրդեան կենաց և բարուց վրայ, նոյնպէս և լեզուին վրայ. բայց շատ պարզ կ'երևի թէ հայ ժողովրդեան այն մասը՝ որ անփոփոխ մնացեր է իր դրից մէջ, կրելով և տոկալով ամեն արկածները, Հայ անունը և Հայաստանը չթողլով, պահած է նա և իր նախնական աւանդութիւնք մինչև յաւուրց հեթանոսութեանց անտի, պահած է նաև անշուշտ Հայ լեզուն 'ի դարուց նախնեաց։ Սակայն նկատելի է որ Հայաստանի իւրաքանչիւր գաւառը զատ զատ ոճ մը ունի խօսից, եղանակ մը ունի արտասանութեան բառից, ինչպէս նաև իր կենաց հանգամանքն ու պարագայքն ալ տարբեր են. ուստի ո՛ր գաւառի բևեռագիր պէտք լինի կարդալ, անշուշտ նոյն գաւառի քաղաքաց, գիւղօրէից, աւերակաց, գետոց, լերանց, մարդոց, գտնուած անասնոց անուններն և բնակչաց լեզուն գիտնալու է գիտնական ընթերցողն. և, թէ կարելի է, մինչև անգամ ժողովրդեան բերան եղած աւանդութիւնք և առասպելներն ալ լսած լի-

նելու է։ Օրինակի համար ըսենք. վանայ մէջ եղած բեւեռագիր մը ընթեռնլու համար, կատարեալ հայ վանցի մը լինելու է, որ «Գակրիտուր» անուն մը կարդալով հասկնայ նաեւ թէ այսօր ես վանայ մէջ «Գատուր» անուն կայ. եւ գուցէ Տիարպաքիր՝ Տուրպակրի է, քան թէ Տիգրանակերտ, զոր նորոգած լինի մեր Տիգրան երկրորդ իւր անունով։

Խնդիր է թէ «Հա՞յր, մա՞յր» ուղիղ են. եթէ «Հէր, մէր» հնչել. արդեօք ո՞ր ձեւով կարդալու է եթէ բեւեռագրի մէջ պատահի։

«Երեցս», որ կը նշանակէ երեք անգամ, վանցիք կ'ըսեն «Երեք դիր». ո՞վ գաւառացիէն զատ «դիր» բառն «անգամ» կը հասկնայ։

«Մէկ զարնելուց շուռ իտու գետին». — «Ի հար անդէն կործանեաց յերկիր»։

«Դեհ խիզան». — «Ի կողմանս Խիզանայ»։

«Մէշկեց վէր Ասուրուն». — «Մզեաց յԱսորին»։

«Մէ պտուղդ». — «Մոյծ յաչս քո»։

«Ջեռն ակռկաւ ծառին». — «Կռուեցաւ ձեռն 'ի ծառն»։

«Աղօթրան». — «Արեւելք եւ Արշալոյս»։ «Մովային». — «Արեւմուտք». եւ ըստ Մշեցւոց՝ — «Արեւպատ»։ Հիւսիս, Հարաւ

բառեր երբեք չկան ժողովրդեան բերանը, այլ կամ «ԱՀ, ձախ» գործ կ'ածեն, կամ լերան մը ու գետի մը սահմանը, կողմը ցուցնելով կը հասկցունեն ։

Շատ մը այսպիսի օրինակներ կան ։

Քաւ լիցի թէ ես գիտնական Մօռթ-մանին կամ ուրիշ գիտնականաց և լեզուագիտաց չհաւանիլ կը ցուցնեմ․ վասն զի ես այս գրածներէս անդին բան մը չգիտեմ, և ոչ ալ արուեստ մը կամ ուրիշ լեզու մը․ այլ միայն մեր ազգային գիտնականաց ուշը կը հրաւիրեմ այս խնդրոյն և այս առաջարկիս վրայ․ վասն զի կը փափագիմ ես ալ որ այս պանծալի դարուս լուսաւորութեան սեղանին վրայ գրուած տեսնեմ նաև Հայաստանի հին գրականութեան կնքեալ և փակեալ փառաց մատեանը, յորում ազգային և ընդհանուր հնութեան և պատմութեան գանձեր կան ծածկեալ, և զորս հայերը բանալու միայն կարող են ։ Ես կ'աւետեմ ընթերցողաց, թէ արդէն ծանուցեալ երկու գիտնականք Մեծապատիւ Պ. Քերովբէն Պատկանեան, որ Արևելեան լեզուաց բրոֆէսոր է 'ի Ս. Պետրբուրգ Ռուսաց կայսերական Ակադէմիան, և Մեծապատիւ Յովհաննէս Էփէնտի Հիսարլեան 'ի Պօլիս՝ որ քաջ հնագէտ և հայագէտ է, երկուքն ևս կը տքնին այս

վսեմ նպատակին համար, որոց անդին բարեկամութիւնն վայելելու շնորհն ունեցած եմ․ յոյս կուտամ յաւիտենական մոխիրներէ և մթութենէ սրբել մեր Հայկական ազգի պատմութիւնը սեպագրաց բանալիով․ ինչպէս կան նաև քանի մը հնագէտ և պատմագէտ հետախոյզ ազգայինք։

Այժմ մէկ դի դնելով ազգային լեզուի խնդիրը, գրական ժամանակի և նախնի պատմութեան վրայ խօսինք խուն ինչ։

Նախկին կամ հնագոյն ազգաց գրերը շատ բնական բայց բազմազան ձևերով են․ և ասիկայ ծանօթ է ամենուն, որ Չինաց նշանագիրները և Եգիպտական քանդակագրեր տեսեր են․ կենդանագիր, մարդագիր, թռչնագիր, ծառագիր, և այլ ինչ որ բնութեան մէջ կայ, անոնց նշաններով գրեր յօրինուած կան, խորհրդական նշանակութեամբ։

Դի՛ր դու Հայոց հին ձեռագիրները, թէև Մեսրոպեան աւուր և անկէց ետքն ալ եղած լինին․ և ահա կը տեսնես հրեշտակագիր, մարդագիր, թռչնագիր, ծաղկագիր, կենդանագիր, եւն։ Երկու մարդ կը գծէ, երկրորդի ոտքին տակէն եղջերաձև նշան մը կ'աւելցնէ, կ'ընէ «Ա»։ Հրեշտակ մը կը գծէ թևերը ծալլած, ձեռքը ծաղկանոց մը կուտայ 'ի կախ, այն է «Ի»։

Օձ մը կը պատատէ՝ տուտը պարանոցին տակէն մացունելով և դուրս հանելով , այն է «Ս» ։ Թռչնոյ մը անանկ ձև մը կուտայ , որ կը տեսնաս թէ «Հ» է ։ Այսպէս բոլոր մեր Այբ բենն մինչ քէն ։

Առնցմէ զատ կայ նաև փակագիր , որ երկու գիծ գծելով ամբողջ անուն մը կամ բառ մը կը զետեղէ մէջը , մէկալ տառից գծերէն միայն մասն մասն նշանելով ։ Իսկ իբրև սղագիր , կամ իբրև բուն նշանագիր իւրաքանչիւր բառը մէկ մէկ գծանիշով մը կը հասկցնէ . ինչպէս ձեռագիր ընթերցողներ տեսած են , աշխարհ , երկինք , երկիր , արեգակն , լուսին , աստղ , տուն , եկեղեցի , եւն ։ Գուցէ ասոնք լինին Ս. Մեսրոպէն առաջ հայոց Դանիէլեան ըսուած նշանագիրները ։

Կայ նաև տեսակ մը գիր Հայոց , որ աւելի նման համարելու է Եգիպտականին և Չինականին, այն է գերեզմանաքարերու վրայ քանդակուածներն . Վարսավիրայի մը տապանաքարին վրայ՝ մկրատ և ածելի . Հիւսան՝ ուրագ և սղոց . Դերձակին՝ չափ և ձևիչ . Զինուորի մը կամ քաջի մը՝ սուր և վահան ։ Հայաստանի մէջ դեռ կան շատ գեղեր , իմ տեսածներէս Խնուսայ Գարաչօբան գեղին և Բաբերդու Բալախոր գեղին տապանաքարերը ոչ տնկուած խաչ-

քար են և ոչ պատկերուցած կափարիչ․ այլ խոյաձև, ձիաձև, առիւծաձև, ցլաձև հսկայ քարեր, որոց կողերու վրայ սուր, տապար, հրացան, եւ, քանդակուած։ Կայ տեղ տեղ ալ մատաղ օրիորդ մը, հրեշտակատիպ մանկիկ մը, այեւոր մը, տէրտէր մը, կամ կրօնաւոր մը, որ Սաղմոս և Նարեկ ունի ձեռքը․ սպաննեալ մը կամ նահատակ մը՝ ըստ իւր կերպարանաց։ Վարդապետի և եպիսկոպոսի գերեզմաններն յայտնի են գաւազանով և ճգնակ թաղով։ Ո՞չ ապաքէն և այս ամենը կարդալ կուտան մեզի առանց տառերու՝ թէ ո՞յք են և ո՞րպիսիք են հանգուցեալք ՚ի նոյն տապանի։ Նւ այս ևս հնութեանց նշան մի է։

Այլքան մը ևեթ խօսելով առ այս, կը փութամ Հայրենեաց վէպերու և զրոյցներու վրայ ևս սակաւ ինչ գրելու։

Տեսանք ահա մենք թէ գիր շատ հին է մեր ազգին մէջ․ բայց այդ ձև գրեր և բևեռագրեր և կղմինտրները կը գործածուէին միայն մեծամեծ և նշանաւոր անցքերու և յիշատակներու․ իսկ հասարակութիւն կը մնար անհաղորդ և անձեռընհաս։ Մինթէ միջին դարու մէջն իսկ՝ երբ այնքան դիւրացած էր ձեռագիրն ՚ի թուղթ, դարձեալ անհաղորդ և անձեռն-

Հապա չէ՞ր ժողովուրդ ղրկելուն և կարդալուն մինչև ցկութթէնպէրկի տպագիրն ,

Այս այսպէս լինելով․ սակայն ժողովըրդեան միտքն ու բանականութիւնը չէր կարելի մնալ անգործ և անզգայ․ Նա իր տեսած, ըրած, ու լսած անցքերը կը խօսէր բերանացի, կը շարադրէր կը վիպասանէր բանացի․ և իր զգացած սէրն ու թախիծ կ'երգէր կը մրմնջէր թէ յանձին առանձին և թէ յընկերութեան․ անշուշտ երևակայութիւնն ալ բան մը կը յաւելուր բուն եղածին վրայ, բան մ'ալ լսողը կը յաւելուր՝ երբ ինքն ևս պատմել կը հաղորդէր։ Մինչև ցայսօր ևս վէպեր ու զրոյցներ, որ կը շինուին թէ բերանացի, և թէ գրաւոր․ յօրինող վիպասանն ,սա ստոյգ նշանով մը կը հասկցուի ուր տեղացի լինելն․ Նա իր խօսքերը կը յօրինէ իր բնակած գաւառի բնակչաց տեղական սովորութեան և կլիմային և իր չուրջ գտնուած բնական կենդանեաց և վայրաց անուամբ՝ և նմանութեամբ՝ և նկարագրով։ Ծով չունեցող գաւառի մը վիպասանը ծովու վրայ գաղափար չունենալով, երբէք զայն չգործածեր իր ասից մէջը․ իսկ վանցին իր տաղին, ողբին, խաղին և խօսքին մէջ յաճախ կը խառնէ․ մերթ գեղեցկի մը աչքը ծովի կը նմանցընէ․ մերթ

'յուղեալ սիրտը՝ ծովի աղեծուփին, եւն.

Վէզուն ու զրոյցը, որ ժողովրդեան բերնով «Վեզեւոն» է, յօրինուած կը լինի բարոյական խրատու համար. և իբր դիւցազներգութիւն՝ քաջաց քաջութիւն հռչակելու կամ այլոց օրինակ տալու համար։ Հէքեաթներու շարադրութեան մէջ միշտ կարգ մը կայ. ուղեւորութիւն. հեռաւոր և անծանօթ աշխարհները. հրաշալի և անհաւելի նկարագրութիւնք վայրաց և անձանց. դիպուածք. արկածք 'ի նեղութենէ ընկերաց կամ եղբարց, երբեմն եւս 'ի ծնողաց։

Արաւհարականն ամէն հէքեաթի ալն է. բաւական ճարտար հանգոյցներ ու կապեր ունի. բարի և չար ոգեաց՝ ջիներու դեւերու դերեր. անմահութեան ջրոյն և պտղոյն; տեղւոյն և կենաց միշտ հետամուտ։ Ի պաշտօն կը կոչուին կենդանիք, գազանք, և թռչունք. որք իւրաքանչիւր մէկ մէկ մարդ անձանց դեր կը կատարեն։

Դիւցազունք և դիւցազնուհիք երբ 'ի հանդէս կուգան, և երբ ճապուկ ճարտար լեզու մը զանոնք կը գրուցէ, մարդու մտաց առջև կը պզտիկնան Հերակլեայ դիւցազնութիւնք. Ոսկի գեղման հէքեաթն. Տրովադայի վէպն. Ոդիսեան և իւր կղզիները.

Ալկինոեայ պարտէզներն, յորս Հոմերոս կը պանծայ. կամ Տելեմաքն ու Կալիփսէն, և որ իրօք ժողովրդական վէպեր են ։

Ո՞չ ապաքէն վէպ ու զրոյց են մեր Մեծին Խորենացւոյ յիշած Շամիրամայ աղուական ծնունդն ու սնունդն, անոր տարփանքն և արարքն ։ Ի՞նչ է Աժդահակայ անունն, օձ. անոր երազին լաւ միտ դիր. անոր խորամանկ խնամութիւնը. մեր Տիգրանուհւոյ իմաստութիւնն. Տիգրանին անձին և քաջութեան հանգամանքը ։ Վահագն՝ իր անունով. երկնից և երկրի որդի. երկն. ծով. կարմրիկ եղեգնիկն. բոց. հրածին. հրահեր. արեգակն ակն ։ Ի՞նչ անուն է Վարդգէս. — վարդահեր. Հրաչեայն. Հսկայորդին. Գոռ. Գոռակն. եւ։ Ո՞վ է Հայոց Տորք սարսափելի Նախարարն. ո՞ր աստուծոյ տուրքն է նա. որ մէկ ձեռնով որձաքար վէմեր կը փշրէ, լեռներ կը տապալէ, բլուրն իբրև պարսքար մը կը նետէ. քանի՜ ահարկու է անոր կերպարանքը, քանի՜ անսահման անոր ուժը ։ Երուանդին Արշակունւոյ չար աչքերէն մարդ և վէմ պատառած են ։ Արտաւազդն պտուղն Սաթինկան տարփանաց բարձից Արգաւանայ, դիւաց յափշտակութեան և փոխարինութեան արժանի. 'ի վիհս Մասեաց անոր կործանումն. 'ի քաջաց կալեալ կապ-

եալ մնայ, անմահ մնայ, բայց լոյս չտեսնայ · շունք անոր շղթաները կրծեն · դարբինք սալը հարկանելով անոր շղթաները հաստատկեն, որ չելնէ վախճան տայ աշխարհին : Ի՞նչ է Յանատրուկ · շան գտած տղան :

Իսկ Բիւրասպեանց վէպն բացարձակ առասպել կ'անուանէ Խորենացի հայրն, և անոր մէկ քանի մասերը մէջ կը բերէ :

Այսպիսի առասպելաց մէջէն ծագած են և 'ի նոյն մնացած ամեն հին ազգաց նախնականութիւնը : Ամենուն գիտցած բանն է թէ՝ Աղէքսանդր Մակեդոնացին Փիլիպպոսի որդին նոյն իսկ Արիստոտէլեան օրերուն մէջ ծնած, «Վիշապի ծնունդ» է : Հռովմայ հիմնադիրները «Հովուի մը այծու կաթով 'ի վայրիս սնած», եւն : Դիւցազանց ինչպէս ծնունդն, նոյնպէս և վախճան կամ փոխումն յաստեաց հրաշալի են · ո՛ր յԱստեղատունս համբարձեալ · ո՛ր յամպրոպս · ո՛ր 'ի ջուրս և 'ի կղզիս կը բնակի յաւէրժապէս · ո՛ր յանդունդս 'ի դժոխս · ո՛ր փոխակերպեալ 'ի ծաղիկ · ո՛ր 'ի ձուկն · ո՛ր 'ի գազանս և 'ի ցիռս վայրենիս, եւն : Կան դիւցազունք ալ, որոց անուանք և անոնց անուամբ լերինք, աշխարհ, քաղաք, բերդ, կոթող, ջուրք անբարբառ կը պատմեն մեզ անոնց վէպերը :

Եւ խոստովանիմ թէ իմ այստեղ դրեալ վէպերը այնքան հին և փտած չեն. բայց կրնանք օրինակ տալ բանաստիրաց, որ հեռաւորին ձեռք բերել աւելի հնագոյնները, և իրենց ուշադրութիւնը դարձունեն ժողովրդեան շուրջ և բերանը եղած ամեն զրուցաց և աւանդութեանց։ Նրանց աստնցմով գրաւէրներն ալ ազգային գրական վէպեր յօրինել. բաւական օտար ազգաց վէպերը յեղափոխուեցան 'ի մեզ, որոց կեանքն ու հանգամանքը մեզմէ օտար գոլով հանդերձ, այսօր առաւել ծանօթ են Հայ ընթերցողին քան մեր ազգային վիպական հայրենական կեանքն ու հանգամանքն։

Ցայսմ՝ առաջին հանդիսացած է Թիֆլիզի ուսումնական Գ. Ղ. Աղայեան «Երկու քույրեր» վիպասանութեամբ։ Եւ 'ի մեզ գիտնականն Հիսարլեան, «Նեռն և կատարած աշխարհի» վէպով։ Նաև Արև. Մամլոյ խմբագիր Մեծ. գրագէտ Մ. Էֆ. Մամուրեանն «Սև լերին մարդ» ով։ Իմ սիրելի բարեկամ և հայրենակից բանաստեղծ Գ. Սեդրակ Տ. Սարգիսեանցն ևս մի պատմական նոր երկասիրութիւն յօրինած է «Շատախն ո՛ւր Սիպիրն ո՛ւր». որ կատարեալ Հայկական վէպ մի է, արդարև գնահատելու արժանի. զոր 'ի լոյս ածիտէ

ածէ 'ի մօտոյ ։ Գուցէ կան այլք ևս , որոց ես հանդիպած չեմ ։

1·

ԳԱՌՆԻԿ ԱՂԲԷՐ

Ռուբէւէրի կնիկ մը կ'ելնի , մէկ աղջիկ ունի ։ Էդ կնիկ կ'երթայ իրկան · էն իրիկն էլ մէկ լաճ մէկ աղջիկ ունի ուր առջի կնիկից ։

Կնիկ՝ կ'անի չանէ՝ չում իրիկ գլխուց կը հանի , մարդու ճար ճարանք կը կտրի , քյլաւ ուր լաճն ու աղջիկ պիտի տանի սարերաց գլօխ կուրխի ։ Օր մը քանիմ՝ հատ թափթափայ հաց կը թխի կը դնի տուրիկ , կ'առնի ուր ճըժեր կ'երթայ սարերնը վեր · կ'երթայ կ'երթայ կը հասնի անապատ տեղ մը , ճըժերաց կ'ասի · Ղըտոր մը նստենք ըստայ հանգ առնենք ։ Տղէյներն ի կը նստեն ։ Խէրն ի , իրեւ կը շրջի մէյ դեհ , ընքուռ ընքուռ կուլայ ։ Կը դառնայ տղէյներաց կ'ասի · Ճըժեր , պրտուճ մը հաց կերէք ։ Կուտեն կը պռծնեն ։ Լաճ վէրուց ասաց · Բաբօ՛ , ծարաւ եմ ։ Խէրն ի ուր ձեռաց կօռ կը տնկի գետին , ուր կօռտիկ կը հանի թաք վէր կօռխն · կ'ասի · Արե , իմ լաճ , արե իմ կօռտիկի հոլը նստի ·

Ես երթամ տխնամ դո՞ր ջրի աղբիւր կայ։ Քոր աղբէր կը նստեն․ խէրն ի կը թողնէ կ'երթայ մէջ դեհ կը կուրխէ։ Էդ սարի ճըժեր կը միան էն տեղ։ Շատ կ'աչքեն, քիչ կ'աչքեն, կը տխնան որ խէր չդար– ձաւ․ կ'ելնեն չորս դեհ կը զարնուեն, հը՛, մարդ մարդասանք չկայ։ Կը դառնան էլմ էն տեղ․ ու մէկ ձէնով կուլան կ'ասեն․

«վա՛յ վա՛յ,
«կօռը կայ, կօռտիկը կայ, բաբօն չը կայ․
«վա՛յ վա՛յ,
«կօռը կայ, կօռտիկը կայ, բաբօն չը կայ»։

Շատ են նստե, քիչ են նստե․ ելեր են քոր աղբէր մէկը կօռն ի առե, մէկը՝ կօռտիկ․ ճարը ճամբահ մոլորած կը քէլեն։ Իկեր են իկեր ե՛ն հասեր են տխսեր են ձիու ոտաց կոխած փոս մը, որ անձրեւա– ջուր կայ մէջը․ աղբէր քուրոջ կ'ասի․ Դադէ՛, ծարաւ եմ։ Քոր կ'ասի․ Մի՛ խմե, կը դառնաս ձի։

Կուգան կուգա՛ն կը հասնեն եզան ոտաց տեղ․ աղբէր կ'ասի․ Դադէ՛, ծա– րաւ եմ։ Քոր կ'ասի․ Մի՛ խմե, եզ կը դառնաս։

Կուգան կուգա՛ն կը հասնեն գոմշու ոտաց տեղ։

Աղբէր կասի․ Դադէ՛, ծարաւ եմ։

Քոր կ'ասի․ Մի՛ խմե, գոմշու ձագ կը դառնաս։

Կուզան կուզա՞ն կը հասնին արջուտասց տեղ։

Աղբէր կ'ասի. Դաղէ՛, ծարաւ եմ։

Քոր կ'ասի. Մի՛ խմեր, արջու քօթօթ կը դառնաս։

Կուզան կուզա՞ն կը հասնին խոզուտասց տեղ։

Աղբէր կ'ասի. Դաղէ՛, ծարաւ եմ։

Քոր կ'ասի. Մի՛ խմեր, խոզ կը դառնաս։

Կուզան կուզա՞ն կը հասնին գէլուտասց տեղ։

Աղբէր կ'ասի. Դաղէ՛, ծարաւ եմ։

Քոր կ'ասի. Մի՛ խմեր, գէլ կը դառնաս։

Կուզան կուզա՞ն կը հասնին գառուտասց տեղ։

Աղբէր կ'ասի. Դաղէ՛, եաման է, ես ծարաւ մեռայ է։

Քոր կ'ասի. Ես ի՞նչ անեմ. հոգիս էլնի, կ'ուզես խըմի, պիտի դառնաս գառն։ Աղբէրն ի, կը խմի, կը դառնայ գառն. ու բայելով կ'ինկնի քուրոջ եռևէն կ'երթայ. կը պտըտեն կը պտըտե՞ն, կ'երթան տուն կը հասնեն։

Օր մը օրանց խորթ մէր տըղով կ'ըլնի. իրկան կ'ասի. Քո գառն բե մորթի ուտեմ։ Հազար ջորով քոր կ'առնի ուր գառնիկ աղբէր կը փախնի սարեր. ու յըմէն

որ կը տանէր արածել. ինքն ալ առչկան կը մանէր։ Մէյ դիր աղջկան ձեռնէն առջը-կան կը փրթնի կ՚իյնի փոս երի մը մէջ. գառն կը մնայ վեր կ՚արածայ, աղջիկ կ՚երթայ որ առչկան բիրի. կը մտնի յէր. կը տեսնայ որ ի՞նչ. դէւու հազար տարե-կան պառաւ մը պառկեր էն տեղ։

Նազաստան աչքը կ՚առնի աղջիկն, ու կ՚ասի.

Աղջիկ հաւքն ուր թեւով, օձն ուր պորտով չէր կանայ գայ ըստայ, դու ի՞նչխ էկար։

Աղջիկն ուր աձուն կ՚ասի. Քո սէր ձիկ իբե, մամիկ։

Կ՚առնի կը նստի. սարից ձորից հարց-մունք կ՚անի։ Էս աղջիկ շատ դիւր կու-գայ դէւի պառւուն. Երթամ քիչ մը ձուկ բիրեմ, կե, կ՚ասի, անօթի ես մըկայ։ Բերած ձըկներ մէկ մէկ փիչայ օձ են։ Աղջիկ կը զահահորի. գանհնի լեղին պատ-ռի. ուր աձուն կուլայ։ Պառաւ կ՚ասի. Աղջիկ ինչի՞ կուլաս։ Աղջիկ կ՚ասի. Մէրս միտս կ՚իյնի, կուլամ։

Ու կը նստի ուր գլխու էկած բաներ նաղլ կ՚անի պառւուն։ Իր բոլոնի, կ՚ասի պառաւ, դէ դու նստի, ես իմ գլօխ դը-նեմ քո դօգ քընեմ։ Աղջիկ կը փառի, խաչ-երկաթ կը դնի կրակի մէջ. աղջկան կ՚ասի.

Թէ որ Յէն էկաւ գնաց, ագահ մ'անէր․ ինչ գահ որ Կանանչկարմիր կուգայ, կապակցած խաչերկաթ գիր վէր իմ ոտաց, որ ադհեմ ելնեմ վէր ։

Աղջկան հոգին դառձե քանձ կարեկի մը հատ․ ամռան ինչխ անի, նը նստի․ պառաւնի գլօխ կը դնի վէր աղջկան ծընկ-կուէրաց կը քնի ։ Քիչ մը կենայ, կը տխնայ որ գազան անհաւատ Յէն կուգայ. կ'ընցնի, ըսկի ձէն չհանե աղջիկ ։ Քիչմ' էլ կը կենայ, կը տիսնայ որ Կանանչկարմիր կուգայ․ էն գահն ինե աղջիկ՝ խաչերկաթ բարկ կրակ դարձած՝ կը վէրցի թալի վէր պառւու ոտաց․ պառաւն ի Օ՜ֆ կ'ասի, լուեր կծեցին․ ու կ'ադհի ։ Աղջիկ ձէն կուտայ, պառաւ կ'ելնի, աղջիկ կը կայնըցուցի․ Կանանչկարմրի չոգերաց աղջկան մազերն ու հալաւներն ըժէն կը դառնան ոսկի ։ Աղջիկն ի կ'ելնի պառւու ձեռ կը պագի, իջին կ'առնի, կ'ելնի ուր դառնիկ աղբէր կ'առնի կ'երթայ տուն ։ Մօր մօտէն գ՚աղտիկ Թորուան չուրթը կը փորի, ուր ոսկի հալաւները կը պահի․ հին հալըըներ կը հագնի նստի ։ Խորթ մէրնի կուգայ տուն կը տիսնայ որ, էս աղջկան ծամեր ոսկի են ։ Կ'ասի․ Աղջիկ էն ինչ արիր, որ ծամերդ ոսկի դարձան ։

Աղջիկն ի տեղոց տեղ կ'ասի․

որ կը տանէր տարածաւ․ ինքն էլ առչկան կը մանէր։ Մէյ դիր աղջկան ձեռնէն առջըկան կը փրթնի կ'իյնի փոս էրի մը մէջ․ գառն կը մնայ վեր կ'արածայ, աղջիկ կ'երթայ որ առչկան բիրի․ կը մտնի յէր, կը տեսնայ որ ի՞նչ․ դեւու հազար տարեկան պառաւ մը պառկեր էն տեղ։

Նազաստան աչքը կ'առնի աղջիկն, ու կ'ասի․

Աղջիկ հաւքն ուր թեւով, օձն ուր պորտով չէր կանայ գայ ըստայ, դու ի՞նչխ էկար։

Աղջիկն ուր անուն կ'ասի․ Քո սէր ձիկ իբե, մամիկ։

Կ'առնի կը նստի․ սարից ձորից հարցմունք կ'անի։ Էս աղջիկ շատ դիւր կուգայ դէւի պառւուն․ Երթամ քիչ մը ձուկ բիրեմ, կե, կ'ասի, անօթի ես մըկայ։ Բերած ձըկներ մէկ մէկ փիշապ օձ են։ Աղջիկ կը զահահորի․ գահնի լեղին պատռի․ ուր անուն կուլայ։ Պառաւ կ'ասի․ Աղջիկ ինչի՞ կուլաս։ Աղջիկ կ'ասի․ Մէրս միտս կ'իյնի, կուլամ։

Ու կը նստի ուր գլխու էկած բաներ նաղլ կ'անէ պառաւուն։ Ըր ըսկունի, կ'ասի պառաւ, դէ դու նստի, ես իմ գլօխ դընեմ քու գոգ քընեմ։ Կըսակ կը վառի, խաչներկաթ կը դնի կրակի մէջ․ աղջկան կ'ասի․

Թէ որ Յեւն էկաւ գնաց, ադահ մ'անէր․ ինչ գահ որ Կանանչկարմիր կուգայ, կապկցած խաչերկաթ գիր վէր իմ ոտաց, որ ադհեմ ելնեմ վեր ։

Աղջկան հոգին դառձե քանձ կորեկի մը հատ․ անման ինչխ անի, կը նստի․ պառաւնի գլօխ կը դնի վէր աղջկան ծընկուէրաց կը քնի ։ Քիչ մը կենայ, կը տեսնայ որ գազան անհաւատ Յեւն կուգայ կ'ընցնի, ըսկի ձէն չհանե աղջիկ ։ Քիչմ' էլ կը կենայ, կը տեսնայ որ Կանանչկարմիր կուգայ․ էն գահն ինե աղջիկ՝ խաչերկաթ բարկ կրակ դարձած՝ կը վերցի Թալի վէր պառւու ոտաց․ պառաւն ի Օ՛ֆ կ'ասի, լուեր կծեցին․ ու կ'ադհի ։ Աղջիկ ձէն կուտայ, պառաւ կ'ելնի, աղջիկ կը կայնըցուցի․ Կանանչկարմրի չոգերաց աղջկան մազերն ու հալաւներն ըժէն կը դառնան ոսկի ։ Աղջիկն ի կ'ելնի պառւու ձեռ կը պագի, իջին կ'առնի, կ'ելնի ուր գառնիկ աղբէր կ'առնի կ'երթայ տուն ։ Մօր մօտէն գ՚աղտիկ Թորուան չուրթը կը փորի, ուր ոսկի հալաւները կը պահի․ հին հալըներ կը հագնի նստի ։ Խորթ մէրնի կուգայ տուն կը տեսնայ որ, էս աղջկան ծամեր ոսկի են ։ Կ'ասի․ Աղջիկ էն ի՞նչ արիր, որ ծամերդ ոսկի դարձան ։

Աղջիկն ի տեղըց տեղ կ'ասի․

Խորթ մէր որ կը լսի, էն մէկէլ օր կ՚ելնի ուր հալալ աղջիկ կ՚օրօխկի էն սարը․ առչկան ձեռնէն կը փրթուցի կ՚իյնի մէջ էրին․ կ՚երթայ որ առնի, դէւու պառաւ խոռ գէշ ու գարշէլ բան մը կը դառցուցի կ՚օրօխկի ։ Փոշման կ՚ելնեն, ամա՛ն ինչխ անեն ։

Օր մը էդա քաղքի թագաւորի տուն հարսնիս կայ․ թագաւորի լաճ կը փսակեն․ աշխար երկիր կը թափի թամաշայ ։ Էսայ կնիկն էլ կ՚էլնի ուր չապիկ մըխմէլ կը հագնի․ մէտակ կը քաշի ուր աղջկան գլօխ, քո ուզածի պէս կը զարդըրի, կ՚առնէ կ՚երթայ թամաշայ ։ Որբ աղջիկն էլ կ՚ելնէ ուր ոսկի հալըըներ կը հագնի, ոտով գլխով կը դառնայ խուռնի խրեղէն․ կ՚երթայ հարսնիս թամաշայ․ Դառնալուն հրեղէն աղջիկ կը վազի որ քանձ մէրն առաջ գայ տուն, հալըըներ հանի պահի․ թափ վազելուց, ոսկի սօլի թակ կ՚իյնի մէջ աղբրին․ Թագաւորի ձիանք կը բիրեն ջուր խմելու․ ձիանտերաց աչքը կ՚իյնի ոսկի սօլ, կը խըռտնեն, ջուր չեն խմե ։ Թագաւոր քանքան կը կանչի կը մտուցի աղբրի ակը հորդելու․ ոսկի սօլի թակ կը գընդըընեն հանեն դուրս ։ Թագաւոր դալալ կանչել կուտայ, թէ՝ էսա սօլի թակ վիր ոտնով ըլնի, էն կը բիրեմ իմ լաճուն ։

Մարդ կ'իսկեն չորս դեհ քաղքի մէջ գըմէնի ոտն էլ կը չափեն ։ Կ'երթան կը հասնեն գառնիկի տուն․ խորթ մէրն ի կը բռնի որբ աղջիկ կը մի թոնէր կը ծածկի, ուր աղջիկ նշանց կուտայ ։

Աքլօրն ի ուր թառից կը թռնի, կը վազի կուգայ տան դռան շեման վէրէն կը կայնի, իրեք բերան կը կանչի․ «Կուկլուկուկո՛ւ․ խաթմա խաթըն թանդըրդայ դըր»։ Մարդերն են, համան կը բռնեն մէր կը մշկեն դէն, աղջիկ թոնրից կը հանեն, տանով կը չափեն ։ Ել՛, երթանք, կ'ասսեն, թագաւորի հարս դու ես ։

Աղջիկ թոնրի չուրթը կը քակի, ուր ոսկի հալըըներ կը հագնի․ ուր գառնիկ աղբէր կ'իսկի առջև կ'էրթայ․ եօթն օր եօթն գիշեր հարսնիս կ'անեն․ կը փսակեն վէր թագաւորու լաճուն ։

Խորթ մէր օր մը կ'առնի ուր հալալ աղջիկ կ'երթայ թագաւորու տուն՝ մէկէլ աղջկան տես․ աղջիկն ի՝ ինչքանդար չըլնի ուր մօր տեղն ի, կ'առնի կ'երթան Խաս բաղչէն․ բաղչից կ'ընցնեն կ'երթան ծովու պռուկ կան կուգան․ կը վերցի խորթ մէր կ'ասի․ Քալա, աղջիկներ, էկէք մտնենք ծով լողգնանք․ կը մտնեն ծով։ Խորթ մէր էն հրեղէն աղջիկ կը դըմշկի ծովու օրթէն․ պէտ ձուկ մը կուգայ աղջիկ կուլ կուտայ ։

Մեր կը ժողուի ոսկի հալաւներ կը հագուցի ուր աղջկան՝ կ'առնի կ'երթայ թագաւորաւ-տուն, կը նստացուցի հարսի տեղ. աղջկան քիթ բերան, աչք ունքեր ծածկուկ ի, մարդ չ'իմնայ, մերն էլ մարդու խօսա չիգայ:

Էն մէկէլ խեղճ աղջիկ քանի մ'օր կը մնայ ձկան փոր. օր մը գիշրրուան ժամ-հարի ձէն կ'առնի, ինքն էլ ձկան փորից կը կանչի:

«Ժամհար, ժամհար, որ քու ժամ կը կանչես.
«Եօթ խաչ քու իրեն կը հանես.
«Դու քու բարիլուսու Աստուած կը սիրես.
«Երթաս թագաւորի լաճուն խաբրիկ մը
տանես.
«Ըսես. իմ գառնիկ աղբէր չը ղենես»:

Ժամհար մէկ երկու դիր էսա ձէն կը լսի. կ'երթայ թագաւորի լաճուն կ'ասի. թագաւորու լաճն ի մէկ գիշեր կ'ելնի կուգայ ժամհարի հետ ծովու պռուկ կը կայնի ականջ կ'անի. ձէնից կ'իմնայ որ ուր հուրնի հրեղէն կնիկն ի. Թուր կը չքլտի, զինք կը թալի ծով. Թրով ձկան փոր կը ճղղի, աղջիկ կը գրկի հանի դուրս. կ'երթան տուն. կը կանչի խորթ մէրն ուր առջև, կ'ասի. Ձօքա՛նչ խաթուն, ասա, քե ի՞նչ հադեայ պիտի. գարուկէր ձի՞ մը թէ սևկոթ դանակ մը:

Ջօքանչն ի կ'ասի․ Սեւակոթ գանակ քո չարկամի փորը․ ձիկ դարուկեր ձին պիտի։

Էն գահն ինե մէր ւաղջիկ կապել կուտայ ձիու պոչից․ սէիսին վ'ասի․ Քե տխնամ, տա'ր, զա'ր, սարէ սա'ր, քարէ քար, չուամ ճոչ կտոր ականջ մնայ ու մէյմէկ թուռ գլխներաց մազ․ թե ւարի։

Հարսն ու փէսէն առին մէյմէկ նստան․ Գառնիկ աղբէրն էլ ուրենց հետ։ Ինոնք գնտան ուրենց պալէն․ Իսոնք հասան ուրենց մուրատին։

Երկնուց իրեք խնձոր ինկաւ։

2․

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴ

Ժամանակով մարդ ու մէկ չատ ունեւոր կ'ըլնի․ ու քուռ ծուռ ապրելով ինչ որ կայ չը կայ զըմէն կ'ուտի կը նստի․ հաց թաց կը կըտրի վէրէն․ մէկ ձեռն կը դնի ծոց, մէկ ձեռն իրեսին՝ կը մէգի վէր ուր հալին, ա'խ վա'խ անելով կը հալի մաշի։

Ուր ճանչւորներ կը ժողվեն կուգան իսոր թուլոր, ու ինոնցից հալիւոր մը կը վէրցի կ'ասի․ Դու բան մ'արերես, քո գօլված քեզնից խրտներ փախեր ի․ էմ՛

դնա քո դովլաթի իտև, բայց գտնես ձեռ բերես, տառաջուայ պէս բաղդաւորւես ։

Գլխու ինկաւ մարդ․ էլաւ զինքն իտու սարեր քարեր, գիշեր ցերեկ ուր դովլաթ կը փնտռէր ։ Գիշեր մը քընուկ տեղ էրազի մէջ կը տեսնայ որ ուր դովլաթ բանձր սարիմ՝ գլօխ ինկուկի բերանսըվեր․ ա՛խ վա՛խ կ՚անի ուր պէս ։ Առաւօտուն հետ զարթելուն կ՚ելնի կը շիտկուի դեհ էն սար ։

Կ՚երթայ կ՚երթայ, կը տեսնայ որ ճամհու վէրէն ասլան մ՚ի նստե․ Ասլան կը կանչի մարդուն կը հարցուցի․ Դո՞ր կ՚երթաս ։ Մարդ կ՚ասի․ Կ՚երթամ իմ դօլվաթ գտնեմ ։ Ասլան կ՚ասի․ Ես գիտեմ քո դօլվաթ չատ գիտուն ի․ ուրմից հարցու տե ես ինչո՞վ կը ծրեմ․ (էսա եօթտարի է որ անկըլցեր եմ․) դառնալուդարե ձիկ ասա․ Ես էլ իմ ձեռնից էկածաղէկութեն կ՚անեմ քե ։ — Մարդ խօսք կուտայ, կ՚ընցնի կ՚երթայ ։

Կ՚երթայ կ՚երթայ, կը տեսնայ իգի մը, որ հազար նըմուշ պըտղով լցուկ ի․ քանի՛ կը քաղի որ ուտի, կը տեսնայ որ լեղի են ։ Իգու տէր ռաստ կուգայ, էս մարդուն կը պըծտի․ սօրայ կը հարցուցի դո՞ր կ՚երթաս ։ Մարդն ուր դարտը կ՚ասի իգու տիրոջ ։ — Որըսկուն ի քո դօլվըթից հարցու իմ իգու դարման ի՞նչ ի, որ ի՛նչ կ՚անեմ

չեմ աներ, պառաւղներ դառն կ'ըլնեն։ Պատրուս արի, չելաւ. Նոր ցուուկ անկիցի, չելաւ։ Եր կը դառնաս ձիկ Ջուղաբ բե, իմ ձեռնէն ինչ աղէկութեն որ գայ, քե կ'անեմ։ —Մարդ խօսք կուտայ, կ'ընցնի կ'երթայ.

Կ'երթայ կ'երթայ, կը հասնի մէկ քօշկ ու սարի մը. կը մտնի ինե, կը տեսնայ որ մէկ Ջրհէլ Ջիվան մը դարպասի մէջ կը պառկի. կը հարցուցի էս մարդուն. Աղբէր դու էս տեղուանք ի՞նչ բան ունես։ Մարդն ի ուր գլխու էկածը կ'ասի ինոր։

Ջրհէլը կը դառնայ խօսր կ'ասի. Ես շատ դօլվաթ, շատ ըռղակ ու ապրանք ունեմ, ամայ ցաւմ' ունեմ՝ որ գիշեր ցորեկ դարտով կ'ընցուցեմ. Թէ որ քո դօլվըլթից ձիկ ճար մը հարցուցես, յըմէն Նըմուշ թարութնից կուտամ քե։ —Մարդ խօսք իտու, ընցաւ գնաց։

Գընաց գընաց, տեսաւ որ ուր դօլ-վաթ դօ ինկե սարի գլօխ։ Բարև կուտայ կը Նստի. շատ գանգատ կ'անի մօտէն. կը դառնայ ապսպրուած բաներ կը հար-ցուցի, ըմէնու Ջուղաբն էլ կ'առնի։

—Դէ՛ էլի երթանք, կ'ասի։

—Դու առաջ գնա, ես կուգամ, կ'ասի դօլվաթ։

Մարդ կը դառնայ կուգայ առաջ էն

ջըհէլը կը տիսնայ, կ'ասի · Քօ դեղն էն ի, որ դու կտրիճի մը հետ փսակուես, քօ դարդն ու ցաւ կ'ընցնի ։

Կուգայ իգին · իգու տէր կը կանչի, կ'ասի · Քօ իգու ջուր ո՞ր առուից որ կուգայ, էն առուի մէջ ոսկւոյ մաղան կայ, ոսկւոյ փշրանք ջրի հետ կուգայ, ծառեր կը ծծեն, պտըղներ կը դառնանան · եա ջրի առուն փոխի, եա մաղան քակի հան դուս, պտըղներաց համը կ'անուշնայ ։

Կուգայ ասլանի մօտ կը նստի մարդ · նաղլ կ'անի ուր դօլվաթ տիմնալը՝ իգու տէրն ու ջըհէլն ։ Ասլան կը հարցուցի կ'ասի · Ջըհէլ քե աղէկութեն մը չարա՞ց ։ Մարդ կ'ասի · Ասաց արե ձիկ առ, նըստենք մէկտեղ Աստծու բարութեն վայելենք · ես ղայիլ չեղայ ։

Ասլան կը հարցուցի · Իգու տէ՞րն ինչ աղէկութեն արաց ։ Մարդ կ'ասի · Իգու տէր ոսկւոյ մատաններ քակեց ինձան, կօլօն մը ոսկի էլաւ, իտու ձիկ · ես չառի, ասի · Ո՞վ իգոնք կը շըլկի կը տանի չաւմ տուն ։

Է՛, կ'ասի, ասլան · Ձիկ համար ի՞նչ դեղ ասաց ։ Մարդ կ'ասի · Քե համար էլ ասաց, որ անխելք մարդու մը գլօխն ուտի կը ժրի ։

Ասլան աղէկ մը վեր դիր կ'անի խօսը ասածները · յուշիկ մը թաթը կը պա[illegible],

դեհ մարդու գլօխը․ կը բռնի զարնի գե-տին, կը փշրի կ՚ուտի ։ Կ՚ասի․ Ես՝ իմ Աստուած․ քանձ քե անխելք մարդ չեմ կանայ գտնե աստուրխ իրես ։

3․

ԲԻՒՐԱՊԱՏԻԿ

Կ՚էլնի կ՚էլնի մէկ մարդ մէկ կնիկ․ էսայ մարդ շատ ժամասէր կ՚ըլնի․ գը-մէն օր կ՚երթայ ժամ, օր մէկ ղուրուշ կուտայ տէրտրոջ ։ Տէրտէրն էլ գըմէն օր ինոր կ՚ասի․ Օրհնած, Բիւրապատիկ մէկին տեղ հազար տայ քե․

Մարդ կ՚ուրախանայ, ուրն ուր կ՚ասի․ էս աղէկ բան ի․ մէկ կուտամ հազար պիտի առնեմ ։

Երթալով գալով ինչ որ ունի կուտայ տէրտրոջ, կ՚աղքըտնայ ։ Կնիկն ի կ՚ասի էս մարդուն․ Ելի՛ գնա մօտ տէրտէր, հազար մը բե տանք մե հացի մացի, չում էն մէկէլ հազարներն էլ եաւաշ եաւաշ թող տայ ։

Մարդ կ՚երթայ․ — Օրհնեա՛ ’ի տէր․ — Աստուած օրհնէ ։ — Տէրտէր ջան, ես

քե ընկուզ տուր, որ հազար հազար տամ. միկայ թէ մէկ հազար տու տանեմ. Էն մէկէլներն էլ սորայ կուգամ տու։

—Օրհնա՛ծ, կ՚ասէ տէրտէր, դու ձեզ տուիր, որ Բիւրապատիկը քեզ մէկին հազար տայ։

—Բիւրապատի՞կ որն է։

—Ճամբահ մը նշանց կուտայ։ Էսա էրկէն ճամբահ կը բռնես կ՚երթաս. մէկ ճոչ մարդ ուսատ կուգայ, որ ոսկի աթոռի վերէն նստուկ կ՚ըլնի, Բիւրապատիկն էն է. կ՚ասես. Ձիկ տէրտէրն օրօխկեց, մէկ տուեր եմ՝ հազար պիտի տաս։

Մարդն էն էրկէն ճամբահ կը բռնի կ՚երթայ։ Կ՚երթայ մէկ էրի մը ուսատ կուգայ. կը մտնի ներս, կը տեսնայ որ ի՞նչքառասուն հոգի ջալալի գող շարուեր են, խսոր պատիւ կ՚անեն, տեղ կը բանան, կ՚առնեն ուրենց մէջ կը նստեն։ Կը դառնան կը հարցուցեն. Դու ո՞վ ես. էս քանդար ժամանակ մարդ մանա չէր իկե ըսատայ. ո՞ւստ կուգաս, դո՞ր կ՚երթաս։

Մարդ կ՚ասի. Կ՚երթամ Բիւրապատիկին. մէկ տուեր եմ, հազար կ՚առնեմ։

Գողեր կ՚ասեն. Աղբէր, էդ խելք՝ խելք չէ, ականջ մ՚անե. արե՛ բառեզէն քեզ լըփ մը ոսկի տանք, դարձի գնա քո տուն։

—Չէ՛, կ՚ասի մարդը, էդա փարէն հօս լաւ չի։ Գողեր կ՚առնեն։ Որ ընկունի դա-արգար մարդ ես։ կ՚երթաս Բիւրապատի-կին հարցու մե համար մէկէլ աշխարհ տեղ կա՞յ։ —Վէր իմ գլխուն, կ՚ասի մարդ . . . կ՚երթայ։ Կ՚երթայ հալւորի մը ուստա կուգայ, որ նստեր քարի մօտ։ Հա՛ կ՚ասի։ Փառք քեզ Աստուած, փառք քեզ Աստուած։ Քանի էն կ՚ասի, քարից հա ոսկի կը բխայ։

Հալւոր կը հարցուցի էս մարդուն։ Աղբէր դո՞ր կ՚երթաս։ Կ՚ասի։ Կ՚երթամ Բիւրապատիկին մէկ տուեր եմ, հազար կ՚առնեմ։

Հալւորն ի կ՚ասի։ Արի էսա ոսկուց կուց մը տամ, առ եա դարձի։

Չէ՛, կ՚ասի մարդ։ էդա ոչ իմ տուածն ի, ոչ իմ վաստկածն ի։ ձիկ հալալ չի։

Հալւոր կ՚ասի։ Որ ընկուն ի, կ՚երթաս բիւրապատիկին հարցու՛ ե՞ր պիտի կըտրի ոսկին էս քարից։ —Վէր աչիցս, կ՚ասի մարդ, ու կ՚երթայ։

Կ՚երթայ ճամփի վէրէն մէկ բաղչապան մը կը տեսնայ, կը հարցուցի։ Հողածի՛ն, դո՞ր կ՚երթաս։ Մարդ կ՚ասի։ Կ՚երթամ Բիւրապատիկին մէկ տուեր եմ, հազար կ՚առնեմ։

Բաղչապան կ՚ասի։ Կ՚երթաս հարցու

Բիւրապատիկին․ ինչի՞ իմ բաղձի պատը որ քաշեմ, պըտըղներ կանանչներ ըմէն կը չորնան․ պատը որ քակեմ կը կանչընան։
—Վէր իմ իրիսին, կ՚ասի մարդ ու Կ՚երթայ։

Կ՚երթայ կը տեսնայ որ տէրտէր մը մէջքէն հետ դըրեր են պատի մը մէջ, կը տըքտըքայ։

Տէրտէր կը հարցուցի կ՚ասի․ Որդի դո՞ր կ՚երթաս։ Մարդ կ՚ասի․ Կ՚երթամ Բիւրապատիկին մէկ տուեր եմ, հազար կ՚առնեմ։

Տէրտէրն ի կ՚ասի․ Կ՚երթաս բիւրապատիկին հարցու․ ես ե՞բ էսա պատից պիտի ազատուեմ։

—Աղէկ կ՚ըլնի, կ՚ասի մարդ, ու կերթայ։

Կ՚երթայ կը տեսնայ որ մէկ ճոչ մարդ մը ոսկի աթոռի մը վէրէն նստե․ իստը կը հարցուցի․ Դո՞ր կ՚երթաս։

Մարդ կ՚ասի․ Բիւրապատիկ դո՞ւ ես։
Կ՚ասի․ —Հա ես եմ․ ի՞նչ կ՚ուզես։
Կ՚ասի․ Մեր տէրտէրն ի ձիկ օրօխկե։ Ես քե մէկ տուեր եմ, դու ձիկ հազար պիտի տաս։

Բիւրապատիկ կ՚ասի․ Կ՚երթաս քու տուն, բակիդ մէջ թըթի ծառ մը կայ, ինոր տակ կը փորես, կարասմ՚ իլին ոսկի

կ'ըլնի, կ'առնես քո մէկի տեղ հազար հազարոց ։

Էն մարդ կը դառնայ ինչ որ ապսպրեր էին կ'ասի Բիւրապատիկին· ու ըլմէնի ջուղարն էլ կ'առնի կը դառնայ ։

Կուգայ պատի մէջի տէրտէրին կ'ասի· ի՞նչ դահ որ Աստծուն մեղայ գաս, էդա տեղից կ'ազատուես ։

Տէրտէր կ'ասի· Ես ի՞նչխ մեղայ գամ Աստծուն ։ — Խօսքը բերան, մէկէցմէկ պատով մատով կ'ըրթայ գետնի տակ ։

Մարդ կ'երթայ կը հասնի բաղչապանին· Կ'ասի· Քո բաղչի պտեր քակի, որ ընցնող դարձողն ուտի՞, բաղչէդ կը կանանչի ։ —Տէլ խօսք բերան էր, բաղչապան հասաւ պտներ քակեց· բաղչէն կանանչաւ ։

Մարդ կ'ընցնի կ'երթայ մօտ հալւոր· կ'ասի· Քանի Աստուած քո բերնից չես պակըըցուցե, քարից ոսկի չը պակսե ։ Հալւորն ի կ'ասի· Ըսկի մարդ Աստուած ուր բերնից կը պակըցո՞ւ· փառք Աստծու ։ Կ'ասի չասե, քարի մէկէլ իրեսէն էլ ոսկի կը բխայ քանձ առջին շատ ։

Մարդ կուգայ գողերու յէրի մէջ· գողերաց կ'ասի· Թէ որ ձեր գողութեն Թարկէք, էն մէկէլ աշխըրի մէջ ձե տեղ կ'ըլնի ։ Գողեր կը Թարկեն ուրենց էրը,

ու կ՚երթան ուրենց մեղքեր կուլան, կը փրկուեն։

Մարդն ի կուդա՛յ կը հանէր ուրենց տունը. կնկան կը կանչի, կ՚ասէ. Կնիկ, բաւհ ու փէշտաատ բե. Կ՚առնեն բաւհն ու փէշտաատ, Թըլթի ծառի տակ կը փռեն. կարաս՛ իլին ոսկի կը դնեն։ Խրիկուն կը մըթնի, կը թողնեն առաւօտուան կարա՛ հանել. Գիշեր գրկըցներ կ՚իմնան, կուգան կարաս գողնան տանեն. կը տեսնան որ դեղին հող ի մէջը, կը վերուցեն կարաս շուռ կուտան էն մարդու բաղչէն. կարաս կը կոտրի, հողեր կը ցրուեն։ Առաւօտուն կ՚ելնեն որ ի՞նչ. իգին չորս դեհ ոսկի ի փռուեր։ Կնիկ կը բոռայ. Քա՛ կնիկ, ցախաւել բե. իգին ըմէն ոսկի ի բուսեր։ Կ՚աւելեն կոլոն կոլոն ոսկիք, մէկի տեղ հազար չէ, անդար հազար կ՚առնեն, կը զանգինանան; Աստուծուն փառք կուտան։

Ինոնք հասան ուրենց մուրատին, դուք հասնէք ձեր մուրատին։

THE UNIVERSITY OF CHICAGO LIBRARY

Կ.

Կայ ու չկայ մէկ թագաւոր կայ, իրեք լաճ ունի· էդ թագաւորնի կը հիւընդնայ· ինչքանդար հէքիմ կայ, թուղթ իրիչկող կայ, կը ժողվեն չեն կանայ ճար մ'անել: Իրենցից մէկը շատ իմաստուն կ'ըլնի· կ'ասի· Թէ որ մեր թագաւորն ապրի, մէկ բանով կ'ապրի: Կ'ասեն· Էն ի՞նչ ի: Կ'ասի· Հնդստանու աշխարհ մէկ խաս բաղչայ կայ· ինոր մէջ անմահութեան խնձորի ծառ մը կայ· թէ որ էն խնձորից բիրեն հատ մը ուտի, կը ժրի, կ'ըլնի մօրէ մէկ:

Խօսք մէկ կ'անեն կ'երթան թագաւորին կ'ասեն: Թագաւորն ի, կ'ասի· Ես լսեր եմ որ դէւեր կուգան էն խնձորներ կը տանեն, հողածին չի կանայ ձեռ բիրել:

Թագաւորի ճոչ լաճ կ'ելնի կ'ասի· Թագաւորն ապրած կ'ենայ· ես կ'երթամ բիրեմ: Կ'երթայ, կ'երթայ կը հասնի էն ծառի տակ· էն գիշեր որ էդա խնձորներ կը հասնեն, թագաւորի լաճու քունը կը տանի· դէւեն ի կուգայ խնձորներ կը ժողվի կը տանի: Ցզէն ի փոր փոշման ետ կը դառնայ: Էն մէկէլ տարին միջնեկ լաճ կ'երթայ· ինոր էլ քուն կը տանի, դարի դարտակ կը դառնայ ետ:

Պստիկ լաճ կ'ելնի կ'ըսէ․ Թագաւոր ապրած կ'ենայ․ ես կ'երթամ կը բերեմ։

— Թօ՛, կ'ըսեն․ ճօչ աղբէրներդ ինչ ըրին, որ դու ինչ պիտի ընես․

Շատ խրես կը դնի, կը ճըյլընկայ, չուզեր Թագաւոր կ'ըսէ․ Դէ՛ գնա։

Պզտիկ լաճն ի, կ'ելնի նետ ւանեղ կ'առնի կ'երթայ կը հասնի խնծորի ծառի տակ․ էն գիշեր որ խնծորներ կը հասնեն, չախուռով ուր մատը կը ճղի, մէջը աղ կը լցի․ ցաւէ մումուռից քունը կը խրտնի։ Կը տխնայ որ դէւ կուգայ պիտի ելնի ծառը․ կը քաշի ուր նետ ւանեղը, նետ մը կը զարնի դէվի ոտաց ձկան, կը ծակի․ դէվ կը փախնի պօռալով․ տղէն ի կ'ելնի խընծորներ կը ժողվի բերի հօր․ Թագաւոր կ'ուտի, կ'առողջանայ։

Կը դառնայ էդ պստիկ լաճը աղաչանք կ'ինէ ուր հօր, կ'ըսէ․ Իզին տուր, երթամ իմ տուշմընից քէն առնեմ։

Կ'ելնեն երկու աղբէրներն էլ ինոր հետ կ'երթան․ ծառի տըկէն դէու արուն չըռչըռալով գնացեր ի․ կը բռնեն էն արուն ու կ'երթան․ կ'երթան կ'երթան կը հասնեն մէկ գաղան անհատակ խորք մը․ կը տխնան որ դէվը մտեր ի դան։

Դաչ ճօչ աղբէր կ'ըսէ․ Զիկ կախէք, ես կ'էջնեմ ինոր հետ ջանք կ'անեմ։

Ջում խորի կէսը կը կախեն․ կը բոռայ․ Նամա՛ն․ ես մրկայ․ ձիկ քաշէք դուս ։ Էնի կը հանեն ։

Միջնեկ աղբէր կը կախուի․ էն էլ չուր կէս կը կախեն․ կը բոռայ․ Նամա՛ն, ես մրկայ, ձիկ քաշէք ։ Կը քաշեն ։

Դօր կուգայ պստիկ աղբօր ։ Կ'ասի․ Աղբէրներ, քանի ես կանչեմ՝ վառուա՛յ, մրկա՛յ, դուք ձիկ իջուցէք ։ Կ'իջուցեն․ քանի՛ կը բոռայ, ինոնք կ'իջուցեն ։

Կ'էջնի կ'էջնի, կը տեսնայ ի՞նչ․ մէկ աժդահար դէւ մը պառկե, ուր գլօխ դրե մէկ հուրնի հրեղէն աղջկան մը ծնկան վէրէն քնե․ աղջիկ քըրկահ կը բանի․ գօ ինոր առջեւն էլ ոսկի մուկ ոսկի կատու մը մէջ ոսկի դաշտին կը խաղան ։

Աղջկան աչք կ'առնի տղէն․ կ'ասի․

—Հո՛ղածին, օձն ուր պորտով, հաւքն ուր թեւով չէր կարցե իկե ըստեղ, դու ի՞նչխ էկար ։

Տղէն ի կ'ասի․ —Քո սէր ձիկ իբե ։

Աղջիկ կ'ասի․ —Քո գլխու սադաղէն ըլնի, կորիճ, էլի քաշուի ըստուց․ թէ որ դէւ զարթնի, քո ճոչ կտոր ականջդ կը մնայ ։

Տղէն կ'ասի․ —Ջէն տու, թող ելնի․ ես իկեր եմ ինոր հեա կռիւ անել ։

Աղջիկ կ'ասի, —Քառասուն օր կը քնէ

էնի · ութն օր ի որ աչքեր խփեց · Երասունուերկու օր կայ չուր զարթնի ։ Թէ որ սաքր չես անե , էդա զուլթնի խոփ կրակեցու , զարկ դէւի ստաց վէրէն · դէւ կ՚ադնի ։

Տղէն զուլթնի խոփ կը կրակցու կը զարնէ վէր դէւուն ստաց · դէւ ստքեր իրար կուտայ , աչքեր ճմռթկելով կ՚ելնի , կ՚ասի · — Օ՛ֆ , լուեր ստքս կծիցին ։

Աղջիկ կ՚ասի · — ի՞նչ սև լուն ի , էլի , տե , կարիճմ՚ իկե , հետ քե կռիւ պիտի անի ։

Դէւ կ՚իրիշկէ տղին , կ՚ասի · — Օ՛, ի՞նչ անուշ ակռածածիկմ՚ ի ։

Տղէն կ՚ասի · — Էլի՛ տխնանք , Աստուած ձի՞կ կուտայ թէ քե ։ Կ՚առնեն ուրենց նետ ւանեղ, կ՚ելնեն կռիւ ։

Դէւ կ՚ասի տղին · — Դաշ դու զա՞ր ։

Տղէն կ՚ասի · — Չէ՛, Դաշ դու զար ։

Դէւ կը զանի նետ, տղէն կը տափի , նետ կ՚ընցնի ։ Տղէն ի , ուր նետ կը զանի , դէւու կող կը ծակի , կը շուջի դետին · նետի կէսն էլ կը մտնի հողի մէջ · ըսկուն կ՚ելնի , որ դու կ՚ասես բիբուեր են դէւի լէշը դետին ։ Կը հասնի տղէն դէւի վիզը կը կըտրի , ակնջները կը պրծուցի կը թալի ուր ջորը ։

Էնի կը թողնի դան , մէկ քիչ կ՚առա-

ջանայ, կը տխանայ որ ի՞նչ. գօ՛ մէկ դէւ մը մէկ հուրնի հրեղէն աղջկան մը ծնկան վերէն ուր դաղան գլօխ դրեր կը քնի. աղջիկ քըրկահ կը բանի, ու ոսկի կուզ ոսկի ադլօր մէջ ոսկի մաղին կը խաղան։

Աղջկան աչք կ՚առնի տղին. կ՚ասի.

—Հո՛ղածին, օձն ուր պորտով, հաւքն ուր թեւով չէր կարցե իկե ըստեղ, դու ի՞նչխ էկար։

Տղէն կ՚ասի. —Քո սէր ձիկ իբե։

Աղջիկ կ՚ասի. —Քո արեւու սադաղէն ըլնի, փախի, քանի դէւ չզարթե. որ էլաւ՝ քո ճոչ կտոր ականջդ կը մնայ։

Տղէն կ՚ասի. —Չէն տու, թող էլնի. ես իկեր եմ որ ինոր հետ կռիւ անեմ։

Աղջիկ կ՚ասի. —Որ ըսկուն ի, դէ էդա խաչերկաթ կրակցու զա՛ր վէր ոտաց, դէւ կ՚ադհի։

Տղէն խաչերկաթ կը կրակցուցի կը զանի վէր դէւի ոտաց. դէւ ոտքեր իրար կուտայ, կ՚էլնի նստի. կ՚ասի. —Օ՛ֆ, լուեր կծիցին։

Աղջիկ կ՚ասի. —Ի՞նչ սեւ լուեր, էլի՛, տե, էս կտրիճն իկե հետ քե կռիւ պիտի անի։

Դէւ խոլռկտալովմը կ՚իրիշիի դեհ տղէն. կ՚ասի. — Օ՛ ուր,ստնով ձիկ քաբաքցու ի իկե,

Տղէն կ՚ասի . — Ելի՛ր , տիսնանք , Աստ-ուած եա ձիկ կուտայ , եա քե ։ Վալա՛հ աղէն ի , էս էլ կը բերուի գետին . միգ կը կտրի . ականջները կը պրծուցի թալի ուր ջոբը ։

Էն էլ կը թողնի էն տեղ , կ՚առաջա-նայ , տիսնայ որ , հա՛ մէկ անհաւատ դէւ մը գլօխ դրե հուրնի հրեղէն աղջկան մը դոգ քնե . էդ աղջիկ արեգական պէս կը փէյլքտայ . աղջիկ քըրկահ կը բանի . ու մէկ ոսկի թազի չուն մէկ ոսկի սև աղուէս մէջ ոսկի սինիին կը խաղան ։

Աղջկան աչք կը դէպնի տղին . կ՚ասի .

—Հո՛ղածին . օձն ուր պտրտով , հաւքն ուր թևով չէր կարցե իկե ըստեղ . դու ինչխ էկար ։

Տղէն կ՚ասի . —Հրեղէն , քո սէր ձիկ իբե ։

Աղջիկ կ՚ասի . —Քո կանանչ արեւն ափսոս ի , փախի ըստուց . թէ որ դէւն զարթաւ , քո ճոչ կտոր ականջդ կը թողնի ։

Տղէն կ՚ասի . —Ձէն տու , թող էլնի . եա ինոր հետ կռիւ անելու իկեր եմ ։

Աղջիկ կ՚ասի . — Որ ըսկուն ի , դէ՛ էդա ջաղցի ցից կրակցու զա՛ր վէր դէւի ոտաց , կ՚արթննայ ։

Տղէն ջաղցի երկթէ ցից կը կրակցուցի կը զանի վէր դէւու ոտաց ։ դէւ ուան իրար

կուտայ․ ու կ'ասի․ Ի՞նչ է․ ըսէր, ուզես կծկցիս ։

Աղջիկ կ'ասի․ — Ի՞նչ սև կու խ․, եա՛․ անէ, կարիճմ՝ իկե, հետ քե կախու պիտի անի ։

Գէւ աչքեր մածելով կ'իրիշկէ գեհ տղէն․ կ'ասի․ — Օ՛, էս անփիտուր կաքաւ, ուրն ուր ինկե ակնատ ։

Տղէն կ'ասի․ — Եկ, տխնանք․ Թոտուած հա քե կուտայ, հա ձիկ ։ Կը ղանեն, կը զարնուեն․ գօջայ տղէն ի նետովմ՝ էլ էս գէւուն կը շուլուլի գետին․ վիզը կը կտրի, ակընջները կ'առնի կը դնի ուր ջոբը․ ու կը դառնայ աղջիկներաց մօտ․ իրեքն էլ կը բերի մէկ տեղ։

Աղջիկները կ'առնեն թագաւորի տղէն կը պտըտցուցեն յըմէն տեղեր․ անդար հազար ալ ծաթ, ոսկի, ակներ ջաւահիրներ, սիլահներ, հալաւներ, ինչ որ կան, յըմէնիցն էլ բայ կ'առնի, զատ զատ իրեք ձեռք կը կապի ։ Մէհակ կէծակէ թուր ուր մօտ կը պահի․ մէկ էլ դըլըսմի մատնիկ մը կուտայ "ինոր" պստիկ աղջիկ ։ Կը մտնեն դէւէրաց ախոռներ, կը տեսնայ որ զատ զատ իրեք հրեղէն ձի կայ կապուած․ մէկը սև, մէկը կարմիր, մէկը սիւտակ․ ինոնցից մէկ մէկ մազ կը քաշի ուր քօլօզի մէջ կը պահի ։ Կ'երթան խորի բերանը․ աղբէր-

Ննջուց կը կանչի ։ Երկու ձող աղջիկ ու երկու ձեռք ցինաթ կը կապի ․ կ'ասի ․ —Քաշէք, առէք, աղբէրներ, էս աղջիկ-ննջուց ձողը՝ ձողից, մինչև՝ մինչնիկից ․ ջրհէղներն էլ մէկտեղ ի ։ Պստիկ աղջկան ջրհէղն էլ քաշել կուտայ ։ Աղջիկ կը դառնայ տղին կ'ասի ․ —Առաջ դու էլի ։

—Չէ, կ'ասի տղէն, առաջ դու պիտի ելնես ։

Աղջիկ կ'ասի ․ —Ջիկ որ տխնան, քե չեն հանե ․ կը մնաս խորի մէջ ․ խեղճ ես ։

—Ի՞նչ, կ'ասի տղէն ․ չէ՞ ինոնք իմ աղբէրներն են ։

—Է՛, կ'ասի աղջիկ, դու գիտես ։ Ամա՛ թէ որ մնացիր, ուրբաթ գիշեր իրեք գօչ կուգան ըստեղ, մէկը սև, մէկը կարմիր, մէկը սիպտակ ․ քե թա՛լ վէր սև քօչին, սև քօչը կը թալի վէր կարմիր քօչին ․ սիպտակ քօչ կը թալի լոս աշխարհ ։ Մէկէլ իմ տուած մատնիկին դըլըմ կայ ․ ի՞նչ խորհուրդ որ անես, ինչ որ սիրտդ ուզի, կ'առնես ։ Ջիու մազերն էլ որ կրակին տաս, ձիեր դոր որ ուզես, կուգան քե կը գտնենեն ։ —Դէ մնա՛ս բարով ։

Աղբէրներ պստիկ աղջիկ որ կը հանեն, հէ՛ յրան կը մնան իգոր տեսքին ու խօրօտկութնին ։ Կը դառնան կ'ասեն մէյմէկու ․ —Իշտե, իշտե, իշտե, խօրօտն ուր պա-

հեց , էն մէկէլներ խոռու մը ։ Արտեր նեխածութնով կը լցուի ․ խեղճ պստիկ աղբէր կը թողնեն մէջ խորին , ուրենք կ'առնեն աղջիկներ ու ղինաթներ կ'երթան ։

Ուրբաթ գիշեր իրեք քօչ էկան տղի մօտ ․ տըղէն ուր սրտի ցաւից վռազ վռազ ղինք կը թալի վէր սիպտակ քօչին , սիպտակ կը թալի վէր կարմրին , կարմիր կը թալի վէր սեւուն , սեն ի կը թալի մութ մութ աշխարհ ։ Տղէն ափլփելով դուռ մը կը գտնի , դուռ կը տփի ․ պառաւ մը կուգայ բանալու ․ կ'ասի ․ —Ո՞վ ի ։

Տղէն կ'ասի ․ —Անխէր , անմէր , որբուկ տղէ մ'եմ, մամիկ ։

Պառաւ դուռ կը բանայ , տղէն ներս կ'առնի , կ'ասի ․ —Ես էլ զաւակ չունեմ ․ դու ձիկ լաճ , ես քե մէր ․ մէյ տեղ ապրենք ․ հացն Աստուծուն ի ։ Ու կ'ըլնեն մէր ու տղայ ։

Քիչ մը կը մնան , տղէն կ'ասի ․ —Մարէ , շատ ծարաւ եմ, պուտ մը ջուր ։

Պառաւ կ'ասի ․ —Հոգիս էլնի ․ ջուր չկայ ․ մէյ կտոր սաբր արա , չուր ջուր առնենք ։

Տղէն կը հարցուցի ․ —Մամիկ , էդ ի՞նչ խօսք ի ։

Պառաւ կ'ասի ․ —Մեռնեմ քե ․ մեր աշխարհ մէկ աղբուր կայ , էն էլ վիշապ

մը բերան տուեր դէմ կայնէն. Աստծու մը մէկ նմանք աղջիկ պզտիկ տանեն վիշապին ուտի, որ ջուր թողնի գայ. Էն գալ ընէն մարդ կ'երթայ ջուր կ'առնի. Վիշապն ալ աղջիկն ուտելու ատենը, երբ կ'երթայ մէկ մը բերան կը բռնի։ Էն մը դէմ թագաւորի աղջկան էր։ Հանդո ձեռնձեռնոց կուգայ. Ես կ'առնեմ աղջիկ կը տանեն վիշապին։

Տղէն կ'իրիշկի որ ըղորդ, լաւնըղի մէջս աղջիկ մը առեր են կը տանեն. ինքն ալ կ'երթայ. կը տանեն աղջիկ կը թողնեն վէր աղբրի ական մէջնակ. ու ըսէն մարդ կ'երթայ ուր տեղ։

Տղէն կէծակէ թուր հանէ ի անէ, կ'երթայ աղջկան մօտ, կ'ըսէ. —Աղջիկ, թող գլուխս դնեմ քու ծոց քնեմ. դու մի վախենայ. եր վիշապն կուգայ, ձիկ ձէն տուր. Ես քեզ կ'ազատեմ։ Կը քնի։

Վիշապն ի բերանը բաց, պոչը ոլորած, Փըշփըշալով կուգայ դէհ աղջիկ. աղջկան կէտրիկ կը փանկուշի, կը բռնուի, ու կուլայ. արտասուքն տաք տաք կը թափի վէր տղի երեսին. տղէն կ'արթննայ, կէր կը թռնի, կը տեսնայ որ ինչ. աղջիկ չուէմ ծնկներ վիշապն կուլ տուեր ի։

Համա'ն ուր կէծակէ թուրը կը քաշէ, կը դնէ աղջկան գոգը. քանի որ վիշապը աղջկան կուլ կուտայ, թուրն էլ վիշապի

ջերան կը կտրի ․ աղջիկ ոտնէն չուան գլուխ կը մտնի վիշապի վրայ ․ տղայի թուրքն էլ վիշապին կ'անի երկու տապակ ։ Աղջիկ կ'ելնի դուրս ողջ ողջ ․ վիշապ կը հատնի ։ Տղէն կ'առնէ աղջիկան ․ — Դէ՛ էկի , գնաք տուն ։

Աղջիկն ի ձեռ կը զարնի վիշապի երունքի մէջ ու կը ծեփէ տղայի քամակին , որ էն նշանով ճանչնայ տղին ։

Աղջիկ կ'երթայ ուր հօր տուն ․ տղէն էլ կ'երթայ պապուկու մօտ ։

Ըմէն մարդ բոլ բոլ ջուր կը կրէն ․ աղջիկ ուր հօր կը պատմէ էն կտրճի պատմութիւն ։ Տղէն էլ պապուկուն կը հարցուցէ ․ — Մամի՛կ , ձեր աշխարհն ինչի՞ մութն է ։ Պառաւ կ'ասէ ․ — Որդի , մէկ արծիւ մը յըմէն տարի ձագ կը հանի ․ վիշապ մը կայ կուգայ ինոր ձագեր կ'ուտէ ․ արծիւն էլ ուր սրտի մռմռուքից ալեկու լոյս կտրեր է մեր վերէն ։

Տղէն իգին կ'առնի պապուկուց , կ'երթայ ․ կը տեսնայ որ հա՛ մալայ , արծիւ ուր բոն դրեր ծառի մը վերէն ․ տղէն էլ կը պառկի էն քունէ տակ ։ վիշապն ի կ'ելնի փըշփըշալով կ'երթայ դէհ ձագեր ։ Տղէն ուր կէծակէ թուրը կը թափէ , վիշապին կտոր կտոր կ'անէ ․ ինոր մսեր կուտայ արծուոյ ձագերաց ։ Ձագեր կը ճըվճըվան , մէջ

կ'ուտեն․ արծիւ ուր ձագերաց ձէնը կ'առնի, կը հասնի։ Էն գիտի թէ էն տղէն ի ուր ձագերը զա՛յ անողը։ Կը հասնի որ զարնի, ձագեր կը բօռան․ — Եամա՛ն, ի՞նչ կ'անես․ թէ որ էդ տղէն չըլնէր, վիշապ մե կ'ուտէր․ էդա մարդ վիշապին սպանեց։

Կը դառնայ արծիւ էն տղին կ'ասի․ — Ես աղէկութեն որ դու արիր, ուզի տխնամ ի՞նչ կ'ուզես ձինից։

Տղէն կ'ասի․ — Ա՛խ, ձիկ հանես իմ լոս աշխարհ։

Արծիւ կ'ասի․ — Շատ զօռն ի ուզածդ․ ամա՛քանի որ իմ ձագերաց ազատիցիր, ես էլ քո ուզած կ'անեմ։ Գնա՛, քառասուն տիկ գինի, քառասուն ոչխարի դմակ բե արե,

Էն օր, էս օր, որ Թագաւորի աղջիկ ազատուե․ ու վիշապն սպանուե․ Թագաւոր դալալ կանչել տուե, թէ՝ Ո՞վ ի իմ աղջկան ազատող, թող գայ, իմ աղջիկ ինոր կուտամ․ ու ինչ որ ուր բերան բռնի, ուզածը կուտամ ինոր։

Հազար հազար կ'երթան կ'ասեն․ — Ես եմ սպանե վիշապին․ ես եմ ազատե քո աղջկան։ Աղջիկ կ'ասի․ — Չէ՛, խոնցից մէկն էլ չի՛։ Էլ մարդ չմնայ քաղաք։ Թագաւոր կը հարցուցի․ — Էլ մարդ չը

Մնացս։ —Թագաւորն ապրած կենայ, կ՚ա-սեն, մէկ աղքատ պառաւու մը տուն ղարիբ տղէ մը կայ, էն ի Մնացե։

—Գնացէք բիրէք, կ՚ասի Թագաւոր։

Կը բիրեն. ու աղջիկ կ՚ասի. —Գօսկօ՛ էսա ի։ Ուր զարկած էրնի նշանն էլ նշանց կուտայ։

Թագաւոր կ՚ասի էն տղին. —Ուզի՛, կտրիճ, քո ազատած աղջիկ քե հալալ ըլնի. ուզի տիսնանք ուրիշ ի՞նչ կ՚ուզես։

Տղէն կ՚ասի. —Թագաւոր ապրած կե-նայ. Քո աղջիկ Աստուած ուր գըսմաթին բաշխի. քո դօվլաթն էլ Աստուած քե բարի վայելում տայ։ Իմ ուզածն էն ի, որ ձիկ քառասուն տիկ գինի տաս, քառասուն հատ գօչու դմակ, որ արծիւ ձիկ հանի լոս աշխարհ։

Էն գահն ինե տըղի ուզած կուտայ Թագաւոր։ Տղէն ի կ՚առնի իդոնք կ՚եր-թայ մօտ արծիւ։

Արծիւ կ՚ասի. —Դէ բիրածներդ բար-ձի իմ թեւերացս վէրէն. դու էլ նստի վզիս վէրէն. եր քու կ՚անեմ՝ գինի տուր, եր կու կ՚անեմ՝ դմակ մը տուր։

Տղէն կուգայ պառաւու ձեռ կը պագի. օհնիթքը կ՚առնի, կ՚երթայ։

Արծիւն ի կ՚առնի վէր ուր թեւքերաց կը բանձրանայ. քանի քու կ՚անի՝ տիկ մը

գինի կուտայ․ քանի նա կ՚անի՝ մէկ դմակ կուտայ տղէն՝։ Կը բարձրանայ՝ կը բարձրանայ՝ չում կ՚ելնեն լոս աշխարհ․, կ՚երթան տղի հօր երկիրը։ Խօրին դռնէն արծիւ կ՚անի նա․ տղէն ուր ուրախութենից կը փռաղնայ․ մէկ դմակ ի մեռցնէ, կը միրթնի կ՚ինի․ ուր թուր կը թափի ու մէկ ռատաց կակուղ կուչար կը կտրի կուտայ արծուան․ արծիւ համից կ՚իմնայ որ խանձի միս ի, լեզուի տակ կը պահի։

Կը համնեն․ արծիւ տղին կը դնի գետին․ կ՚ասի․ —Դէ՛ էլի, քէլի, գնա, տեսնամ։

—Չէ՛, կ՚ասի տղէն․ դու գնա, եւ կ՚երթամ․ ոտքերս կըռամեր ի։

Արծիւ շատ զօր կ՚անի տղին․ տղէն կ՚ելնի, չկանայ քէլե։ Արծիւ ուր լեզուի տակից կը հանի պահած միս կը կպուցի տղի կուչա, ուր թքով ու լեզուով կը եռացուցի․ ճամհու կը դնի դեհ քաղաք, ինքն էլ կը թռնի կ՚երթայ ուր ճագերաց կը համնի։

Տղէն կ՚էլնի դրէ դրէ կ՚երթայ․ հովիւ մը ռաստ կուգայ, ոչխարի փոր մը կ՚ուզի հովուէն, կը ծեծուցի ուր գլօխ, կ՚ընի քաչալիկի պէս․ կ՚էրթայ քաղաք, կը տեսնայ որ թագաւորի լաճեր հարսնիս կ՚անեն, էն օրն էլ ուր նշանածին կը փսակեն վէր

թագաւորութեան։ Տղի միտքը կը գայի․ ահա իՆչ կանայ անել։

Կ'երթայ շուկէն, ոսկերչի մը մօտ, կ'ասի․ —Զի՞կ չե՞ս առնե մօտ քե աշկերտ։

Ոսկրիչ կ'ըրիշկէ՛ կ'ըրիշկէ՛, կ'ասի․ —Դէ՛ արի, քաշփիկ։

Էն օր Թագաւորի մարդեր բեռ մը ոսկի արծաթ կը բիրեն էգ ոսկրչուն, կ'ասեն․ —Մէկ ոսկի մուկ մէկ ոսկի կատու-սիտի շինես, որ ոսկի դաշտի մէջ փազեն։

Ոսկրիչ կ'ասի․ —Էս կը շինեմ, ամմա հոգի չեմ կանայ տայ, որ փազվռտեն։

—Ձենքը գիտեն, կ'ասեն, Թագաւորի ամրն ի․ նոր նշանքին ըսկուն կ'ուզի, առեր ի․ Ձում շինել չիտաս, քե չեմ առնեն։ Ու կը Թողնեն կ'երթան։

Ոսկրիչ սև սուգ կը կապի․ չգիտե ինչ անի․ շինի՛ չկանայ, չշինի՛ գլուխ կ'երթայ։

Քաջլիկ կը վերցու կ'ասի․ —Ուսթա՛, ինչ կը մէղես․ ինչի՞ ես չիւարեր։

Էն էլ կ'ասի․ —Ըսկընայ, ըսկընայ։

—Դու դարդ մ'անէ, կ'ասի Քաջլիկ-գնա ձիկ երկուս նուկի պնդուկ առ, չորս նուկի գող․ ես գիշերս կը շինեմ։

Ուստէն կ'ասի․ Ա՛խ խեկնի շունշանտ ոռդի քաջլիկ․ իմ դարդ հերիք չի, դու էլ աղնաւիզ կ'անես։

—Չէ՛, վալահա՛յ, կ'ասի քաջլիկ․ գնա

գնա՛ դող պնդուկ բե․ առաւտուն արե քո ուզածն առ ։

Ոսկրիչն ի կ'երթայ քաչլկէ ուզած կը բերի․ գիշեր քո՞ւն կայ․ քանի՛ կուգայ ականջ կ'անի, կը տեսնայ որ քաչլիկ դող ու պնդուկ կը կոտրտի կ'ուտի ։

Աղօթրան կը բացուի չբացուե, քաչլիկ ուր ծոցի մատնիկ կը հանի․ կրակին նշանց կուտայ, կ'ասի․

—Ես քեզնից կ'ուզեմ, դու Աստծուց․ տխսածս ոսկի մուկ, ոսկի կատուն մէջ ոսկի դաշտին դան ըստայ ։

Էն գահն ինե երկու սև արաբ ուզած բաները կը բիրեն կը դնեն առջև, կ'եր-թան ։

Ուսթէն ներս կը մտնի․ սիրտ կը թըփ-թըփայ ։ Քաչլիկ նշանց կուտայ․ կ'ասի․
—Գօսկօ՛, ուսթա, չինիցի, առ, տար ։

Ուսթէն ուրախութնից ոտքեր գետին չառնե․ կ'էլնի, կ'առնի, կ'երթայ ։ Թա-գաւոր շատ բաշխիշ կուտայ․ կ'ասի․
—Կանուխ դուն էլ արե՛ հարսնիս ։

Ուրախ ուրախ կը դառնայ ոսկրիչ․ քաչլիկ աղաչանք կանի․ կ'ասի․ —Ուսթա, ուսթա, ծիկ էլ տար հետ քե հարսնիս ։

Ուսթէն կ'ասի ։ —Ցղա՛յ, կ'ինես ձիե-րաց ոտաց տակ գլօխդ կտոր կտոր կ'ըլնի․ տեղդ կաց ։

Մէկէլ օր ոսկրիչ կ'երթայ հարսնիս․ քաջլիկն ի, սև ձիու մազ կուտայ կրակ, առջի դէւու սև ձին, սև սիլահները, սև հալաւ վէրէն կուգայ, հագըր կը կայնի։ Քաջլիկ կ'ելնի հալաւ կը փոխի, սիլահներ կը կապի, սև ձին կը հեծնի, կը դառնայ հրեղէն․ կ'երթայ թագաւորի մէյդան․ թագաւորի վազիրներ ու լաճեր գըմէն ալթ կ'անի․ կուդայ ուր ուսթին էլ թիւից կը բռնի, կ'անթոլկի մէկ․ դեհ․ կը դառնայ չոտ մը ուր տեղ․ էլմ' էն քաջլիկ կ'ըլնի, կը նստի անմեղ։

Խրիկուն ուսթէն կուգայ․ քաջլիկ աղաչանք կ'ինի․ ուսթէն էլ տեսածներ կը պատմի․ կ'ասի․ —Ուչ բարով երթի․ մէկ սև ձիաւոր մը՝ սատանայ էր, հրեշտակ էր, ինկաւ մէյդնի մէջ, կեծէլ կրակ էր, փոթորիկ էր, գըմէնին էլ ալթ արաց․ խղարկ ձիկ էլ ձիուց գլորեց, ու կուրսուաւ։

Քաջլիկ գլօխ տանելով բիրելով «ձը՛ ձը՛ ձը՛ ձը՛» արաց, ու զարմացաւ․ դու կասես ըսկի բանից խաբար չի։

Իսոնք թող մնան ըստայ, մենք երթանք մօտ աղջիկ։

Էդ աղջիկ որ տեսաւ ոսկի մուկ ոսկի կատուն մէջ ոսկի դաշտին շինուած,․ ասաց․ —Վալլա՛հ իմ նշանլին էլեր ի լուս աշխարհ։ Նստղրիս թագաւորին ասաց․

— Մէկ ոսկի կուզ ոսկի ագլոր մէջ ոսկի մաղին խաղան · չո՛ւմ չինել չի տապս, քէ չեմ առնել :

Կը կանչեն էն ոսկրիչ · ոսկրիչ քաչլկի քամկով խօսք կուտայ · գող ու պնդուկ կառնի · քաչլիկ մատնիկ կրակին նշանց կուտայ, էն դահն ինե ոսկի կուզ ոսկի ագլոր մէջ ոսկի մաղին՝ երկու արաբ կառնեն կը բերեն կը դնեն տըղի առջև : Առաւօտուն ուսթէն կը տանի թագաւորին · Թագաւոր էլմ՝ ոսկրչին կը կանչի հարսնիս · էլմ՝ քաչլիկ աղաչանք կ'ինի, ուսթէն չը տանէ :

Քաչլիկն ի, կարմիր ձիու մազ կուտայ կրակ, մէկէլ դէվուն կարմիր ձին, կարմիր սիլահները, կարմիր հալաւ վէրէն կուգայ հագըր կը կայնի : Քաչլիկ հալաւ կը փոխի, սիլահները կը կապի, ձին կը հեծնի, կերթայ թագաւորի մէյդան, ջըմէն ապթ կ'անի · էլմ՝ կուգայ կը զանի ուսթին. ձիուց կը դըմըչկի ցածր · ու կը դառնայ իր տեղը, կը փոխուի, գուգ կ'անի կը նստի :

Իրիկուն ուսթէն կուգայ կը պատմի, քաչլիկ կը զարմանայ :

Է՛ · աղջիկն ի կը հասկնայ որ ուր նշանածն իկեր է · Թէ չէ՝ ուրիշ մարդու բերնից չինկե էն բաներ չինել :

Մէկէլ օր թագաւորին կ'ասի · — Ես

կուզեմ ոսկի աղուէս, ոսկի թագի, մէջ ոսկի սիրուն վազեն․ թէ որ չինել չիտաս, քե չեմ տանե ։

Թագաւորի մարդեր կ՚ելնեն կ՚երթան մօտ էն ոսկրիչ ։ Քաչլիկ աչքով կ՚անի ուսթին․ ուսթէն խօսք կուտայ շինելու․ կերթայ գող ու պնդուկ կ՚առնի կը բերի քաչլկէն ։ Քաչլիկ գիշեր չուամ վրա կուտի․ աղօթրնին կը հանի մատնիկ նշանց կուտայ կրակին․ էն դաէն ինե՝ ոսկի աղուէս, ոսկի թագին, մէջ ոսկի սիրուն՝ երկու մետրաքներ կը բիրեն քաչլկէ առջև ։ Ուսթէն կուգայ, կառնի, կը տանի թագաւորին․ էն օր էլ հարսնիս կ՚անեն ։

Քաչլիկն ի սիպտակ ձիու մագ կուտայ կրակ․ էն մէկէլ գէսու սիպտակ ձին, սիպտակ սիլահները, սիպտակ հալաւ վերէն կուգայ հազըր կը կայնի ։ Քաչլիկ հալըբները կը հագնի, սիլահները կը կապի, կեծել թուրը կ՚առնի ձեռք, սիպտակ ձիու քամակ կը թռնի․ կ՚երթայ կ՚իյնի մէջ հարսնւորներաց․ ամբերուն հետ կը խաղղայ, կ՚էլնի, կ՚իջնի․ կը դառնի թագաւորին, ուր երկու աղբէրն էլ կըսպանի, ուր նշանլին կ՚առնի կը փախչի․ կ՚ըլնի թագաւոր․ կը հասնի իւր սրտի մուրատին ։ Աստուած ձե հասուցի ձեր սրտի մուրատին ։

5.

ԵՐԱԶԱՏԵՍ

Խիզանցւոց լեզուով.

Կէր ու կէր, կէր ու կէր, մէկ խէր ու մէր, մէկ լաճ։ Լաճ յէվարին կըքնի. խալիսուն կ'ելնի մօր կ'ասայ.

—Մարէ՛, ես երազմ՝ եմ տեսե. քե չեմ ասե։

Մէր կ'ասայ. —Ցէ՞ր չես ասե։

Կ'ասայ. —Չե՛մ ասե։ Մէր գլաճ տղէկ մը կը տըփայ։ Կ'ելնի լաճ կ'եհայ մօտ խէր. կ'ասայ.

—Դադօ՛, ես երազմ՝ եմ տեսե, եմ մօր չասի, քե էլ չեմ ասե։ Խէրն էլ կը տըփայ գլաճ։ Լաճ կը հըռւկի կ'եհայ։ Ասուր մը ղօնախ կ'եհայ, ճամբխորդմ՝ ռաստ կը գայ, կ'ասայ.

—Բարև. —Աստծու բարին։ —Ես երազմ՝ եմ տեսե. եմ մօր չասի, եմ խօր չասի, քեկ էլ չիմ ասե։ Կ'ընցնի կ'եհայ։ Կ'եհայ չուրի մօտ Ամիրէն, կ'ասայ.

—Ամիրա՛յ. ես երազ եմ տեսե. եմ մօր չեմ ասե, եմ խօր չեմ ասե, ճամբխորդին չեմ ասե, քեկ էլ չեմ ասե։

Ամիրէն կըբռնայ գէդ տղէն կը թալայ յափս ուր ղօնխի մէջ։

Լաճ ղանակ մի կը ձգայ 'ուր ձեռն· գետին կը փորայ, կը փորայ կը ծակայ կ'ինկնի Ամիրի աղջկայ մանկալօտէն· աղջիկ՝ կերակուլ կ'եղնի ուր քասէն, խուփ կը կոռծայ վէրէն, կելնի դուրս ։

Տղէն կ'եհայ խուփ կը բանայ, ինչ կայ քասէն՝ զըմէն կուտայ աէրսուփ, ուր փոր կը կշտացու, ու կ'ելնի ուր յափս ։

Օրմ՝ անսկուն, երկու՝ անսկուն, իրեք՝ անսկուն, չորս՝ անսկուն, էդ տղէն աղջկայ կերակուլ կուտայ, աղջիկ չգինայ թա վո՞վ այ կուտայ ։ Էն մէկ օր աղջիկ խալ կը դընայ քասէն, կը պահկըւայ յետև փեթկին· տղէն կ'իջնի, կէհայ հաց կառնի կուտայ, աղջիկ կը հասնի կը բռնայ ։ Կ'ասայ· —Դու ի՞նչ մարդ ես ։

Կ'ասայ· — Ես երազ եմ տեսե· եմ մօր չասի, եմ խօր չասի, ճամբխորդին չասի, Ամիրին չասի· Ամիրէն զի յափս էրաց· ես դանկով փորեցի, եկի էստեղ· դու գինաս ։

Աղջկան սիրտ կը կըպի էն տղէն· սէր կ'անեն, ու՝ իսան որդին մեղաց պտուղ այ, աղջկայ փոր կ'ուռի ։

Արևմտոց Թագաւոր կը գայ որ Արևելաց Թագաւորի· աղջիկ տանի ուր լաճուն· (Արևելից Թագաւորը վերոյգրեալ ամիրան է·) կը բռնայ մէկ ձողան կօղօրկայ Արևե-

լոց Թագաւորին , որ երկու ծէրը մէկ այ · կ'ասայ · —Էս երկու գլօխ , ո՞րն այ ծէր՝ ո՞րն այ գլօխ ։ Թէ հանիք՝ հանիք · Թէ չէ՝ ձեր աղջիկ մը տանիմ ։

Թագաւոր յըմէն տեղ կը հարցընայ , չը կանայ խանել ։ Էն տղէն ինչ յամխան այ ու աղջկայ մօտ · աղջիկ կըսայ կ'անայ տըգղին · տղէն կ'ասայ աղջկան ·

—Գնա՛ քո դադօյին ասա · դձողան Թող Թալայ մէջ լըճին , ծանր գլօխ կը խըրվայ մէջ լըճին , գօ էնէ · Թող ծակեն գըօխկեն ։

Տղի ասած կ'ընի · կ'առնեն կ'երթան ետ ։

Էն մէկէլ օր կ'օրօխկեն իրեք ձի մէկ չէշէր · կ'ասայ ·

—Ո՞րն այ հերուընեկ , ո՞րն այ հերգնըմուկ , ո՞րն այ քաշիկ · (ո՞րն է մէկ տարեկան քուռակ , որն է էրկու տարեկան քուռակ , ո՞րն է մայրը ·) Թա խանիք՝ խանիք , Թա չխանիք՝ ձեր աղջիկ մը տանիմ ։

Բուլթուն կը Թափեն , մէկ չի խանեն ։ Թագաւոր կը չիւարայ մնայ · կասայ ·

—Ի՞նչ պտի էնեմ ես ։

Աղջիկ կ'եհայ տըղին կ'ասայ ։ — Ձը կարցան հանեն · ղիկ մը տանեն ։

Էն տղէն ասաց · —Գնա քո դադօյին

տաս · խուրց մի առոտ Թրջայ, աղցնայ, յեփարին Թալայ յառջև էն ձիերուն, խլիսուն էլնի՝ մէր կ'ընցնի, հերզնմուկ յետև, հերուընեկն յետև :

Գօ կը հանայ կը ճամբխայ Արևմտոց Թագաւորին : Արևմտոց Թագաւոր կը մընայ, կօրօխկայ պօղպըտէ չիշ, պօղպըտէ մատալ (ասպար, վահան), ու կ'ասայ · —Թա էդ չըչով էդ մատալ ծակեց, իմ աղջիկ տամ ուր լաճուն · Թա չծակեց՝ ուր աղջիկ տայ իմ լաճուն :

Զօրս դեհաց կը Թափեն, Թագաւօրն էլ · չեն կանայ ծակե :

Թագաւոր աղջկան կ'ասայ · —Գնա էն տղէն առ, բե · խե՞նք · (հայի՞նք, տեսնա՞նք :) Տղէն կը գայ, կը վիրու պօղպատէ չիշ կը դնայ գետին · պօղպատէ մատալ կը զանայ, պօղպատէ մատալ կը ծակայ :

Թագաւոր էդ տղէն կ'անայ ուր լաճ : Կ'ենայ, տ'ենայ Արևմտոց Թագաւորի աղջիկն առնի գայ :

Շատ կ'ենայ, քիչ կենայ, կը տեսնայ մարդ մի · գօ ականջ դրե գետին : Հարցմունք կ'անայ, կ'ասայ ·

—Դու ի՞նչ մարդ ես :

Կ'ասայ · —Ես էն մարդն եմ, դունիէն ինչ որ խօսան, ականջ կը դնեմ կը լսնամ :

Կ'ասայ · —Հա՛ գիդի մարդ · տօ դունիէն ինչ ասեն կը լսնայ :

Կ՚ասայ . —Մարդ ե՞ս եմ . մարդն էն այ, ինչ պօղպատէ չիչ դարկեր՝ պօղպատէ մատալ ծակերայ ։

Կ՚ասայ . —Էն մարդ եսն եմ ։ —Ես քե ախբէր ։

Կ՚ելնեն մէկ տեղ կ՚եհան . կ՚եհան . Մարդ մի գօ ջաղցի մէկ քար կախե մէկ ոտնուց, մէկէլ քար կախե մէկէլ ոտնուց . ոտ մի կը թալայ խիղան, ոտ մի Ստամբօլ ։

Էդ տղէն կ՚ասայ .

—Հէ՛ գիդի մարդ . տօ՞ ոտ մի ըստայ, ոտ մի կը թալայ Ստամբօլ ։

Կ՚ասայ . —Մարդ ե՞սն եմ . մարդն էն այ ի՛նչ պօղպատով պօղպատէ մատալ ծակերայ ։

Կ՚ասայ . —Գօ՛ եսն եմ ։ —Ես քե ախբէր ։ Կ՚եհան ։ Եղան իրեք ։

Կ՚եհան, Գօ՛ եօթն ջաղցի քար կ՚աղայ, մէկ մարդ կուտայ (կ՚ուտէ) չի կշտանայ . կ՚ասայ . « Ա՛խ մարէ, ա՛խ դադօ, ես անօթի մեռայ » ։

Էդ տղէն կ՚ասայ . —Հէ՛ գիդի մարդ . եօթն ջաղցի աղուն կուտայ, ու տէլալայ կ՚ասայ՝ Ես անօթի մեռայ ։

Կ՚ասայ . —Մարդ ե՞սն եմ . մարդն էն այ, ի՛նչ պօղպատէ չիչ դարկեր պօղպատէ մատալ ծակերայ ։

Կ՚ասայ . —Գօ եսն եմ ։ —Ես քե ախբէր ։ Կ՚եհան ։

Կ'ենհան, Գօ մարդ մը, դունիքէն էրե բեռ մը, քամակ տուներայ դէմ կը չալկայ։

Էղ տղէն կ'սայ. —Հէ՛ գիդի մարդ. դունիքէն էրե բեռ մը կը չալկայ։

Կ'սայ. —Մարդ ե՛ն եմ. մարդն էն այ, ի՛նչ պօզպտով պօզպաէ մատալ ծակերայ.

Կ'սայ. —Գօ՛ եսն եմ։ —Ես քե ախբէր. Կ'ենհան։

Կ'ենհան, Գօ մարդ մը, բերան դէմ դէմ տառուին, բարանհի մը ջուր կը դայ, մարդ կը խմա՛յ ու կը բօռայ. «Եաման մարէ, եամա՛ն դադօ, ես ծարաւ մեռայ»։

Էղ տղէն կ'սայ. —Հէ՛ գիդի մարդ. բարանհի մը ջուր կը խմայ, ու կը բօռայ ես ծարաւ մեռայ.

Կ'սայ. —Մարդ ե՛ն եմ. մարդն էն այ, որ պօզպաէ չիշ դարկե պօղպաէ մատալ ծակերայ։

Կ'սայ. —Գօ՛ եմն եմ։ —Ես քե ախբէր։ Կ'ենհան։

Կ'ենհան, Գօ՛ հովիւ մի, փող կը փչայ, ու սար ու ձոր, դաշտն ու պառակ, մարդ ու ջանավար կը խաղան։

Էղ տղէն կ'սայ. —Հէ՛ գիդի մարդ. սար ու ձոր կը խաղցու։

Կ'սայ. —Մարդ ե՛ն եմ. մարդն էն այ, որ պօղպտով պօզպաա ծակերայ.

Կ՚ասայ . —Գօ էն մարդ եսն եմ։
—Ես քե ախրէր ։ Կ՚եհան ։
Կ՚եհան ։ Եղան եօթն հոգի ։
Կը հարցուն .

—Աղբէր պօղպատէչիչպօղպատէմատալ, Աստուած կամենայ դո՞ր կ՚եհանք ։

—Կ՚եհանք արևմտոց Թագաւորի աղջ[illegible]կ բիրենք ։ —Հալա՛լ այ քե ։

Կ՚ե[illegible] [illegible]կը մտնեն Թագաւորի սարէն, որ աղջիկ տանեն [illegible] ։ Թագաւոր կը կանչայ ուր մարդեր, կ՚ասայ [illegible]օլ ։ —Էնոնք խնամի են, քասէ մի զատ (կերակ[illegible]ուր) չեն կանայ ուտե . ելեցէք քսանըմէկ Թոն[illegible]էր հաց Թըխեցէք, քսանը մէկ ղազան չօրբայ [illegible] եփեցէք Թա մէկ դրանց կերան, աղջիկ [illegible]ր տանեն, Թա չէ՝ աղջիկ չենք իտա ։

Իտոնք գօ ուրիշ օդայ են նստուկ ։ [illegible] ինչ ականջ դըեր էր գետին, ականջ կ՚էն[illegible]յ՛ կ՚ասայ .

—Ահա՛նչ, պօղպատէչիչպօղպատէմ[illegible]տալ, դու հասկըցա՞ր Թագաւորն ի[illegible]նչ ասաց ։

—Ցօ՛ տնաւեր, ապա ես ի՞նչ գինա[illegible], ես տուն ինե չեմ։

—Կ՚ասայ, ի՞նչ կասայ, ասաց, կ՚ասայ ։ Քսանըմէկ Թոնէր հաց, քսանըմէկ ղազան չօրբայ, կ՚ուտեն՝ կը տանեն զաղջիկ . գօ՛ չուտեն՝ չենք իտար ։

Եօթն ջաղցի աղուն ուտող կ՚ասայ․
—Դուք մէ՛ք վախենայ, ես կ՚ընցնիմ յէռուջև, ի՛նչ հաց կը դնեն յէռջև մե, ի՛նչ զատ կը բերեն, կ՚ուտեմ, ու կ՚ասեմ․ —Ա՛խ մարէ, ա՛խ գատօ՛, ես սովուց մեռայ։ Անսկուն կ՚անեն։

Թագաւոր կը տխնայ, կ՚ասայ․ —Աւա՛ր․ Աստուած ձեր տուն աւրայ․ էստնցից փախնիլ պիտնայ։ Ուր մարդեր կը կանչայ, կ՚ասայ․ —Տուն իւրին կրակ էրեցէք, մոխիր վրէն ցանեցէք, թաղիսներ թալեցէք վրէն, յէվարին ինչ կ՚երթան ներս, չըլխօ ըմէնն էլ տը մրկին։

Ականջ դնող կը լսնայ, կ՚ասայ․
—Հէ՛յ պօղպատէշիշպօղպատէմատալ, դու հասկցա՞ր ի՛նչ ասաց Թագաւոր։
—Չէ՛, ես ի՞նչ գինամ։
—Կ՚ասայ, ի՞նչ կ՚ասայ, ասաց, կ՚ասայ․ Տուն իւրին կրակ էնենք, յէվարին ինչ տուն կ՚երթան, ըմէն էլ գօ մրկեն, աղջիկ էլ վի՞ր տը տանք։

Ջըրու խըմող կ՚ասայ․ —Թողեցէք ես եհամ կուշտ ջուր խմեմ, ես գամ ընցնիմ յէռջև ձե․ ի՛նչ եհանք տուն, տը փչեմ էն կրակ ընցնի ու տուն դառնայ ծով։

Յէվարին Թագաւոր կը կանչայ, հրամեցէք ձեր տեղ քնեցէք։ Ջըրու խմող բերան կը բանայ, տուն յիւրին ջուր կ՚ըլնի։

Բերիչ տուն կուտան ։

Թագաւորին ճարէն կը կտրայ, մարդեր կը կանչայ. մէկ բերան կ՚ասեն. — Վալլա՛հ, ինչ որ եղնի, մենք մեր աղջիկ չենք իտայ ։

Ականջ դրող կը լսնայ, կ՚ասայ.

— Ահա՛նչ, պօղպատէ չի չպօղպատէ մանտալ, դու հասկացա՞ր թագաւորն ինչ կ՚ասայ ։

— Կ՚ասայ, սօ անմուներ, ասոր ետ ի՞նչ գիտեմ ինչ կ՚ասայ ։

— Կ՚ասայ, ի՞նչ կ՚ասայ, ասայ, կ՚ասայ. ինչ որ եղնի, ես իմ աղջիկ չեմ իտայ ։

Դունեի չոլկող կ՚ասայ. — Թողէք ես զաւուն ու զերկիր չոլկեմ. ու քամանկ կու- տայ դէմ. կը վերու զաւուն դէնայ չոլակ. Հովիւ փող կը փչայ, սար ու ձոր կը խառ- ղայ. Ջաղցի քար ստներայց կախող ճամ- բան կը բանայ, ու քէֆով զաֆգով կ՚եհան ։

Թագաւոր շատ կուլայ կ՚աղաչայ, թա- եմ տուն, եմ երկիր թողեցէք, առեցէք աղջիկ տարեցէք, հալալ եղնի ձեզ ։

Ցուն կը դնեն ուր տեղ. փողի փչողն էլ փողի ձէն կը կտրայ, սար ու ձոր խառ- ղուց կը դադրին. աղջիկ կ՚առնեն կ՚եհան ։ Ծէկէլ ընկերներ մէ յմէկ ուր տեղ կ՚եհան. պօղպատէ չի՛չ պօղպատէ մանտալ ճամ- կողն կ՚առնի աղջիկ կը գայ Արեւելաց Թա-

դաւորի տուն ., կը տիսնայ զօ՛ ուր ճուջի ձնիկ լաճ մի բերերայ, էն աղջիկն էլ կ'անայ ուր կնիկ. գիշեր կը պառկայ, կասայ.

«Արեգակ մի էն կուշտս, Արեգակ մի էս կուշտս. Պոծառ աստղ վէր իմ սրտին կը խաղայ»:

Խըլխուն ուր խէր մէր կանչել կը տայ, կ'երհայ Թագաւորի առէջ, կ'ասայ.

—Դօրխս եմ երազ ձե ասեմ:

Կ'ասեն. —ի՞նչ այ:

Կ'ասայ. —Ես տեսայ Արեգակ մէկ էն կուշտս, Արեգակ մէկ էն կուշտս, պոծառ աստղ վէր իմ սրտին կը խաղէր:

Կ'ասեն. —Քո էրազ էդի՞կ էր:

Կ'ասայ. —Խա՛ վալահ եմ երազ էսիկ էր:

Ասածուց իրեք խնծոր կ'էջնի.

Մէկ սաղին,
Մէկ ասել տուողին,
Մէկ ականջ արողին:

6․

ՆԵՆԳԱՒՈՐ ՄԱՑՐ ՄԸ

Դարջեան Խեղանցաւոց լեզուով․

Կէր ու կէր, կէր ու կէր մարդմ՝ ու կընիկմ՝ ։ Իրիկ նէծըլվան (որսորդ) էր․ ուր մեռնելու օրն էկաւ, ասաց․

—Կընի՛կ, ես որ մեռնեմ ։ Կընիկ տըղով էր ։ Ասաց․ —Ես գինամ զիկ լաճմ՝ տ՚եղնի․ իմ ղանաբն պըտի էնայ․ չըլնիմ չ՚իմնամ Սըսար նէծիը չեհայ․

Խէր կը մեռնի․ լաճ կ՚ըլնի․ կը պէտնայ (մեծնայ), տ՚եհայ նէծիը ։

Մէր կ՚ասայ․ —Որդի, քո խէր ոսէաբմ՝ (կտակ) էրեր այ, ասերայ․ Թա իմ լաճ տանհաբն էնայ, չըլնեմ չ՚իմնամ Սըսար նէծիը չեհայ ։

Լաճ ոսէաբն մոսէաբն ականջ չանե․ զձին կը հեծնայ կ՚եհայ Սըսար նէծիը․ կը տեհնայ (տեսնայ) զօ մէկ դէվ հէծերայ մէկ աժդահար ձի, մէջ երկինք մէջ գետինք կը գայ ։

—Հէ՛յ, կ՚ասայ․ դու ըսկի՞ չես լսե իմ անուն, որ իկեր ես իմ հող նէծիը ։ Իրեք կուրզ կը զանայ (զարնէ) լաճուն ։ Լաճ՝ յանուն Աստուծոյ կ՚անայ (կընէ)․ ու Աս-

տուծոյ հրամանքով կ'ըլնի չանճ (քան ըզ) ճանճ կը կըպնայ ձիու փոր՝։ Գորիս (այնուհետև) լաճ երկու նետ ւանեղ կը զանայ, զդէվ կիսապան կը փռայ գետին ։ Կ'ասայ․ Ես տ'ելնեմ էս դէվու ձին հեծնեմ, հալբաթ էսա ձին զիկ տեղմ' տը տանի ։ Հեծաւ․ ձին տարաւ դէվու տուն ։ Քառսուն գէօղալ եկին դուրս, ասին․ Ո՞ւր է դէվ ։

Ցղէն կ'ասայ․ —Դէվ շան պէս զարկի, գօ' ինկուկ ճամբխու վրէն ։

Կ'ասայ․ — Դէվ ձև ի՞նչխ այ բերեր այ ։

Կընկտիք կ'ասեն․ — Մենք քառսուն գուալի աղջիկ ենք, մե զօռով էնի բերեր այ․ դու դէվ սպանիցիր, մենք քառսուն էլ տ'եղնինք քե կնիկ ։ — Խա՞․ — Խա ։ (Այո՞․ —Այո ։)

Դէվին մուլ Ճամուլ հեռաքնորը․ դուռ մը կը բանան՝ լալ ու դուրայ յըլին ։ Դուռ մը կը բանան՝ ոսկի կը չըռայ․ դուռ մը կը բանան՝ առծաթ կը ցռայ ։ Վա՜յ, էս աղէկ բան այ ։ Ու տըղէն կ'եհայ Նէճիբ կ'էնայ ։ Շատ կը մնան, քիչ կը մնան, մէկ տարի անսկուն (անանկ) կը մնան, Մէկ օր տըղէն Նէճիբէ կը գայ կը նստայ, կը գայ կը նստայ կ'էնայ․ Ա՛խ, ա՛խ, վա՛խ ։ Քառսուն կընկտիքն էլ կը գան բոլոր,

կ՚ասեն. — Քեզ ի՞նչ կայ պակաս. մենք քաղաքուն ճերմակ ենք, քաղաքացին էլ քու կնիկն ենք. քե դուր չի՞ գայ. դու մրէ՞ (ինչո՞ւ) ախ վախ արիր.

Սօսէ. — Դուք անուշ էք. իմ մէրն էլ անուշ է. դուք ձեր տեղ, մէրս իր տեղ. Իմ մէրն ինկաւ իմ միտս. Ախ ու վախ էրեցի:

Կ՚ասեն. — Եմ՛, բեռ մի ոսկի տար, քո մէր թող ուտայ:

Լաճ կ՚ասայ. — Ես տ՚երթամ իմ մէր բերեմ:

Խընկտակը կ՚ասեն. — Դէ՛ գնա բե:

Կ՚երթայ մէր կը բերայ. Մէր՝ ինչ կայ չկայ՝ լաճուց կ՚իմանայ: Լաճ կ՚երթայ Նէծէց: Մէր կ՚եղնի կնկտոց կիսուր: Մէր Նէծմա-ընեն գինայ: Լաճ Նէծէցն այ. մէր կ՚երթայ դէվուն կը դեղայ (դեղ դարման կ՚ընէ), կը գայ կնկտոց կ՚ասայ. — Ձեր ծամե՛ր կտրտեմ, (անէծք է). դուք խնդացեր էք թա դէվ մնաց մեռուկ. Ելեցէք առէք կարպետ, երթանք դէմն առնենք գանք: Կ՚առնեն կը գան: Մէր գողտուկ կը պահայ դէվուն, կը դեղայ, չուրի կը ծրի: Մէր սիրողութեն կ՚էնայ դէվու հետ. լաճուց կը վախնայ:

Դօրխս մէր կ՚ասայ դէվուն. — Քու կանանչ արև կտրտեմ, (անէծք է). իմ լա-

ճուն անդարձ ճանբահմ՝ չա
տուր) · գօ՛ երթալս եղնի ,
Կ՛ասայ · Աղէկ ։

Մէր չոր լօշ (լաւաշ հաց)
կը պառկայ վրէն · կ՛անայ · Մ
դէ՛, կը մեռնեմ, ուակրտան
(սո՛ւտ , գօ՛ լօշերն այ կը կ

Լաճ կ՛ասայ · —Մարէ
կըպի · (ի՞նչ կ՛ախորժես) ։

Մէր կ՛ասայ · —Որդի , «
պըտի եհաս անմահութնի
րուկ) բիրես , ուտեմ, ժրե
րես , գօ՛ տը մեռնեմ ։

Լաճ կ՛ելնի կ՛եհայ , կ՛ե
պառւու ղըռնախ ։

Պառաւ կ՛ասայ · —Որդ
մըտի եհաս ։

Կ՛ասայ · —Մամի՛կ , տ՛
անմահութնի ճուղուլայ բիրե

Պառաւ կ՛ասայ · —Թօ՛
պառւու խաբուած ես ։

Կ՛ասայ · —Չէ , պըտի
բիրեմ ։

Պառաւ կ՛ասայ · —Տ՛ե
ջէրան էնեմ (մորհուրդ տամ
հաս , քառասուն դէվ գօ՛ կ
կծղեն են) , հիսուն դէվ գ
էն քառասուն դէվերաց ճոչ
կը թխայ տուն · Թա կարէ

մըշթեցի՞ր (ծծեցիր), քե զեան չկայ . գօ՛ չէ՝ չը ծծեցիր, ջուուր մի ճանբահ զատն էլ եղնիս, քե պըտի ուտայ ։

Լաճ կ՚եհայ կը ծըծայ, դէվ չում կ՚իմնայ . էլ ի՞նչ ։ Կ՚ասայ . —Քե չանց տուողի վիզ տակ մնայ, պուծար . թա չէ՝ դու զիկ աղէկ պոշխ (ընթրիք) տ՚եղնէր ։ Կ՚ասայ, դէ՛ արի քե դնամ սանդուղ, որ յէվարին դէվեր չը գան քե ուտեն ։ Կը դնայ սանդուղ ։

Խրիկուն դէվեր կը գան կ՚ասեն . —Ա՛խ մարէ, մենք տարին տըսուէրկու ամիս գէլ գազան կը բիրենք հըդըրաց (միասեղ) կուտենք . գօ՛ մարդ մարդահոտ կը գայ, դու էսօր մարդ ես կիրե . թող ոսկրի կտորմ՚է մե տիր (տայիր) ։

Մէր կ՚ասայ . —Սարէն ձորէն դուք կըգէք, մարդ մարդահոտ ձենէ կը գայ ։

—Չէ, կ՚ասեն ։

Մէր կ՚ասայ . —Գօ՛ իմ մօրքրօջ լաճ էկերայ ։

Դէվեր կ՚ասեն . —Մարէ, քօ մօրքրօջ լաճն էկերայ, հան դուրս . չենք ուտե, մենք էլ տիրութեն անենք ։

Մէրն գլաճ սանդուղից կը հանայ, կը հանայ՝ էն քառսուն դէվ կ՚առնեն չանճ (քան ըզ) բուռմ՚ ծաղիկ հոտոտան (1),

---

(1) Ընթերցողք կը յիշեն անշուշտ Կիւլիվերի Ճանապարհորդութիւնն. Լիլիբուլին ։

ձեռնէ ձեռ կուտան ։ Ուրանց մօր կ'ասեն .
—Մօրքրօջ լաճն էկերայ յի՞նչ ։

Մէր կ'ասայ . —Էկերայ անմահութենի ջօղօղօյ պըտի տանայ ուր մօր . հիւանդ-այ . դուք պըտի երթաք անմահութենի ջօ-ղօղօյ բիրէք ։

Քառասուն դէվ մէկ տրայ (միատեղ) կ'ասեն .

—Վալա՛հ , մենք չենք կանայ . մեր մոտից չըր գայ . (մեր ձեռքէն չգայ)։

Թօփալ դէվմ' կէր մէջ էն քառասունին . էս Թօփալ էն տղին կ'ասայ . —Մօրքրօրդի , ա՛ռ կուժ , ա՛ռ սանտր , ա՛ռ արծլին , ես դու երթանք հըղըրաց ։

Կ'ելնեն հըղըրաց կ'երթան . կ'երթան ան-մահութենի ջօղօղէն տեղ կը դադրեն ։

Թօփալ դէվ կ'ասայ . —Մօրքրօրդի , դու արի ըստայ ։ Կ'երթայ տեղ , ջօղօղէնց կաղ մը (չերտ մը) կը կտրայ կը դնայ վէր ձիուն , կ'ասայ . —Դէ՛ գու գնա՛ . գօ՛ ես քե կը հասնեմ։

Դէվ սող ոտ կը թալայ ճանբահ , կաղ ոտ ինչ կը քաշայ՝ կը մնայ 'ի ցանկ , հիսուն դէվանք կ'ադհին (կ'արթննան) , հասնէ հաս կը հասնեն ։ Կաղ դէվ կ'ասայ . —Մօրքրօրդի , կուժ թալ ։ Կը թալայ , հող ու սար ջուր կը կտրեն ։

Ջուր էնոնք ջուր կ'ընցնեն կը գան

հասնէ հաս, կ'ըսայ. — Մօրքրօրդի, սանտր թալ: Կը թալայ, կ'ըլնի պըրակ:

Ջուրի պըրակ կը կարեն կը գան հասնէ հաս, կ'ըսայ. — Մօրքրօրդի, ածըլքն թալ: Կը թալայ, կ'ըլնի տամար տամար ջամ: Ջուր իննոք կ'ընցնեն կը գան, բուգեհա-քասսուն դէվեր կը հասնեն կը պրծուցեն: Տղէն քուշուկն կը բառնայ ձիուն կը դառ-նայ: Կը գայ կ'ըլնի էն պատառու գըննւխ: Պառաւը կ'ըսայ՝ Բերի՞ք:

— Հա՛ վալլահ բերի, կ'ըսայ, մամի՛կ:

Լաճ կը քնի գիշեր, պառաւ կ'ելնի անխաճութենի քուշուկն կ'առնայ, ուրիշ կը դնայ տեղ:

Խլխուն լաճ քուշուկն կը տանայ մօր. մէր կուլայ, կ'ըսայ. — Օխէ՛շ, հագիս հանգաւ, դուրիս էլ չըմ մեռնի:

Լաճ կ'ելհայ տնէնը: Մէր դէվուն կասայ. — Դէվ, քո կամանչ արև կտրտեմ. իմ լա-ճուն անդարձ ճանբան չանց տուր. գօ՛ եհալ, ելնի գալ չելնի: Կ'ըսայ. Աղէկ:

Լաճ կը գայ. մէր չոր լօշ կը դընայ տակ, կը կըրճկըրճայ. կ'ըսայ. — Ա՛խ օրդի, ես պըտի մեռնիմ. էլ գի չը պըտի ախնաս:

Լաճ կ'ըսայ. — Մարէ, ի՞նչ կ'ուզես:

Կ'ըսայ. — Որդի, աղբը եմ առե, ես-հաս առուծու կաթ բիրես. ուտեմ, ժըրեմ:

Լաճ կ՚ելնի կ՚երթայ. կ՚երթայ կ՚իջնի Տեղ մը՝ էն պառաւուն դուռը: Պառաւը կ՚ասայ. —Որդի, դո՞ր կ՚երթաս:

Կ՚ասայ. —Մամիկ, տ՚երթամ եմ մօր առուծու կաթ բերեմ:

Ասաց. —Թօ՛ որդի, դու պառաւու խաբած ես:

Ասաց. —Չէ, պըտի երթամ բերեմ:

Ասաց. Ոնց (քանի որ) դու տ՚երթաս, արի քե շէրաճ էնեմ: Կասայ. Կ՚երթաս, դօ՛ առուծներուց ճոչ՝ տուն եղերայ քարկոխ (կոց), խլխուն ինչ արև կը ծէգայ, կը դայ տո կը հանայ չինարի ծառնը վեր, կանչ մը երկի՛նք՝ կանչ մը գետի՛նք կը բոռայ: Կ՚ասայ. Թա դու նետ ւանեղով կարցար դքարկոխ փլուցիր, քե բա՛ն չկայ. Թա չկարցար՝ քե պըտի ուտայ. ինչ կը զանես քարկոխ փլուցե՛ս, գքեկ երեւան չհանես. ինչ քարկոխ նըշուհանքէ՛, դորխ երեւան էլի: Հոգին Աստծուն, ինչ որ ուզես՝ քե պըտի տայ:

Լաճ կ՚երթայ, կ՚երթայ կը տինայ դօ՛ առուծ տղէքը հանէրայ չինարի ծառնը վեր, կանչ մը երկի՛նք՝ կանչ մը գետի՛նք կը բոռէր. լաճ նետ ւանեղ կը զանայ քարկոխ կը փլուցայ:

Առուծ կ՚ասայ. —Ա՛խ էնիկ ո՞րն էր. ես զէնիկ պըտէր ուտէր: Ա՛խ, ա՛խ:

Քիչ մը նը ոընհոնէ․ դուրս կուգայ, կ'ասայ, Ա՛խ, կ'ասայ․ Էնիկ ո՞րն էր, հոգին Աստծուն․ ինչ որ ուզէր՝ ես տը տէր։

Լաճ թըռաւ էռջև․ Հարցուց․ —Էմ քարկոխ դո՞ւ փլուցիր։

Ասաց․ —Հրամանքայ, ծառէդ եմ։

Ասաց․ —Դէ՛ ուզա՛․ ինչ որ ուզես՝ տը տամ քե։

Լաճն ասաց․ —Էմ մէր հիւանդ այ, առուծու կաթ կուզեմ։

Առուծ կ'ասայ․ —Գնա յէնա եմ մէկ բոն, երկու խորթ ձագ ունեմ, էնոնք զենայ (զե՛ն․ մորթէ՛) արուն առ գնա․ չըլնեմ չիմնամ որ ձէնձէնոց առնեմ․ որ առայ՝ քե կուտեմ։

Լաճ առուծի երկու ձագ կը զենայ, կաթն արուն կը լըլայ տիկ կը բեռնայ ձիուն․ առուծի երկու քօթօթ էլ կը գող-նայ․ շատ կերթայ լաճ, քիչ կերթայ, առուծի ճոչ հասուէ հաս յիտև կը հասնի․ զլաճ կը բռնայ, կասայ․ —Հէ՛յ, քօթօթ-ներ վրէ՞ կը տանես։

Լաճ կ'ասայ․ —Կը տանեմ՝ չըմզեներ, կը տանեմ պըտի տիրեմ, ձի պըկէր (պէտք) կը գան։

—Դէ՛ որ անսկուն ի, ա՛ռ գնա։

Լաճ կեհայ, կեղնի էլմ էն պառւուն գլխոխ, կասայ․ —Բարև քե, մամիկ։

—Աստծու բարի՛ն, որդի. կ'ասայ. Բերի՞ր կաթ։

—Հա՛ ճուլլաճ բիրի, կ'ասայ։

Գիշեր լաճ կը քնի. պառաւ կ'ելնի առուծի կաթ կը դարտկայ. ջուր կը լըլայ ճծու կաթի մէջ՝ կը դնայ առուծի կաթի տեղ. լաճ չ'իմնայ։ Խլխսուն լաճ կ'ելնի զկաթ կ'առնայ, զձին կը հեծնայ, կ'ենայ մօտ մէր։

Մէր կը խմայ, կ'ասայ. —Խէ՛չ, հոգիս հանգաւ։

Մէկէլ խլխսուն լաճ կ'ենայ Դէծիլ. լաճու մէր դէվուն կ'ասայ. —Դէ՛վ, քո կանանչ արև կտրտեմ. չէ՞ քե կ'ասեմ եմ լաճուն անդարձ ճանբահ մը չանց տուր. գօ՛ երթալ եղի, գալ չեղի. չէ խօ՛ տ'ասեմ քըզի զենայ։

Դէվ կ'ասայ. —Ես ի՞նչ անեմ. էն լաճ ափսոս մարդ այ, նէնէ մարդ այ. դոր ճանբհենք կը գայ. ասաց. Թող էօգրիս էլ ենա քե անմահութնի ջուր բերայ։

Մէր չոր լօշեր կը ձգայ տակ, քամակ կը թալայ վրէն. յէվարին լաճ կը գայ. մէր կ'ասայ. —Ա՛խ, (լօշեր կը ջարդուեն). ա՛խ որդի, պըտի մեռնեմ։

Լաճ կ'ասայ. —Մարէ, յէ՞ր կը մեռնես. ի՞նչ կուզես քե բիրեմ։

Մէր կ'ասայ. —Որդի, ասլըխ եմ ա-

ու, երթաս անմահութեան ջուր բերես. ես խմեմ ու ծերեմ, թէ չէ՝ էլ ճար չկայ, ու մեռնեմ։

Լաճ խլխուն կ'էլնի ձին կը հեծնայ, կ'առնայ երկու առուծի քօթօթներ, կ'ե-հայ. կ'եհայ կ'եղնի էն պառուուն դըռուր, կ'ասայ. —Բարիկուն քե, մամիկ։

Կ'ասայ։ —Աստծու բարին մըրէդ, որ-դի. Դո՞ր կ'երթաս.

Կ'ասայ. — Տ'եհամ եմ մօր անմա-հութեան ջուր բիրեմ. եմ մէր հիւանդ այ։

Պառաւ կ'ասայ. —Թօ՛, որդի, դու պառուու խաբած ես։

Լաճ կ'ասայ. —Եղնիմ չեղնիմ, ա'ե-համ։

Պառաւ կ'ասայ. —Որդի, էռաջ ինչ խրատ որ քե էրի, եկիր. էս դիր կ'ե-հաս՝ չըս իդայ. ով դըցեր այ՝ չէկերայ։

Լաճ կ'ասայ. —Ի՞նչ խօ, մամիկ։

Պառաւ կ'ասայ. —Կ'եհաս տիկ կը դնես դէմ աղբիւրին, եօթն օր եօթն գիշեր կը մնաս քընուկ. օձ կ'ելնի, կարիճ կ'ելնի, դէվ կ'ելնի, ջանավար կ'ելնի դքե կուտայ, ազատելու ճար չկայ։

Լաճ —Ինչ եղնի եղնի, ա'եհամ հետ եմ Աստըծուն, կ'ասայ. կ'եհայ առուծի քօթօթներ կ'առնայ կ'եհայ. կ'եհա՛յ շուր կը հանի անմահութեան աղբուր. տիկ կը

տայ յետոյ աղբրին. քուն կը կոխայ. ձիուց կը յնի տակ. եօթն օր եօթն գիշեր քընուկ կը մնայ. օձ կ'ելնի, կարիճ կելնի, ջանավար կ'ելնի. առուծներ կը բռնեն ձիււըռ տեն թալեն ։

Ինչ եօթն օր եօթն գիշեր կը թըմմի, լաճ կը զարթի ։ Կ'իրիշկայ որ առուծի ձըգեր՝ արուն են կտրե, աղէկ մը կը լըւայ, անմահութնի ջրից տիկ կը լըլայ կը բեռնայ վէր ձիուն, կը դառնան ։ Կը դառնան կը գան կ'եջնեն պառւու տուն ։ Պառւաւ կասայ. —Բիրի՞ր ։

Լաճ կ'ասայ. —Հա՛յ հա՛յ, բիրի.

Պառաւ կ'ասայ. —Ինիկ դու չբիրիր, Աստուած՝ ու առուծի ձըգեր եղան տաբէք. չէ խօ՝ դու չէր բիրե ։

Լաճ կը քնի, պառաւ կ'էլնի անմահութնի ջուր կը դարտկայ, ուրիշ ջուր կը բերայ կը լըլայ տիկը վեր ։ Լաճ չ'իմնայ. խլխուն կ'ելնի կը բեռնայ ձիուն կ'եհայ մօտ մէր, կ'ասայ. —Մարէ, գօ քե անմահութնի ջուր բիրի ։

Մէր կ'առնայ կը խմայ, կ'ասայ. —«Խէ՛չ, հոգիս հանգաւ. դորիս կը ծրեմ» ։

Լաճ կ'եհայ Նէճէր. մէր կ'էլնի դէվըւն կ'ասայ. —Դէ՛վ, քո կանանչ արև կտըրըփեմ. քե կ'ասեմ անդարձ ճանբահ մը-

չանց տուր եմ լաճուն․ երթալ եղի, դալ չեղի ։

Դէվ կ'ասայ․ —Վալլահ էն լաճ զօրաւոր մարդ այ․ դոր ճանբհէնք կը գայ․ էլ ես չըմ գինայ դոր ճանբհամ։

Մէր կ'ասայ․ —Դէվ, չէ՝ խօ եմ լաճուն ո՛ւ ասեմ քեկ սպանայ ։ Ցէվարին լաճ կը գայ, մէր կ'ասայ․ —Որդի, արի գլօխդ դիր վէր իմ ծնկան քնի ։ Լաճ վէր մօր ծնկան կը քնի ։ Լաճու գլօխ նշնով ըրեք մազ կայ․ մէր կը փաթթայ վէր ուր ձեռաց կը քաշայ, լաճ կը մեռնի ։ Մէր դէվուն կ'ասայ․ —Առ թուրն արե, բրդենք ։

Դէվ կ'ասայ․ —Ես չըմ իգար․ իմ ձեռ չերթայ ես էն լաճ բրդեմ։

Մէր կ'էլնի կ'առնայ թուր, զլաճ կը բրդայ․ ճկօթ կը թալայ պադն խտակ, զլէշ կը լըլայ մազէ տուրիկ (տօպրակ) մի, կը դնայ դէն ։ Առուծի ձըգեր կ'ակհեն, կը գան կ'առնեն զտուրիկ, կ'եհան տանեն պառվու տուն ։

Զառաւ ոսկոռ վէր ոսկոռի կը դնայ, լէշ վէր լէշի կը դնայ, գլօխ վէր գլխի կը դնայ, կը թըմմայ, մէկ ճկօթ կը մնայ պակաս․ առուծի ձըգեր կը դառնան կը գան ճկօթն էլ կը տանեն․ կը կպուցայ ուր տեղ․ կը բերայ առուծի կաթ կը լըլայ վէր լաճուն, կը կալի յիրուր, կ'ելնի մօրէ մէկ ։

անմահութենի ծաղկէն եառուր քիթն՝ փը-ռնդտաց. անմահութենի ջուրն էլից վրէն, սաղացաւ նստաւ ։ Լաճ մամկէն կ'ասայ. —Մամիկ, էս ի՞նչ էր եղերէր զի ։

Պառաւ կ'ասայ. —Թօ՛, որդի, քո մէր քե սպաներայ ։

Լաճ կ'ասայ. —Ապա ես ի՞նչխ սաղ-ցայ ։

Պառաւ կ'ասայ. —Ինչ դու առուծք կաթ բիրիր, ես էնիկ պահիցի, ուրիշ կաթ տուի քե տարար քո մօր. անմահութենի բաշուլէն, անմահութենի ջուրն էլ անսկուն էրի ։ Քո մէր զքե սպանած լըլած էր մաղէ տուրիկ. առուծի ձըգեր ղտուրիկ բիրին. ես լէշ վէր լէշին դրի, ոսկոռ վէր ոսկռին, անմահութենի կաթ լըցի վրէդ եղար մէկ կտոր. անմահութենի բաշուլէն տվի քթիդ՝ փռնգտացիր, անմահութենի ջուր լցի վէ-րէդ՝ սաղացար էլար ։

Լաճ կ'ասայ. —Էյ՛ մամիկ, աղէկու-թեն հետ Աստուծուն էրեր ես. ես չեմ կա-նայ. Աստուած քե աղէկութեն էնա ։ Կ'ե-հայ բերայ բեռ մը ոսկի, մէկ՝ արծաթ, կը տայ պառւուն. —Դէ՛ կե, կ'ասայ, ձի դուղայ էրայ. ես տ'եհամ հետ իմ հացին ։

Լաճ կ'առնայ առուծի ձըգեր կ'եհայ մօտ մէր, առուծներաց անուն կը տայ

չանց տուր եմ լաճուն. երթալ եղի, գալ չեղի։

Դեւը կ'ասայ. —Վուլլահ էն լաճ զօրաւոր մարդ այ. դոր ճանբհենք՝ կը գայ. էլ ես չըմ գինայ դոր ճանբհամ։

Մէր կ'ասայ. —Դեւ, չէ՝ խօ եմ լաճուն տ'ասեմ քեկ սպանայ։ Ցէվարին լաճ կը գայ, մէր կ'ասայ. —Որդի, արի գլօխդ դիր վէր իմ ծնկան քնի։ Լաճ վէր մօր ծնկան կը քնի։ Լաճու գլօխ նշնով րինեք մազ կայ. մէր կը փաթթայ վէր ուր ձեռաց կը քաշայ, լաճ կը մեռնի։ Մէր դէվուն կ'ասայ. —Առ թուրն արե, բրդենք։

Դեւը կ'ասայ. —Ես չըմ իգար. իմ ձեռ չերթայ ես էն լաճ բրդեմ։

Մէր կ'էլնի կ'առնայ թուր, զլաճ կը բրդայ. ճկոթ կը թալայ պադն իտակ, զլէշ կը լըլայ մազէ տուրիկ (տօպրակ) մի, կը դնայ դէն։ Արուծի ձըգեր կ'ակհեն, կը գան կ'առնեն զտուրիկ, կ'եհան տանեն պառվու տուն։

Պառաւ ոսկոռ վէր ոսկոռի կը դնայ, լէշ վէր լէշի կը դնայ, գլօխ վէր գլխի կը դնայ, կը թըմմայ, մէկ ճկոթ կը մնայ պակաս. առուծի ձըգեր կը դառնան կը գան ճկոթն էլ կը տանեն. կը կպուցայ ուր տեղ. կը բերայ առուծի կաթ կը լըլայ վէր լաճուն, կը կպի յիրուր, կ'ելնի մօրէ մէկ։

անմահութենի ճողոպրէն տուր քիթն՝ փըռ-ըռնգտաց. անմահութենի ջուրն ելից վրէն, սաղացաւ նստաւ։ Լաճ մամկէն կ'ասայ. —Մամիկ, էս ի՞նչ էր եղերէր ըի։

Պառաւ կ'ասայ. —Թո՛, որդի, քո մէր քե սպաներայ։

Լաճ կ'ասայ. —Այպա ես ի՞նչխ սաղ-ցայ։

Պառաւ կ'ասայ. — Ինչ դու առուծի կաթ բիրիր, ես էնիկ պահիցի, ուրիշ կաթ տուի քե տարար քո մօր. անմահութենի բաշուլէն, անմահութենի ջուրն էլ անսկուն էրի։ Քո մէր դքե սպանած լըլած էր մաղէ տուրիկ. առուծի ձըգեր ղտուրիկ բիրին. ես լէշ վէր լէշին դրի, ոսկոռ վէր ոսկռին, անմահութենի կաթ լըցի վրէդ եղար մէկ կտոր. անմահութենի բաշուլէն տըվի քթիդ՝ փռնգտացիր, անմահութենի ջուր լցի վէ-րէդ՝ սաղացար էլար։

Լաճ կ'ասայ. —Էյ՛ մամիկ, աղէկու-թեն հետ Աստուծուն էրեր ես. ես չեմ կա-նայ. Աստուած քե աղէկութեն էնա։ Կ'ե-հայ բերայ բեռ մը ոսկի, մէկ՝ արծաթ, կը տայ պառւուն. — Դէ՛ կե, կ'ասայ, ձի դօղայ էրայ. ես տ'եհամ հետ իմ հացին։

Լաճ կ'առնայ առուծի ձըգեր կ'եհայ մօտ մէր, առուծներաց անուն կը տայ

լաճ. առուծները կը հասնին մօր, մէկ մէկ ոտ կը ճըվտայ, մէկ՝ էն ոտը, կ'եղնի երկու-կտոր, կը թալեն երկնուց իրեն, կը գայ տակ: Կը մնայ դէվ. դէվ կ'էլնի զինք պատից կը թալայ տակ. առուծի ձըգեր կը հասնեն բունեն, ճվտեն, թալեն յերկ-նուց իրեն, կը գայ տակ, կ'եղնի հըղար կտոր: Լաճն, ուր կնիկներ, ուր առուծ-ներ կը մնան ումր կէնեն:

Ինոնք հասան ուրանց մուրատին,
Աստուած մե՛ հասու մեր մուրատին:

7.

ՆԱՀԱ՛ՊԵՏԵՆՑ ԱՂՋԻԿ

Նահապետենց Մ. Բաղիկ կէր ժամա-նակով, շատ զանգին էր. միտք արաց Երուսաղէմ երթալ. ուր լաճուն, ուր կնկան հետ ճամբահ ելան: Մէկ աննման աղջիկ մը կ'էր իրոնց. հասած աղջիկ ալա-յը. էդ աղջիկ տուրին գեղի ռէսի տուն պահ:

Ռէսի միտք փոխուաւ վէր էդ աղջկան. շատ կը դատի չկարնայ աղջկան սիրտն

տունէ. ջաղի պատուռ մը ձեռնով բան կ'աջողի։ Աղջիկն ի կ'ասի ուէսլին. Դէ որ ըսկուն ի, արե առաջ քե լօղգցուցեմ։ խօրօտիկ մը սապոն կը փրփրացուցի, քիթ-բերան, աչք սիրես փրփուրով կը լցի, կ'առնի օթակ մը քօ ուզածի պէս ուէսի թև թիկունք, գլօխ մօխ կը ջարդի, կը թողնի կը փախնի։

Բէս՝ սապոնի մումուռից աչքեր չկար-նայ բանայ. արունն էլ զինք կը բռնի, խելք կ'երթայ, կ'լյնի, չում հան հուն խելք գլօխ կուգայ, կ'էլնի կը լուացուի, սրբուի, կը մէզի ուր խաղքութնի վէրէն. կ'ասի. Հա՛մ կամքս չկատարաւ, համ խաղք էլայ մէջ աշխրին, գեղի ճօչի պատկի առջև։ Ի՞նչ անեմ։ Էլաւ գիր գրեց աղջ-կան հօր, թէ. Դուք ձեր աղջիկ թասլիմ արիք ձիկ, ամա աղջիկ օր հարիր մարդու հետ կուտայ կ'առնի։ Աղջկան հէր մէր հետ գիր առնելուն ուխտ մուխտ կը հա-րամի վէր ուրենց. կ'ելնեն եա կը դառ-նան։ Գեղ հասնելուն երկու օր կը մնայ, լաճ կ'օրօխկեն, որ երթայ աղջիկ տանի սպանի կուրիսի։ Լաճ կուգայ քուրոջ կա-սի. Հէրս մէրս էկան. ելի երթանք դէմ։ Երկուս կը հեծնեն մէկ ձի, կ'երթան ան-վէրի սարի մը գլօխ, կ'էջնեն. Նստած տեղ աղջկան քուն կը տանի։ ախբօր ձեռ

չերթայ որ քորն սպանի․ կը թողնի էն տեղ, ինք կը հեծնի ձին կը քաշուի․ աղջկան ծոցէն ալնախ գաղտիկ կ՚առնի․ ճամբան հաւք մը կ՚սպանի, ալնախ մէջ հաւքու արնին կը թաթխի, կը տանի հօր մօր նշանց կուտայ․ կ՚ասի․ Սպանիցի, էս էլ ձեր նշանաքան բիրի։ Հէր մէր կուգան տուն․ ուէս կ՚աւտացուցի ինոնց ուր խօսքեր։

Աղջիկ կուշտ մը ուր կունքն առեց․ ելաւ տեսաւ որ ոչ աղբէր կայ, ոչ աղբօր նմուշ, ոչ ինս, ոչ ջինս․ ելաւ իղարկ պըրահներըը վեր գնաց․ գնաց գնաց մոլրաւ էդ պրակներրաց մէջ․ գնաց հասաւ տեսաւ ջրի աւուզ մը․ աւուզի մօտ չինարի ծառ մը․ ելաւ չինարի ծառի գլօխ նստաւ։ Շատ կը մնայ քիչ մը մնայ, կը տխնայ որ Ռստմնայ թագաւորի լաճն էկաւ նէճիր․ էկաւ իջաւ էդ աւուզի չուրթն․ արև չինարի ծառի շուք զարկեր էր մէջ աւուզին․ շուքի մէջէն մարդուս՝ շուք էլ կ՚երևէր․ թագաւորի լաճ իրիչկեց դեհ ծառնըվեր, տեսաւ որ մէկ կծկուեր մէջ ճղերաց։ Ասաց․ Ի՞ն ես, ջի՞ն ես, ադամորդի՞ ես․ ցածր կ՚էջնես՝ էջի, թէ չէ՝ մէկ նետ ւանեղով քե կը բիրեմ ցածր։ Աղջիկն ասաց․ Ես ոչ ին եմ, ոչ ջին եմ․ ես էլ քե պէս Ադամորդի եմ․ ինչի՞ ձիկ կը զանես․ ես կ՚էջ-

նեմ, ամա տկլոր եմ. աղջիկ ալայ եմ. քո կապէն հան դիր էդա տեղը, դու քաշուէ մէյ դեհ. ես իջնեմ հագնեմ։

Աղջիկն իջաւ. կապէն հագաւ. Թագաւորի լաճն էկաւ տեսաւ որ մարալ աղջիկմ՚ ի՛, որ չուտես չխմես, իդոր իրեն իրիշկես։ Վերուց աղջիկ հեծուց ձին, տարաւ տուն։ Էլ ի՞նչ անի նէճիր։ Եօ ասեմ տարի մը, դու ասա երկու տարի՝ մնացին։

Ստեփուն Թագաւորն ուր լաճուն կասի. Եւր, գնա, տե, ո՞ր Թագաւորի աղջկան կը հաւնես, ուզեմ քե համար։

Տղէն կ՚ասի. Իմ ուզած՝ իմ բիրած աղջիկն է։

Հէր մէր կ՚ասեն. Որդի, ո՛վ գիտի էն ի՞նչ ջինս է. պրակներաց մէջ գնտած աղջիկ մը. մարդո՞ւց է, դիւանակա՞ն է, ի՞նչ է։

Չէ՛, կ՚ասի տղէն. իլլա՛հի ես էնիկ պիտի առնեմ։

Քո մուր՝ քո ճակատ, կ՚ասեն. աղջկան նշան կը դնեն. փսակ կ՚անեն. մէկ տարուց ետը Աստուած երկու լաճ կուտայ իրանց։ Զում էս օր՝ հարս փէսի հետ չի զրուցե։ Օր մը հարսն ուր տղէն դրե ուրուրոց. մէյդեհէն կ՚օրորի, մէյդեհէն զօվք կ՚ասի, մէյդեհէն կուլայ։ Փէսէն կ՚ուրդի (հանդիպի) վէրէն, կ՚ասի. Կնիկ, ինչի՞ կուլաս, քո դարդն ի՞նչ է։

Ա՛խ, ասաց, ըսկլի չես ասեր. ես էլ հէր ունեմ, մէր ունեմ, Չիգար ունեմ, կարօտցեր եմ. խօ՛ ես քարից չեմ ծներ, ծառի վէրէն չեմ բուսեր. ի՞նչ կ'ըլնի, թողնես երթամ հէրս մէրս տեսնամ՝ դառնամ։

Թագաւորի լաճ կանչեց ուր սարասքար, սէլեր դրողել իտու. 500 ջան էլ աղքար։ Սարասքարին ասաց. Քո խաթուն տանես ուր հօր տուն, դու կը դառնաս։

Էլան մէկ աւուր ճամբահ գնացին. իրիկուն օրդուն իջաւ ջրի մը բերան, կերակլուան, ըմէն մէկ ուր տեղ սաղախան. Սարասքար չքնէ։ Դու մ'ասէ զարկուերի խաթունի խորոտկութնին։ Էլաւ գնաց մօտ խաթուն, ասաց. Էս ձիկ խօսք տու, ես քո մէկ լաճ կըսպանեմ։

Խաթուն ասաց. Ես քե խօսք չեմ իտա. կ'ուզես իմ լաճն սպանի։

Սարասքարն իզարկ լաճու մէկն սպանեց։

Առաւտուն էլան բարձին գնացին. իրիկուն իջան. էլմ սարասքար գնաց մօտ խաթուն. չկարցաւ խօսք առեր էր. մէկէլ լաճն էլ սպանեց։

Էն մէկէլ իրիկուն սարասքար էլմ գընաց. զօրով նեղի իբե. Թէ չէ, ասաց, երկու տղէդ սպանիցի, քեզ էլ կ'սպանեմ։

Դու քո Աստուած, ասաց խաթուն․ Թող երթամ լուացուեմ, մէկ բերան Աստուած կանչեմ, հայր մեղայ ասեմ, դառնամ գամ։

Սարասքար չուան մը խըխր խաթունին ոտ կապեց, որ չփախնի․ գնաց ջրի բերան, չուան ինհան կապեց բութէ մը, ինքը փախաւ։ Գնաց հասաւ հովուու մը․ ասաց․ Հովիւ հովիւ, իմ հալաւ տամ քեզ, քո հալաւ տուր ձիկ։

Ասաց․ վէր իմ աչից։ փոխեցին։ Քօլօղմ՝ էլ ընցուց գլօխ, մազեր կտրտեց, քշեց գնաց ուր հօր տուն։

Մ․ Բաղիկ նստե վէր դրան, չըբուքն կը քաշի․ գնաց ձեռ պագեց․ բարև իտու, բարև առեց։ Դարձաւ Մ․ Բաղիկ հարցուց․ Քօլօղով լաճ ո՞ւստ կուգաս․ ի՞նչ կուզես։

Ասաց․ Աղա, լսեր եմ քե չատ մշակներ կան․ ձիկ էլ բռնի, բանի մը վերայ դիր․ հացբերան կ՚աշխատեմ։

Գնա, ասաց, մեր հաւերն արածա՛։

Էն թող մնայ դան, մենք դառնանք դեհ սարասքար։

Սարասքար ետ դարձե, Թագաւորի լաճուն ասե․ Քո կնիկ քո երկու լաճն սպանեց, գիշըրանց Թողեց փախաւ։

Թագաւորի լաճն ի՝ կառնի սարասքար

չասամ՝ էլ աղքատ կ՚էլնեն փորտել. կ՚եր-թան Մ. Բաղկանց տուն կ՚իջնեն. հարց փորձ կանեն, բան մը չեն հասկնայ: Խրի-կուան հաց կերան. Թագաւորի լաճն ասաց. Հէքաթ ասող մը չկա՞յ; ականջ անենք: Ջէն ինկաւ հաւարածի ականջ. Ես հէքաթ կ՚ասեմ: Մ. Բաղիկ կ՚ասի. Ամօթ ի. էն կեղտոտ տըղէն մի՛ հանէք Թագաւորի լաճու իրես: Թագաւորի լաճն իմցաւ. ասաց. Թողէք. թող գայ. բան մը չկայ. Էկաւ քօլօզով տըղէն, նստաւ. ասաց. Ես հէքաթ կասեմ, ամա գեղի ուէսն ու սարաւքար պիտի գայ ըստայ նստի. դռներ փակեմ, մարդ դուս չէլնի, չում ասեմ պրծնեմ: Կանչիցին սարաւ-քարն ու ուէսն էկան. դռներ փակեց, բերան իբաց. ուր գլխով ընցածներ հէ-քաթ էր շինե, ասաց: Որ խօսքն էկաւ վէր ուէսին, ուէսի փորի ցաւ բռնեց. խօսքն էկաւ վէր սարաւքարին, սարաւ-քարի փորի ցաւ բռնեց. ի՛նչ արին՝ դռներ չիբաց, չում ուր հէքաթ թըմըմեց: Դար-ձաւ ասաց. Դու իմ հէրն ես, էսա իմ աղբէրն ի, էսա իմ էրիկն ի, էնա էն սա-տանայ ուէսնի. էդա էլ սատանի քեռին սարաւքարն ի. ես էլ ես եմ:

Էն զահն ինե սարաւքարի վիզ կըթը-ռուցեն. ուէսի փոր կըթափեն: Հէրն ու

տըղէն, լրիկ ու կնիկ մէյմէկու վէրէն կ՚ուրախնան։

Երկնուց երեք խնձոր ինկաւ։

8·

ՀԱԶԱՐԱՆ ԲՈՒԼԲՈՒԼ

Ժամանակով թագաւորի մէկ՝ եկեղեցի մը շինել կուտայ· եօթն տարի կը շինեն· կ՚օծեն· թագաւոր կ՚երթայ որ աղօթք անի, կը տեսնայ որ բուք կ՚ըլնի, քիչ կը մնայ թագաւոր պիտի խեղդուի· մէկ էլ ի՞նչ տեսնայ· ճգնաւոր մը կայնե ուր առջև, կ՚ասի· թագաւոր, ապրած կենաս· խօրոտիկ եկեղեցի շինեցիր· ամա մէկ բան պակասի իսոր։ Բուք կը խսատի, ճգնաւոր աներևոյթ կ՚ըլնի։

Թագաւոր քակել կուտայ եկեղեցին· եօթն տարի կը շինեն, վէր առաջուան էլ աղէկ։ Կ՚օծեն· թագաւոր կ՚երթայ աղօթք անի· անասելի բուք մը կ՚էլնի· էլմ էն ճգնաւոր կ՚երևայ թագաւորին· կ՚ասի· թագաւոր, ապրած կ՚ենաս· շատ պոծաւ եկեղեցի մ՚ես շինե· ամա բան մը պակաս ի։

Մէկ էր քակել կուտայ Թագաւոր․ էսա դրիս՝ ինն տարի աշխատէք, կ'ասի, ընկուն շինէք, որ Ջիհանի իրեն նման չգըտնուի․ Կը շինեն․ կ'օծեն։ Թագաւոր կերթայ աղօթք անելու․ բուք կ'էլնի, ճգնաւոր կը տնկուի առջև․ կ'ասի․ Թագաւոր, ապրած կենաս, աննման ի քո շինած եկեղեցին․ ափսոս որ մէկ բան պակաս ի։ Հէտ հետուն Թագաւոր ձեռ կը թալի ճըգնաւորի փողպատ կը բռնի․ Դէ՛ ասա մէյ խեմ՝ իմ եկեղեցւոյ պակասն ի՞նչ ի․ էսա իրեք դիր դու քակել կուտաս։ — Էսա եկեղեցւոյն Հազարան բուլբուլ պիտի, որ վայելէ։ Ճգնաւորն աներևոյթ եղաւ։ Թագաւորն էկաւ տուն։

Իրեք լաճ ունէր էս Թագաւոր․ լաճեր տխան որ ուրենց հէր դարդ մ'ունի․ հարցուցին․ — Բաբօ՛, ի՞նչ դարդ ունես։

— Կը մէզեմ որ, ասաց, ես հալւորեր եմ․ ժամու համար Հազարան բուլբուլ պէտք է, ես ի՞նչխ էրթամ բիրեմ։

— Մենք կ'էրթանք բիրենք, ասին տըղէյներ։ Իլան իրեքն էլ ձիան հեծան գընացին․ մէկ ամսուց եսքը, տեղ մը հասան, տխան որ ճամբան իրեք ճուղ ի․ շիւարան կայնան։

Ճգնաւորն ռաստ էկաւ իսոնց, հարցուց․ Դո՞ր կերթաք, կտրիճներ։ —Կեր-

թանք Հազարան բուլբուլ բերենք․ չենք գիտեր ո՞ր ճամբով երթանք։

Ճգնաւորն ասաց․ Էս լէն ճամբան երթացող կը դառնայ․ միջին ճամբան երթացող՝ եա դառնայ եա չդառնայ․ ցածրի ճամբան երթացող՝ ումուտ չկայ որ դառնայ։ —Ինչի՞, —Կ'երթաս ասաց, գետ մը կայ, Հազարան բուլբուլի տէր էնի արև (կախարդութեամբ) աղու, չի խմեր․ դու պիտի խմես, ասես․ Օ՜խ, անմահութենի ջուր ի։ Գետ կ'ընցնես, մէկ պրակ կու գայ․ էն արև չարփուշ, իրխանց իսկե․ դու պիտի քաղես, հոտոտաս, ասես․ Օ՜խ արքայութենի ծաղիկ ի։ Պրակ կ'ընցնես, կը տեսնաս մէջ դեհ գէլ կապուկ, մէջ դեհ դառն․ գէլու առջև խոտ, գառու առջև միս․ պիտի վերցես միս դնես գէլու առջև, խոտը՝ գառու առջև։

Կ'ընցնես կ'երթաս կը հասնես ճոչ դուռ մը, մէկ փեղկը փակ, մէկ փեղկը բաց․ փակ փեղկը պիտի բանաս, բացը՝ փակես։ Ներս կը մտնես կը տեսնաս որ Հազարան բլբուլի տէրն քներ ի․ եօթն օր կը քնի, եօթն օր արթուն կը մնայ։ Թէ որ կարցաս ասածներս արերիր, Հազարան բուլբուլ կը բերես․ թէ չէ, ոչ կարնաս երթալ, ոչ կարնաս դառնալ։

Ճոչ աղբէր լէն ճամբով գնաց․ գնաց

գնաց հասաւ քօշկ ու սարէ մը · ասաց · Ինչի՞ պիտի երթամ սպանուեմ · կը մտնեմ էսա տուն ծառայութեն կ'անեմ , կ'ապրեմ ։

Մինչեւ աղբէրն էլ միջին ճամբհով գնաց · գնաց սարն ընցաւ էն իրես , տեսաւ սարէ մը ճրագի պէս կը վառուէր · իջաւ , ձին կապեց · գնաց խաս բաղչէն կանաչ աթոռ մը կ'էր , ինոր վէրէն նըստաւ · տեսաւ մէկ սեւ արար մէջ երկինք մէջ գետին կուգայ · էկաւ , հասաւ , իսոր ճպոթմ' իզարկ , դարձաւ կլոր քար մը , կլորուաւ աթոռի տակ ։

Գանք դեհ պստիկ աղբէր ։ Պստիկ աղբէր ձին հեծաւ , ցածրի ճամբահ բռնեց գնաց · իտիւէ իտե ռաստ էկան գետ , արակ , գէլ , գառն , դուռն · ճգնաւորի ասածներ ըմէն էլ արաց · Ներս մտաւ տեսաւ որ Չէհրան մարալ աղջիկ մը պառկե · Հազարան բուլբուլ ուր վանդըկից իջաւ էկաւ վէր աղջկան սրտին հազար լեզւով կը ճըվլէր կը բըբլէր · աղջկան քուն տարաւ , տըղէն էլաւ Հազարան բլբուլն առեց , աղջկան իրեսի վէրէն էլ ուր պռկներով նշանմ' իդիր , ետ դարձաւ ուր ճամբահ ։

Աղջիկ քնուց արթնցաւ տեսաւ որ Հազարան բլբուլ չկայ · գիտցաւ որ տարեր են , բռռաց · Դո՛ւռ , բռնէ ։ Դուռն ասաց ·

Աստուած հետն ըլնի, իմ բաց փեղկ փակեց, փակ փեղկն իբաց։

Յուսաց. Գէ՛լ, Գա՛ռն, բռնէք։

Ասին. Աստուած ուր հետն ըլնի. խոտ գառուս իտու, մեռ՝ գէլուս։

Յուսաց. Պրա՛կ, բռնի։

Ասաց. Աստուած ուր հետն ըլնի. դու ձիկ արերիր չարփուշ, էնիկ արքայութնի ծաղիկ արաց։

Յուսաց. Գե՛տ, դու բռնի։

Ասաց. ինչի՞ բռնեմ. դու գիկ արերիր աղու դուեխ, էնի արաց անմահութնի ջուր. թող երթայ, Աստուած ուր հետն ըլնի։

Աղջիկ անճար մնաց. ելաւ ուր ձին հեծաւ։ Թող մնայ վէր ձիուն։

Լաճն էկաւ հասաւ ճգնաւորի մօտ. բարև իտու. ասաց. Գօ՛ քե Հազարան բլբուլ։ Աղբէրներն հարցուց. ասաց. Ջեն իկե։ Հազարան բլբուլն իտու ճգնաւորին պահ. ինք գնաց դեհ լէն ճամբահ. ճոչ քաղաք մը հասաւ, գնաց կերակուլ իփողի մը մօտ հաց ուտելու. տիսաւ որ ուր ճոչ աղբէր էնտեղ ծառայ ի. գաղտիկ ճանչւորութեն իտու. առեց ետ դարձաւ. իդիր մօտ ճգնաւոր, ինք գնաց դեհ միջնեկ աղբէր։ Գնաց, սարից չուռ առեց էն իրես, տիսաւ քօշկ սարէ մը՝

գնաց հասաւ քօշկ ու սարք մը․ ասաց․ Ինչի՞ պիտի երթամ սպանուեմ․ կը մտնեմ էսա տուն ծառայութեն կ'անեմ, կ'ապրիմ։

Մինչեւ աղբէրն էլ միջին ճամբհով գնաց․ գնաց սարն ընցաւ էն իրես, տեսաւ սարէ մը ճրագի պէս կը վառուէր․ իջաւ, ձին կապեց․ գնաց խաս բաղչէն կանանչ աթոռ մը կ'էր, ինոր վէրէն նըստաւ․ տեսաւ մէկ սև արար մէջ երկինք մէջ գետին կուգայ․ էկաւ, հասաւ, խոր ճպոթմ' իզարկ, դարձաւ կլոր քար մը, կլորուաւ աթոռի տակ։

Գանք դեհ պստիկ աղբէր։ Պստիկ աղբէր ձին հեծաւ, ցածրի ճամբահ բռնեց գնաց․ խուխէ խտև ռաստ էկան գետ, պրակ, գէլ, գառն, դուռն․ ճգնաւորի սասածներ ըմէն էլ արաց․ ներս մտաւ տեսաւ որ ջէհրան մարալ աղջիկ մը պառկե․ Հազարան բուլբուլ ուր վանդըլկից խջաւ էկաւ վէր աղջկան սրտին հազար լեզւով կը ճվլէր կը բըլէր․ աղջկան քուն տարաւ, տըղէն էլաւ Հազարան բլբուլն առեց, աղջկան իրեսի վէրէն էւ ուր պռկներով նշանմ' իդիր, ետ դարձաւ ուր ճամբան։

Աղջիկ քնուց արթնցաւ տեսաւ որ Հազարան բլբուլ չկայ․ գիտցաւ որ տարեր են, բոռաց․ Դո՛ւռ, բռնէ։ Դուռն ասաց․

Աստուած հետն ըլնի, իմ բաց փեղկ փակեց, փակ փեղկն իբաց։

Բռնաց. Գէ՛լ, Գա՛ռն, բռնէք։

Այրն. Աստուած ուր հետն ըլնի. խոտ զատուս իտու, մխ՛ գէլուս։

Բռնաց. Պրա՛կ, բռնի։

Ասաց. Աստուած ուր հետն ըլնի. դու ձիկ արերիր չարփուշ, էնիկ արքայութնի ծաղիկ արաց։

Բռնաց. Գե՛տ, դու բռնի։

Ասաց. ինչի՞ բռնեմ. դու զիկ արերիր աղու զուես, էնի արաց անմահութնի ջուր. թող երթայ, Աստուած ուր հետն ըլնի։

Աղջիկ անճար մնաց. ելաւ ուր ձին հեծաւ։ Թող մնայ վէր ձիուն։

Լաճն էկաւ հասաւ ճգնաւորի մօտ. բարև իտու. ասաց. Գօ՛ քե Հազարան բլբուլ։ Աղբէրներն հարցուց. ասաց. Ջեն իկե։ Հազարան բլբուլն իտու ճգնաւորին պահ. ինք գնաց դեհ լէն ճամբահ. ճոչ քաղաք մը հասաւ, գնաց կերակուլ իփոշի մը մօտ հաց ուտելու. տիսաւ որ ուր ճոչ աղբէր էնտեղ ծառայ ի. զաղտիկ ճանչւորութեն իտու. առեց ետ դարձաւ. իդիր մօտ ճգնաւոր, ինք գնաց դեհ միջնեկ աղբէր։ Գնաց, սարից շուռ առեց էն իրես, տիսաւ քօշկ սարէ մը՝

ճրագի պէս . իջաւ, ձին կապեց, գնաց խաս բաղչէն, կանանչ աթոռի վէրէն նըստաւ . սև արաբն էն դեհէն էկաւ, բօռաց ։ էյ, էդա տեղ անտէ՞ր ի, որ իկեր նստեր ես ։ վերուց ճըպող պիտի զարնէր, վալա՛յ տըղէն էլ ճարպիկ էլաւ, խըլեց Արաբու ձեռաց ճպող, իզարկ ինոր . էն գլոհն ինե Արաբ դարձաւ քար ։ Տըղէն ուրն ուր առաց . Կայ չկայ, իմ աղբէր ըստեղ եօխ են արե ։ Ջեռաց ճպողով էն կօլօն քարերացն իզարկ, տեսաւ քարեր ըմէն դարձան մարդ, էլան կը փախնեն ։ Խրխչկեց որ ուր աղբէր մէջեր չի . տեսաւ աթոռի տակն էլ քար մը կ'էր, ճպողով իզարկ, էլաւ որ ուր աղբէրն ի, կը փախնի ։ Կանչեց իտիւէն, Աղբէ՛ր, մի՛ փախնե, ես քո ախբէրն եմ ։ Դարձաւ որ՝ հա՛ ։ Մէյտեղ էկան մօտ ճգնաւոր ։

Հազարան բլբուլն առին, իրեք աղբէր մէյտեղ կուգան . ծարուըցեր են, հասան հորի մը բերան . պստիկ ախբէր իջուցին որ ջուր հանի . ջուր քաշիցին, ախբէր թողին մէջ հորին . երկու աղբէր մէյմէկու ասին . էն որ հեռ մե ըլնի, մեր հօր առջև մենք ի՞նչ իրիսով էլնենք ։ Առին Հազարան բլբուլ գնացին ։ Հասան տունը, հօրն ասին . Մեր պստիկ աղբէր սպանուաւ . Հազարան բլբուլ մենք առինք բիրինք ։ Հա-

զարան բլբուլ կախիցին ժամու մէջ, ըսկի ոչ ձէն կ՚ածի, ոչ չունչ։

Աղջիկն ուր ձիով հասաւ մօտ թագաւոր, ասաց. Էն կտրիճ ո՞վ ի որ իմ Հազարան բլբուլ բիրեր ի։ Երկու ախբէրն ասին. Մենք ենք։ — Ի՞նչ տեսաք վէր ճամբհին։ — Բան մը չտեսանք։ — Բիրող դուք չէք. դուք գող էք, ասաց։ Բռնեց իդիր բռնատուն, թագաւորն էլ, երկու լաճն էլ, ինք զաւթեց քաղաք նստաւ։ — Ձում Հազարան բլբուլ բիրող չի գայ, ձե ազատել չկայ։

Իսոնք թող միան ըստայ, մենք երթանք դեհ տըղէն։

Գարի քաղող կնիկներ տըղէն հորից հաներ են, էն մէկ պառաւ արե ուր հոգեզաւակ։ Քանիմ՝ չարաթ ընցաւ, ձէն ձէնոց ինկաւ՝ դուս, էկաւ հասաւ չում տըղին, թէ՝ Հազարան բլբուլ բիրողն իկեր ի, տէրն էլ խտիւէն իկեր ի։ Մէկ օր պառւուց իզին առեց տըղէն, ասաց. Երթամ քաղաք, նոր ժամն՝ էն չինե, թամաշայ անեմ։ Գնաց։ Գնաց ուրենց տուն, տեսաւ որ ոչ հէր կայ, ոչ ախբէրներ։ Հարցուց. Ո՞ւր են։ Ասին. Հազարան բլբուլի տէրն իկե, բռնե դրե բռնատուն։ Տըղէն գնաց բռնատնից իհան հէրն ու ախբէրներին։ Աղջիկն ասաց. Ես Հազարան

բլբուլի տէրն եմ. դու ձիւնէ չե՞ս վախենայ։ Ցրղէն ասաց. Ես Հազարան բլբուլի բերողն եմ. չեմ վախենայ։

Աղջիկ հարցուց. վէր ճամբէին ինչ ու ի՞նչ տեսար։

Ցրղէն պատմեց գետ, պրակ՝ դէլ, դաշտ, դուռ. ինչ որ արեր էր, ինչ որ տեսեր էր։ —Թէ որ խօսից չե՞ս աւատայ, վէրս իրեւսիդ է, նշան մը կայ. իմ նշանածն ես դու։ —Հալալ ըլնի քե, տաց աղջիկ. Հարսնիս կազմեցին. դնացին ժամ փըսակուելու. Հազարան բլբուլ առեց ճըլճըլալ՝ հազար հազար եղանակներով ձէն կը հանէր. տէլալա՛յ կը ճվլա՛յ, տէլալա՛յ կը ճվլա՛յ։

Երկնուց իրեք խնձոր ինկաւ։

9.

ԻՇԽԱՆԱԶՈՒՆԻ ՄԸ ԲԱՂԴ
ԵՒ
ԱՂՈՒԷՍԻՆ ԽԵԼՔԸ

Իշխանազուն երիտասարդ մը սիրահարած էր Թագաւորի դստեր. երբ չյաջողեցաւ զայն կին առնել, հրաժարեցաւ

քաղաքէն և ազգէն, և գնաց հեռու անտառի մը մէջ կը բնակէր, և կ'ապրէր օր ըստ օրէ որս մ'ընելով։

Օր մը սովորականին հակառակ երկու որս ունեցաւ․ 'ի դարձին՝ տեսաւ որ իւր բնակարանին մերձ նստած է աղուէս մը․ որ անմիջապէս վազեց մարդուն ձեռքէն որսերն առաւ, շնորհքով մաքրեց պատրաստեց, մէկն բերաւ մարդուն, միւսն ինքն ճաշակեց։

Հետևեալ առաւօտ դարձեալ որսի գնաց․ և այս անգամ երեք որս որսաց։ Ուրեմն նոր հիւր մ'ալ ունիմ այսօր, ասաց։ Եկաւ, տեսաւ ահագին արջ մը նստեր առընթեր աղուէսին։ Վազեց աղուէսն, առաւ որսերը, պատրաստեց․ և երրորդ մասն արջին հրամցուց։

Յաջորդ օր չորս որս որսաց իշխանազունն․ և 'ի դարձին՝ տեսաւ ահա գայլ մը բազմեր է արջին հետ։ Դիմաւորեց աղուէսն, առաւ որսերը, պատրաստեց և բաժանեց։

Միւս օր՝ հինգ որս որսաց․ դարձաւ, տեսաւ ամեհի առիւծ մը վեհափառ բազմեալ։ Աղուէսն իր պաշտօնը կատարեց ըստ առաջնոյն։

Գիշերը լուսցաւ․ նորէն գնաց իշխանազունն յորս, և այսօր բերաւ վեց որս․

բլբուլի տէրն եմ. դու ծիզնէ չե՞ս վախե-նայ։ Ցողէն ըսաց. Ես Հազարան բլբուլի բերողն եմ. չեմ վախենայ։

Աղջիկ հարցուց. վէր ճամբէքին ինչ ւի՞նչ տեսար։

Ցողէն պատմեց գետ, պրակ՝ գէլ, գառ՝ դուռ. ինչ որ արեր էր, ինչ որ տեսեր էր։ —Թէ որ խօսիս չե՞ս աւատայ, մէջս ինեսիր էլ նշան մը կայ. իմ նշանածն ես դու։ —Հալալ ըլնի քե, ըսաց աղջիկ. Հարսնիս կազմեցին. դնացին ժամ փը-սակուելու. Հազարան բլբուլ առեց ճըլ-ճըլալ՝ հազար հազար եղանակներով ձէն կը հանէր. տէլալա՛յ կը ճլվլա՛յ, տէլալա՛յ կը ճլվլա՛յ։

Երկնուց իրեք խնձոր ինկաւ։

9.

ԻՇԽԱՆԱԶՈՒՆԻ ՄԸ ԲԱՂԴ
ԵՒ
ԱՂՈՒԷՍԻՆ ԽԵԼՔԸ

Իշխանազուն երիտասարդ մը սիրահա-րած էր Թագաւորի դստեր. երբ չյաջո-ղեցաւ զայն կին առնել, հրաժարեցաւ

քաղաքէն և տունէն, և գնաց հեռու ան-տառի մը մէջ կը բնակէր, և կ'աղօթէր օր ըստ օրէ որս մ'ընելով։

Օր մը սովորականին հակառակ երկու որս ունեցաւ. 'ի դարձին՝ տեսաւ որ իւր բնակարանին մերձ նստած է աղուէս մը. որ անմիջապէս վազեց մարդուն ձեռքէն որսերն առաւ, շնորհքով մաքրեց պատ-րաստեց, մէկն բերաւ մարդուն, միւսն ինքն ճաշակեց։

Հետևեալ առաւօտ դարձեալ որսի գնաց. և այս անգամ երեք որս որսաց։ Ուրեմն նոր հիւր մ'ալ ունիմ այսօր, ասաց։ Եկաւ, տեսաւ ահագին արջ մը նստեր առընթեր աղուէսին։ Վազեց ա-ղուէսն, առաւ որսերը, պատրաստեց. և երրորդ մասն արջին հրամցուց։

Յաջորդ օր չորս որս որսաց իշխանա-գոյնն. և 'ի դարձին՝ տեսաւ ահա գայլ մը բազմեր է արջին հետ։ Դիմաւորեց աղուէսն, առաւ որսերը, պատրաստեց և բաժանեց։

Միւս օր՝ հինգ որս որսաց. դարձաւ, տեսաւ ամեհի առիւծ մը վեհափառ բազ-մեալ։ Աղուէսն իր պաշտօնը կատարեց ըստ առաջնոյն։

Գիշերը լուսցաւ. նորէն գնաց իշխա-նազունն յորս, և այսօր բերաւ վեց որս.

վասնզի ինձ (ղափլան) գազանն եկած էր ։

Վեցերրորդ օր գնաց, և եօթն որս որսալով դարձաւ․ տեսաւ ահա մեծ հաւք մը, որ մէկ թև կը բանայ Բաղդադ, մէկ թևն կը հասնի Բասրայ․ Անկա Զմրութ կ'ըսուի այդ թռչունն ։ Աղուէսն ժիր ծառայի մը պէս՝ պոչ ցնցելով կը վազէ Իշխանազունին ընդ առաջ․ յարգանքներ մատուցանելով, կ'առնու ձեռքէն որսերը, կը պատրաստէ, և նախ որսորդին կուտայ, մնացեալն ևս հաւասար կը մատակարարէ իւրաքանչիւրին ։

Զարմանքն և սարսափ բռնած է Իշխանազունը․ կը սոսկայ գազանաց գազանութենէն․ կը հիանայ անոնց ընտելութենէն ։ Բայց ի՞նչ կ'ուզէ․ ահա սքանչելի գերդաստան մը իրեն․ ընտանիք, բարեկամք և ընկերք ։ Կը շարունակէ մարդ իւր այս նախանձելի վիճակը, և օրէ օր կ'անդորրանայ ։

Ասոնց բնակավայրին մերձ կայծակնահար եղած հաստաբուն կաղնիի մը կոճ կար, որ յայսմհետէ պիտի անուանուի Աղուէսի գահ․ և անոր առջև տարածուած մարգագետինն՝ ասոնց խորհրդավայր կամ հրապարակն ։

Երբ Իշխանազունն մեկնեցաւ ըստ սովորութեան երթալ յորս, պարոն աղուէսն

ելաւ իր գանը, ատեանը հրաւիրեց գաղանները, երախտագիտութեան ճառ մը խօսեցաւ, և պարապ դրաւ իւրաքանչիւրին վրայ՝ այսուհետև ճանչնալ և կոչել զիշխանազունն իրենց Տէր · և ծառայել անոր սրտի մտօք և անձնուիրութեամբ : Կենդանիք իրենց մէկ թաթիկը բարձրացուցին և հաւքն իր մէկ թևը բացաւ՝ ի նշան ուխտի հաւատարմութեան :

Ուրեմն, առաջարկեց աղուէսն, այսօրուընէ սկսելու ենք մեր անձնուիրութիւն ցոյց տալ · գիտէք ամենքդ որ մեր Տէրն մարդ է և ազնուական մարդ · անոր պէտք է պատուական վրան մը, մէջը բազմոցներ, անկողին, և ուտելու խմելու անօթներ · արդ այսօր այս պէտքերը պիտի հոգացուին · ո՞վ ձեզմէ յանձն կ՚առնու այս ծառայութիւնս ընել :

Ամենքն վճռեցին թէ՝ Անկա Զմրութն : Յանձն առաւ նա · վայրիկ մի ևս, և ահա իր թևոց վրայ բարձած բերաւ ամենայն ինչ : Աղուէսս կանգնել տուաւ վրան, կազմաւորեց կարասիներ և անկողին · իրիկուն դարձաւ Տէրն, դիմաւորեցին ամենքը, և հանգուցին 'ի փառաւոր հանգիստ : Որսերը մաքրեց աղուէսն . և իշխանազունին բաժինը սանով եփեց, չնորհքով սեղան մը պատրաստեց · ճաշակեց Տէրն գոհութեամբ

և դողութեամբ հանդերձ ։ Լափեցին կենդանիքն ալ իրենց բաժինը ։

Հետևեալ առաւօտ գնաց իշխանազունն 'ի յորս , և Գ· Աղուէսն տուտն երերելով ելաւ բազմեցաւ 'ի գահ , հոն ժողովեցան անասնականք ։ Գահակալն սկսաւ նոր առաջարկութիւն մ'ընել ։

«Գիտէք որ , ըսաւ , Աստուած մարդն ստեղծեր , անոր օգնական մ'ալ ստեղծեր է · այս աւանդութիւնը մեր պապերը իրենց պապերէն լսելով պատմած են մեզ· Ադամ ամեն կենդանիք աչքէ անցուցեր , զոյգ զոյգ տեսեր · Աստուծմէ գանգատ ըրեր իր մինակութեան համար , ուստի Աստուած՝ Եւան տուեր անոր ։ Արդ Աստուծոյ հակառակ , բնութեան հակառակ է որ մարդ մինակ ապրի · մեր Տիրոջ կնիկ մը պիտի , կնիկ մը՝ որ թագաւորի աղջիկ լինի · ո՞վ յանձն կ'առնու ձեզմէ այս ծառայութիւնն ընել ։

Կը խորհին · — Թէպէտ յօժար ենք ամենքս ալ , կ'ըսեն , բայց միջոցներ կը պակսին մեզի · իբրև գազան՝ կը հալածեն չեն թողուր մերձենալ պալատին կամ պարտիզին · կ'աղաչեն Անկա Ջմրութը , որ այս պաշտօնն ալ ինքն կատարէ ։

Կը հաւանի հաւքն , և կը խոյանայ արքունի բուրաստանը , ուր արքայադուստր

եղած նաւզ 'ի նաւզ կը ճեմէ ծաղկանց և փարղեննեաց այցելու․ կը յափշտակէ զաղջիկն․ և ահա աղջիկ զինք կը գտնէ անուելի գազանաց վոհմակի մը մէջ․ ուր սակայն մեծ յարգանքներ կ'ընդունի … մանաւանդ Գ․ Աղուէսն ձևեր կը ձևանայ, լեզու կը թափէ, կ'ապահովէ, կ'անդորրացնէ ։

Այսօր Իշխանազունն ութն օրս որսացած էր․ և իր մտքէն կ'անցընէր թէ ո՞վ գիտէ ի՛նչ նոր գազան մ'ալ եկած է իրեն հիւր կամ ընկեր ։ Այլ սակայն քանի՜ մեծ եղաւ իւր հիացումն, երբ իրիկուն դարձաւ․ աղուէսն սովորականէն աւելի անձկոտոր կը լինէր, կը քծնէր, կ'երկրպագէր․ և գազանք առ հասարակ հպատակօրէն կ'առաջնորդէին իրեն 'ի վրան․ ուր մտնելով տեսաւ իւր սիրահար արքայադուստր․ քանի՛ մեծ եղաւ երկոցունց ալ ուրախութիւնն․

Թագաւոր կը լսէ թէ իր դուստր յափըշտակեցին, սպառազէն չորս սուրհանդակ կը հանէ, որ ուղղակի դէպ՝ անտառ կուգան․ Աղուէս կը տեսնայ 'ի հեռուստ և կը դուշակէ․ հրահանգ կուտայ արջոյն և գայլոյն, կ'երթան երեքը կը պատառեն, մէկն ողջ կը ձգեն, որ կը դառնայ արքային կը պատմէ ։

Արքայն ութն սպառազէն և կը հանէ ․ անոնց դէմ կը դրկէ աղուէս զառիւծն և զինձն, նոյն պատուէրը տալով․ որք եօթն կը պատառեն, մէկը միայն ողջանդամ կը դառնայ և կը պատմէ արքային ։

Արքայն բանակ կը կազմէ անտառը դալու, Աղուէս կը գուշակէ զայն․ ուստի 'ի դաւ կ'ամբառնայ, կ'ազդարարէ գա-զանաց որ երթայ իւրաքանչիւր իւր ազգը բերէ ։ Հետևեալ օր Խլխանազունն որսէն դառնալով բոլոր անտառը գազանօք լի կը գտնէ․ բայց իր ընտանիները կ'առաջնոր-դեն իրեն, և աղուէսը կը բացատրէ խնդ-դիրն ։ Ի վաղիւն արքայի բանակը կուգայ․ գազանաց բանակ կը ճակատամարտի, և գազանք կը յաղթանակեն․ իրենց Տէրն կը տանին կը թագաւորեցնեն մայրաքա-ղաքի մէջ․ Աղուէսն փոխարքայ կը լինի, միւսներն ալ նախարար․ այսպէս կը բաղ-դաւորին ամենքն ալ ։

Երկնուց երեք խնձոր ինկաւ ։

ԵՐԳՔ ԵՒ ՆՈՒԱԳՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Կարծենք հարկ չկայ այս մասին երկար գրելու․ ծանուցեալ է ամենուն թէ, ուր որ ծաղկունք, ծառք, ջուրք, թռչունք, մարգ, արտորայք, լերինք, անտառք, բուրաստանք, հովաստանք իրենց հայրենիք կը ճանչնան և Աստուածատուենկ եղեմայ վայր․ այն աշխարհի մարդիկ 'ի հրեշտակաց աշակերտեալ, 'ի բնութենէ զգածեալ ամեն հոգի երգող կը լինի և նուագող։ Մեր աշխարհի մէջ կը տեսնաս ուղևոր մը իր երկայն ուղևորութեանը մէջ կ'ընթանայ՝ խաղ ասելով․ յերիվար հեծանող՝ իր ձիոնը լաւ քալեցնելու համար խաղ մը կ'ըսէ․ դրաստավարն, եզնավարն, մանաւանդ սայլավարն և հերկարարն պատշաճ իմաստով պատշաճ եղանակաւ քաղցրաձայն կը կանչեն խաղեր․ և այնքան սովորած են անասունք, երբ վարիչն լռէ, անասունն կը կենայ։ Ձմեռն ձիուն կը սրբէ, խաղ կըսէ․ փայտ կը կտրէ, խաղ կ'ըսէ․ բուրդ ու

թամպակ կը դղէ , կը մանէ , կամ շալ ու կտաւ կը գործէ , խաղ կ'ընէ ։ Տիկինը նստած կով կամ այծ կը կթէ , երգ մը կը մրմնջէ · ճախրակ կը մանէ , մանուկը կ'օրօրէ , խմոր կը շաղախէ , աւել կ'ընէ , քաղհանք կ'ընէ ,— ծաղիկ կը փնջէ , միրգ կը հաւաքէ , բանջար կը ժողովէ , կար կը կարէ , վերջապէս ինչ որ կ'ընէ , աղուական ձայնիւ եղանակ մը կը մրմնջէ ։

Հիւսն իր ուրագ զարնելուն , դարբինն երկաթ ծեծելուն , որմնաշարն աղիւս շարելուն , սարակն այգին փորելուն , քանքանն ջրհոր փորելուն կամ հորդելուն , անպատճառ բան մը կը մրմնջան ։ Մանաւանդ շատ հանդիսաւոր է խաղողի կութն այգեստանցւոց համար · և ս առաւել խոտի և ցորենի հունձն գեղացւոց համար · երբ գեղացւոց բազմութեամբ՝ ուխտին , երիցուն , եկեղեցւոյն , վանքին , աղային արտը կը հնձեն , զուռնան նաղարան կը դղրդեցընէ լեռները , քաղւորներ մանգաղ 'ի ձեռին կ'երգեն , կը կայտռեն , կը կաքաւեն , և հունձքին ետևէն ջրի պէս արագ վազելով կը կտրեն կը լափեն արտը · իսկ երբ լմննան , իրիկունները խաղ ասելով , պար բոլորելով մինչև գիշերուան քանի մը ժամեր կ'անցունեն , բացօթեայք պառածուելով քնքոյշ օրայից վրայ կամ ցա-

մինչ 'ց գետին՝ երջանիկ քուն մը կը քնանան ։ Իսկ տօնի, հարսանեաց, խնջոյից, և այլ հանդիսաւոր աւուրց համար յատուկ յատնուկ, հարուստ հարուստ խաղեր ու տաղեր կան, թէ հոգևոր թէ մարմնաւոր, թէ հայերէն թէ տաճկերէն կամ քրդերէն, 'ի ձեռին ունելով ջութակ մը կամ տաւիղ մը․ կը խառնեն նաև այս խաղուց հետ գովասանք 'ի վերայ Նարեկացւոյն, Ս. Կարապետին, Ս. Երուսաղէմին․ երբեմն ևս ապաշխարութեան յորդորներ, մեր անգիր աշուղներ ։

Երգող և նուագող վրայ խօսած ժամանակ, չեմ ուզեր հեռանալ մինչև Գողթնեաց երգերը, չեմ ուզեր ուշադրութեան առնուլ թամբիրն, ցուցն, պարն, լարն քնարն, կիթառն, կայթիռն և կաքաւիլն ։

Ոչ ալ մեր Մեզերդեաց և Շարականաց նկատմամբ պիտի խօսիմ, որք յատուկ Հայկական մնաց սեպհական հանք են Աստուածային զարդուց անզուգական և անգին ականց գոհարեղինաց՝ իրենց բարձրութեամբ և վսեմութեամբ ։

Այլ սակայն Ս. Գրիգոր Նարեկացւոյն մէկ երկու տաղերը 'ի մէջ կը բերեմ, որոյ տիպն և ոճն և եթ Նորին Որբութեան իբրև 'յատուկ համարուած են․ բայց ուշադիր մը մինչև ցայսօր իսկ Նարեկեան կընարին

(սահմանին) Հայոց ժողովրդական բերան գտնուած երգերէն կրնայ համոզուիլ թէ նոյն ինքն Ս. Գ. Նարեկացւոյն ոճն ոչ թէ իր յատկական անձնական, այլ հայրենի գաւառի տեղական ժողովրդեան ընդհանուր ոճն է։

Ահա Սրբոյն երգերէն մաս մը։

ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԵԱՆ

Երգ զարմանալի, երգ չարժվարժենի,
Տեղի եղեր բարեկերտին.
Խորհուրդ խորհուրդ համերամ,
Զարդ երամից զարդ։
Նոճ 'ի նոճ յեռից,
Սափոր եղեգնաչէն տնկոյն.
Մատն օրինօրէն, նշդարենի ռահ։
Ջօնից նռնենից 'ի մի կից կամար,
Նէճեմ թէ նէճեմ միջօրէի ժամ։
Աչքըն ծով 'ի ծով ծիծաղախիտ
Ծաւալանայր յպաւաւօտուն.
Երկու փայլակնաձև արեգական նման.
Շողն 'ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս։
Վարսիցն երամից զարդ,
Երամից զարդ ոլորս են առեալ,
Եռահիւսակն բոլորեալ այտիւք։
Ցայտէն նռնենի սարդիտոունկ
Գեղաչիտակ ծայրից ծաղկանց.

Որոյ սիւնն 'ի պտուին
Նուսխայօրէն կարկաջայր ։
Ջեռացն Եղիշոյ կամարակապ կապէր ,
Ատիճաղ պատիճաղ, սըտղի խըտղի երգով։
Հիւսէր զելեւելսն ընդ միմեանս ,
Հանդարտիկ խաղայր, Թիկնէթեկին ճեմէր ։
Բերանն երկթերթի, վարդն 'ի շրթանց կաթէր ,
Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն ։
Ծոցըն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,
Ծղիքն ծիրանի , մանուշակի հոյլք ։
Խնկեալ 'ի կնդրկէ բուրվառ
Հրով աստուածայնով լցեալ.
Ձայն քաղցրանուագ , որ 'ի նմանէ հնչէր ։
Գեղեցիկ պատմուճանաւըն զարդարեալ էր ,
Ի կապուտոյ , 'ի ծիրանւոյ , 'ի բեհեզոյ , 'ի յորդանէ ։
Գօտին արծաթափայլ ոսկէտըրտուն ,
Կամարակապ յականց, յականց շափիւղայ.
Մանրամասին յօրինուածով պճնեալ։
Անձինն 'ի շարժել մարգարտափայլ գեղով,
Ոտիցն 'ի գնալ շողն 'ի կաթել առնոյր ։

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան ։
Սայլն այն իջանէր 'ի լեռնէն 'ի Մասեաց.
Եւ 'ի վերայ նորա աթոռք են կարգեալ.
Եւ 'ի վերայ նորա գահոյք ոսկեղէնք .
Եւ 'ի վերայ նորա բեհեզք ծիրանիք .
Եւ 'ի վերայ նորա որդի արքայի .
Եւ յաջմէ նորա վեցթեւեան սրովբէք .
Յահեկէ նորա բազմաչեայ քրովբէք .
Առաջի նորա մանկունք գեղեցիկ .
Ի դիրկըս նոցա խաչն տէրունական .
Ի ձեռին նոցա սաղմոսարան և քնար .
Որք երգէին և ասէին .
Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան ։

Ածեալ են ածեալ զսայլիկն ,
Ածեալ են կացուցեալ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն .
Եւ ահա չխաղայր անիւն այն ։

Եթէ հարիւր բարդ խոյլըրձուն , վեց կորընկանն ,
Մին մանուշակ խրձադիզեալ.
Ի Մասեաց յաջ կողմանէն
Սայլիկն ածեալ են կացուցեալ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն ,
Եւ ահա չխաղայր անիւն այն ։

Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի
Եւ սամոտիքն ապրիշումի․
փոկեր չարած, չարանըման հոյլ մարգարիտ․
Եւ ահա չչարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն։

Այն ճորտն ճոխ էր և ճապուկ,
Ուռամիջակ, հաստաբազուկ,
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ․
Նա ձայն ածէր եզն ամոլին,
կանչիւն առնէր աթոռակին։

Եթէ եզինքն են սաթ սպիտակ,
Ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք․
Եղջիւրն ամեն խաչանըման․
Եւ մազն ամեն հոյլ մարգարիտ․
Եւ ահա չարժէր սայլիկն այն,
Եւ ահա խաղայր անիւն այն։

Ի յառեղէն առեալ չարժումն կուրծն սայլին,
Նա ձայն ածէր եզն ամոլին։
Յայլն 'ի Սինայ երկրորդ օրէնքն էր Մովսիսին։

Եւ այն հարիւր քարդ խոլրձան,
Այն նահապետքն են մարգարէք։

. . . .

Ի գիլ գայր 'ի գիլ, սայլիկն 'ի գիլ․
Եւ ճռնչալով գայր մտանէր յԵրուսաղէմ․
Եւ որդիք Նոր Սիօնի Նոր երգէին զայս ասելով,
փառք Քրիստոսի ամենազօր յարութեանն։

Կը տեսնա՞ս Ռշտունցւոյ մը երգն․ Աչքն 'ի ծով, Այտն նռնենի․ կուսին նկարագիր՝ բերանն երկթերթի․ վարդն 'ի շրթանց կաթէր․ Ծոցն լուսափայլ՝ կարմիր վարդով լցեալ․․․։ Կը տեսնա՞ս Ռշտունցի հօտաղեգնավարին սրբազնացուցեալ երգն․ ընտիր նկարագիր սայլին որայից խրձաբարձ։ Իսկ մէկ քանի բառեր դեռ կը մնան անվերծանելի։

Աստ արժան կը համարիմ դասաւորել դարուս ականաւոր Հայ բանաստեղծ Հ․ Գաբրիէլ Պատկանեանի մէկ երգն, որ Գողթնեաց բամբռամբ և Ռշտունեան քերթուածով յօրինած է․ կարծես բամբիռն 'ի ձեռին՝ հոգւով ողացեր յայլխոն ալեաց ծովուն Ռշտունեանց, անոր երեսաց և եզերաց բնակաց բնութեան ձայնիւ և ահատրանով շաղեալ իր երգն՝ կ'երգէ զՑուռութս Ցուլունան Շամիրամայ 'ի ծովն ծիրանի։ Եւ ահաւասիկ։

ԵՐԳ ԳՈՂԹԱՆ

Ցուլունան Շամիրամայ,
Ցուռութք յուլունան Շամիրամայ․
Ցուռութք 'ի ծով ծածանէին,
Ծածանէին 'ի ծով ծիրանի․
Ցուռութք 'ի ծով ծիրանի,
Ծիծաղախիտ ծածանէին։

Յուլունան Շամիրամայ,
Ցուռուռթք յուլունան Շամիրամայ.
Ծածանէին 'ի հով զովարար,
Ծածանէին 'ի հով ծիրանի.
Գիսակք 'ի հով հիւսիսոյ,
Աիրապատար տարուբերէին:

Յուլունսն Շամիրամայ,
Ծածկոյթք յուլունսն Շամիրամայ.
Ծածկոյթք զստինսն սքօղէին,
Սքօղէին յաչաց պատանեկաց,
Ծածկէին յաչաց պատանեկաց.
Յաչաղելով զստինսն սքօղէին:

Ցուռուռթք յուլունսն պատանեկուհւոյն,
Նռռունք յուլունսն Շամիրամայ.
Նռռունք կիսեալք քօղարկէին,
Քօղարկէին 'ի ծոց սպիտակ.
Նռռունք 'ի ծոց սպիտակ,
Պատուածովք քօղարկէին:

Յուլունսն Շամիրամայ
Ի՜ սպիտակ ծոց Շամիրամայ
Խնծորք անոյշք բուրէին.
Բուրէին խնծորք սպիտակք,
Խնծորք 'ի ծոց արքայուհւոյն.
Քաղցրանոյշ սփռէին բուրումն,
Ջանոյշ բուրումն տային:

Յուլունսն 'ի ծոց Շամիրամայ,
Ամբառնան բրգունք ստեանց.

Բրգունք անուշահոտ Նըռանց ,
Նըռանց կիսելոց , խնծորոց կիսաքոլոր ·
Անդ զմայլին 'ի հոտ անուշութեան ,
Զմայլին քաջիկք Ասորեստանի ։

Ցուռութք յուլունս Շամիրամայ ,
Ցուռութք 'ի ծոց արքայուհւոյն ,
Թողեն զազգն Արարատայ ·
Սրբեն յաչաց զարտասուս ,
Զարտասուս վասն մահուն Արայի ·
Տեսանեն զկարդոս 'ի գահի ։

Ծով է ծոց իւր , ծոց Շամիրամայ ,
Յուլունս 'ի ծոց մատաղաւուրց աշխար-
հակալին ,
Ամբառնան բրգունք սպիտակք ·
Ամբառնան բրգունք ստեանց ,
Ամբառնան բոլորակք ստեանց ·
Ի ծով անդ ծիրանի
Ծածանին ճաճանչք արփւոյն ։

Ցուռութք յուլունս արքայուհւոյն ,
Գործք ձեռաց Զրադաշտայ ,
Կառուցանեն զընթացս գետոց ,
Շինուցանեն զթափ նետից , նիզակաց ·
Կրթեցուցանեն զսիրտս քաջաց
Ի սէր մատաղաւուրց թագուհւոյն ·
Սրտացուցանեն զերիտասարդս ,
Ի գեղ երեսաց Շամիրամայ ։

Յուլունս Շամիրամայ
Ծիրանի ծածկոյթք ծածանէին ,

Ծիրանիք 'ի ծով տարուբերէին ․
Յուռութք 'ի ծով ծիրանի ,
Յուռութք 'ի ծոց արքայի ։

Յուռութք յուլունան յաղթողին
Զգէին հազարաւորս սրտից ,
Քարշէին բիւրաւորս թագակալաց ․
Ամենեքեան սիրով թագուհւոյն վառեալ,
Ամենեքեան վառեալք 'ի մարտ ․
Վառէր զնոսա Շամիրամայն սէր ,
Վառէր զնոսա ժպիտ շրթանց թագուհւոյն,
Յուռութք յուլունան նորա ։

Յուռութք Շամիրամայ յաչս ,
Յուռութք Շամիրամայ 'ի շրթունս ․
Զգեաց զաչսն և ետես զլեառն ․
Ըզլեառն, որ վկայ էր քաջութեան Հայկին ,
Որ տեսեալ էր զմահ Նեբրովթայ ,
Ահարուած երեքթևեան փքնին ։

Յուռութք 'ի շրթունս հզօր պատանեկուհւոյն ,
Ճպիտք շարժեն յազգս և լեզուս ․
Սեպացեալ լեառն փոխի 'ի քաղաք ,
Մանեակ 'ի պարանոց լերին ․
Գօտի ընդ մէջ լերին
Ածաւ ձեռամբ թագուհւոյն ,
Կառուցաւ Շամիրամակերտ ։

Յուռութք յուլունան Շամիրամայ
Ճողովեցին անդ զամենայն հրաշակերտս ․

Բրգունք երկնաչափք բարձրացան ,
Նկարիլ յերեւոյթս ծովուն ծիրանի ․
Ծովուն , առ որով կանգնեցաւ կոթողդ
Կոթող յաղթութեան մարին Նեբրովկայ ․
Անդ մնաց փառաւոր անուն յԱղթա—Մար։

Յուռութք յուլունման Շամիրամայ
Ծածանէին 'ի ծով անդ ծիրանի ․
Շամիրամ լուանայ զերեսս 'ի ծով անդ ․
Շամիրամ աւազան արար զծովն ․
Ծածանէին անդ գիսակք հերաց ,
Ծածանէին յուռութս ուլանցն ։

Այս տեղ կը յարենք քանի մը երգեր , որք թէպէտ գրական են , բայց ժողովրդական ոճ կը կրեն ․ և ինչպէս կ'երևի , աւելի հին աւուրց յօրինուածք չեն ։ Ասանցմէ մաս մը՝ որ «Գրիգորի Աղթամարցւոյ» են , օրինակուած է Աղթամարայ վանուց ձեռագիր տաղարանէ մը ։ Մէկ քանի տեղերը բառեր չկրցայ երբէք որոշել , ուստի կէտեր շարեցի ․ նոյնպէս քանի քանի տողեր և տուներ անգամ անհնարին լինելով վերծանել , խափան չգրի ։ Այս կարգին կը շարայարի Վանայ բնակչաց բերանացի խաղերէն մաս մը , որոց տեսակները և թիւը շատ են , բայց տանիք

բարձր և նուրբ չեն. անոնցմէ հատ հատ-
արդէն հրատարակեալ կան Բազմավէպ-
ներուն մէջ, Նոր քնարի մէջ. անցեալ
տարի Ս. էջմիածնի Միաբան Արժ. Երիս-
տակէս Վ. Մեսրոպեանի՝ Վանեցւոց և Մշե-
ցւոց երգոց հրատարակած տետրակին մէջ,
և այս տարի Կ. Պոլիս «Վանեցի սրտանց ուխտ»
սիրուն գրքոյկին մէջը, զորս հաւաքեց և
հրատարակեց Վարագայ Միաբան, իմ
սիրեցեալ աշակերտակից և պաշտօնակից
Արժ. Արիստակէս Վ. Տէր Սարգիսեանն,
հանդերձ առածներով և առեղծուածնե-
րով, ըստ Վանեցւոց բարբառոյն. յորում
նշանաւոր կը համարուին իրենց արժանեօք
հրատարակողին բուն հեղինակած նամակ-
ները, յորս կը տեսնուի մեծի ճարտարու-
թիւն և զգացմանց փափկութիւն. փափա-
քելի էր որ եղերական մասանց հետ զուար-
ճարանութիւն չխառնուէր անտեղ տեղ. և
եթէ դասաւորելու փոյթ տարուէր խա-
ղերու և խօսքերու կտորներուն ու հան-
դամներուն, և առեղծուածներու լու-
ծումն դրուէր։ Այսու ամենայնիւ կը շնոր-
հաւորենք զինքն ։ և կը յուսանք քաջա-
լերուի շարունակել. և ես կատարելով զա-
հարուստ բերքեր բերել գրական հրապա-
րակին մէջ, գաւառացի Հայոց ժողովրդա-
կան բանաւոր բերքեր, որոց աւելին ծա-

Նօթ և ճարպիկ է ինքն, վասն զի նա չա՛տ դաւառներու մէջ կեցեր է ։

Ես ունէի թէպէտ մտադրութիւն 'ի ձեռինս գտնուած այնպիսի խաղերէն, առածներէն և հանելուկներէն առանձին գիրք մը կազմել. բայց արդ աւելորդ կը թուի. միայն մի քանի կտորները հրատարակելով կը բաւականանամ։

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ

ԵՐԳ Ի ԳՐԻԳՈՐԻՍԷ

Գարուն երեկ բլբուլն յայգին,
Ծաղկունքն ամէն շոհլոխ արին.
Մուժղուլուխ տարան վարդին.
Թէ՛ Եկիր, կուգայ քո սիրելին ։
Բախտացեալ հաւ բլբուլին
Ընդ կանաչիլ վարդի թփին,
Գընաց բլբուլն ելեր ղումրին,
Թ'արեկ և տես զելքըն վարդին ։
Ի մէջ բաղչին վըրան զարկին,
Վարդն քընէր մէջ կոկոնին.
Կանչեց բլբուլն մէջ ղողուլին
Ուրախացաւ 'ի տես վարդին ։
Գիշեր ցորեկ կամ երերուն,
Թէ ե՞րբ ելնէ ինքն 'ի քընոյն.

Եւ ես այրիմ 'ի դէմս վարդուն ,
Քանի՛ տեսանեմ զգոյն իւր սիրուն ։
Ո՞վ սիրելիք իմ հաւատար ,
Թէ դեղ գիտէք , արէք ինձ ճար .
Գընամ 'ի վարդըն զենահար ,
Եւ ծառայեմ մըտաւքս յաւժար ։
Բա՛մք Թըռչնոց , զՁեղ մոռացայ ,
Ցորժամ զքավրուր վարդըն տեսայ .
Ընդ անհեղ դոյնըն հիացայ ,
Ի թուրմանէ հոտոյն արբայ ։
Ի քէն հայցեմ , վարդ պատուական,
Մի՛ համարիր զիս անարժան .
Կամ սպասաւոր 'ի քում դըրան ,
Մի՛ արձակեր զերիս ունայն ։
Սէր քո անհեղ անտանելի ,
Տըկար Թըռչունս զիա՞րդ լինի ,
Աւրտըս վառեալ յորովայնի ,
Թէ ինձ չառնես պատասխանի ։

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ Ի ԳՐԻԳՈՐԻՍԷ

Դու ես արեգակ լուսին 'ի լըրման ,
Զըր կայ քեզ աւրինակ 'ի յորդիս մարդկան ։
Պայծառ Արուսեակ 'ի յառաւօտու .
Ես եմ քեզ փափագ , յինէ ես հեռու ,
Իմ չուշան ծաղիկ , կարմիր վարդըն դու ։
Ծաղկեալ գեղեցիկ ոսկի Մադրասայ ,
Մենծրուք է քաշած , ջահերդ 'ի Նըմա ,

Աչուերդ է զարթել 'ի ներքոյ նորա ,
Կարդան անդադար անդ քաղցրաձայնողըն :
. . . . և ճռուողելըն ,
Գամ էդ հեռաւոր ճամբայդ որ քեզ կայ ,
Ըստանեամ Ըղձէքն , ափսոսալով խրհոյ ,
Լինի՛ թէ աչուերս քեզ արժանանայ :

Իմ սուն , իմ սրտիկս , իմ ուրախութիւն ,
Իմ շունչ , իմ հոգիս , իմ կենդանութիւն .
Աչացս առաջի ես՝ 'ի քուն 'ւ ի արթուն .
Դուշմանիդ արա լաւ . . . . . . հուն :

Նորաբոյս ծաղիկ և ծառ նշենենի ,
Երեսդ է պայծառ քան ըզթերթ վարդի .
. . . .

Շրթունքդ է շաքար ; ու խօսքդ ղանդ է .
Լեզուդ 'ի բերանդ , անգին Ղանդար է .
Համասփիւռ ծաղիկ հոտն 'ի քէն բուրէ ,
Զէ քեզ աւրինակ , քոյ ղուլ փարթամ է :

Առիւծն 'ի շամբին բազկօք զօրաւոր ,
Ամէն կենդանեաց դու ես թագաւոր .
Երբ աղաղակես ձայնիւդ ահաւոր ,
Սարսափին դողան աշխարհըս բոլոր :

Կարմիր , ըսպիտակ խընծոր յանտառէն ,
Ծըրտար սատաշխից և իւղ մեծագին ,
Վառելով գընաս 'ի վերայ լերին ,
Նըմհան այծեմանց և որդւոյ եղին :

Բերկրութեան բաժակ և ըմբանոյշեան ;
Ես եմ ծարաւեալ , տուր ինձ մի կաթ .
. . . .

Քան զքաջ արծիւ դու բարձրագոյն ես.
Գեղեցիկ բազէ . . . . . . ու ճտառ ես,
Փայլուն սիրամարգ, ոսկի փետուր ես,
Քաղցրաձայն կաքաւ . . . . ես։
Սուրոնդ է սատափ, մարգարտայ . քրտունք.
Ունգունքդ ուռկան, և բարակ շրթունք.
Սուտակ, գահանակ, և շարեալ ակունք,
Բիւրեղ է կուզեալ մատունքդ 'ւ ատամունք։
Քան ըզգարնան ամպ քաղցր մեղրաճոսան,
Վայելուչ գունով սրտէս ծիածան.
Հողմով տատանի քո հերքըն դեղձան,
Երբոր երանես ակնէր ու ակրան։
Կիպարի, նոճի, կաղնանձ ճիթենի,
Նարինջ ու թուրինջ, տանձ պտղաբանի,
Դոսախի նուբար, շումշատ ու դուպի,
Միշտ կանանչ կենաս քան զնշդ արենի։
Նոր գարուն եղև, և նոր առաւօտ.
Մուտ բլբուլն, ահա սոխմբին, ու յօգ յօգ
Նոր ձայն արձակեաց, նոր նստաւ 'ի մէջ
. . . . կարօտ։
Հեռացաւ գընաց յինէն տրտմութիւն,
Եկն եհաս այսօր ինձ ուրախութիւն.
Այլ փափաք չունիմ. իմ փափաքըն զայն,
Քաղուի լոյս աչացըն քո Թըշնամւոյն։
Քեզ միշտ հովանի բանքըն Հայրականն,
Միքայէլ հրեշտակըն քեզ պահապան.
Յաշխարհէս կենաս անփորձ ճանապարհն,
Անմեղ, անարատ, և յանդիմանական։

Ո՛վ Աղթամարցի դու ծառայ մեղաց ,
Աւուրքըդ գընաց ահա 'ի ձեռաց ·
Զգաստացիր հիմիկ և կաց 'ի յոտաց ,
Լալով աղաչեա դու զՔրիստոս Աստուած ։
. . . .
. . . .

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍԱՑԱԾ

Դու դրախտ Եդեմայ տնկեալ յԱնեղէն ,
Ի յելս՝ արևու տեղի լուսեղէն ,
Ծառովք և ծաղկովք , պտղովք շողեղէն ,
Զոր շըջապահեալ պահէ սերովբէն ։
Որպէս զՆախաստեղծըն գեղեցիկ ես ,
Ցիղ և գաղափար Տեառն Աստուծոյ ես ·
Պատկերով պատուեալ քան զՄիքայէլ ես ·
Ի հողեղինացըս հըրեղէն ես ։
Թափանցիկ լուսով ակըն արևու ,
Լիալիր լուսին մեղմով դընաս դու ·
Աստղ վառ 'ի վառ ցօղ առաւօտու ,
Եւ աւետաբեր հողմըն հարաւոյ ։
Լեառըն Արարատ , Կարմեղ և Սինայ ,
Թափօր և Հերմոն նըման բեթէլայ ·
Ո՛վ 'ի քեզ դիմէ , շատ փարթամանայ ։
. . . . ,
Վըտակ Եդեմայ , և գետ Յորդանան ,
Սելովմայ աղբիւր , և ջուր ես յուզման ·
Անկեալ եմ հիւանդ , մերձ առ քո դըրան ·
Սպասեմ հանապազ ես առողջութեան ·

Փայլուն մարգարիտ 'ի մէջ տատասկին ,
Անհագնատեսիլ յատակըն ծովին ,
Որ դաս 'ի ցամաք ձեռամբ լողորդին ,
Աղուլթ ու զըմրուխթ գոհար մեծագին ։

Վերնոց վեհագոյն , և աշխարհի զարդ ,
Ուշիմ և խոհեմ օրինակ 'ի մարդ ·
Նոճի , մրտենի , սանդալի և սաթ ,
Նունուփար ծաղիկ , փըթըթեալ զըւարթ ։

Ցարեալ , շըրջեցայ 'ի մէջ գիշերոյս ,
Խընդրեցի գըտալ իմ աչացըն լոյս ·
Էկ , իմ գեղեցիկ քըքում և նարդոս ·
Ոչ թողից 'ըզքեզ , մուտ 'ի տուն գինւոյս ։

Կիպասայ կարմիր և մաքուր արծաթ ·
Վարսիւք վայելուչ որպէս զթուխ սաթ ·
Ով որ տեսանէ , դառնայ . . . . . .
Անդուռ , անվանդակ , և առնէ ֆըրխաթ ։

Երբ 'ի կան ածես զաչերդ 'ի կամկար ,
Սըրտեր խոցոտես , համարով հազար ։

. . . .

Նարընջի ծաղիկ , կալասի տերև ,
Դու վարսաւորեալ արմաւինաձև ·
Փայլ ըզփայլի տաս , սիրամարգի թև ,
Խընդութեան տեղիք , աչաց լոյսըդ՝ քև ։

Հոտ քո բուրեսցէ վարդ ու շուշանի ,
Մանուշակ և մուշկ , հովիտ ծաղկանի ,
Նարկիզ , նոնօփար , սըմբուլ , կընդըրկի ,
Ամենայն քըմաց ես ախորժելի ։

Դու սքանչելագործ գեղ զօրաւոր խաչ ,
Ահաւոր տեսլեամբ քան ըզկարի քաջ ,
Ելանես , գընաս , և լինիս յառաջ ,
Կամ խօսիր ընդ իս , կամ նըստիր ի յաջս ։

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻ

Գարունն է բացուեր վարդն 'ի բաղ-
չային ,
Քաղցր եղանակէ բլբուլն ու ղումրին ,
Ախրով են վառեալ 'ի կարմիր Թըլփին ,
Կանանչ ու կարմիր տերև կու հագնին ։
Գինով եմ գինով, գիշերն երազով.
Գինով եմ գինով, ցերեկն արևով։

Համասփիւռ ծաղիկ անԹառամելի ,
Դու . . . . բըժիշկ ամենի .
Միշտ կանանչ կենաս քան զնշդարենի ,
Ըզմեզ քո տեսոյդ արա արժանի ։
Գինով եմ գինով։

Քաղցրահամ ճաշակ բերկրեալ զուար-
ճալի .
. . . . ծառ արմաւենի .
Շողեղէն պատկեր քան ըզԹերԹ վարդէ ,
ՇրԹանցդ համբուրի արա' արժանի ։
Գինով եմ գինով։

Քըրքում և զըմռուռ նարդոս ցանկալի ,
Դու կարմիր խնծոր 'ի մէջ տերևի .

Կանանչ բուրաստան ծաղկեալ չուշանի,
Դու մուշկ ու ամբէր բուրումն ամենի։
Գինով եմ գինով։

Ծառ նարընջենի, ծաղիկ ծովային,
Դու սալվի չինար, տունկ պալատանի,
Ծաղկեալ բուրաստան հոտդ ըզմայլելի,
Դու վարդ մանուշակ, ծով ես ծիրանի։
Գինով եմ գինով։

Ջօհալ, Մուշթարի, աստղ առաւօտին,
Ջօհրա լուսաբեր ղամբար և լուսին.
Պայծառ արեգակն յերկնից կամարին,
Թուխ ամպի նըման ցօղ ես անձրևին։
Գինով եմ գինով։

Գեղեցիկ պատկեր և տիպ հրաշալի,
Լուսազարդ գեղով նըման հրեշտակի.
Բերանդ է խորան, պռկունքդ խնկալի,
Ատամունքըդ դըրունք շարոց մարգարտի։
Գինով եմ գինով։

Ի յամէն դիմաց բըղխեցար բարի,
Եւ քեզ հովանի նըշան սուրբ Խաչի.
Պահապան լինի աջն Հայրենի,
Եւ փըրկէ ըզքեզ 'ի չար վըտանգի։

ԱՅԼ ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ԼԱՒ

Սուրբ Աստուածածնի տօնին գայ իջնու արծիւն 'ի քարին ·
Շատ մոմ, շատ ճըրագ վառեն 'ի յանուն սուրբ Աստուածածնին ։
Կերէք, խըմեցէք, մանկտիք, քարշեցէք զնաւերթ 'ի ծովին,
Մեր Տէրն Նաւավար եղեր, Նաւապետ սուրբ Աստուածածին ։
Երթանք աղաչենք զմեր Տէրն,
Որ հանէ տանի յայն տեղին,
Ուր Ջրհորն յիւրմէն կու բանի ։
Գաբրիէլ աւետիս երետ՝ Մարիամու 'ի յօր կիրակին,
Մարիա՛մ, հրամայէ զհոգիդ, զինչ օրէնքն է հոգածնին ։
Դարձաւ պատասխան ետուր՝ սուրբ կոյսըն Գաբրիէլին ·
Ջեմ տալ ես զիմ հոգին՝ մինչ որ գայ իմ Աստուածորդին ·
Մեր Տէրն իւր ամեն զօրօքն իջաւ՝ 'ի խնդրել իւր ծնողին ·
Մայր իմ, հրամայէ զհոգիդ, զինչ օրէնքն է հոգածնին ։
— Իմ Տէր և որդիս, կուտամ զհոգիս, բայց կարօտ եմ Բարդուղիմէոսին ։

Հան ինձ թևաւոր հրեշտակ 'Հայաստան,
'ի խնդիր Բարդուղիմէին ։

Հրեշտակք առին ու բերին զԲարդուղիմէին
Սուրբ Կուսի դուռըն հասուցին .
Ելաց ողորմապէս, անկաւ՝ աղաչեաց զսուրբ
Աստուածածինն .
«Ո՞ւր է կու գընաս, սո՛ւրբ կուսանաց,
քեզնէ նշան մի չունիմ» ։
Զդամբանականն երեքօր ձգեաց,
Զայն նշան ետ Բարդուղիմէին ։
Առաւ ու գընաց Բարդուղիմէն
Ի քաղաքն Երուսաղէմին,
Առաքեալքն ժողով եկան,
Բարդուղիմէին 'ի տես գընացին ։
Ամենքն ընդ հարցումն եղան՝ միաբան
և զայս ասացին .
Դու ուստի՞ կուգաս, համբարձա՞ւ սուրբ
Աստուածածինն ։
Ասաց . Ես անտի կուգամ ։
Առաքեալքն ոչ հաւատացին ։
Զդամբանականն 'ի դուրս եհան,
Զայն տեսան և հաւատացին ։
Զքանզերս վարդապետն ասաց 'ի վերայ
սուրբ Աստուածածնին .
Ո՛վ որ ուսանի, ասէ, իւր մեղացն թողու-
թիւն լիցին ։

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ,

ԳՐԻԳՈՐԻ ԱՂԹԱՄԱՐՑՒՈՅ ԱՍԱՑԵԱԼ

Ծաղկունք ասեն, հերիք արա,
Քանի կանչես վարդին վերայ,
Գոհ ու քեզ գոհ քո ձայնդ կուգայ,
Ի մեր բաղչիցն ելիր գընա՛։
Քանի՛ առնէք դուք ինձ ողոք,
Սիրտս 'ի սիրոյ եղեր փոքոք.
Ես կու մաշիմ վարդին սոքոք,
Իմ հոգն առանց իւրն է խոցոք։
Գամ իջանեմ վարդերուն տակ,
կանանչ տերեւն առնեմ ինձ յարկ,
Իմ սըրտիս մէջըն կայ կըրակ,
Թըռչնում և գամ երագ երագ։
Ի քեզ նայիմ աչօքս անթարթ,
Նա փարատի զինչ կայ հոգոցն,
Գեղեցկութիւն դըրախտին և զարդ,
Կարօտ են քեզ ամենայն մարդ։
Վարդըն կանչէ բլբուլն երգէ,
Քաղցըր ձայնիւ եղանակէ,
Ով որ ըզքո ձայնըն լըսէ,
Նա հեռանայ, զմեզ երանէ։
Ո՛վ նենգութեամբ առնէ քեզ նազ,
Թող իւր աւուրք դառնայ նուազ։

Թըռչունքն ասին. Ո՛վ բըլբուլէ,
Քանի՛ կանչես, պահ մի լըռէ:
Ասաց թէ՝ Սէրըն կու նեղէ,
'Վերայ վարդին ողող եղէ:
Սիրտըս չըկայ հետ իւր ընկեր,
Քանի՛ խօսցէք ասէք թէ՝ երթ.
Հողմըն չարժէ զվարդին թերթեր,
Նայիմ՝ փոշիման դառնամ 'ի յետ:
Այլ չի մընաց բընաւ յիս ոյժ,
Է՞ր հեռանամ, ես չունիմ ժոյժ.
Ինձ որ մահու լինի և դոյժ,
Հոտըն վարդին սըրտիս է բոյժ:
Ձօրըն կենամ յերերմանի,
Քունս է հատեր 'ի գիշերի,
Աղաղակեմ արտասուալի,
Ցայգ-ւոյս չերթամ ես յայլ տեղի:
Ըռանգ վարդին որպէս ըզլալ,
Տեսաւ բլբուլն եղև բէհօլ.
Անմահութեան հոտըն բուրեալ,
Նա 'ի սիրոյն եղև արբեալ:
Վարդըն տեսաւ բըլբուլ ուրախ,
Որ ձայն ածէր ինքըն անմահ,
Ծիծաղեցաւ վարդըն մէկ պահ,
Պայծառացաւ տիպն քան ըզջահ:
Վարդըն կարմիր գունով վառած,
Նա Շահ բըլբուլըն ձայն էած,
Հոտէն եղև խեւ ու հարբած,
Վարդի տեսոյն էր կարօտած:

Բլբուլն ասաց ես եմ առակ,
Կ'առնեն Թռչունքըն զիս կատակ.
Վարդըն չ'նայէ յինքըն չիտակ,
Նա 'ի յաչացըս եւ վրդովակ:

Ձօրն 'ի ճըղին մընամ 'ի կախ.
Եւ միշտ պահեմ ըզվարդին ուահ.
Ձով որ տեսնում՝ նա ինձ է մահ,
Զվարդըն քաղեն տանեն, անչա՜հ:

Վարդն է զգեցեալ գունով հանդերձ,
Ուրախանամ երբ լինիմ մերձ.
Կ'ասէ. Սիրով դու առ իս դարձ,
Ձահն և զկրկիւղն 'ի յինէն բարձ:

Կ'ասէ. Մ'առներ դու հեռ ինձ խաղ,
Ես եմ կարմիր ալալ ալալ,
Ցօղն 'ի յամբէն իջնու պաղ պաղ,
Վերայ վրանին իմոյ խաղաղ:

Վարդըն կ'ասէ. Զձայնըդ քաղցր ած,
Ծաղկանցն ամեն եմ սոր ու Նոչ.
Պայծառ գունով լուսաճաճանչ,
Երփիչկ ցաւոց և սըրտից հաճ:

Զեփեւռ կ'առնէ ինքն յամեն ժամ,
Զկանանչ ֆերդէն յետ կու բանամ.
Ըզքեզ տեսնում ուրախանամ,
Այլ 'ի քենէ ոչ հեռանամ:

Բլբուլն ըզվարդըն կու գովէ,
Խորհուրդնէ ձայնըն կու գայ,
Ծաղկունքըն ամեն են քեզ ծառայ,
Դու թագաւոր և տէր նոցա:

Բլբուլ զարթնու կէս գիշերին,
Վարդըն փթթի առաւօտին.
Շողն իջանի վերայ թերթին,
Պայծառանայ գեղըն վարդին.
Շնչէ ու բոլոր խուրն են փուշ,
Հոտըն վարդին բուրէ անոյշ.
Տեսաւ բլբուլ, եղև թէ ուշ,
Ասաց ի՞նչ ժամ եղև քեզ փուշ։
Եմուտ բլբուլն ՚ դիւան վարդուն,
Թէ գանգատ ունիմ յանդէտ մարդոյն,
Բեր համբուրեմ ըզմախալըն քո,
Որ դիւրանայ ցաւըս մարմնոյ։
Վա՛րդ, բլբուլին արա՛ զրոյց,
Ներբոր գայցէ ինքն ՚ի դըրուց.
Ուրախութեամբ ըզքեզ սընոյց;
Զնա որոշեա՛ ՚ի յայլ հաւուց։
Վարդն ՚ի բըլբուլն երբ խօսեցաւ,
Այլ տրտմութեամբ հոգ չունեցաւ,
Քան թէ խընդաց ուրախացաւ,
Զի իւր սըրտի սէրըն լըցաւ։
Եղև բըլբուլըն թևաթափ,
Թէ ե՞րբ ածեմ ըզվարդն ՚ի յափ.
Քանի՛ եղաւ կանչեմ անչափ,
Ի դէմս վարդին հարկանեմ ծափ։
Ի մէջ տըրտմեր դուք սէր չունիք,
Ասեմ այն զիմ ձայնըս ընդունիք.
Վարդըն կ՚ասէ. Մի՛ այլ նեղիք.
— Թող ես կանչեմ, ունիմ կարիք։

Գերի՛ Գրիգոր անյիշելի, (Ժ՛ըր ժէլէւէ)
Եւ անպիտան (խէօր գէօրմէ) Աղթամարցի.
Մէր աշխարհիս սուր երկայրի,
Հոգիս Նովաւ միրաւորի։
Աստուածատուր Մեծոփեցի,
Ցինէն խընդրեաց, և ես գրեցի.
Ամենքդ ասէք սըրտով 'ի լի,
Ինձ և Նորա՝ Տէր ողորմի։

ՏԱՂ ՎԱՍՆ ՂԱՐԻԲՈՒԹԵԱՆ

Վայրի հաւուկ մի եմ, թռնած ու թերած
դըրած զիս 'ի նեղ զընդան.
Զուրախանայր սիրտ բաժանէ-լոյս յընկե-
րացս, որ չեմ յիմ երամ։
Աստաբեկեալ եմ, միջակոտոր, ճար չու-
նիմ, զի՞նչ լինիմ գերիս։
Եթէ զբուլբուլ ու զըւմրին բերեն ինձ
երգասաց գուսան, չուրախանա՛մ.
Եթէ հազար գոյն ըզգոյն փեստուրներ ինձ
բերեն խալըն՞ տան, չուրախանա՛մ.
Եթէ զշաքարն 'ի Մազածու բերեն կերա-
կուր ինձ տան, չուրախանա՛մ.
Եթէ հազար Ռախշի հաւթմն ինձ տան, ու հա-
րիւր հազարի տէր առնեն, չուրախանա՛մ.
Եթէ բիւր բիւրոց ինձ ծառայ բերեն, ան-
համար հեծել ձիաւոր, չուրախանա՛մ.

Եթէ դարպաս ինձ շինեն, ոսկւով զարդա-
րած, անգին մարգարտով, չուրախանա՛մ։

Եթէ հընար ու ճարակ լինէր ինձ ելնել
'ի նեղ զընդանէս,
Եթէ լինէր որ թռչի, բարձրանայի, տեսնի
զիմ երամս,
Խաղալով, ճախրելով ու կարկաչելով խառ-
նիլ յիմ երամս,
Ցայնժա՛մ ուրախանայր սիրտ բաժա-
նելոյս,
Ցայնժա՛մ խառնէի յընկերացս երամ։

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԱԳՌԱՒՈՒ

Մեր մեղքն է արեր զագռաւըն բաղայ,
Ձկլըտուցն է սըրեր պօղպատ ամախոփոյ,
Ի բարձր է նստեր, կու կանչէ ղա՛յ, ղայ,
Ցոր տեղ որ հաւ կայ։
Ցոր տեղ գոյնըզգոյն հաւու փետուր
կայ,
Ագռաւն է ժողուեր ու հագեր կաղաղոյ,
Ի թեւն է շարեր, կու կանչէ ղա՛յ, ղա՛յ,
Ցոր տեղ որ հաւ կայ։
Ագռաւն է հագեր ափլա ու ժէժիմ,
Ի մէջքն է կապեր ոսկի հոյէօոյ (ղոյէօոյ),
Ի վըրան քաշած կանանչ ղուրէֆոյ,
Ի բարձր է թըռեր, կու կանչէ ղա՛յ, ղա՛յ,
ղա՛յ, ղա՛յ,
Ցոր տեղ որ հաւ կայ։

Ագռաւուն է արեր զանձըն ծըրըփանեց ,
ի մօտէ յարծիւն և 'ի մօտ բազայ ,
Թէ՝ Ես եմ ձեզ պարոն և ծանր ոճըրայ ,
ի բարձրն է թռեւ , կու կանչէ ղա՛յ , ղա՛յ ,
ղա՛յ , ղա՛յ , ղա՛յ ,
Ցոր տեղ որ հաւ կայ :

Արծիւն զայն լսեց , ու անկաւ լռաւոյ ,
ի յօդիցն 'ի վայր քան զըլըխն նետ գայ ,
Գայ բըռնէ զագռաւն , և կու տայ Ջողայ ,
Վա՛յ , վա՛յ , վա՛յ , հազար վա՛յ ագռաւուն
վերայ :

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՍԱՑ

Աշուն էր , եղաւ գարուն , ցամաքաւ
ձիւնն սարերուն ,
Ծառերն ամեն փըթթան ; ու տերև հագան
դըլնգցոյն :
Բլբուլն վէլ (վայելէլ) կ'երթայ ; զինչ
մարդն , այգւոյն ,
Գիշերն 'ի լոյս կու ձայնէ , վաղըւնէկըն
մինչ իրիկուն :
Աշուն էր , եղաւ գարուն , ձայն անուշ
երգէկ հաւերուն ,
Մանկունքն 'ի սարեր ելան , ու նըստան
վէր ծաղկընէրուն :

Միրամարգ հաւու Նըման հագեր են
հալաւ գոյնզգոյն,
Հետ զարնուն 'ւ ի հետ խաղան, ու խմէն
'ի յանոյշ գինւոյն ։

Աշուն էր, եղաւ գարուն, կանանչաւ
երես դաշտերուն,
Հաւքերն ամեն պար առին, ու վայրի
էրէք 'ւ անասուն ։

Օրհնեմք զԱրարիչ Աստուած, բուն
մրտան ծիծառն ու մեղուն,
Թռչին 'ի բարձր 'ի սարերն, ու քաղեն
զնխւթն 'ի ծաղկնուն ։

Գարուն էր, եղաւ աշուն, ու թափաւ
թուփըն ծառերուն,
Գնաց ամըն 'ի յարևելք, ձիւն եկեր 'ի
վեր սարերուն ։

Բարով գայ այլ 'ւ ի գարուն, աւետիք
տանինք բըլբուլուն,
Գայր նստէր ծառի ճըղին, արտասուէր
դէմ քաֆուր վարդուն ։

Գարուն էր, եղաւ աշուն, վերացաւ
վէլքն (վայելք) աղամորդւոյն,
Հոգիս մեւացեր մեղօք, կարօտ եմ հարաւ
քամուն ։

Ողորմեա Աստեփաննոս, վա՛յ է քեզ,
վա՛յ է քո հոգւոյն,
Աստուած բարեխօս բըռնէ, արժան առնէ
զքեզ անճառ լուսոյն ։

Գարուն էր, եղաւ աշուն, յիմար է՞ր
կաս անհոգ 'ի քուն,
Քո ջանքդ պակաս մի՛ առներ, ահա հասաւ
քո օրըն մահու ։
Ողորմելի Ստեփաննոս, վա՛յ է քեզ,
ու վա՛յ քո մահուննն,
Ողորմեսցին թ՛ Աստուծուց չառնուս, զքեզ
կեր առնէ գեհեննոյն ։

ՏԱՂ ՅՕՀԱՆՆԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Ի ՎԵՐԱՑ ՄԱՀՈՒԱՆ

Քանի՛ դատիս 'ի հետ մեղաց,
է՞ անզգամ մարդ կատաղած,
Ջայնչափ չարիք որ գործեցիր,
հերիք արա՛, դարձիր ' մեղաց ։
Ի յԱդամայ մինչև այսօր
չունչ կենդանի զոք չէ թողած,
Գիտեմ չլսես խրատու գըրոց,
մեղաւորաց թ՛ ի՛նչ կայ պահած ։
Ո՛վ որ ունի բերդ ու քաղաք,
դարպաս ունի ոսկւով ծեփած,
Ցետոյ եթող զամէնն անտէր,
ներքև հողուն է նա պառկած ։
Ո՛վ որ խմէր զանոյշ գինին,
զինքն բռնէր քան զխող ուռած,

Տեսայ զնա խիստ ատելի,
 չանուշահոտ գէշ մի ձգած ։
  Ո՛վ որ հեծնուր ձի բարձրավիզ,
 ու Թուր քաշէր ամեն դեհաց,
Տեսայ զնա խիստ փոշիման,
 երկու փայտի մէջ էր պառկած ։
  Վատ աղջըկունք, կին գեղեցիկ,
 որ ծամին ու վարսն են յօրինած,
Նոքա ունին պայծառ հանդերձ,
 զետ զարեգակն են բոլորած,
Ձօճեն 'ւ ոլոր առնեն կամաց,
 լինին ամեն մարդոյ սիրած,
ի մահու օրն են ատելի,
 գէշ ու զազիր են տեսողաց ։
  Քրիստոս Նստի յաթոռ փառաց,
 հատուցանէ վարձ սիրողաց,
Արդարոցըն տայ պըսակ,
 'ւ ապաշխարող մեղաւորաց ։
Է՛ Յովհաննէս Թուլգուրանցի,
 սրտի մըտօք զականջըդ բաց,
Աստէն արա՛ քեզ ճար չուտով,
 անդէն առնուս պըսակ փառաց ։

ՏԱՂ ՅՕՀԱՆՆԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

Արևնըման շողշող կը տաս,
յորժամ սիրով զաչերդ յածես,
Թէ զիս յիշես, թէ չը յիշես,
ես կու սիրեմ սրտովս ըզքեզ ։
Դու ըզվէմերըն խորտակես,
դու ըզլերունքըն հալ հանես,
Զով դու սիրես, Նորոգ առնես,
անանց կրակով զանձնիկն այրես ։
Դուն օրինակ ես աղէկնուն,
այլ մայր չէր բերեր քան զքեզ,
Սպիտակ ճակատ, թուխ թուխ աչեր,
լունջ ու փոքամով լուսերես ։
Լար հրթներովըդ վարդ թափես,
ճօճան վըզովդ բերդեր քակես,
Ամեն անձամբ ես գեղեցիկ,
քեզ նըմանակ միայն դու ես ։
Ծոցդ է դըրախտ անմահութեան,
անմահական պըտղով դըրախտ,
Դու օրինակ ես աղէկնուն,
ըզքեզ սիրէ Աստուած և մարդ ։
Հարեղանոյն ես որոգայթ,
քահանայից ակնակուռ զարդ,
Զմիակեցին խելքըն տանիս,
որ կացեր է զօրն անարատ ։

Զր կայ 'ի քեզ մազ մի ղուղուջ,
բոլոր անձամբքդ սուրբ անարատ,
Խոս կու գըրեմ զիս քեզ մատաղ,
ու քեզ ծառայ, ու քեզ փէշքէշ։
Թագէն սանեմ, ճարակ չըր կայ,
մեղաց նոքըն եմ, հայիմ 'ի քեզ։
Հայիմ 'ի նա, որ 'ի հողոյ
այդքան չքնաղ ստեղծեր է քեզ։
Խեւ Ովհանէս Թուլքուրանցի,
զօրըն 'ի բուն ըռող այլ կ'ասես,
Ջմարդըն 'ի կըրակ կու ձգես,
դառնաս ըռնուս ջուր, 'ւ անցունես։

ԱՅԼ ԲԱՆՔ ՍԻՐՈՅ Ի ՅՈՎՀԱՆՆԻՍԷ

Գինոյ ճահող, այլ 'ւ ի ճահող, այլ 'ւ ի կուտան սիրոյ խաճող,
Սավ ծով աչեր, և լուս քթնար, սանըն է կեռեր քան ըղկամար։
Ձյուկաստղ է լուս, ու լուսնըկար, բոլոր լուսոյն շամս ու ղամար,
Վարդերդ սոլքի թերէ քաշած՝ վերայ անձրեւ իջեր հասար։
Երեսըդ վառ է ծիրանի, վարդ ըռէհան ու նոնօֆար,
Ծոցդ է ճաղղաց վարդով 'ի մի, մարգարիտ ատամունքդ շարէշար։

Քո ձայն անոյշ քաղցրեղունակ, բերնէդ 'ի վայր թափի ջուհար,
Այդ քո մատունքն են լուսեղէն, այլ արեգակըն լոյս չիտար։
Անձնըդ ճօղ (ճիւղ) բուսեր դիմաց, կու ճօճկուտաս քան զուռ դալար,
Այդ անատակ ծովի նըման, գերիս 'ի մէջըն ողբալեղոր։

Նշդարենի ծառ ես ծաղկեր, պտուղ կուտաս մաղջ ու անուշ,
Բեհեզ հագեր ես ծիրանի, ծամերդ ամեն են ոսկելար։
Քաղաք Խաթայ, Չին ու Մաչին, 'ի Բուրսայու բերեալ պաշար,
Ցայդ ճանապարհ՝ որ կու քայլես, բուրեն շուշան և նունուֆար։

Կարմրունիջ կապած ես տալակի, և գնեմ՝ գինի ուրախարար,
Ո՛վ խըմէ 'ի քեզանէ, ուրախանայ սըրտով յօժար։
Ե՛րեկ իջցուք 'ի մեր բաղչայն, և բլբուլքն էնենք նոտար,
Որ 'ի քաֆուր վարդի սիրուն 'ի շուռ կու գայ զերդ դիւանահար։

Գարնանայքն ամիսն երբ գայ, հաւասար ծաղկի չորն ու դալար,
Ջըրեր յորդոր գընացք առնուն, 'ի լեռներուն թափին 'ի վայր։

Մարդ որ սիրոյ կը հանդիպի, նա քան
ըզկրակ լինի 'ի վառ,
Այլ ոչ աղօթքն 'ի յաչք կուգայ, ոչ
յայսմաւուր կարդայ և ճառ։
Շըրթունքըն չող է լուսեղէն, պըռկէն
'ի վայր թափի Ջահար,
Ով որ զմեղացն ճաշակ առնու, այլ Աս-
տուծոյ չիտայ խաբար։
Սէրըն զԱդամ դրախտէն եհան,
յերկիր ձըգեց արար չիւար,
Եւ սատանի ըղնա մատնեց, որ չարչարեց
ամ վեց հազար։
Սէթայ որդիքըն խառնակեց, որ ճըղ-
նաւորք էին յօժար,
Ջփողն ու գծընծղակըն լըսեցին՝ ամենն
եկին լեռնէն 'ի վար։
Կինն զՈվանէսըն գլխատեաց, Հերովդէի
պղծոյն համար,
Որ նա վառեալ էր ցանկութեամբ, փու-
թով տարաւ զկամքն 'ի կատար։
Սէրըն հանէ զմարդն 'ի խելաց, որ
այլ իսկի չըկայ խաբար,
իմաստութիւնըն խափանի, և հէնց դառ-
նայ քան զդիւահար։
Կինըն քաղցրիկ զըրոյց ունի, քան զօձ
քայլէ 'ւ առնէ գալար,
Զթոյնըն թափէ յանկարծակի, զմարդ
զէտ ակնատ բռնէ անճար։

Ջուները՝ ծարրէ, զաչքըն դիմէ, էնց
ցեղ լինի քան զբելիար,
Միշտ ըղձալըռութեան ծամըռաւէ, զմեռողիկ
ձըգէ 'ի քարն 'ի վայր:
Թուլգուրանցին զձեզ կ'աղաչէ, թէ
կնոջ սիրոյն մի' տիրանար,
Որ չը գինի դու 'ի լուսոյն, 'ւ այլ յԱս-
տուծոյ չլինի քեզ ճար:

ԱՅԼ ՏԱՂ ՄԻՐՈՑ

Ծո՛վ աչք, քանի՛ նայիս դուլդուլոյով դաս
անցնուս,
Զաչերդ շուրջ յածես՝ նազելով նըրբոյ
դաս անցնուս,
Ցշուանչս, զխելքս ու զհոգիս յինէն հանես
ու տանուս:
Ծո՛վ աչք, զեռ ճրագ 'ի յանց եկեալ
եմ,
Քու սատանին սիրոյդ հիւանդացեալ եմ;
Հէքիմ ու բժիշկ ըզքեզ լուեալ եմ,
Քու առ քո զայրումդ ուրախացեալ եմ:
Ծո՛վ աչք, թէ սիրով դուն զիս կու
կամիս,
Կամ ուզես երթալ հօտքան 'ի սրտիս,
Ա՛ռ զիս բազկիդ ներքև, որպէս զջրաթիթեռն
երեսիս:

Լուսին 'ւ արեգակն առ քեզ իջեալ են,
Սիրով 'ի վարսերդ 'ի վայր կախեալ են,
Ջեգ յարդարած 'ի քո սիրոյդ փառեալ են:

Երեսդ է 'ի վառ զերթ կարմիր խընծոր,
Բերանդ է փոքրիկ, պնչիկդ է բոլոր,
Դեղձուն ծամդ առեր այդ վզիդ ոլոր,
Քո սէրդ է արեր զիս ոլոր մոլոր:

Երեսդ է 'ի վառ զետ կայծակ կարմիր,
ինձ քո ծպրտայիդ քիչ մի մօտեցիր,
Ես 'ի քեզ նայիմ դու 'ի լուռ կացիր,
Սրտով կու սիրեմ դու զքեզ իմացիր:

Ես խև եմ դարձեր 'ի քո չատ սիրոյդ,
Հալեր ու մաչեր եմ քո կարօտոյդ,
ինձ ճարակմ' արա քո հոտ արեւուդ,
Թէ չէ կու մեռնիմ, կրակ է հոգւոյդ:

Բարակ նայելուդ ալ չեմ դիմանար,
Սիրտըս կու ճեղքեմ արուն քեզ հալալ,
կամ երթամ ընկնիմ ես 'ի ծովն 'ի վայր,
ինձ ճարակմ' արա քո հոգուդ համար:

Զինչդ է զետ սաթ, ակռաներդ մարգա-
րիտ, չրթունքդ են շաքրաւն,
Այտերդ ինձ մօտ բեր [illegible] չէ՞ դժուարն,
Թէ չէ կու մեռնիմ, կու մնամ հաւքաւն:

Աչերս է կարօտ 'ի քո չատ սիրոյդ,
Սիրտս է տարակոյս քո հանց նստելուդ,
Մէկ ափն երեսիդ գողտուկ նայելուդ,
Ջլոյս երեսըդ բաց, ողորմէ գերոյդ:

Քո մազեր քընքուշ ապրշում նըման ,
Քո շահէն վըզովըր աւեր՝ ման 'ի ման ,
Զանեսայ հողածին զաւակ քեզ նըման ,
Չկայ քեզ ընկեր յաշխարհս Հայաստան :

Քո ծոցըդ սիրուն ճերմակ զէտ բամբակ ,
Ծըծերդ մէջ ծոցոյդ կախած է զանգակ ,
Լոյս ծագէ ծոցոյդ զէրդ բարկ արեգակն ,
Նիստովդ ես լուսին , կիսովդ արեգակն :

Առանց քեզ հոգի չունիմ , ու չեմ կենդանի ,
Կրակ կայ իմ սիրտս , անանց կու վառի ,
Քեզ ես ծառայ եղայ , զօրերս անցուցի ,
Լալով 'ի շուրջ դամ, թէ զի՞նչ տի լինի :

Քո սէրն յիմ սրտիս զէտ սէր Մաղիմայ ,
Քրիստոսի գերեզման , որ լոյսն 'ի հոն կայ ,
Բօյըդ կու նմանի եղեգն 'ի չամբայ ,
Քո հոտդ յիս անոյշ քան զխընկան կուգայ:

ՋԿԹԳԼԱՑՆ Ի ՁԵՌՆ ԱՌԵԱԼ ԱՍԱ

Սարերն ամէն ձիւն իջեր , սարերուն մ՚եւլքըն վերացեր ,
Աշունն 'ի ճաղչէն մտեր , ծառ զիւր տերեւն ուրացեր :

Ծառուն ես հարցում արի, քո ռէհան ճուղերդ ի՞նչ եղան,
Ծառն էլ ծոսջանքան երեր, և ասաց յիւր սրտէն 'ի վեր :

Մէկ բեր յԱդամայ 'ի վեր ո՞վ է մեռեր այլ ու' էկեր ·
Էդ իմ ըռէհան ճըղեր թէ թափեր է՝ Նա այլ ու' էկեր :

Ծառն էր գլխ դժար ղոնըջեց, Նա ես էլայ 'ի բարձր սարեր,
Մըտիկ սարերուն արի, Նա ամէնք տըտում են դարձեր :

Հարցում ես Նոցա արի, կանչեցի թէ՝ Բա՛րձր սարեր,
Նա ինձ ջուաբ չը տուին, որ ամէն տըտում են եղեր :
Սարեր ձեր արևն, ասեմ, այըն ի՞նչ է, յէ՞ր էք տրտմեր ·
Դարձան ու ջուաբ տուին թէ Մա՛հն 'ի վեր քեզ, անցի՛ր :

Ծառուկն 'ի Բողչէցն 'ի հետ կանչեց թէ՝ Բա՛րձր սարեր,
Հօրի՛ն դուք անցգոն կ'ասէք, հանդ էկեր ծիծառն ել 'ի վեր :
Ծիծառն է էկեր անցեր, ու գարնան հոտ հոտուըտեր,
«Ցո՛ւրտեղ գնացեր ժուռ գայ, Նա ամէնն բարով են բացուեր :

Սարերն էլ խնդում ելան, գարնան օրըն են արեր,
Էսօր մեզ հազար երնեկ, ծառն ծաղկալուխ մեզ եբեր։

ՏԱՂ ԳՈՎԱՍԱՆՔ ՍԻՐՈՑ

Աչերդ է թուխ ու պէտ (մեծ), դու խօրօտիկ ես,
Քաֆուր վարդի նըման անուշ հոտիկ ես,
Դու փնջած մանուշակ, վարդի ծաղիկ ես,
Նորելուկի նըման կանանչ ուռիկ ես։

Դու սպիտակ ու կարմիր հոտեղ խնծոր ես,
Անոյշ հոտովըդ դու գիս արբուցեր ես,
Դու մեղրով շաղաղուած նուշ ու շաքար ես,
Բըդրի լուսին, պայծառ արեգակըն ես։

Դու հալած ու թափած ոսկի արծաթ ես,
Ղումաշ ես խաշնի; քանի՛ գովեմ զքեզ։

Քո սէրն 'ի յիս դիպաւ, ստոյգ կ'այրիմ ես,
Արի՛ ինձ դեղ արա, իմ ճարըն դու ես։

Կըտրեր քուն յաչերուս, դուն ֆարաղըն ես,
Քո սէր գիս մոմ արար, դու ինձ պողպատ ու կայծքար ես։

Դու գիշեր և ցորեկ մէջ իմ սրտին ես,
Անման ու անգրող փնդքիս հաներ ես։

Դուն փունջ սիրելի 'ւ ինձ բարեկամ ես ,
Զարկամին զայդ չէր անէր , զինչ որ դուն կ'անես ։

Անթուր 'ւ անդադանակ զարխունս հեղեղես ,
Գնաց իմաստութիւնս , զմիտքըս տարեր ես ։

Ես եմ ափ մի հող է , դուն հրեղէն ես ,
Ցորտեղ որ կու նստիմ , զիս կ'մոռանամ ես ։

Միթէ զիս դեղեցի՞ր , կամ թէ կախա՞րդ ես ,
Զքո ծով ծով աչերդ , տեղով լցեր ես ,
Ունքերդ կամարակապ 'ի վեր քաշեր ես ,
Դուն ես կանանչ աղբիւր , ծովու նման ես ։

Ատամունքդ մարգարիտ , շաքար բերան ես ,
Աշխարհս խորոտիկ կեմ դուն մինակ չե՞ս ,
Աստըւորս շատ իկե 'ւ այլ տի գայ քանց քեզ ։
Ասա՛ զքանս , Ցովանէս , է՞ր կու խընայես ։

Դուն Ս. Կարապետի ճորտն ու ծառան ես ,
Ս. Կարապետ , շատ կու խնդրեմ ըզքեզ ։

———

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ ԲՈՒԼԲՈՒԼԻ

Ահա՛ հոտըն գայր գարնան , տերեւքն ամեն 'ի խընդման ,
Զինչ պարտէզ և այգեստան կայ ,
Ծաղկունք գոյնզգոյն բուսան .

Ջարնեն ցեղ ու ցեղ «էլան» (նուագ) ,
զինչ չատ հեծելով տուլթան ,
Կէսըն սարերովըն գան ,
ժողվին 'ի մեր բուրաստան ։
Եկայք մտնումք 'ի ճողլուն ,
խօսիմ ես հազար դէսթան ,
Զինչ որ սիրելիք մեզ կան ,
այսօր մօտ 'ի մեզ թող գան ։
Այսօր հօտմով իշխան
հաւասար ծաղկունք զի՞նչ որ կան ,
Հրաման ունին , և նոքայն՝
վարդին յերևան թող գան ։
Վարդն էր 'ի թըփին փռաման ,
բարձր է նստեր գերթ ըշխան ,
Ծաղկունքն ամեն ժողվեցան ,
բոլոր վարդերուն նըստան ։
Ունիմ չատ սիրոյ դարման ,
վարդն տեսայ 'ի փռման ,
Կարմիր տերեն 'ի վառման
գերթ պռկունքն են 'ի չարժման ։
Մօշքէօ զուգեմ 'ի տայքան ,
բուլբուլն ճօշքէօք ամիրայն ,
Սօֆէ ([illegible]) լուսեղէն մէջտեղ
կանգուն , ու գինի մեզ տան ։
Սագի , լից ու տուր զկթխայն ,
իմ սիրտս է սիրոյդ հաւան ,
Ես կու խմեմ զայն կթխայն ,
յոր գինին է Ջրով Յորդանան ։

Մըտըրուք (գուսան), դու լարէ կըղըղանոյն,
որ ես խաղամ,
ի յատեան . . . կանանչ 'ւ էրկան,
իւր տեսքն է լուսնի նըման ։
Աչուերն է 'ի ծով նըման,
ունքերըն է աղեղան,
Շօրէծան կանգնիլ օճառօնէն,
վախեմ թէ խոցուիմ մահուան ։
Շրթունքըն բերէ վուրդա,
'ւ իր լեզուն խօսք գհամայն,
Քաղցր է ու շէքէր իւր ձայն,
այն որ մեզ շաքրի համ տան ։
Այսօր է մեզ օր խընդման,
հաւասար սփրելեաց որ կան,
Զինչ սիրտ որ սիրով բացւան,
այսօր միատեղ նըստյան ։
Սօֆէ է մեր հզօրն այն
վարդն է մեզ յարև սուլթան,
Մըտըրուք բուլբուլն է, շատ կան,
խօսին 'ի սիրոյ շատ քան ։

———

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՄՐՏԱՌՈՒՉ

Եկի հովերօքըդ անցի,
հոտ առի, վէճէրէն կարօտուցի.
Քայլ մի երկու յառաջ գնացի,
Նեղ ու խոր ձորնդան մի տեսի ։

Մանուկ մի պառկած տեսի ,
 գեղեցիկ ու խիստ ցանկալի ․
Հարցուկ ես նորան եղայ
 Թ՚ի՞նչ կ՚անես , այդ քեզ՝ ի՞նչ տեղի ։
  Դարձաւ ու ջուաբ ետուր ,
 Թէ կանգնիր , կարիճ գովելի ,
Ես այլ քան ըզքեզ՞ էի
 գեղեցիկ ու զարմանալի ․
Ուտէի , խմէի անուշ ,
 ու մահուան կարծիք չունէի ․
Ցանկարծ ցաւըն զիս էառ ,
 ես ՚ի յիս ուջէք մնացի ։
  Այն իմ լուսատու աչերս ,
 որ ցանկայր ամեն մարդ ինծի ,
Հանց է կուրացեր հիմայ ,
 որ բնաւ իսկի չը նայի ․
  Այն իմ զօրաւոր բազուկ ,
 որ ուժով ես խիստ գիտէի ,
Էնցեղ է թուլացեր հիմայ ,
 որ բնաւ իսկի չ՚շարժի ։
Ցանկարծ ցաւն զիս էառ ,
 թուլացաւ բնութիւնն որ ունի ,
Ոչ խօսք մի՛ խօսել պային ,
 ոչ ջուաբ մի զինահարի ։
  Զի՛նչ որ բարեկամ կայր ինձ ,
 քոյր , եղբայր և այլ սիրելի ,
Ժողովեցան բոլորս եկին ,
 Ա՛յ եղբայր , յո՛ր տեղ կու ցաւի ։

կապուեր իմ ճարտար լեզուս ,
որ բնաւ իսկ չ'խօսի ,
Դուք ողորմեցէք գերւոյս ,
Նա չ'օգնեց բնաւ մէկ ինծի ։
Զգինդս յականջէն հանին ,
զմատանին որ խիստ կու սէր'ի ,
Զնժոյգս 'ի յանձնէս առին ,
Թալեցին զինչ մէկ մի գերի ։
Այն իմ սիրելիք ամեն
ողբալով լային դէմ ինծի ,
Շուտով ինձ պատանք բերին ,
Թէ՝ Հանէք որ խիստ չ'հոտի ։
Այն իմ սիրելիքն ամեն
ողբալով գային հետ ինծի ,
Չորս մարդ զիս 'ի յուսն առին ,
ու տարան մըղոն մ'աւելի ․
Դըրին զիս 'ի նեղ գընդան
դէճ ու խոր , որդունքն աւելի ,
Զհողն 'ի վըրաս տուին
և ասացին՝ Անշարժ եղիցի ։
Խըրատ մի քեզ տալ կամիմ,
Թէ լսես , ա՛յ իմ սիրելի ,
Թէ ապրիս հազար տարի ,
երբ որ է 'նի գաս մօտ ինծի ։
Գընա դու գործէ բարի ,
ու տըրա [illegible] դու քեզի ,
Խիստ խեղճ է 'ւ ողորմելի
այն մարդն , որ մեղօք մեռանի ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՑ

Ի ՎԻԵՆՆԱ ԵՒ Ի ՓԱՐԻԶ

Գլուխ դրոյն դրեալ՝ Ողջո՜յն քեզ, Վիեննա,
ի փարիզ ծառայէդ, որ միշտ ծառայ կայ.
Դիւրի եմ քեզ, թէ միտք քո զկեանս խ-
մանայ,
Թէ եղկելի փարէզ ի՞նչ հոգի կայ։
Ցես թէ՝ անդադարս ո՞րպէս դադարի,
Սէրդ արար զիս խեւ, եղեալ եմ վայրենի,
Երբոր անցնիս 'ի միտս, Ջիգերըս այրի,
Եւ ժամերս առանց քեզ են հազար տարի։
Է՜ իմ քաղցրիկ Վիեննա, իմ արեւ և լոյս,
Մտեր ես մէջ սրտիս, չես իջար 'ի դուրս,
Վասըն քեզի միայն կամ ես տարակոյս,
Ա՛յ իմ չինարի ծառ, գարնան կանանչ բոյս.
Վիեննա՛ երբ ասեմ, և զանունըդ տամ,
Խելագարեմ 'ի ժամին. . . . դառնամ,
Ուշկս 'ի յինէն երթայ, մեռեալ ես մնամ,
Վկայն իմ է յերկինս, որ ես հաւատամ։
Երբոր մտօքս անցնիս, սիրտս առնու
դալար,
Աչիքս մոլորաքի, մահու քրտինք գայր,
Բազում անգամ կամիմ զկենացըս վըճար,
Գամ, քեզ մօտենամ, զի այդ չունիմ ճար։
Ահա ես միշտ ասեմ թէ՝ կեանքս ի՞նչ լինի.
Որ փարէզ իւր աչօք Վիեննա տեսանի.

Թող յայնժամու բաժին աշխարհ անցանի ,
կամ. առաջի ոտացդ անկեալ մեռանի ։
Թէ զհոգս զամենայն ածեմ ես գըրով,
Գիտեմ ոչ աւարտի նա հազար տարւով,
Այլ զքեզ ողջունեմ ես հազար բարով,
Բարեւ քեզ գայցէ ծովով ցամաքով։
—Յորժամ զայս թուղթըն կարդայ վեննա,
Արտասուք յաչացն խիստ յորդորանայ ,
Բազում կսկծի նա , ջուրն արիւն դառնայ ,
Ժամ մի խելքն յիւրմէն երթայ , և ժամ մի այլ գայ ։
Երկուս 'ի ծառայիցըն պատրաստ կային ,
Ջջուր 'ի յերեսին հանապազ ցանեն •
Ի նորա դառնութեանց ամենըն լային ,
Յաստուած յուսալով՝ նըմա սիրտ տային ։
Տեսնու վեննա խաթուն որ բանն աւերի ,
Չի յերթեգալոյն խելքն ոչ դադարի ,
Եւ խաբէլ ընդ գործս վեննայու այրի ,
Եւ միշտ աղաղակէր զի գործն վճարի ։
Խորհին նոքա յիրեարս , արտաքս ոչ երթան ,
Այլ յայնմիկ լուսանցքին զրոյց միմեանց տան •
Խորհուրդ խաբելայ էր սա դուրընկան ,
Երբէք 'ի լուսանցքէն նոքա չհեռանան ։
Քաղցրիկ միշտ զրուցեն յոյժ փափագանօք,
Ժամ ժամ վարանեն խելօք և մտօք •

Ասէ վէննա Նըմա ; Է՛ փարէզ խելօք , Խորհուրդ մի դու խորհեա , զի զերծինք հնարօք ։

Պատասխանի ետ փարէզ , Է՛ լուս իմ վէննա ,
Ո՛րպէս որ դուն գիտես , այնպիսի արա՛,
Զի սէր քո ոչ թողեր ինձ խելք 'ի վերայ ,
Զիս անգէտ ծառայ մի քեզ համարեա ։

Ասէ վէննա Նըմա . փարէզ իմ հոգիս ,
Վաղիւըն յայս ժամուս եկն առ իս քո գերիս,
Եւ ես խորհուրդ առնեմ 'ի յայս գիշերիս,
Միթէ բարի ճանապարհ դտանե՞մք այս բանիս ։

Փարէզ տայ ողջոյն 'ի վերայ ու երթայ ,
Վաղիւն դիպող ժամն դառնայ անդ և դաղտիկ սըղայ ,
Փարէզի դալն վէննա յիմանայ փութայ ,
Ի լուսամուտին սիրով բարև տայ ։

Ասէ . Հոգիս փարէզ , այսպէս խորհեցայ,
Քան զայս բարի ոչ է որչափ ոք ջանայ ,
Դարձիր 'ի յայս ժամուս ըզհայրըդ աղաչեա ,
Երթեալ խնդրեսցէ , զի հայր իմ զիս քեզ տայ ։

Փարէզ ասէ Նըմա . Քաղցրիկ իմ վէննա,
Ո՞րպէս թէ այդ բանիդ սիրտըս հաւատայ ,
Բայց կատարեմ զխօսքըդ յիմ գլխուն վերայ ,
Զի եմ տրուպ ծառայ քո , իսկ դու իմ արքայ ։

" Ապա միւս բան ես խօսի քո գերիս ,
Եթէ թոյլ ինձ տաս , և մտօք կամիս ։
Ասէ վ'եննա . խօսեա՛ց իմ սիրտս և հոգիս ,
Միթէ բարի ճարակ մի մեզ խընայե՞ս ։

Փարէզ ասէ զայս . վ'եննա իմ աչաց լուս ,
Երբ դու ամուսնացիր , զո՛ր իշխան առնուս ,
Եւ զիս իբրև ծառայ դու ընդ քեզ տանիս ,
Որ զհողաթափդ պահեմ 'ի վերայ գլխոյս ։

Ասէ վ'եննա նըմա . Թէ զայս ոչ առնեմք ,
Երբ զասացեալս արա , որ զայն տեսանեմք ,
Թէ նովաւ ոչ լինի , այլ բանս հնարեմք ,
Միթէ երեսպարզ ըզգործս վճարեմք ։

Փարէզ դառնայ 'ի յետ բազում խորհրդով ,
Կացեալ 'ի հանդէպ հօրն բազում ամօթով ,
Ասէ հայրըն . Խօսեա , ա՛յ որդեակ իմ , սիրով ,
Զոր ինչ յինէն խնդրես , կատարեմ փութով ։

Պատասխանէ Փարէզ . Հայր իմ , ամաչեմ ,
Որ բանս պատկառելիս ընդ քեզ խօսեալ չեմ ,
Հապա այս անգամս ըզքեզ աղաչեմ ,
Խնդրեակ լեր վ'եննայու միթէ ես առցեմ ։

—Ցակոբ հայեաց 'ի փարէզ, նա դառըն ելաց,
Գիտաց հայրըն նորա, մանուկն է այրած,
Հեծեալ նա ակամայ առ Դուլֆին գընաց,
Եհար զծունկն 'ի գետնին, առաջի եկաց:

Ասէ իշխանն նըմա. Թէ բարի եկիր,
Ասա՛ թէ այժմ յինէն զի՞նչ կամիս խընդիր,
Կատարեմ քեզ այսօր զոր 'ի միտ ունիր,
Զի դու ես բարերար միայն յիմ երկիր:

Խօսի Ցակոբ ահիւ և պատկառանօք;
Եւ թողութիւն խնդրէ 'ի նմանէ աղօթիւք,
Ասէ. զվշեննա տացես որդւոյս օրհնօք,
Ոչ եկեալ զքեզ ժըտեմ, այլ քոյին կամօք:

Երբոր լուաւ իշխանն, խելքըն վերբացաւ,
Եւ դառնութեամբ մահու 'ի նա հայեցաւ,
Կատաղեալ բարկութեամբ սպանանել կամեցաւ,
Բազմաց աղաչանացըն պատկառեցաւ:

———

ԱՇԽԱՐՀԻԿ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ՎԸՌԸՇԻԿՆԵՐՈՒ

(Այսինքն Ռուշտունեաց)

Սիրտս նըման էր էնա փըլած տընե՛-
ե՛ ե՛ ե՛ ե՛ ե՛ր ,
Կոտրեր էր գերընները , խախտեր էր սը-
նե՛ ե՛ ե՛ ե՛ ե՛ եր ,
Գիտի յընա մէջ բուն դընեն էն զարնան
հաւքե՛ ե՛ ե՛ ե՛ ե՛ եր ,
Երթամ ձիկ թալեմ յընա բէօշ բէօշ գե-
տե՛ ե՛ ե՛ ե՛ ե՛ եր ,
Ընիմ ձըկան ձագերաց յընկե՛ ե՛ ե՛ ե՛ ե՛ եր ։

Եւ ծով մ՚եմ տխուր , սիվտակն էր
բուլո՛ ո՛ ո՛ ո՛ ո՛ որ ,
Ձկին կը զարկէր չէր խառնուէր յիրու-
ո՛ ո՛ ո՛ ո՛ որ ,
Ո՞րն էր տխուր մէկ ծովըն երկու թավո՛-
ո՛ ո՛ ո ո՛ որ ,
Աստուածն ինչ կը սիրէք , մ՚ընէք խօրօտ
կընկան քավո՛ ո՛ ո՛ ո՛ ո՛ որ ։

ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ․
Ծագեց լուսնակն երկընուց,
Հովըտի փողն էր անուշ։
Հօտաղն եզներ կ՚արածայ,
Մանճկալ պառկեր, քունն անուշ։
Ջըղջըղուն քամին կը փըչէ,
Ծովային հովն էր անուշ։
Դաշտեր ձորեր մընջեր են,
Ջըրեր գլգլան՝ ձէնն անուշ։
Հաւքեր թառան ուրենց բոն,
Բըլբուլի տաղն էր անուշ,
Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ,

ԵՐԳ Ի ՎԵՐԱՅ ԿՈՐԵԿԻՆ

Տէր Անտօն գովացեր կորեկի քանէն,
Աստուած կորեկ պակաս չանէ՝ մեր տանէն,
Ձըմեռ մի արէք ուտի աղքատ քըհանէն,
Գովայ զարտն ղանդ աստան անուշ կորեկին։
Առաւօտ բարիլուս որ կը լուսնէր,
Լըծել կ՚ուզէր անուշ կորեկին,
Մարդ պիտէր, որ սրտով Աստուած կանչէր,
Որ տար կուութ անուշ կորեկին։

Մանկրան թև, դարձած ծիծղռնակներ,
Խիստ անուշ կարդան, թէ ականջ բըռնենք,
Ն'ուրախնէր լոր, ճընճղուկն ու տատրակներ,
Ջրեր ջուրին քարե տ'ին, անուշ կորեկին։
Զարմանալի կուռթ ունիս կաղնիներ
հնատերով,
Փեղ կ'ուտէք կաղնեկ, հաց, արօր-վարա-
գերով,
Դու մէջ մը պիտիր անոնց զատերով,
Թըթուն, թան, թուաչին անուշ կորեկին.
Զարմանալի հաւութ ունիս կանաչ խո-
րոտիկ,
Նրիէք 'ի մէջդ շուշ. կուսպան, կ'երևայ
կոտիկ,
Իւր բաժը չափեմ թիզով կարճը կոլոտիկ։
Թըթուան, թան, թուաչին անուշ կորեկին։
Տէր Անտօն հաւերայ սև չորեր,
Գացեր ընկերայ Մեծուփայ ձորեր,
Մանին այ բըռներ, խորունկ այ վարեր,
Գովամ զարտն զանդատտան անուշ կորեկին։

ՃՆՃՈՒՂԻԿ

Նստել էյս կտրեկ ունիմ ցանելու համար,
Ճնճուղնիք ժողվան չկան ուտելու համար,
Նըզըռայ, քար վերցի դետնէն՝ զարկելու
համար,

Թռչուան դաշտին բերդի տանիս՝ գանգատելու
համար ,

Քաղաքներ տեսան էկան մորթելու համար ,
Երէցներ ժողուան էկան օրհնելու համար ,
Աղջիկներ ժողուան էկան դեղդըրի համար ,
Զուռվըներ ժողուան էկան մաշկելու համար ,
Ուէջաներ ժողուան էկան խորվածի համար ,
Համբաններ ժողուան էկան գովալու համար։

Ա՛յ ճընճուղիկ ,
Կարմիր տոտիկ ,
Սիւտակ փորիկ ,
Ուտեն կուտիկ ,
Խըմեն ջըրիկ ,
Առուի եզրիկ ,
Զըղտիկ մըղտիկ ,
Փախնեն երթան կանգալու համար ։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՎԻՃԱԿԻ ԽԱՂԵՐ

Էրկէն դարաճէն դըրիցինք ,
Մօտ Աստուած հարցում գընացինք ,
Աստըծուց բաղդ ու դօլւաթ ուզեցինք ։
—Գէօզալ, հան վիճակն 'ի բարին ։
Յոյսը կուսին , Սուրբ Խաչայ լուսին
Բոլորու 'ի վեր , տեսն էր խընկին ·
Բաժկլիկ պատրուս Նըմանի ,
Սուրաթ խըլաթ խընծորի ·

Աչքեր կանթեղ Նըմանի ,
Եկեղեցւոյ կը կախուի ·
Ընքուեր անանակ Նըմանի ,
Երկնուց Իրիսէն կը կախուի ·
—Նարգիզ, հան վիճակն 'ի բարին ։

Երթաս Աղթամար , սուրբ Խաչայ համար ,
Սուրբ Խաչ տայ քե լաճմ' անուն Մխիթար ·
Ուրուրոց , ոսկի ,
Ծածկոց մարգրտի ·
—Հարս, հան վիճակն 'ի բարին ։

Կանանչ կանանչ կանչեցին ,
Կանչի մէջ յղան վազեցին ,
Բօղ բօղ ծիանք քաշեցին ,
Նորահարսներ հեծուցին
Տօտ մուրատին հասուցին ·
—Հարս , հան վիճակն 'ի բարին ։

Գլուլ դլուլ Նարգիզ,
Ջարկեր եմ կօտիկս ,
Թամի վէր վըզիս ։
Բարձ ղուլթնի , գօշակ ղուլթնի ,
Վերէն պառկող քո ղըսմէթն ի ։
—Փորողայ , հան վիճակն 'ի բարին ։

Մե ծառ մը կայ օրթայ քաղաք ,
Ճօղեր թալե քաղքէ քաղաք ,
Ցըմէն ճօղին քառասուն ճըրագ ,
Վերէն թառե սինամահաւք ։
—Ջանադան, հան վիճակն 'ի բարին ։

Բէօշ բէզիրգէն էկեր է,
Ջեր կալուածոյն իջեր է.
Ոսկի ցիցը զարկեր է,
Հորեղէն ձին կապեր է,
Քո բանդն քո դուռ բերեր է.
—Նուբար, հանդիպական ի բարին։

Նման ես կ'երթաս ուխտ Վարագ,
Քո ուտելիք սեր ու կարագ.
Ինչ հագեր ես քե մուքարքէն,
Դու զարդարուեր ես կ'երթաս Ս. Նշան,
Ոսկի մատնիկ, ակնը եաղութ ի քո նշան։
—Աղմամա, հան միճակն 'ի բարին։

Զըտըրտըրագըլուխ ես,
Հաց վառտըկող ես,
Բեռ մը մանած պարպըռուես,
Բացուած վէր նշխուրն իջուն,
Աստուած էն ի կամեցեր,
Քանձ մըրջման քարուան չառ տայ քե։
—Դուրդանայ, հան միճակն 'ի բարին։

Դու նըստեր ես ծովն 'ի կըղզեաց,
Սալոն քո ձեռ ոսկիջըրած,
Քո ճակտի գիրն էր գըրած,
Քո հօր ու մօր օրհնութքն առած,
Քո բաղդ բարին տայ Աստուած։
—Եղիսա, հան միճակն 'ի բարին։

Բալնիս երկընուց ընկած,
Երկընուց գըռներ բացուած,

Ձեր սեղան ոսկի խաւնծղած,
Ձեր բաժակ արեւու ճաճանչով լեցուած,
—Ծաղկեհամք, հան վիճակն 'ի բարին:

Ովան աղի ծին փրփրերի,
Ոսկի զըմբիւղ սար թողերի,
Անանեայ խոտ կիրնիրի,
Անմահութնի ջուր խմերի,
Ինկե ձեր դուռ կայների:
—Ոսկրաձկար, հան վիճակն 'ի բարին:

Սարեր ինչքանդար սալ կայ,
Քե ուզողին էնքանդար մալ կայ,
Մըրտնես տունն ու մառան,
Ձերըդ պարզես ոսկու ամեն:
—Եղունիկ, հան վիճակն 'ի բարին:

Մանուկ քընե ծառի տակ,
Ըպը ծաղ ոսկին բարձի տակ,
Ջէն տուր, կըտրին վեր էլնի,
Ջուր չերթայ քո մարդու տակ:
—Նագլու, հան վիճակն 'ի բարին:

Ջին ի ուղտ տակ լալաչ քուլաչ,
Բեխերն ինկե գալամթերըչ:
Քամարն ի ոսկի, արծըթէ կոշիկ,
Ակըռմ՞ զ վախեցնայ, Աստուած քո քամակ:
—Գուհար, հան վիճակն 'ի բարին:

Մէրն ի կիրե խաւըրծիլ,
Աղջիկ ծընեւ ոսկի ծիլ:

Մէրն ի կիրճ դաշտի տակ,
Ցրդէն ծընեն պատոյք տակ ։
—Արմաղան, հան միճակն 'ի բարին ։

Ոսկի դաշտ ոսկի բընակ
Մէջըն Արեգակ ․
Նըստեր ի վէր պատին,
Կ՚իրիշկի վէր կանանչ արտին ։
—Անանա, հան միճակն 'ի բարին ։

Քո կարքէն ծաղուկ կուգէր ․
Քո ջուքէն կարուկ կուգէր ․
Ոսկի դըլըուզ վէր դարին,
Կը զըգզըղայ հազար բարին ․
Աղջիկ դու մէկ ես հազարէն ։
—Անղալատ, հան միճակն 'ի բարին ։

Ծով քե գինի, քամին քե կըթխայ,
Լուսնակ քե դօլպաշի, ուր շողն քե քամար ։
—Լուսիկ, հան միճակն 'ի բարին ։

Դու ունիս քառասուն մազի,
Քառասուն մազու բուրդն ապրըշում
պըճեղն ոսկի ․
Ծօթըն որդւոյ ոեղան նըստես,
Երուսաղէմ արժանանաս,
Արքայութենին տիրանաս ։
—Օշաքեր, հան միճակն 'ի բարին ։

(Այս երէ ընէ է ։)

ԵՐԳ ՀԱՐՍՆԱՑՈՒԹԵԱՆ

Թագւորի մէր դուրս էլի,
Քե ի՛նչ ուր ի՛նչ, եմ բերե։
Քաղցր ու բաղարջով արե,
Արաղի փարչով արե.
Բարեկամներով արե։
Թագւորի մէր դուրս արե,
Ճրրագ մոմերով արե,
Բարեկամներով արե,
Քաւորկնիկով արե։
Թագւորի մէր դուրս արե,
Ջեռքըդ հինայ դիր, արե,
Աչքերըդ դեղ դիր, արե,
Թառլիկ սոլերով արե։
Թագւորի մէր դուրս արե,
Արե արե, դուրս արե,
Տե քե ինչ ուր ինչ եմ բերե։
—Ցախտ ափլող եմ բերե։
Թագւորի մէր դուրս էլի,
Արե արե, դուրս արե.
Քե ինչ ուր ինչ եմ բերե։
—Գլօխ լուացող եմ բերե։
Թագւորի մէր դուրս արե,
Արե արե, դուրս արե.
Քե ինչ ուր ինչ եմ բերե։
—Լըւաց արող եմ բերե։

Թագւորի մէջը դուրս արև,
Արև արև, դուրս արև,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել։
—Գըրչնակ տարազ ենք բերել։
Թագւորի մէջը դուրս արև,
Արև արև, դուրս արև,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել։
—Սառ թախթըրփող եմ բերել։
Թագւորի մէջը դուրս արև,
Արև արև, դուրս արև,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել։
—Կաղզալ ուլող եմ բերել։
Թագւորի մէջը դուրս արև,
Արև արև, դուրս արև,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել,
—Քաղանքը տարող եմ բերել։
Թագւորի մէջը դուրս արև,
Արև արև, դուրս արև,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել։
—Եէմիշ ժողվող եմ բերել։
—Քօչ ջըրէս դըմփող եմ բերել,
—Սամ խաղցող եմ բերել,
—Կարկատան արող եմ բերել,
—Սօլեր չիթալող եմ բերել,
—Ռէխար կըթող եմ բերել,
—Բուրդի գըզող եմ բերել,
—Ջախրակ մանող եմ բերել։

ԳՈՎԱՍԱՆՔ ՓԵՍԱՅԻ ԵՒ ՀԱՐՍԻՆ

Թագւորը, ի՞նչ ընտրեմ քեզ նմանն,
Քու կանանչ արև քեզ նման :
Համասփիւռ ծաղիկ որ ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Շուշան ծաղիկ որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Գալարեան ծաղիկ որ ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Կարմիր կանանչ որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Սարի լալէն որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Գինեբրբուկ ծաղիկ որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Բարդխաքան որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Մանիշակ ծաղիկ որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Աղբրանց պտուն որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Դեղին կակաչ որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :
Կանաֆիլ ծաղիկ որ կը ծաղկի,
Ծաղկէր քու արևնը նըման :

Ղատիֆայ ծաղիկ որ կը ծաղկի ,
    Ծաղկէր քո արեւնը նըման ։
Քաֆուր վարդը որ կը ծաղկի ,
    Ծաղկէր քո արեւնը նըման ։
Նունուֆար ծաղիկ որ կը ծաղկի ,
    Ծաղկէր քո արեւնը նըման ։
Նարգիզ ծաղիկ որ կը ծաղկի ,
    Ծաղկէր քո արեւնը նըման ։
Լէյլաղ ծաղիկ որ կը ծաղկի ,
    Ծաղկէր քո արեւնը նըման ։
Անթառամ ծաղիկ որ կը ծաղկի ,
    Ծաղկէր քո արեւնը նըման ։

Անուշ ռէհան որ կը հոտէր ,
    Անուշ հոտէր քո թագուհին ։

Ծիրանի ծառ որ կը ծաղկէր ,
    Ծաղկէք դուք էլ ինոր նըման ։
Ալուչի ծառ որ կը ծաղկէր ,
    Ծաղկէք դուք էլ ինոր նըման ։
Գիլազի ծառ որ կը ծաղկէր ,
    Ծաղկէք դուք էլ ինոր նըման ։
Նշի ծառեր որ կը ծաղկին ,
    Ծաղկէք դուք էլ ինոնց նըման ։
Խընձորի ծառ որ կը ծաղկէր ,
    Ծաղկէք դուք էլ ինոր նըման ։
Տանձի ծառեր որ կը ծաղկեն ,
    Ծաղկէք դուք էլ ինոնց նըման ։
Նըռան ծառեր որ կը ծաղկեն ,
    Ծաղկէք դուք էլ ինոնց նըման ։

Սերկեւիլներ որ կը ծաղկին ,
    Ծաղկեք դուք էլ ինոնց նըման ։
Դամոնի ծառ որ կը ծաղկէր ,
    Ծաղկեք դուք էլ ինոր նըման ։
Փըշատի ծառ որ կը ծաղկէր ,
    Ծաղկեք դուք էլ ինոր նըման ։
Ճարտաղուկներ որ կը ծաղկեն ,
    Ծաղկեք դուք էլ ինանց նըման ։
Խաղողի ուռ կօճակ կապէր ։
    Պըտկեք դուք էլ ինոր նըման ։
Պընդուկի ծառ պըտուկ կապէր ,
    Պըտկեք դուք էլ ինոր նըման ։
Գողի ծառեր պըտուղ կախեն ,
    Պըտղեք դուք էլ ինոնց նըման ։

Խըռընդատ որ կը չորնէր ,
    Քըսուէր չարկամիդ աչքը , կուրնէր ։
Ճընքաքուկ որ կը չորնէր ,
    Փուշը չարկամիդ աչքը մըտնէր ։

Ուրիշ շատ տեսակ երգեր կան Հայրսանեաց , բայց մենք հերիք համարեցանք այսքանը ․ Միացեալներէն հատուկտորներ արդէն հրատարակեալ կան ։

ՈՂԲ ԱԲՈՎԵԱՆ

(Ռուսերէն թարգմանութ.)

Երկնքի կանա՛նչ կամրջի՛ր, ա՛յ սիրուն
կանա՛նչ կամրջի՛ր.
Լերդս ու թոքս չորացել են, սար ու ձոր
կանա՛նչ կամրջի՛ր։
Դաշտի ծաղիկ ռանգէ ռանգ, ձեզ
նման կանչին ծրն ու կեանք.
Ծաղիկն որ հոտ չունենայ, էլ ի՞նչ օգուտ
ռանգէ ռանգ։
Խնտո՛ւր համբարեմ չէնտուր, չըրխում,
պրծնում անխ մէկ օր
Աշխարհքն ինձ տալս՝ պէտքը չի, թո՛ւր
եմ ուզում ինձ էն տո՛ւր։
Սրտիս մի՛ տար, որ երես, ինձ փա-
թոթես, խորովես,
Հոգիս ուզի՛ր որ քեզ տամ, թո՛ղ մէկ
տեսնեմ քո երես։
Սրտիս կաթել ա արիւն, քո՛ մարմին,
քո՛ արիւն.
Ցես արի՛ աչքովդ տե՛ս, թէ սիրելույդ
ի՞նչ արին։
Աղէկ որ տեսայ՝ ցեխ սաղին, խեղճը
մնաց էն հողանցին.
Հենց մարդ տեսնէ, էն տեղ հողին, չը-
չաղանես դու սաղին։

Ինչ էս տանջվում, ա՜յ Նաչար, որ
չունիս քեզ մէկ աւար ·
Մէկ սիրտ մը դարդոտ չինանայ, համբերութ-
վամ է ու Նաչար ։

Քեզ ինչ արիր կորեցիր, Լեղուկ ինձ
մէկ քաշեցիր ·
Ինչ էս որ եկ էղ թուրը, մէկ սիրտս ուզի՛
կտրեցիր ։

Խառնեց մարդիկ կանչե՛ս, քեզ ես կա-
րոտ քե՛զ, ա՛խ, ես,
Ու դատ անեմ հոգուս, երազս, վերջս
սուզ կ'անե՛ս ։

Էրեց իմ որ, Աշխ՛ն, քա՛նց, կրակ տաս,
տեսնես ինձ մեռած,
Շատ եւ ծառանալ քաշեցիր, ինձ աղաչեց
սուգն ու լաց ։

Ինձանից դառն ծնունդ քաշեցի, վերջ դէս
հոգիս առ քաշուեր ·
Մահիս գերը գրեցէք, դուռ կը արի՛, ձեռքս
քաշի՛ր ·

Այքս ճամբէ՛ս ա, արի՛, արի՛ հոգիս
ա՛ռ, արի՛,
Գիւնակէ տրտմանքն չիմանալ, ախտանջանել եմ
ինչ արի՛ ։

Մի՛ դարտ անեմ ծիրտ արա՛, ինչ ես
էրեխամ սիրտ արա՛,
Էլ քեն միանութիւն աշխարք չի՛, ինչ ատամն
սիրտ արա՛ ։

Անի՛, Անի՛, ա՜խ, Անի՛, քանդողիդ տունը
քանդուի,
Քեզ որ ազգը չի պահեց, մէկ սուգ անող
ի՞նչ անի ։

Ա՜խ, իմ արև մտաւ մէր, մնացի՛
անհէր, անաղբէր,
Դու էիր կեանքս ու արևս, դու էլ գնացիր
ա՜յ իմ մէր ։

Մնացել եմ մէկ կէլում, ա՜խ քաշելով
ինձ սպանում.
Թէ չե՛ս դարտիս վրայ հասնիլ, էլ ո՞ւր ես
ինձ, ա՜խ, էրում ։

Երեսդ բա՛ց ու յետ տա՛ր, ե՛րբ ու-
զենամ՝ հոգիս ա՛ռ,
Թո՛ղ մէկ հողը ա՜խ, մտնեմ, էն վախտը
սիրտդ յետ տա՛ր ։

Տա՛ր էդ հաւին ա՜յ ուրուր, աշխարհքս
տնանկ ա ա՜յ ուրուր,
Մարդի թուրն ա կտուր, խեղճն ո՞ւր
կորչի ա՜յ ուրուր ։

ԷՐԿԱՆ ԿՆԿԱՆ ՍԷՐ

Էրէկ.

Քա կընիկ. Արի անենք բարակ քու-
չիկ, տանք տանենք հինգ վեց էծիկ,
երկու կովիկ ։

Կնիկ.

Դու կ՚անես բարակ բոժիկ, կուտաս կ՚առնես հինգ վեց էծիկ երկու կոժիկ։ Ես էլ կ՚էլնեմ մածուն մերեմ, սերն ը վէրէն։

Էրիկ.

Դու կ՚էլնես մածուն մերես սէրնը վէրէն. Ես էլ կ՚էլնեմ բըռդան կատու, կու դամ կուտեմ։

Կնիկ.

Դու կ՚էլնես բըռդան կատու, կուգաս կ՚ուտե՞ս. Ես էլ կ՚էլնեմ կաղնի կօպալ, վէր քո կողին կոտրատուեմ։

Էրիկ.

Դու կ՚էլնես կաղնի կօպալ, վէր իմ կողին կոտրտուես. Ես էլ կ՚էլնեմ ճութ ճութ խաղող կախուեմ թըփից։

Կնիկ.

Դու կ՚էլնես ճութ ճութ խաղող կախուես թըփից. Ես էլ կ՚էլնեմ սուր սուր դանակ գամ քե կըտրեմ։

Էրիկ.

Դու կ՚էլնես սուր սուր դանակ գաս ծիկ կըտրես. Ես էլ կ՚էլնեմ կարմիր գինի լըցուեմ կպրաս։

Կինը.

Դուն կ'իջնես կապոյտէր գինին լոյսուես կերպով. Ես ալ կ'ելնեմ սարիխօշ մայրս գամ քեզ խաղերով։

Էրիկ.

Դուն կ'ելնես սարիխօշ մայրը գաս ծիկ խոլանը. Ես ալ կ'ելնեմ բարի բարի քաջախիս գամ քե պատուեմ։

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՀՆԱՐՔ

Աղջիկ մը նշաներ են, և անհամբեր կ'սպասէ հարսանեաց աւուր. օրը յայտնի չէ. ուստի դրացիները և ազգականները կ'աղաչէ որ իր մօրմէն իմանան. մայրը կ'ըսէ թէ Այգեկութէն վերջ, երբ գինին եռալէն դադրի, հարսնիքը կ'ընենք։ Խօսք դեռ նոր կծկեր է. աղջիկը մօր հետ այգին կ'երթան. կը դառնայ աղջիկ կը նայի կարասներն, ինքն իրեն հեծեծեալ թողու կը մրմնջէ. միտքն այն է որ մօրը բան հասկցունէ։

Թօ՛, թօ՛, թօ՛.
Ն՛որ հասունցայ,
Ն՛որ քաղուեցայ,
Ն՛որ քամուեցայ.

Ն՛րբ գինւանայ,
Ն՛րբ խմւանայ,
Ն՛րբ տանանայ,
Ն՛րբ տինինի . . .
Թօ՛, Թօ՛, Թօ՛։

ՀԱՐՍՆ ԵՒ ԿԵՍՈՒՐ

Երբ հարսը եկեղեցիէն փեսայի տունը կը բերեն, կեսուրը տան դրան առջև կ'ելնէ խաղալով հարսին դիմաց. հարսին գլուխը համբուրելու ժամանակ, զանի վախցնելու համար կ'ըսէ.

«Երկաթ եմ ես,
Պողպատ եմ ես»։

Հարսն ալ կեսրոջ ձեռքը համբուրելով՝ քօղի տակէն կ'ըսէ.

«Կեցիր մինչ ոտքս ձգեմ 'ի ներս,
Երկաթ պողպատ քամեմ, դու տես»։

ՆՈՐ ԱՌԱԿ ՄԸ

Գայլը օր մը կը մտնէ գեղի մէջ. գեղի շները չորս կողմէն կը պաշարեն և հաջոցներով զանի կը զարհուրեցնեն. վերջին ճգնաժամն է հասեր. հայ հա՛յ է որ պիտի բրդզեն զինքը. կը դառնայ գայլը իր շուրջը կը նայի, կը տեսնէ որ Բրուտի շունն

ալ մէկալ չներուն հետ իրեն վրան կը յարձակի · կ'ըսէ անոր · Ծո՛ Բրուտի շուն, սա ուէսի շուն կը հաջի, իրաւունք ունի, ուէսի կտուրէն (երամէն) ոչխարմ՝ երկու կիրեր եմ · իրիցու շունն՝ իրաւունք ունի, որովհետեւ իրիցու ճիւղէն (փոքր հօտ) մէկ երկու գառ կերեր եմ · Նոյնպէս համբա-ներու չները, մինչեւ գզիրի շունն ալ իրա-ւունք ունի · որովհետեւ քանի մը ուլ ու-նի · բայց քո տէր բրուտ է, եւ ամենեւին ոչխար մը չունի · Ես խօ՛ չէկայ բրուտի ամաններ կերեր էի · դու ինչո՞ւ կը հաջես, անիրաւ ։

—Ես այդ քաղաքական իրաւունք ու-նենամ չունենամ, իմ բնական իրաւունքս է, ուր որ գայլ տեսնամ վրան յարձակիմ · եւ երբ իմ ընկերներս կը հաջեն իրենց իրաւանց համար, եթէ ես չը հաջեմ եւ անոնց հետ չվազեմ, ապա ուրեմն ես շուն չեմ ։ —Միթէ ես մա՞րդ եմ ։ Օ՛ն անդր 'ի սատակումն — ։ Եւ պատառեցին զգայլն։

ՎԱՆԱՑ ՊԱՌԱՒԱՆՑ ԱՂՕԹՔ

Հայր մեր յէրկինք ւէրկրի · · · · · ։ Աստուած քաւեա զիս մեղաւորս ։ Տէր ներող, տէր ողորմեա ։ Տէր գթած, տէր ողորմեա ։

Տէր, դու ստեղծեր մի՛ կորուսեր։

Քաղցրիկ Քրիստոս, քե իմ կանչէ, քո ստեղծած հոգին մի՛ կուրխեր, քո ճամ հէն մի՛ հաներ։ Չը հանես ահն սըրտէն, չտանես ամօթն իրիսէն։ Աստուած քե փառք, գոհանամ քեզնից։

Ստեղծեր ես, դու հուն հանես։

Ճար արող տէր, դու ճար անես։

Լոս արող տէր, դու լոս անես։

Հոգացող տէր, դու հոգաս։

Զըմէն անճարոց ճարիկն անես, ապա մե։

Ճար չունեմ, իմ ճարն դու ես, մայր ողորմութեան սուրբ Աստուածածին։ Մայր մեր, մայր Քրիստոսին։

Տէր, քե մեղայ։ Անդարձիս դարձ տաս, անզեղչիս զեղչ։ Պոռնիկ, սևերես, մեղաւոր եմ, Տէր, դու գիտես։

Իմ մեղք շատ ի քանձ աւազն ծովուց, քանձ աստղունք երկնուց, քանձ հողն երկրի։

Տէր, դու գիտես, դու ողորմես, քո ողորմութեն անչափ ի։

Անգումանք թէ գումանք դու հասնես, Տէր։ Ցըմէն չառից, յըմէն փորձանքից պարզիրես պահես։ Անզգամի չառից, անզգամի լեզուից ազատ պահես։ Ամա՛ն տէր, դու վատ օր նշանց չիտաս։

Բարիլուսու սիրուն Քրիստոս , քեզ եմ կանչեր ։ Քաղցրիկ տէր , ձեռնիկս քո փէշին եմ թալեր , հոգիս քեզ ամանաթ եմ տուեր ։

Ջէտ պէտ աստղունք, օգնական պահապան կայնէք ։ Գաբրէլ Մուքայէլ հրեշտակներաց հետ մե աղատէք յըմէն փորձանաց , չար մարդուց , չար սըհաթից ։

Մաղմոտացի՛ , մաղմոտաւոր աղօթրան ։ բացուի՛ բարիլուս վէր յըմէն անճարներաց , վէր յըմէն կարիք կուրբաթներաց , ինոնց սատաղէն վէր մե ։

Շաղաթաթախ աղօթրան , դու բարի օր , բարի գըսմաթ բերես մե ։

Եա՛ կամաւոր ժամեր պատարագներ , դուք հիմդադ հասնէք յըմէն ղարիբ ղուրբաթին ։ ինոնց բանին գործին յաջողութեն տաք , ինոնց սատաղէն՝ մեր ղարիբնեկաց ։

Աստուա՛ծ , դու չար ուզողին՝ բարի տաս ։ ինչ որ կայ կաշու տակ , չթողնես էլնի կաշու իրես ։

Եա՛ սուրբ սրբերէնք , ձեռնիկս ձեր փէշն եմ թալե ։ դուք օգնական բարեխօս կայնէք ։

Բարիլուսու բարի Քրիստոս , դու թեւթրիկ ցաւիկ , հանգիստ մահիկ տաս ձիկ ։ իմ պաւկնեկաց արեւշատութեն տաս ։ իմ ղարիբնեկաց արեւշատութեն տաս ։

տատանկաննեկաց ոժ ու կարողութեն տաս․ իմ ձէթկլիկ ձագեկաց ձէնիկը դառնաս․ հաւասար ննջեցելոց քաղցրիկ արքայութեն տաս։ Հացին էժնութեն, ջրին առատութեն, անձրևու շատութեն, մեր բաղում մեղաց թողութեն, մեր լոս հաւատքին հաստատութեն, երկրի ճոչերաց սէր խաղաղութեն, Հայոց ազգին միաբանութեն, ազատութեն։

Աստուած, քե փառք, ումուտս քե եմ տարե, դոհանամ քեզնից․ Աստուած, իրեաս քե հող ու մոխիր։ Տէր, դու գիտես, դու ողորմաս։ —Հայր մեր․ ․ ․։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՐԵԼՈՒԿՆԵՐ

Ժողովրդեան զուարճութեանց և սըրամտութեանց մէկ միջոցն ալ է հանելուկներ և առակներ յօրինել․ Հայերն ալ իրենց համար Եզովբոսներ և Լաֆօթնէններ ունեցեր են։ Անշուշտ Խիկարն մեծ հեղինակ է առակախօսութեան և առածներու, ինչպէս իրաւամբ դիտած և ընդարձակ գրած է գիտնական Գեր․ Գաբրիէլ Ս․ Արքեպիսկոպոս Այվազովսքին Հա-

զօր և մի տառածներու յառաջաբանութեան մէջ։ Հայաստանի մէջ նաև շատ տեղեր կը գտնուին Աղուէսագիրք անուանով գիրք մը․ իսկ ժողովրդոց բերանը լի են առածներ, առակներ և հանելուկներ, և այն ամեն յայտնի է որ Հայոց գիւտ և հեղինակութիւն են․ վասն զի Հայոց կեանքի հանգամանքներով շինուած են և Հայաստանի կենդանեաց, բերքերուն, բոյսերուն, և սովորութեանց վրայ խօսելով իրենց բան կը կազմեն․ ինչպէս որ է[illegible]իա-կական Հայ առակագիրն Մխիթար Գօշն։ Հազիւ ուրեք Պարսկաստանի խառնուրդ և տիպ կը ցուցնեն, բայց և այն բնական է, իբրև դրացի ազգի։

Ժողովրդական առածները բաւական ծանուցեալ են բանասիրաց, դրեթէ մեծամասամբ հաւաքեալ և տպագրեալ են 'ի զանազան հանդէսս և պարբերականս․ Նոյնպէս և հանելուկներն և առակներն․ թէպէտ տակաւին շատ բան կը հաւաքուի, և ես մաս մը ունիմ, հանդերձ կաճէոցի ծառերու (պակասամտաց) վրայ շինուած առասպելներով․ բայց տեսնելով որ բաւական ստուար եղաւ Մանանայս, կը պահեմ այլ պատեհութեան։ Եւ որոցմէ գումար մը 'ի ձեռին ունէր մեր Հայրենակից ուսումնական Փ. Մ. Անանեան,

որ այժմ 'ի Ս. Գ. Բուրգ կը գտնուի, և կ'ուզէր հրատարակել՝ հանդերձ իմաստասիրական տեսութեամբ մը. յիշեալ Գարոնը արդէն 'ի Գերմանիա լեզուագիտութեամբ պարապած է, և Աջնիւ Հայրենասէր Սանասարեանցի բարերարութեամբ ուսանօղներէն մինն է, որոյ յաջողութիւն 'ի սրտէ կը ցանկամք :

Հանելուկ՝ աշուղներու մէջ աւելի շատ կայ, և այնու մէկզմէկ կը յաղթահարեն. և յաղթեալն յաղթողին անձնատուր կը լինի, իր սազը տալով. իսկ մեր գրականութեան մէջ Շնորհալին կը տեսնենք, որ այնքան բարձր և վսեմ սրբազան երգեր և աղօթքներ յօրինելուն հետ, մանկական հանելուկներ ալ յօրինած է, ինձ կը թուի թէ՝ ժողովրդեան բերան եղածներէն առեր կանոնաւորեր է :

Հայոց ժողովրդեան մէջ կայ և մէկ ճարտարութիւն ալ. տղաներէն և ճընճղուկներէն լեզուով խօսիլ. բառադարձութեամբ խօսիլ, զր. փոխանակ հաց ի, ցահ ըսել, փոխանակ ծոցը ի, ցըոծ. և այսպէս ամեն բառ և բայ յեղաշրջել. մինչև անգամ երբեմն ալ գրով այս ոճերը գործածած են. և ծանուցեալ է այն որ եղբայրագիր կ'ըսեն, այսինքն փոխանակ ա ի՝ բ, փոխանակ բ ի՝ գ, փոխանակ գ ի

ջ, և այսպէս յաջորդաբար · զր, ոսկի գրելու տեղ՝ կը գրէ ըճհը, կանոն գրելու տեղ՝ կը գրէ նեշեհ, ևն ։ Կայ և կերպ կերպ ծածկագրութիւնք · ահաւասիկ անոնց մէկ տեսակը · բոլոր այբ ու բենն չորս բաժին կ'ընէ ; ինչպէս մեր հին քերականները ըրած են .ա, ժ, ճ, ռ · այս չորս տառերուն իւրաքանչիւրին միջոցը ինՆական տառ կայ · Նախ ուղիղ գիծ մը կը գծէ, և գրած բառին իւրաքանչիւր տառը ո՛ր սիւնակին որ կը վերաբերի, նոյն գծին տակի դրուած կէտերով կը հասկցուի · իսկ գծէն վեր շարուած կէտերն ալ կը ցուցնեն թէ ա, կամ, ժ, կամ, ճ, կամ, ռ էն ետքը քանի՞երորդ տառն է · ահաւասիկ ձև մը կը դնեմ հոս ·



ե ր կ ի ն ք ո ր ո տ ա ց,



գ ա ր ն ա ն ն շ ա ն է ։

Այս կերպով կրնայ երեք սիւնակի, կամ հինգ, կամ քանի որ ուզէ բաժնել

տյք ու ընեն, և սոյն կարգով գրել գրելիքը · յիշել պէտք է Անիի ծածկագրութիւնը: Իսկ երբ ուշադրութիւն դարձնենք Ագուլիսի և Զէյթունի Հայոց գաւառական տեղական լեզուին վրայ · իրօք հանելուկ մ'ալ անոնց լեզուն է · զր · գիտնական Մեսրոպ Թաղիադեանցի գրածներէն Ագուլեցւոց մէկ կտոր խօսքը դնենք այստեղ:

«Նահալ ամ, տահալ ամ, ահալ ամ, տկալ չի» · այսինքն, գնացի, տեսի, ասացի, ոչ եկն: Կա՞յ Հայ մը՝ բաց 'ի Ագուլիսցիներէն որ կարող լինի հասկնալ այս Հայերէնն · այլ սակայն իր մէջը կանոն մը ունի բայերու լծորդութեան, և ցի և «ի փոխանակ հ կը հնչէ, ինչպէս դիտողի մը պարզ կ'երևի · գրեթէ շատ տարբեր չէ նաև Զէյթունցիի լեզուն · և անոր մէջն ալ կը նշմարուի կանոն մը, որ փոխանակ «ի» կը հնչէ · զր · հաց ըսելու տեղ, հոց կ'ըսէ · և գլխաւորապէս ձայնաւոր գրերու մէջն է անոր փոփոխութիւնն: Ասոնց քով քիչ մը պարզ կը թուին Վանայ և իր շրջակայ գաւառաց լեզուները, ինչպէս Խիզանցւոյն, Մոկացւոյն, ևն:

Ժողովրդեան մէջ մէկ հնարք և կրթութիւն ալ կայ լեզուի դիւրաթեքութեան համար · յատուկ այս նպատակի համար տեսակ մը բառերով խօսք մը կը կազմեն,

և անսխալ արտասանողն պարծանք կը վաստըկի․ օր․ «Քեռի էլ առ էն քուէլայ լօռ ալիւրէն»։

«Ուլն էլաւ ուռի ծառ, ուլն իւր ուռով ու ոլորեց»․

«Մեր բաղչան կայ տասն տանձի ծառ, տասն տանձի ծառի ծէրին տասն ծանր տանձ»․

«Ձեր բաղչան կա՞յ տասն տանձի ծառ, տասն տանձի ծառի ծէրին տասն ծանր տանձ»։

«Ջուկ ձըգեմ ձուկ ուտեմ, մուկ ձըգեմ ձուկ ուտեմ»․ եւ․ Եօթնիցս կրկնելու է առանց անսխալ, և արագ արագ։

ԱՀԱ ԵՒ ՔԱՆԻ ՄԸ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

(կարնեցւոց և վանեցւոց)

Ամպ և որոտում․

Հանք մը ունիմ հանայ հանայ,
Կտտուչըներ մըսըրխանայ․
Կաթնաղբիւրէն ջուր կը խմէ,
Արընծովէն ձէն կը հանէ։

Թուղթ .

Սարէն գլորեցի չը կոտրաւ ,
Ձորէն գլորեցի բան չեղաւ ,
Քարի տակ դրի չկոտրեցաւ ,
Ջուրը ձգեցի փլխորեցաւ ։

Փշատ .

Թօփ մը ատլաս ունիմ՝ Թէզկէն չէ տեսեր ,
Ջուալ մը ալիւր ունիմ՝ ջաղացք չէ տեսեր ,
Կոճ մը ունիմ՝ մէջէն չէ տեսեր ։

(Կակալ) Ընկոյզ .

Տօլապ մը ունիմ՝ չորս աչք ունի ,
Ամէն աչքին մէջ մէկ մէկ հաց ունի .

Սուրն և պատեան .

Փտած փայտը փորեցի ,
Ասլանը մէջ թաղեցի ։

Հրացան .

Լուսնը թռաւ կայրագետին ,
Ձէնը տուեց ագլորին ,
Ինքը գնաց Եզդադ ,
Ձէնը գնաց Բաղդադ ։

Արեւ .

Սարէն կուգայ սլվլալէն
Ոսկի բեխեր պլպլալէն ։

Աւ, Ջուր, Գետ, կամուրջ.

Անծիլն Անծնին բարձին
Անդադարի երդիքէն անցուցին ։

Բերան և ակռաներ.

Մարագ մ՚ունիմ Աստուծոյ շինածն է,
Մէջը լեցուն մարմար սիւներ տնկած է ։

Նամակ.

Դաղդան դէլիր աղամ իլէ,
Իչի դօլի բադէմ իլէ,
Նէ՛ աղզի վար նէ՛ դիլի,
Սէօյլէնիր ադէմ իլէ ։

Կարմիր ձուկ, Մոխրակէ փառալան, խարոյկ, փարատոն.

Սուղան քիլիդ, օդունտան անախդար,
Ավ գաչտի, ավճի թութուլտի ։

Գիշեր, տուն.

Սեւ արար բեխն օլորեց,
Անդար հազար մարդ գլորեց ։

Մածուն ծծամով հարկանել, Բանը ցրանել, Եղը ամանով Բաղել.

Էլ վէր էլին, թագաւոր վէր սէլին,
Թվանքով զարկին, կող ծակեցին,
Արիւն թաղէ թաղ ցրուեցին,
Ոսկոր մէջ տան թաղեցին ։

Ճրագակալ ·

Երեք ոտնէն մէկ մօրուսէն ,
Կայներ կ'ուտի մեր հօր քէսէն ։

Հնոցք ·

Մեզ տուն մը կայ տուն մ'էլ ինե ,
Դեղին Դաւիթ նստե ինե ։

Սառոյց ·

Սեղան սատափէ , ոտքերն արծաթէ ,
Լուսնակն ի փակ , բանլիքն արեգակ ։

Տրեխ ·

Էն ի՞նչ է , կապեմ կ'երթայ , արձկեմ՝ կը կենայ ։

Աչք ·

Սև սըլայ , սիփտակ սըլայ ,
Խաթունն ինե կը ճլվլայ ։

Գերեզման ·

Մութը տուն , ամբլիկ քուն ։

Ձի և ասպանդակ ·

Մսէ բերդ , երկաթէ դարանջայ ;
Ոտքը դրի իջայ ։

Ականջ ·

Մեզ հոր մը կայ , աշխար երկիր ինչ որ կայ՝ մէջ կ'իյնի ։

Հոր .

Քանի կտրեմ կ'երկննայ,
Քանի տաշեմ կը հաստանայ ։

Ցորեն ցանել .

Բռնեմ ափովս, թալեմ թափովս,
Մեռնի տարով, ապրի բարով ։

Գլխու — քունք, ճակատ, յօնք, աչք, քիթ,
բերան, ակռաներ .

Մեզ ծառ մը կայ ճըճան է,
Ճըճանի տակ մէյդան է,
Մէյդանի տակ ղալամ է,
Ղալամի տակ կթխայ է,
Կթխայի տակ զուռնայ է,
Զուռնայի տակ մարագ է,
Մարագն իլին ուրագ է ։

Նուռն .

Ընծակ մարգարիտ, անոլոր դերձան,
Աստուած կը չարէ, մարդը կը քակէ ։

Շուն .

Երկէն վազէ, բոլոր նայէ,
Դնչամեան մօտ տուճաման ։

Կրիայ ․

Քար վէր քարին քար չէ ,
Կ'արածայ՝ տաւար չէ ,
Ջու կ'ածէ՝ հաւ չէ ։

Պատրոյգ և ճրագ ․

Օձ մէջ ծովուն ,
Գլուխը պսպղուն ։

Գիր ․

Սպիտակ արտ մ'ունիմ,
Ձեռնովս կը ցանեմ, բերնովս կը քաղեմ։

Աքլոր ․

Մեզ զատ մը կայ զատոց է ,
Թագն 'ի գլուխ սղոց է ,
Գիշերուան մեռելյարոյց է ։

Հերիք կը համարինք այսքան հանելուկներ ։ Երբ վարպետը հանելուկ մը կ'ըսէ, ունկնդիրներէն հարցում մը կ'ուղղուի իրեն թէ՝ ի՞նչ եղա է ։ Նա ևս կը պատասխանէ՝ Երկաթ է , կամ՝ փայտ է , կամ՝ կենդանի է , ՝ևն ։ Իսկ եթէ Եղան հարցանողն չկրնայ լուծել հանելուկը , գիտցող

Կարնեցիք Ջան+ կ'ըսեն հանելուկին ։

մը կ՚առաջարկէ անոր թէ՝ Պղնձէ քաղաք ինծի տուր, որ ըսեմ։ Շատ դժուար բան է Պղնձէ քաղաք տալ. վասն զի այնուհետև կ՚սկսի երկայն շարք մը բանից, որքան գէշ և խայտառակ բան կայ՝ կը վերագրէ չը գիտցողին, և լաւն ու պատուաւորն՝ իրեն, և ՚ի վերջոյ կը լուծէ,

---

ԴԻՒԹՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԲԺԺԱՆՔ

Ընդարձակ չպիտի խօսիմ հոս այս նիւթին վրայ, վասն զի ամենուն գիտցած բանն է և մինչև մեր օրերն իսկ շատ մարդոց գլխուն վրայ, թևին վրայ, պարանոցէն ՚ի կախ եռանկիւնի ծալուած թուղթ մը կը տեսնանք կաշիի կամ արծաթ ամանի մը մէջ զետեղուած. ադոնք զանազան ախտից և չարեաց պատահարաց դէմն առնելու, անհետ ընելու համար հնարքներ և հրաշքներ համարուած են։ Սիրոյ թուղթ մը կը գրեն, և կը պատուիրեն տանել իր տարփալւոյն ճանապարհին վրայ, կամ անոր տան շեմին տակ թաղել, կամ թըլըսմ մի գրել մչկով, զաֆրանով, վարդի ջրով, և եօթն ակնէն ջուր բերելով թուղթն ՚ի մէջ ձգել, ուզածին խմցնել, որով պիտի

սիրահարի եղե՛ր անոր ։ Ջարոց թուղթ մը կը գրեն , և կը պատուիրեն որ կարէ զայն գլխարկին վրայ , կամ անթին տակ , որ չար ոգիներ չիշխեն մերձենալ , և չար աչքէ ազատի ։ Գլխացաւի , փորացաւի , և տենդի , ու զանազան ցաւոց իբրև դեղ՝ կամ թուղթի վրայ , կամ ուռի տերևի մը վրայ բան մը կը գրեն , և կը պատուիրեն որ ջուրը ձգէ խմէ , և կ՚անցնի ։ Կորուստ մը ունենաս՝ ռամ կը գրէ , և զանազան հրահանգներ կուտայ քեզ զայն գործածելու համար , որով գողը և գողօնը կը գտնես ։ Թողում այն որ հորի մէջ կը նային , թասի մէջ կը նային , գուշակութիւններ կ՚ընեն ։ Հետաքրքիրներուն զուարճութիւն մը առթելու համար հոս կը դնեմ երկու կտոր բան դիւթական ըսուած թուղթերէն ։

Խնուսայ Գօմանդուկ գիւղի մեր բարեկամ ուէս Մհերի երկամեայ Դաւիթ մանկան գլխին վրայ կարուած էր հետեւալը , զոր քակեցի , և բնագիրն ալ քովս ունիմ ։

«Սուրբն Թորոս նստեալ գրէր և դար-
«ձեալ ջնջէր և չարակըն պատառէր իւր
«միտս խառակըն կուրացի խածակըն խա-
«ւարի դրուցակըն ցամաքի աղի մաղի կը-
«մըրխի սարերի ելնէր հովիւըն ծերունի

«արածէ զհօտըն ծիրանի կթէ զկաթըն «ծէրանի անխաղաց պտնիր եհան ով որ «տեսաւ զարմացաւ ով որ կերաւ պատա«ռեցաւ նոյնպէս պատառի չար ակն «չար միտք չար սիրտ չար սըհաթ չար «խորհուրդ 'ի դիմաց ծառային Աստուծոյ «Մհէրի որդի Դաւիթին ամեն պահպա«նութեամբ սրբուհոյ Աստուածածնին և «սրբոյն Յօհաննու Կարապետին եղիցի պա«հապան Դաւիթին ամէն » ։

Ահաւասիկ և գողօնք գտնալու թըլըսմ մը, զոր 'ի Պօլիս մեռած վանցի Մ. ի շատ մը այսպիսի թղթերէն հանելով տուաւ ինձ հայրենակից մը ։

Գողի համար առ 2 հատ անծակել մարքըրիտ 7 հեղ խըլաղ կարդա ի վերայ դիր հուրըն որ ճաթի բազում անգամ փորձած է այս բանը ։

«Գողի համար առ 7 հատ փախլայ ի վե«րայ փախլային զայս տըլսմն գըրէ և կար«դա 41 հեղ անունով ձըքէ ջուրըն գիշեր մի կենայ կուռենայ փախլան և այն առ«նող մարդն ալ կուռենայ կու բերէ եւտեւ փախլան չորցուր որ ազատի չենէ կու մե«ռանի, տըլսմն այս է ։

չայս եայս սհա 'դար քոնթ քէֆ
պե եայս

Բաղուկ և տապակ և սոլաք և սե-
թըռանփիլաք քանարուկ անսեայ և թու-
ըախաթիս լսարաւոնի յիշեցի անուն սուրբ
քոյ շուտով կատարեցեք որ կամիս իմ և
գողացացըն դառնունն առ տէրըն ամէն։

Մալ հանելու որ տեղ կուման ունես նէ առ առուճ մի հարտալ 7 հեղ կարդա ի վերայ խունկ թուս տուր ։

Այն տեղըն հարդալըն ցանէ մալ կա նէ կամ ուր տեղ է նէ հօն կու ժօղօվի կամ թէ չիկա նէ չի ժօղօվիր ․ կարդալիքը այս է ․ Նըղղուն շարքմու պար համջեւն հմու աշընտին դուպայ վտայ հըմ ֆըլխս նալիմս նազ ֆլեւ հրուսայաթ ․ ․ ․ դէմ իրոեայ սանմին հայել պհախ նամարաչքնսն հաղայել խար տազ պհախ մօտ անլի ֆին այֆայ էմն զել հայել նաշեմինհի։

Մալ հանելու. այս դըլսմն գըրէ ճերմակ կամ սև խօրօզին ոտքըն կապէ մալ ուր է նէ հօն երթայ խօսի ոտքով փօրէ քեզ ցուց կուտայ ․ թլսմն այս է ։



Մալ հանելու առ աւուծ մի տաւուխ վերայ կարդա 7 հեղ խունկ ծըխէ այն տեղըն մալ կայ նէ կամ ուր տեղ է նէ հօն կու ժողովի չիկա նե չի ժողովիր․ կարդալիքը այս է ։

«Միսմիլահի ռահման ռահեմ ըռօհըռ ղուտուզ էլահ խզ ու հիտ նիր թու դահի բշրաղու լաթ աթէն ալ մէնալահ թհին մարիփաթուհու մահդայ ատու քուլումին իրայ ղուբրու եալասուսն աքաս ահայա ահուայել միլ ալ պիւյթալ ջամ եաթմուֆ րայառի մուֆի աթայ մանհու էմ սե հու-հու ալաղհի են թիաթհի մանալ մայեհ ամին ։

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՆ ԵԻՍ ԲԺՇԿԱՐԱՆԷՆ

Մալհամ ուռեցքէ և խոցէ ․

Նախ պխոցն լուա տաք գինւով, յետոյ հաւկթի սպիտակուցն զարկ ձէթ եղով որ մալհամ լինի․ քսէ 'ի վերայ լաթի և դիր, ուռեցն քաշէ և խոցն շուտ լաւցնէ, օգտէ Աստուծով։

Մարդ որ վայր անկանի միսն կամ ոսկորն ցաւի, ոչխարի խլիկն առ և երկու հաւկթի դեղնուցք, և Ն․ տրամ գաղարի

սերմ, Ն․ արամ զարդաչու․ այս երկուքն լաւ ծեծէ, իւրկն և դեղնուցքն խառնէ, մայլհամ արէ, և ոչխարի իւրկով լաւ մա-ծել տուր, և մայլհամն կտաւի վերայ ցա-ւած տեղին դիր, լաւանայ Աստուծով։

Առ սոխի հունտ վարդի եղով տապկէ, և կարմիր շաքրով կեր․ ինչ տեղ որ քամի ունիս՝ տանէ։

Հիւանդն՝ որ լեզուն կապուի, կանափի եղն դարանն (ոտքի տակ) քսէ՝ կու բացուի։

Մարդու փորն որ օձ մտանէ, առ տատասկ փուշն և ընկուզի կթունն՝ եփէ և խմել տուր, զօձն սատակէ։

Կին՝ որ կաթըն չունենայ, նա բողկն քաշէ և 'ի ջուրն մեղր խառնէ և խմէ՝ յորդի։

Ցորժամ մա՛րդ բարկացող մնի և բար-կութենէն ցաւ հանդիպի, դեղն այս է․ Ա՛ռ լէհանայ, եփէ, և ա՛ռ սակաւ մի թիրեաքի Ֆառըզ, լէհանայի ջրով տրորէ և խմէ անօթուց, բարկութենէն ազատի Աստուծով։

Փորացաւի դեղն այս է․ Չբադլան ա-ղա՛, և մեղրով տուր ուտէ, փորցաւն կտրի Աստուծով։

Վասն փորացաւի որ արիւն գայ, դեղն այս է․ Առ զազխն և քամէ, և պուտուկն առկ և 'ի ներս հին պանիր կտորէ և եփէ,

և տուր որ խմէ․ կապէ զփորն, օգտէ Աստուծով։

Խուլք՝ որ ելանէ մարդոյ վիզն, ոչխարի ճրագունն և չամանն ծեծէ վերայ դիր, հալէ․ խոցն՝ որ խռովի, խողու ըղուղն գինւով եփէ՝ վերայ դիր․ խոցէն՝ որ արիւն երթայ, բաղլի ալիւրն ցանէ, օգտէ Աստուծով։

Մարդ որ սիրտն դփդփայ և խաղայ, առ քաղցր և թթու նուռ, եփէ, և ջուրն տուր խմէ ԺԲ․ օր, օգտէ Աստուծով։

Ուռեցուորին, զգորտան կանանչ բուրդն որ ջրին եզերք կու ժողովի, առ զայն, և ամուր քամէ ձեռօքդ, և դիր 'ի թասն, և լաւ տաքցու, և դիր 'ի վերայ կրակին եփէ, վար առ և տարածէ 'ի վերայ ուռած մարմնոյն, մեայ, լաւանայ Աստուծով․ փորձած է։

Դիտմամբ այսպիսի վեր 'ի վերոյ բաներ օրինակեցինք, որպէս զի մի գուցէ հետեւողներ և փորձողներ լինին, որ շատ զգուշալի է։ Բժշկարանի մէջ շատ մը աչացաւի, աղեաց ցաւի, և կանանց հիւանդութեանց վրայ կը խօսի, մալհամներու կերպեր կը ցուցնէ և զայն գործածելու եղանակներ։

Քանի մի ևս զուարճալիք՝ Նոր բժշկարանէն։

Թէ ուզես որ խիար և ձմերուկ բու-

սուցանես, այսպէս արա. Առ սև կատուի գլուխն կտրէ և թաղէ որ փտի, յետոյ դու հողն բաց՝ որ հող է դարձեր. աչքերն հանէ, տեղն՝ խիարի կամ ձմերկի հունտ ած թաղէ. որ բուսնի և քամիլ լինի, այն որ հունտն բռնէ, այն հնտիցն ո՛ր տեղ թաղես՝ առժամայն բուսանի։

Թէ լապստրակու ճրագունով անձնդ օծես, ուր երթաս՝ դքեզ չտեսանեն։

Թէ ուզես որ մարդն գինովցունես, գազարի սերմն թրջէ, քամէ, յետ գինւոյն խմել տուր, շատ կու արբի։

Թէ կամիս մկունք ժողովին, կաղինն ծխէ, վրան ժողովին. դու կոտորէ նոցա։

Ծծումբ և քացախ լից շուշի մէջ, լոյս տայ։

Աղօթք վասն ըմպանակին.

Ո՛վ ամենօրհնեալ այգի, որ զերկնային զօրութիւն և խասիաթ դու ՚ի քեզ ունիս, որ և այսքան պարգևք ետ քեզ բարերարն Աստուած վասն փրկութեան մարդկան. նաև մեք տաժանեալքս մեղօք գոհանամք յամենառատ ողորմութենէ քումմէ Տէր Աստուած մեր, և խնդրեմք ՚ի քէն, որպէս հրամայեցեր Կիպրիանոս Թագաւորին . . . վասն դեղոյս. և դեղս

օրհնեալ է Աստուծոյ և ամենայն սրբոց նորա ։ Դու ես Թագաւոր ամենայն խա-տից, և որ գոյացուցեր զքեզ և պարգևեաց քեզ բժշկութիւն ազգի մարդկան ամենայն ցաւոց և անուանք անեղին և անմահին Աստուծոյ ողորմածին և բարերարին Աստուծոյ և Ս. Առաքելոց, Մարգարէից, Մարտիրոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Կուսանաց, Ջինուորաց և Ս. Հրեշտակաց և Հրեշտակապետաց, և ամենայն Երկնային զօրաց, ևս առաւել ամէնօրհնեալ Ս. Կոյս Աստուածածնին բարեխօսութեամբ օրհնեալ լինիս դու, Լօշտակ, զօրութեամբ Ամենակալին, աջովն Անեղին, բազկովն Հզօրին աղստահարեալ փանեցին և խորտակեցին դևք, և քակտեցին մեքենայք, և սասանեցին խումբք, և չարժեցին հիմունք այսոց պղծոց. և դու լինիս օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան ։

Եօթն անգամ ասա և ապա հանէ իւր արմատովն. և յորժամ քաշես՝ պտուղն պտղեցո 'ի սուրբ աման, պահէ. թէ հանց հանդիպի որ չորս ճեղ լինի, նոր ամանի մէջ ծրարէ, պահէ ։

ՀԱՒԱԽՕՍ

Ա· Թէ թռչուն ծրտէ վրադ.
Բ· Թէ յերազն գէշ ձայն գայ.
Գ· Թէ մարմինդ խաղայ.
Դ· Թէ մուկն վրայէդ անցնի.
Ե· Թէ ճանճ մտանէ բերանդ.
Զ· Թէ կրակն թռչի.
Է· Թէ կրակն զրուցէ.
Ը· Թէ սիրելւոյդ իրք մի խնդրես.
Թ· Թէ ձեռացդ իրք մի ընկնի.
Ժ· Թէ կրիայ կամ կուզ տեսանես.
ԺԱ· Թէ օձ տեսանես.
ԺԲ· Թէ գազան կամ անասուն տեսանես.
ԺԳ· Թէ յանկարծակի փառք տաս Աստուծոյ.
ԺԴ· Թէ գինին թափի ձեռացդ.
ԺԵ· Թէ պոչատ կատու տեսանես.
ԺԶ· Թէ հեծկլտաս.
ԺԷ· Թէ յերբ ծուխն վերանայ.
ԺԸ· Թէ կրակն ձայն ածէ.
ԺԹ· Թէ շունն 'ի քուն հաչէ.
Ի· Թէ մուկն 'ի թոռն ընկնի.
ԻԱ· Թէ հանդերձդ այրի.
ԻԲ· Թէ քոմոս մարդ գայ 'ի տունն.
ԻԳ· Թէ ղումաշիդ գէշ իրք հանի.
ԻԴ· Թէ յանկարծակի ճրագ անցնի.

ԻԵ· Թէ երազ տեսանես ·

ԻԶ· Թէ զրոյցն ճշմարի՞տ է թէ ոչ ·

ԻԷ· Թէ պատերազմ գնա՞մ թէ ոչ ·

ԻԸ· Թէ յաղթեմ թշնամին թէ ոչ ·

ԻԹ· Թէ սէր լինի՞ ընդ թշնամւոյն թէ ոչ ·

Լ· Թէ 'ի ճանապարհին կենդանի հանդիպի ·

ԼԱ· Թէ մեռածի վրայ ելանես ·

ԼԲ· Թէ ականջդ գոչէ ·

ԼԳ· Թէ մարդ 'ի քունն ձայն ածէ ·

ԼԴ· Թէ մարդ 'ի քունն խօսի ·

ԼԵ· Թէ աման մի յանկարծ խորտակի ·

ԼԶ· Թէ իրք մի ընկնի կամ փլչի ·

ԼԷ· Թէ կաքաւի ձայն լսես ·

ԼԸ· Թէ փայտն ձայն ածէ ·

ԼԹ· Թէ իւղ կամ կաթ 'ի վերայ հանդերձիդ թափի ·

Խ· Թէ երակօք արիւն առնուս ·

ԽԱ· Թէ աջ ափդ կըծի ·

ԽԲ· Թէ ձախ ափդ կըծի ·

ԽԳ· Թէ ներբանն կըծի ։

ԽԴ· Թէ ձախ ներբանն կըծի ·

ԽԵ· Թէ նոր տուն մտանես ·

ԽԶ· Թէ մայր հաւն խօսի ·

ԽԷ· Թէ ճանապարհ երթաս ·

ԽԸ· Թէ ագռաւն խօսի ·

ԽԹ· Թէ անծեղն խօսի ·

Ծ· Թէ երազ տեսանես ·

Ահա հիսուն «Թէ», որոց իւրաքանչիւրը տարբեր մեկնութիւն կ'ստանան երկոտասան կենդանակերպից տակ պատահելով·

Զոր օրինակ · «Թէ նոր տուն մտանես·

Խոյ ·	Ընդ առաւօտն բարի է ։
Ցուլ ·	Չէ բարի, լուռ կաց ։
Երկաւոր ·	Մտանելն բարի է ։
Խեցգետին ·	Կէս օրն բարի է ։
Առիւծ ·	Զօրն ողջոյն բարի է ։
Կոյս ·	Ժ· ժամոյն բարի է ։
Կշիռ ·	Չէ բարի մտանելն ։
Կարիճ ·	Չէ բարի, համբերեա ։
Աղեղնաւ ·	Ե· ժամոյն բարի է ։
Այծեղջիւր ·	Մտանելն բարի է յոյժ ։
Ջրհոս ·	Ընդ առաւօտն ևս բարի է ։
Ձուկ ·	Գ· կամ Զ· ժամոյն բարի է ։

«Թէ մայր հաւն խօսի·

Խոյ ·	Երկրի մահ է ։
Ցուլ ·	Կնոջէ, տրտմիս ։
Երկաւոր ·	Արտնեղութիւն է ։
Խեցգետին ·	Արտհեշտութիւն է ։
Առիւծ ·	Չար ցնորք է ։
Կոյս ·	Պաշարումն և ցնորք է ։
Կշիռ ·	Խնդութիւն է թագաւորաց ։
Կարիճ ·	Խնդման գրոյց է ։
Աղեղնաւոր ·	Ընտանեաց մահ է ։

Ծայծեղջիւր· Գանձ գտանես ։
Ջրհոս · Խնդումն է ։
Ջուկ · Արու զաւակ լինի ։

Այսպէս իւրաքանչիւր «թէ» կը շարունակէ ։ իսկ 'ի վերջն հետեւեալը գրած է ։

«Ազատ կատարումն էառ բանիս ,
«Ճշմարտագրոյց հաւախօսիս ,
«Զի ուղղաբան է իբրև զիս ,
«Եւ գուշակող հանգամանիս ։
«Զի թէ տուլաւ լինիս զբօս ,
«Որ և կոչի սա հաւախօս ,
«Արդ անկանիս 'ի դար և փոս ,
«Եւ գազանացն 'ի կեր և յորս ։
«Լինիս բնաւիցըն դու կատակ ։
«Տեսանողացըն խայտառակ ,
«Այլ ուշիւըրդ իմաստունակ ,
«Ընձինըրդ քո դու լեր պահակ» ։

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ ԵՒ ՊԻՏԱՆԻՔ

1· Աշը տէյլ՝ քէնտիսինի ճէննէթլիք սայեար ։

2· Աղզը աչըք տէյլ՝ սէօյլէյէճէք եէրտէ աղզը աչըգ պազար ։

3· Եօպազ տէյլ՝ քէնտի քէնտի սէօյլէնէ-պէյէնիր , մէ՛ էօնտըլունլըք խաէր ։

4· Եըլդըն տէլի՝ քօրքմայաճաք եէրտէն քօրքար։

5· Եէլ եէփէրէք տէլի՝ ղօլանտա ղուղ-ղունտա էյլէնէմէզ։

6· Եանղազ տէլի՝ եօրումէտէն օսանըպ պէզմէզ։

7· Ձըռ տէլի՝ սէօյլէտիկի եէրտէ ան-գըրըր։

8· Ջըռզօբ տէլի՝ պիր իշի իտէր իսէ, եիւրիւր իքէն պէյեան իտէր։

9· Էսէրէք տէլի՝ աղզը տէվէ կիպի քէօ-բիւրիւր վէ եաքասընը եըրթար։

10· Թաքլակէօղ տէլի՝ խայրը չէրրի պիլ-մէզ։

11· Թամահքար տէլի՝ զարարընը ֆայտա-սընը պիլմէզ։

12· Թիրեաքի տէլի՝ քիմսէ իլէ մուհապէթ իթմէզ, տուվարլար իլէ չէքիշիր, չա-նաքլարը վէ թապաքլարը քըռար։

13· Իպլէհ տէլի՝ քէնտիսինի ճէմիսինտէն քայըրլը զան իտէր։

14· Լըփըռ տէլի՝ սէօյլէտիկի ճէվապի անկ-լամազ։

15· Կէօզլի պէօյիւք տէլի՝ իշլէմէքտէն վէ քար իթմէքտէն իւրքէր։

16· Ղուշ աքըլլը տէլի՝ տէօկիւշիւ վէ զան իթմէսի սէվէր։

17· Ղըզըլ տէլի՝ աղ չէյտէն չօք քավկայ իտէր։

18· Դաշմեր տեղի՝ քաֆի սիլահ սիվրի քուլահ մերմերէ սափլանըր ։

19· Դուրու տէմ տեղի՝ տայմա թիւրքիւ չաղըրըր վէ կիւլէր ։

20· Ճինլի տեղի՝ հայվանլարը վէ ինսանը տէօյմէք իստէր ։

21· Ճընկըլ տեղի՝ պիր ճէվապի տույմատան չէքիրկէ կիպի սըչրար ։

22· Ճէպի փայք տեղի՝ կէօզիւնէ սիւրմէ չէքէր վէ պէզանիր ։

23· Մասլահաթ տեղի՝ քէնտի իշինի քօր էլին իշինէ պաքար ։

24· Ցայլազ տեղի՝ իշէ կիւճէ խաեիր իթմէզ ։

25· Շէյթանի տեղի՝ քիմսէյէ պէյէնմէզ, մավըռուլլուկ իտէր ։

26· Շէօհրալի տեղի՝ սէօյլէտիյի սէօզի ղաֆիեէեէ ույտուրուր ։

27· Զարփըք տեղի՝ էլի վէ բարմաքլարի պիր իշէ ույմազ ։

28· Զընղըն տեղի՝ էյի սէօյլէտիյի եէրտէ ֆէնայէ չէվիրիր ։

29· Սօֆու տեղի՝ հէր ֆէրսատի իշլար, հալգա իշլէմէնիզ՝ տէր ։

30· Սէվտայի տեղի՝ էվ, պահճէ վէ միւլք էտէնիր հարամտան ։

31· Սապըրսըզ տեղի՝ գինա վէ լիվաթա իթմէսինի սէվէր ։

32· Աէմէ տէլի՝ գէնահաթը քարը վէ քիսպի սէվմէզ։

33· Աիւրթիւկ տէլի՝ ղահվէտէն վէ պէրպէր տիւքանընտան չըքմազ։

34· Աիւնէյփէ տէլի՝ թիմարհանատէ վէ չֆտլարտէ չօք տուր։

35· Տէմ կէլտի տէլի՝ կեահ աքըլլը իտէր կեահ տէլիլիք։

36· Տընկըլ տէլի՝ քեամիլ տըր· անճաք չօճուքլար ըլան օյնար, վէ կէնճլէր իլէն հօրա թէփէր։

37· Տըռ տըռ տէլի՝ տայիմա լաֆազանլըք իտէր։

38· Տալ պասաը տէլի՝ տայիմա ղօվալախլըխ վէ փաֆ փուֆ իտէր։

39· Տարտաղան տէլի՝ սարըղընա վէ կիյտիկինէ նիզամ վէրէմէզ։

40· Մունէֆէս տէլի՝ հէր նէ քի պուլուրսա փաք տէյի եէր։

41· Փառսի տէլի՝ ազ չէյտէն չօք քիւսիւնիւր։

42· Փէրվանէ տէլի՝ պիր կիտէճէք եէրէ եիւզ քէրէ կիտէր կէլիր պիր իշ պաչարամազ։

43· Փէշէ տէլի՝ քիսպէթ ուղրուսու տըր, ապալարա պիւրիւնիւր, իփ քուշանըր, փէնճէլի չարըխ կիյինիր։

44· Քէլպինէ տէլի՝ աղզը վէ մէսէպէ տինէ վէ իմանա սէփր իտէր։

45· Ֆըթըր տէյի՝ ուեուտուղի եէրտէ տիշ-լէրինի ղըճըրտատըրըր ։

46· Օֆլազ տէյի՝ էլինի ղաշըընը օյնատըր ։

47· Օյնատան տէյի՝ հայվան քիպի սագըզ չիյնէր ։

48· Ֆէսատ տէյի՝ հալքը պիրի պիրինէ տիւշիւրիւր ։

49· Ֆիխնա տէյի՝ ալէմտէ փիճլիկ իլէն կէ-չինիր ։

50· Ֆըռ ֆըռ տէյի՝ քամիշ ալէֆի կիպի փառլար վէ ֆը՛ս էնէր ։

51· Ղայփաղ տէյի՝ հէր չէյէ ղափըլըր , համամտա կիտէր ղուռնայա աչկ օլուր , տիւկիւնէ կիտէր զուռնայա ։

52· Միսաֆիր տէյլիսի՝ մէյհանէտէն չըքար եարալարըն սիւրիւքլէր , խանէսի եօք էվէ կէթիրիր , քէնտիսի եաթար ու-եուր ։

53· Ճէօմէրտ տէյի՝ մէհանէտէ իչտիի վաք-տէ էլին հէրիֆանէսին տալ քէսէ օ-լուր վէրիր , սըքըլըքտա պիր աքճէ ղէքեաթ վէրմէզ ։

54· Աւըշ վէրիշ տէյլիսի՝ վէրէսիէ մալ ալըր վէրէսիէ վէրիր , պապատան ղալան միւլքիւ ռէհինէ դօր զարարընը օտէ-մէզ ։

55· Ճատար տէյլիսի՝ չօք սէօյլէր նէ քէն-տի սէօյլէտիկի անկլատըր , նէ էլին սէօյլէտիկինի անկլար ։

Եմի այթը թիւրլիւ տէմիրլէրի Թարիֆ էթտիքտէ, վէ էյէր քուսուր քալան տէմիւլէրի տիւլէրսէնիզ, Թէմամընը պէքրի ճունունլէրին իչինտէ վէ սօվուխտէն տուխարսընըզ· Ալլահի Հագ Թաալա ճամի ատէմլէրինին վէ Նուրճիզ վէղամպէրին հիւմմէթինի ղուտուձ պէքիւլիքտէն վէ պուտալա ճիւնիւնլիքտէն, վէ տիվանէլիքտէն խէլաս էյլէյէ. Ամին ։

Տօստ իսթէրսին՝ պիր Ալլահ·
Մուհապպէթ իսթէրսին՝ քիթապ·
Ուղուր իսթէրսէն՝ իպատէթ·
Զէնկինլիք իսթէրսէն՝ Նիսաֆ·
Ինթիղամ ալմաք իսթէրսէն՝ էօլիւմիւն ֆիքր էյլէ ։

Վասն աղբերցութեան կենդանակերպից ոմանց,

Թէ որ մէկը կը ծնանի այն վայրկենին, որ Աղեղնաւորին առաջին աստղը Լուսընթագին հետ մէկ տեղ հորիզոնէն վեր կ'ելլէ, դիւցազն ու թագաւոր լինի նա ։

Թէ որ մէկը Խեցգետին կենդանակերպին մէջ ծնանի, վատ լինի. ինչ բանի ձեռք զարնէ, ետ մնայ ։

Ով որ Խոյին մէջ ծնանի, մեծատուն լինի։

Ով որ Առիւծին մէջ ծնանի, կարիճ և իշխան լինի, նաև կռուող և բարկացող։

Ով որ Կշիռին մէջ ծնանի, արդար և բարի լինի։

Ով որ Այծեղջիւրին Արևուն հետ հորիզոնէն վեր ելլելու ատենը ծնանի, անոր բաղդ հետզհետէ մեծնայ և բարձրանայ։

Երջանիկ է այն ժողովուրդ, որոյ թագաւորն ծներ է Կշիռ կենդանակերպին մէջ։

Վա՛յ այն ժողովրդեան, որոյ թագաւորը ծներ է կարիճ չար կենդանակերպին մէջ. եւն։

Վասն ազդեցութեան աստեղաց ոմանց.

Երևակ թշնամի է մարդկային բնութեան. պատճառ դժբաղդութեան, երկար հիւանդութեան, աւրող ամեն բան։

Լուսընթագն բարի է աղէկ ընող մարդոց, կեանք տուող, կենդանիներ և բոյսերը պահպանող։

Հրատն չար է, սրով խոցէ մարդիկ. արևելքը տապեցնէ, արևմուտքը չորացնէ. պատճառ է կայծակի, հովի. և մարդկային կենաց թշնամի. եւն։

Թէ Գիսաւոր աստղ ծնանի, Նոր մարդ մը աշխարհիս վրայ արշաւանք պիտի ընէ, մահ է, սրածութիւն է, մեծամեծաց անկումն է, բազումք աղքատանան։ Թէ որ ճերմակ լինի պոչն՝ հիւանդութիւն բերէ. գլխի թմրութիւն. սաթլիճան և վէրէմ լինի։ Թէ կարմիր լինի պոչն՝ ջերմ բերէ և հիւմմայ։ Թէ ոսկեգոյն լինի պոչն՝ թագաւորաց, կայսերաց մահ է։ Թէ կապտագոյն լինի պոչն՝ սաստիկ չորութիւն, սով, չնօֆօր (իւմուրճախ) լինի. եւն։

—Նոյնպէս զանազան մեկնութիւնք կան գիսաւորին դրից, աստեղատան, ընթացքին, մեծութեան և փոքրութեան վրայ. եւն։ Արդէն արևուն և լուսնի խաւարման, երկրաշարժին, որոտման, փայլակման գուշակութիւնները յայտնի են։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Հետևեալը՝ որ հետաքրքրական է իր պարունակութեամբն, եղբայրս Պ. Յակոբ Արուանձտեանց իմ յանձնարարութեամբս Վանայ մէջ ձեռագրէ մը օրինակելով ղրկած էր ինձ. և կը ծանուցանէ թէ՝ ձեռագրին սկիզբն ու վերջը թղթեր թա-

փած էին․ կ՚ըսէ նաև թէ սոյն ձեռագրի մէկ օրինակն եւ Երեմիա եպիսկոպոսն ունի, և թէ՝ ամբողջն կը գտնուի Մ․ Յօհ․ Քօլօզ վարժապետին քով․ որում կցորդուած է ժամանակակից անցքերն եւ յիշեալ վարժապետին ։

Թիւ Հայոց

ԴՃԿԵ․ Սեննեքարիմ արքայն Վասպուրականի ետ զՎան 'ի Վասիլ թագաւորն, և էառ զՍուվազ փոխանակ նորա․ և ինքն գնացեալ անդ հինգ որդւովք ։

ԵՃԱ․ Տէր Պետրոս կաթողիկոսն 'ի ժամանակս Վասիլ կայսեր արար զՋրօրհնէք, և արգել զգետն 'ի Տրապիզոն քաղաքի ։

ԵՃԺԴ․ Բարձաւ թագաւորութիւնն Անւոյ, որ էր վերջին թագաւորն Յօհաննէս ։

ՋՃԿԲ․ Վախճանեցաւ Մխիթար վարդապետն, մականուն Գօշ կոչեցեալ ։

ԸՃԼԷ․ Լանգթամուրն եկն 'ի Վան և 'ի Թավրիզ, աւերեաց զամենայն երկիրսն, և շատ գերի տարաւ ընդ ինքեան յերկիրն Սմրղանդայ, սատակեցաւ ։

ԸՃՀԸ․ Ջըհան Շահն էառ զՇամշուանոյ բերդն ։

ԸՃՂ․ Լուսաւորչի աջն 'ի Սըսոյ գողացան, և բերին յէջմիածին ։

ԹՃԲ· Սուլթան Մահմատն էառ զՍտամբօլն ։

ՌԽԹ· Մեծն և առաջին Շահ Աբասն բռնի Նստաւ 'ի Մաշատ ։

ՌԾ· Քօռ օղլին, Գզիր օղլին, և այլք բազումք եղեն Ջալալի ։

ՌԾԳ· Ջղալ օղլի սարդար Սինան փաշայն եկն 'ի Վան և գնաց 'ի վերայ Շահին ։

ՌԾԷ· Երկրորդ եկն Ջղալ օղլին և կոտորեցաւ 'ի Շահէն, և գնացեալ 'ի Համիթ մեռաւ ։

Ի սոյն թուին մեծ սով անկաւ, որ շուն և կատու կերին. նաև մարդագայլն երևեցաւ ։

ՌԿԳ· Առաջին Շահ Աբասն զէջմիածնի քարերն և զԼուսաւորչի սուրբ աջն տանել ետ 'ի յԱսպահան ։

ՌՀ· Յունվար ԺԳ· Ստամբօլայ ծովն պաղեցաւ, որ մարդ շրջէր 'ի վերայ ։

ՌՁԳ· Սուլթան Մուրատն եկն 'ի յԵրևան, և ինն օր էառ զնա. եկն 'ի Թավրէզ, և անտի 'ի Վան, և ապա գնաց յՍտամբօլ, և 'ի միւս ամի դարձեալ եկն Սուլթան Մուրատն 'ի վերայ Բաղդադայ, և յաւուրս Լ· էառ զնա ։

ՌՂԵ· Ապրիլ Բ· Աւագ ուրբաթու գիշեր, սաստիկ շարժ եղև 'ի քաղաքս Վան. և բազում մարդիկ մեռան, և շատ տնե-

րութիւն եղև ։ Աստուած ազատէ և ողորմի ։

Ռ·Ճ· Թալանեցին Վարագայ աթոռն՝ անիծեալ Ջօմարն և Խօշաբայ պարոնն · և սուրբ Նշանն ևս գերի տարան, զոր Մարխաս Չէլէբին ազատեաց · և Ռ·ՃԴ· ին բերեալ եղին 'ի սուրբ Տիրամայր եկեղեցին ։

Այս են փաշայք, որ 'ի Վան եկին ·
Թւ· Տաճկաց

Իսքանդար փաշէն ։ Խոսրով փաշէն ։ Մահմադ փաշէն ։ Ջղալ օղլի Սինան փաշէն ։ Ջանվար փաշէն ։ Մահմատ փաշէն ։ Ջափղուն Մահմատ փաշէն · ١٠١٥ ։ Թափալի Մահմատ փաշէն · ١٠٣٤ ։ Մարթուզայ փաշէն վան էր, որ Ղըզըլբաշն եկն 'ի վերայ Վանայ ԽՁ· օր Նստաւ · մինչ Բաքիր փաշէն եկն, վերցան և գնացին · ١٠٤٣ ։ Մուսայ փաշէն ١٠٤٣ ։ Դիլվար փաշէն ١٠٤٤ ։ Գօջայ Սուլէյման փաշէն ١٠٤٦ ։ Քուչուգ Հասան փաշէն էր՝ որ Սուլթան Մուրատն եկն 'ի Վան ١٠٤٨ ։ Բօյլին Ագրի Մահմատ փաշէն ١٠٥٠ ։ Վառ վառ Ալի փաշէն ١٠٥١ ։ Սադաֆլի Հասան փաշէն ١٠٥٣ ։ Բօյուք Ահմատ փաշէն ١٠٥٤ ։ Դարձեալ Բօյլին ագրի Մահմատ փաշէն ١٠٥٥ ։ Քաթանչի Մահմատ փաշէն վանն էր՝ որ

մեծ ժաժկ եղև ١٠٥٦ ։ Թալքան օղլի . . . փաշէն ١٠٥٧ ։ Ճայեն փաշէն ١٠٥٨ ։ Ճահբազ փաշէն ١٠٥٩ ։ Էմին Մահմուտ փաշէն վան էր՝ որ Հուսէն աղէն Բերկրու փէրն փախաւ առ Բաղիշու խանն ١٠٦٠ ։ Սարխօշ Իբրահիմ փաշէն ١٠٦١ ։ Ջալիլ Մուսայ փաշէն ١٠٦٣ ։ Գարձեալ Սարխօշ Իբրահիմ փաշէն ١٠٦٣ ։ Սօֆի Իբրահիմ փաշէն ١٠٦٤ ։ Մալա Մահմատ փաշէն ١٠٦٥ ։ Գարձեալ Սարխօշ Իբրահիմ փաշէն ١٠٦٦ ։ Ջաղրկան Մահմատ փաշէն ١٠٦٧ ։ Ասլան փաշէն ١٠٦٩ ։ Գալի Դիլվար փաշէն ١٠٧٠ ։ Ղատրաֆիլ օղլի Ահմատ փաշէն ١٠٧١ ։ Հաջի Հուսէն փաշէն ١٠٧٢ ։ Գարձեալ Ասլան փաշէն՝ որ Մամօյի լաճն սպան ١٠٧٣ ։ Ղարա Մուստաֆայ փաշէն՝ զոր կայի լաճն սպան ١٠٧٤ ։ Ամիր Ուսուֆ փաշէն՝ Նըմրութայ ոսկոր գնոց ١٠٧٥ ։ Քօռ Օսման փաշէն ١٠٧٧ ։ Լէհ Հասան փաշէն ١٠٧٩ ։ Ղարայ Մահմատ փաշէն ١٠٨١ ։ Ալի փաշէն ١٠٨٤ ։ Շեխի Մահմատ փաշէն ١٠٨٦ ։ Աւտուլլայ փաշէն ١٠٨٧ ։ Բաքիր փաշէն՝ սա խօջայ Ալիսան կախեց, որ Լէշկեր ասէին․ հետ կլուն (ղուլին) շատ կըռվեցան․ ١٠٨٨ ։ Մուսլի փաշէն՝ որ հրամայեց Հայոց մօրուք թողուլ ١٠٨٩ ։ Ջանպօլատ օղլին՝ սա զկայի լաճն և զՂաթրան օղլին խեղդեց, հրամայեց Հայոց գօտիկ վար

առնուլ և գտակ դնել. սորա Ջորլին ծը-
նաւ. և ինքն սատ մեռաւ 1091: Նիշանճի
Ալի փաշէն 1092: Յայսմ ամի քարախառն
կարկուտ եկն յՍտամբօլ. որ մինն հարիւր
տրամ կշռեցին: Զալանկի Ալի փաշէն
1093: Ի սորա ժամանակս շինեցաւ սուրբ
Յակոբ եկեղեցին: Գօջայ Օմար փաշէն
1095: Սա զխօջաբայ պարոն Զշմզդին (գու-
ցէ Շեխ Մզտէն) երեր առ ինքն 'ի քաղաք
և սպան զնա Աստուածածնի (տօնին). սա
սահմանեաց դըրամն դամղայ զարկել. և եա
պղնձէ պլիկ կտրել:

Թիւ Հայոց. — ՌՃԼԴ Թիւն՝ այս Օ-
մար փաշայս զՆալբանդ օղլի Նադիր ա-
ղայն և զՂատըր օղլի Իբրահիմ աղէն
ճարկ 'ի բերդ զնդան, պահեց անդ Գ.
ամիս և սպան զնոսա: Ի սոյն ամի և սուտ
ինչ համբաւ հանին Թէ՝ ընտանի հաւու
փոր օձ կայ. և այնքան ջարդեցին յամե-
նայն աշխարհ, մինչև 'ի Ստամբօլայ մինչ
'ի Վան, և Վանայ մինչև 'ի Սպահան՝ մի
հաւ ոչ գտանիւր. և այսպէս եկաց ժա-
մանակս ինչ: Եւ 'ի սոյն ամի քրիստոնեայ
մին 'ի յայգին շինէր զտուն իւր, և 'ի
փորելն ել սակաւ ինչ ժիպակ (սնդիկ),
և յոյժ ուրախացան, և նոյն ժամայն հա-
սաւ լուրն 'ի քաղաք. և եկին ամենեքեան
մեծամեծք և փոքունք և իշխան և դա-

տաւոր փողովք և թմբկօք, և գնացին 'ի տեսանել, զի համարեցան Մողան լինել. և ահա ցամաքեալ էր : Նաև 'ի սոյն թուոյ մարդակերպ գայլ մի երևեցաւ. որ 'ի ցերեկի շրջէր յայտնի և բազում վնաս գործէր, և ընդ մարդոյ պատերազմէր և խօսէր ևս. և ոչ ոք իշխէր միայն 'ի յայգիս գնալ. և ապա աներևոյթ եղև :

ՌՃԼԴ. Ջավհար փաշայն գկոր (կոյր) Քէթարն և զՄանսուրն կախեաց : ՌՃԼԵ. հրամայեց Հայոցս քաղաքացւոց և գիւղացւոց, որ զքաղաքի շրջապատ խանդակն պեղեցին. և այնչափ փորեցին, մինչև յինքեանէ ջուր ել : Եւ 'ի բերդն ևս բազում տեղիս նորոգեաց : Սա գնաց 'ի վերայ Բաղիշոյ. և անտի գնաց :

ՌՃԼԶ. յաւուրս Ալի փաշային՝ Բաղիշոյ Նօհ խան եկն 'ի Վան առ Ալի փաշայն գանգատ յեղբօրէն. և փաշայն բազում զօրօք ելեալ գնաց 'ի Բաղէշ. և անտի Մոնղոլ եղև և գնաց :

Ապա եկն Ղալալի Ահմատ փաշայն եւ 'ի բերդն Բաղիշոյ և զՇարաֆ խանն հաստատեաց, և ինքն դարձաւ 'ի Վան. և քաղաքացիք եկին ընդդէմ և պատերազմեցան և ոչ թողին գալ 'ի քաղաքն. և մնաց 'ի գեօղն Աւանց՝ աւուրս Գ. և ապա փոշիմանեալ գնացեալ հաշտեցան. և ա-

զաչանօք բերին 'ի քաղաքս, և եկաց 'ի քաղաքս Գ. ամիս, և ապա մոնղոլ եղև. զի Սուլթան Մահմատն անկաւ և Սուլթան Սուլէյման եղև թագաւոր:

Ի սոյն թւոջս եկն 'ի քաղաքս Վան պատանի մի Ի. ամեայ, որոյ ոչ գոյր երկու ձեռն բնաւ, որ այնպէս ծնեալ էր 'ի մօրէն, և զհաց ոտով ուտէր. սա էր 'ի Խիզնայ, ազգաւ Հայ:

Նաև 'ի սոյն աւուրս 'ի գիւղն Արտամետ՝ հաւու ձագ՝ որն որ ել 'ի ձուէն, Գ. անգամ խօսեցաւ. և այլք 'ի մէջ ձուին ձայնս հանէին, և որք շուրջ կային լսէին: Այլ 'ի նոյն գիւղ՝ տղայ մի յարգանդ մօր ելաց, որոյ ձայնն բազումք լուան: Եւ կին մի ծնաւ Դ. տղայս: Այլ և ոչխար եւս ծնաւ, որոյ գառն էր արու և էգ 'ի միասին. որ և մեք աչօք տեսաք զգառն:

ՌՃԼԸ. Գատըլ Հասան փաշայն՝ սա զՋամուշշի օղլի Մահմատ աղէն, զՇաբան աղէն և զՋավհար աղէն տարաւ յԱրտամետ պատիւ, և անդ սպան զնոսա: 'Ի ժամանակս գարնան խիստ տղայոց մահ եղև. և լուսինն խաւարեցաւ:

ՌՃԼԹ. Թօփալ Օմար փաշայն՝ 'ի սորա ժամանակս 'ի Բաղէշ քաղաքի եղև մեծ աղմուկ 'ի մէջ վարդապետաց. զի չորս վանք և չորս եկեղեցիք կան. և ամեն

վանք մէկ մեծաւոր իւր աբեղայիւք կու նստէր ․ և մեծ վանք և առաջնորդարանն էր Գոմոց վանք , և առաջնորդ ծերունի մեծ Աւետիք վարդապետն էր ․ և այլ երեք վանք և չորս եկեղեցիք հնազանդ կային նմա ․ և յայսմ ամի Գրիգոր վարդապետ և Մեսրոպ վարդապետ , զմեծ Վարդան վարդապետն ևս դարձուցին յինքեանս , և թաղում գանձս ետուն Շարաֆ խանին իւրեանց , և առին 'ի նմանէ ձեռագիր և մարդ , նաև ինքեանք և դոլվաթաւորքն ևս գրեցին և կնքեցին և մեծ պարգևօք առաքեցին 'ի սուրբ Էջմիածին առ Եղիազար կաթողիկոսն , և 'ի նմանէ հրաման և գիր բերին , և զքաղաքն չորս բաժին արարին ․ և ամեն մէկ եկեղեցին իւր ժողովրդով մէկ վանից թէմ սահմանեցին , զի յամէն վանք մէկ վարդապետ նստիցի առաջնորդ , և զիւր եկեղեցւոյ ․ ․ ․ և զհաս և զիրաւունս ինքն առեալ զվանս իւր հոգասցէ ․ և այսպէս մէկ քաղաքի չորս առաջնորդ եղև , որ կայ մինչև ցայսօր սահման այն , որ ոչ է բարի ։

ՌՃԽ․ Դուրսուն Ահմատ փաշայն՝ 'ի սորա ժամանակս Սուլթան Սիւլէյման Վօյվօտայ յղեաց 'ի քաղաքս Վան , որ զՀայոց խարաճն ժողովեց և թուղթ ետ թագաւորական նօհըրով , որ մինչև այսօր չէինք տեսեալ ։

Եւ դարձեալ 'ի սոյն ՌՃԽ. Թիւ, Սօֆի Օմար փաշայն և վանայ Ղուլն զՄարգաննեց Աստոմն և զ . . . Միրզայն կախեցին յունվարի Զ. զի սոքա 'ի Ստամբօլայ եկին, և ղուլաղասիք այնպէս իմացան թէ նոքա 'ի թագաւորէն ճօյճօղայ բերին, վասն որոյ ետուն կախել զնոսա ։ Այս Օմար փաշայն աստ մեռաւ ։

ՌՃԽԱ. Իսմայիլ փաշայն եւս զխարաճն յինքն ժողվեց ։ 'Ի սոյն ամի, Ապրիլի ԺԳ. յառաւօտէ արեգակն նուաղեցաւ և մէգ պատեաց զերկիր այնքան զի մարդիկք մերձ գոլով՝ զմիմեանս ոչ տեսանէին 'ի ցերեկի, և մինչև յերեկոյ կարմիր փոշի տեղեաց 'ի յերկիր, և եղև մահ անդրանկաց և սաստիկ շարժ ։

ՌՃԽԲ. Մուրթուշայ փաշայն՝ սա զՋաւուշ փէսէն սպան ։

ՌՃԽԳ. Ֆիրարի Ալի փաշայն ։

ՌՃԽԴ. Գուրջի Մահմատ փաշայն եկն յօգոստոս Ժ. սա երկու անգամ ծախքով էառ 'ի վանորէից. սա ետ պլիկ կըրքել և ղարաղաճ (կախաղան) շինել. և 'ի նոյեմբեր Ի. ծանդղող եղև, զիւր շինեալ ղարաղաճն կատարեց և ապա գնաց ։

ՌՃԽԵ. Ղաթրաֆիլ օղլի Ուսուֆ փաշայն եկն 'ի վան փետր. Ը. ։

ՌՃԽԶ. Մեծ պահոց առաջին երկու-

շարթին դարձեալ Դուրսուն Ահմատ փաշայն եկն 'ի Վան. սա 'ի մարտի ամսոյ Ի. Ժ. մարդ 'ի գիշերի խեղդեաց. բայց 'ի Հայոց Բ. կարիճ տղայ և զնոսա ետ խեղդել. և յայն տարի մեռաւ (փաշայն), և Լ. օր ձայն գայր 'ի գերեզմանէն :

ՌՅԽԷ. Մարտի ԺԲ. Սարը Օսման փաշայն եկն 'ի քաղաքս Վան. սա սպան զՏաճիկ Սինան. և 'ի յուլ. Դ. ճանչալ եղև : Եւ 'ի սոյն ՌՅԽԷ. օգոս. ԽԱ. դարձեալ Ծերունի Իսմայիլ փաշայն եկն 'ի Վան. սա գնաց 'ի վերայ Մանզկերտու և այրեաց զբազում գիւղօրայս, սա սպան զՇաբանն և զՇարօն կախեաց. սա 'ի գաղտ դրան մօտի աղբերին վերայ կամար կապեց : 'Ի սորա աւուրս և 'ի սոյն ամին Վանայ Ղուլն մարդագլուխ ռամ խարաճն կոտոր առին 'ի Հայոցս պատճառանօք: 'Ի սոյն ամի, փետր. Ի. մեք Հայքս և Տաճիկք մէկ օր զպահս բռնեցաք. յորում աւուրս էր 'ի քաղաքս իշխանակ Մեծն վարդապետ արդարև կոչեցեալ. նաև Եպաքուբի Սօղոմօն վարդապետ հրամանաւ մեծ վարդապետին Դ. անգամ պատարագս մատոյց 'ի մերս սուրբ Վարդան եկեղեցին :

Այս փաշայն հրամանաւ Թագաւորին կամէր գնալ 'ի վերայ Բասրայու պատե-

րացմ հետ Արաբուն . և 'ի յունիսի Ի· եր-եալ գնաց մինչ 'ի Բաղդատ և անդ մե-ռաւ ։

ՌՃԻԸ· Մեծ փախին Հռովմայ ընծայ առաքեաց Նահապետ կաթողիկոսին զար-մանալի աթոռ մի և պատուական խաչ մի և ազնիւ գաւազան, որք էին յոյժ մեծագին և անտես մարդկան ։ 'Ի սոյն թւին սեպ· ԺԳ· օր 'ի հասարակ աւուր արեգակն խաւարեցաւ և աստեղք երե-ւեցան յերկինս, և եկաց այնպէս ժամս Բ· յորոյ աւուրս ոչ գոյր փաշայ ('ի Վան), այլ Ջամուշօղլի Խալիլ Աղայն՝ որ նստեալ էր փոխանորդ փաշային, հրամայեաց որ 'ի միւս օրն 'ի թափօր ելին Հայք և Ցա-ճիկք ։

ՌՃԻԹ· յԱպրիլ ԻԵ· դարձեալ Սարը Օսման փաշայն եկն 'ի Վան . և 'ի յուլիսի ԺԵ· գնաց 'ի վերայ Խիզնայ և Ջըզըլկա-նայ, և յօգոստոս Ժ· ճանպալ եղև, և ան-տի գնաց ։ Եւ յետ գնալոյ նորա՝ Վանայ Գուլն վստահացեալ կրկին առին 'ի Հայոցս ամէն մարդագլուխ ղուրուշ մի խաչամն կատոր դաւանօրով ։

ՌՃԼ· Սեպ· ԻԵ· Իսմայիլ ծերունի փաշայն եկն . սա եկաց մինչ 'ի յունվարի մուտն, և լուաւ թէ 'ի թագաւորէն քեզ-նոն կայ գլխոյն . վասն որոյ թողեալ զինչս

և զորդին, և տակաւ զօրօք 'ի գիշերի ելեալ գաղտ փախեաւ. և իմացեալ զօրքն Մահմուտանայ եկին ընդդէմ և պատերազմեցան. և զոմանս սպանին, զոմանս վիրաւորեցին, և զոմանս թալանեցին, յետոյ թէ հազիւ մազապուրծ անկան 'ի զօրս (Պարսից), և խանն զօրաց մերով ընկալաւ զնա, բայց խորհրդով Խօշաբայ Պարոնին կողոպտեաց զնա յամենայն փառաց ասելով թէ՝ Դու լրտես եկեալ ես յՕսմանցւոց յերկիրս մեր. և ազդ արար յԱսպահան Շահին և Թարվիզու խանին. հրամայեաց Շահն պատուով պահել զնա առ ինքն, և ազդ արասցէ Օսմանցւոց Թագաւորին և նեղումն խնդրեսցէ նմա. և Թագաւորն ըստ խնդրոյ Շահին զօրս առաքեաց փառօք և պատուով. (այլ) նա 'ի յաքսորս ողորմելի մահուամբ սատակեալ էր: Սա մինչ էր 'ի վան փաշայ՝ զբերդի էնգիչար աղասին ընկէց յիշխանութենէ, և բերեալ 'ի քաղաք պահէր 'ի կալանս. և փոխանակ նորա զայլս կացոյց 'ի տեղին. և յետ փախստական լինելոյն ոմանք 'ի Ղուլաղասոցն ասացին թէ՝ դատաւորն աղատեաց փաշային. (ծմծկեաց) զջօրմանն և փախոյց զնա. վասն որոյ միաբանեալ կալան զդատաւորն և տարեալ 'ի բերդն եդին 'ի բանտ, որ եկաց անդ աւուրս

ինչ · և զղջացան և՛ առաքեցին՝ հանել զդատաւորն 'ի բանտէն · և Եէնգիչարիքն ոչ թողին, ասելով · Դուք թողէք զմեր Էնգիչար աղասին, և մեք թողումք զձեր դատաւորն · և Ղուլաղասիքն իբր թէ ծաղր առնել ասէին · Դուք թողէք մեր Ղոզին, և մեք թողումք զձեր Նաղին · և ապա միաբանեալ սիրով թողին զերկոսեանսն ։

Եւ 'ի սոյն թուոջս, Ապրիլի ԺԴ. ծերունի Իբրահիմ փաշայն եկն 'ի Վան · սա ազգական էր Իսմայիլ փաշային որ փոխեաւ, որ և սա աստ մեռաւ ։ Նաև 'ի սոյն ամի, ՌՃԾ. ին, մարտի Է. 'ի մեծ պահոց և առաջին ուրբաթն սաստիկ շարժ եղև 'ի քաղաքս Վան · և 'ի գիշեր ևս շարժ եղև ։ Եւ 'ի կիրակէն Բ. և Գ. անգամ շարժ եղև · և չորեքշաբաթ առաւօտուն ևս սաստիկ շարժ եղև, որ ամենայն քաղաք ահաբեկ եղեալ սասանեցան, և Հայ և Տաճիկ ամենեքեան թողեալ ըզտունս իւրեանց 'ի քաղաքէն դուրս կազմեցին վրանս և հիւսեցին տամբք և տղայիւք, ոմանք յայգիս, ոմանք 'ի դաշտս և 'ի գերեզմանատունս աւուրս բազումս · և սակաւ ոմանք՝ որ և 'ի քաղաքս մնացեալք էին, գնացեալ 'ի ժամատունն ննջէին տամբք իւրեանց · և 'ի միւս շաբաթ օրն

դարձեալ ահագին շարժ եղև, յորմէ բազում տունք խախտեցան 'ի մէջ քաղաքին և ոչ փլան. և ոչ մարդոյ ինչ վնաս եղև, սակայն 'ի գեղն Բերդ սակաւ ինչ տուն փլան. և այսպէս եկաց քաղաքս յերերմանի իբրև զնաւ 'ի ջուրս մինչև 'ի յօրն զարնանամտին, և ապա հանդարտեցաւ Նախախնամութեամբն Աստուծոյ. և հասեալ 'ի Նոյ. Լ. կրկին եւս սաստիկ շարժեցաւ, և վնաս ոչ եղև ողորմութեամբն Աստուծոյ:

ՌՃՄԱ. Յունվար ԺԲ. Զարկուլահ Մուստաֆայ փաշայն եկն 'ի Վան քաղաքս. սա զԱրճիշու Ցաղի գիւղի ռէսն անդ սպան 'ի գալն. և 'ի ճանապարհէն երեք քիւրդ եբեր 'ի յԱլիւր (գիւղն), և անդ ետ 'ի ղազըխ, և մինն եբեր 'ի քաղաքս, և 'ի նոյն օր ետ 'ի ղազըխ. և հասեալ յիւրեանց յըռամազանն 'ի ղալէն Մուշին շինեաց և անդ յաղօթս կայր. և 'ի մարտ ԺԸ. բազում հեծելօք գնաց 'ի Վարագ, և 'ի Ապրիլ Ժէ. որ էր օր Նոր կիրակէին . . . գնաց 'ի տեսանել զձկան բանդ, և յայնմ աւուր քաղաքացի ոխանն՝ որք կարի նեղացեալ էին 'ի Թօխմախ Միրաքէն, որ էր ռէս քաղաքին, խորհրդով . . . . ժողովեցան միաբան և գնացեալ 'ի յայդի Թօխմախին. և զի դուռն փակեալ էր,

ոմանք 'ի պատէն իջին զդուռն բացին, և ամբոխն ամենայն մտեալ 'ի տունն որոնէր բռնութեամբ. և գտին զնա, զի թագուցեալ էր 'ի բոյն հաւուց, և բերեալ արտաքս անարգանօք հարկանէին, և ընկեցեալ յերկիր եդին պարան 'ի յոտսն. էին իբրու ԵՃ. մարդ, որք քարշեցին զնա անողորմ 'ի վերայ երեսաց, որ հարաւ փորն 'ի թուփս և անդէն 'ի ճանապարհին մեռաւ դառն մահուամբ, և տարեալ ընկեցին 'ի դուռն քաղաքին: Իբրև եկն փաշայն և եհարց թէ՝ Ո՞վ է սա. և ծանուցին թէ՝ ուէս Թօխմախն է, և քաղաքացիք ինքնագլուխ սպանին զնա: Իսկ նա կարծեաց թէ՝ կամակցութեամբ խօջայ Ջանգուլին է եղեալ այս. քանզի նա էր անուանի, և մեծ, խոսաց տէր: Կայր ընդ փաշային Արաբկերցի խօջայ մի, զոր անուն Զիման չալաբի ասէին. որ էր սա յոյժ սիրելի և բարեկամ խօջայ Ջանգուլին և ուէս Թօխմախի Միրաքին. զայս Զիմանս 'ի գիշերի գաղտ կոչեաց փաշայն, և առաքեաց բերել զՋանգուլն. իսկ նա ոչ գիտելով ինչ՝ գնաց եբեր զխօջայ Ջանգուլն, որպէս և յայլ աւուրս. և նոյն ժամայն հրամայեաց փաշայն և խեղդեցին զնա և ընկեցին արտաքս. և 'ի վաղիւ հրամայեաց բառնալ և թաղել զնա

ըստ օրինի · և ապա·էառ 'ի քաղաքէն Ջճ· զուրուշ գին արեան Թօխմախին ։ Եւ 'ի Հայոցս պահանջէր զի տացեն ինքեան ձեռագիր, որպէս թէ մեր կամօք փաշայն սպան զխօջայ Ջանգուլն · քանզի երկնչէր թէ մի' գուցէ եղբարք նորա գնացեալ բողոքեսցեն 'ի դուրս թագաւորին · և քաղաքացիքն ոչ հաւանեցան այնմ, և ոչ ետուն ձեռագիր · և 'ի կարի նեղել՝ փակեցին զդուքաննեքն և զեկեղեցիսն ևս, և ելին 'ի քաղաքէն քահանայք և դօլվաթաւորք և ռամիկք, անձինք իբր ՌԵՃ· և խորհուրդ արարին զի 'ի միասին 'ի դուռն Արզրումայ փաշային գնասցեն, և 'ի յայն փաշայէն գիր և մարդ առեալ 'ի դուռն թագաւորին գնացեալ բողոքեսցեն ։ Եւ 'ի վերայ այսր խորհրդին՝ 'ի Համբարձման ուրբաթ օրին ելին 'ի քաղաքէն և գնացին մինչև 'ի Բանդի մահի · փաշայն և ղուլաղասիք առաքեցին արս ընդդէմ և մեծամեծս բազում զօրօք, որք եկեալ պաղատանօք հաղիւ թէ յետս դարձուցին զժողովուրդ 'ի Մեծահրաշի կիրակէին · և եկեալ 'ի քաղաք, որպէս թէ հաշտեցան · և 'ի յուլիսի ճ· մանդուլ եղեալ կ · · եաւ ։

Եւ 'ի սոյն ՌՃԾԱ· Սեպ· Բ· Աբդի փաշայն եկն, և բազում զօրս հաւաքեաց առ ինքն 'ի յԱրճէշոյ, 'ի յԱրծկոյ, 'ի Բերկ-

րոյ, և 'ի Բաղէշոյ Մհամթ խանն եկն Բիթ-
զօրօք. և . . . . . . եկեալ ՋՌ. զօրօք և
Թօփով գնացին 'ի վերայ Խօշաբայ, և կա-
մէին զի Խան Մահմատ հանիցեն 'ի բեր-
դէն, և զիբրահիմ բէգի տղայն դնիցեն
Փարոն, և ոչ կարացին. այլ բազում գիւղ-
այրեցին. իսկ զօրքն Մահմուտանոյ (Դա-
ւառի) եկեալ 'ի մէջ բանակին հարին զէ-
զօրսն Բաղիշոյ, և կողոպտեալ վիրաւորե-
ցին և տարան 'ի նոցանէ ՃԻ. ձի. վասն
որոյ ամօթալի դիմօք դարձան 'ի քաղաք.
և փաշայն թալանեաց զՀաջի աղի տունն,
որ էր 'ի քաղաքս. և 'ի Նոյ. ԻԷ. առանց
ծանուցանելի գնաց. և յետ երկու ամսոյ յունո-
վար ԻԱ. դարձեալ եկն 'ի քաղաքս. բայց
Ղուլն Վանայ ոչ ելին 'ի դէմ 'ի յայս ա-
ւուրս: Եւ 'ի ՌՃԾԲ. թիւ Սարգուտայ փա-
շայի գլխոյն ֆօրմանն էր 'ի թագաւորէն
. . . . սպանեալ էր. և ինքն փա-
խըստական սակաւ մարդով 'ի Վան քա-
ղաքս (անկեալ). և Աբդի փաշայն սիրով
ընկալաւ զնա և մեծարեաց և խիլայեաց
զիւրսն և զինքն. և եկաց աստ ամիս մի
և գնաց: Եւ 'ի սոյն աւուրս յՍտամբօլ
զՑէզուլլահ աֆանտի որ էր դատաւորաց
դատաւոր և մեծ հրամանատար 'ի դուռն
թագաւորին՝ ընկեցին 'ի փառաց և 'ի
պատուոյն, և զերկու որդիս առաջի մօր

մանրամասնաբար կորատեցին, վասն զի ՚ի Թագաւորի խաչայէն ՌՃԹ. ժխոյ փող վաճառեալ էր. վասն որոյ զինքն եւ չարաչար և դառն մահուամբ սպանին ։

Նաև զՍուլթան Մուստաֆայն ընկեցին, և զՍուլթան Ահմատն եղին թագաւոր. Եւ ՚ի սոյն ամի Ախիջեանց խոջայ Սաֆարն՝ որ Լ. տարի էր որ գնացեալ էր ՚ի մէջ Ֆռանկաց և յայսմ ամի եկն, և ունէր ընդ ինքեան բազում գանձս, և յոլով մեծագին ոսկեղէն և արծաթեղէն անօթներ և զարդարանս. և ՚ի գալն եկաց Գ. ամիս և մեռաւ. և ունէր եղբօրորդիս. և զվանաց Ղուլն ամէն թալան արին աւերի .... ապրանք, և եղբօր որդւոց ինչ ոչ ետուն ։

ՌՃՄԳ. Յունիսի ամսոյ ԻԸ. Տօրեջան Ահմատ փաշայն եկն. սա յՕգոս. Ա. ին զբերդի Ենգիչար աղասին ընկէց յիշխանութենէ, և փոխանակ նորա զայլ կացոյց ՚ի տեղին. և բերեալ ՚ի քաղաքն էարկ ՚ի բանդ ։ Սա զԱւանուց գիւղի զսուրբ Յօհաննէս զեկեղեցին շինեաց, և զՕսման բէգ բերեալ յԱտատն՝ Պարոն կարգեաց. և քաղաքիս պարսպի ճոփեր ամէն զէնջաֆով նորոգեաց ։ Սա ՚ի Դեկտ. Ժ. ֆարման եհան խալիլ աղին և Քիւրդ Հիւսէն աղային գըլխոյն, և զքաղաքի դռներ փակեաց, որ

եկաց մինչ 'ի Յունվար ԺԴ․ բայց 'ի նոյն աւուր Դոֆուճի եկն 'ի Թագաւորէն, և ֆարման եբեր իւր գլխոյն, զոր յայնժամ սպանին և գլուխն քերթեցին և տարան Թագաւորին, և զինչսն՝ Դուլաղասիք Թալանեցին, մինչ զի և զկինն կողոպտեցին ։ Եւ Յունվար ԻԷ․ Խալիլ աղէն և Հիւսէն աղէն՝ 'ի գիշերի գաղտ փախեան ։

Ոմանք ասէին թէ՝ սա քրիստոնէի տղայ էր, և լոյս էջ 'ի վերայ նորա․ ուստի ըղհողգերեզմանին տանէին Հայք և Տաճիկք, և ցաւագարք, և ըստ հաւատոց իւրեանց առողջանային ։ Եւ այս Յունվար ԺԴ․ մեծ շարժ եղև 'ի քաղաքս Վան․ և 'ի սոյն ԻԷ․ Յունվարի մեծ շարժ եղև 'ի քաղաքն Բաղէշ, և բազում տունք փլան, և շատ մարդիկ 'ի ներքոյ տանց մնացին ։ Եւ 'ի սոյն ամի՝ Բաղիշեցի մեծ և անուանի Վարդան վարդապետն մեռաւ ։

ՌՃԾԴ․ փետր․ Ա․ Քօսայ Խալիլ փաշայն եկն Արզրումայ 'ի քաղաքս․ սա հրամայեաց զպլլիկ ջամբղայ զարնել, և Յունիսի Դ․ ժանդամահ եղև․ բայց քաղաքացիք ոչ թողին․ ապա Յուլիսի ԺԲ․ օրին գնաց 'ի Բասրա ։

Ի սոյն թուին, 'ի քաղաքն Բաղէշ ոմն . . . . մօլայ, որ էր դատաւոր, 'ի գրոց իւրեանց հրաման (եհան) թէ՝ 'ի Հա-

յոց ով՛ ոք որ տաճկանայ , Նորա մօտակայ ազգականաց մէջ ով որ անկատար արու տղայ (մինի), տղայն նմա հասանի ։ Սահմանեաց զայս 'ի Բաղէշ , և ինքն եկն 'ի քաղաքս Վան , զի և անդ զնոյն հաստատեսցէ ։ Իսկ Բաղիշոյ մեծ վարդապետք և դօլվաթաւորք միաբանեալ աղերսանաց գիր լուսկեցին առ մեր առաջնորդ Ստեփաննոս վարդապետ , և իշխանաց իշխան պարոն խօջայ Ախիջան Ղարասափարն , և ծանուցին զաղէտս դառնութեան իւրեանց, զսուգ և զկորուստ ազգիս Հայոց ։ Իսկ խօջայ Սափարն հրամայեաց վարդապետին որ յեկեղեցիս ծանուսցէ , և ինքն յոլով գանձս և ֆէշքէշ ցրուեաց 'ի դրունս օճախ աղայիցն և մեծամեծաց , և զամենեսեան դարձոյց յինքն ։

Եւ գնացեալ առ դատաւորն նստաւ · և դատաւորն կոչեաց զմեծամեծս քաղաքին , և 'ի միասին խորհեցան և կոչեցին զմօլլայն զայն և հարցին զպատճառ գալոյն ։

Եւ նա որպէս հաւատարիմ գոլ օրինաց իւրեանց , ասաց թէ՝ Ես կամիմ զի յազգէն Հայոց ով ոք որ տաճկանայ և գայ յօրէնս մեր , Նորա արիւնամերձ ազգականաց որչափ անկատար արու տղայ մինի պարտ է որ զամենեսեան բերցէ ընդ իւր

'ի պայծառ հաւատն մեր ։ Ես զայս 'ի Բաղէշ արարի, և եկի զի և աստ հաստատեցից ։ Զայս ասելով կարծէր հաճոյ լինել նոցա ։ Եւ ասէ դատաւորն․ Ես Աստուածոլայ Թագաւորանիստ քաղաքի դատաւորաց դատաւորի աշակերտն եմ․ և նորին հրամանաւ մայրաքաղաքիս Վանայ դատաւորն եմ, և չորս կողմն աշխարհի դատաւորքն ամենեքեան նորա հրամանաւ կուգան։ Այս ի՞նչ զարմանք, որ մեք ամէնքս չեմք կարդացեր, և ոչ լսեր․ դու որ քիւրդ մոլլայ մի ես, և գիւղաքաղաքի մի դատաւոր, ո՞ւր ես կարդացեր կամ լսեր, որ զմեզ զամենեսեան և զմեր առաջին և զմեծ փեղամպարի գիրս սուտ համարես, միթէ դու նոր (մօ․․ֆ ամբար) փեղամպէ՞ր ես ։ Եւ նոյն ժամայն ամենայն ամբոխն 'ի մի բերան աղաղակին թէ՝ Այս մահու արժանի է, զի զմեր նախնեաց օրէնս խափանէ և իւրն հաստատէ ։ Ասէ դատաւորն․ Ցիրաւի՛ մահապարտ է․ այլ վասն Ռմայթ խանի խաթերն մի ինչ չար առնէք զմա ։ Եւ զկնի բազում անարգանաց հանեալ զուրս 'ի դիւանէն, և նա ամօթալի գլխօք ելեալ գնաց ։

Բայց խօջայ Սաֆարին աւելի քան զերկ- ղուրուշ խոշք եղև, թէ դատաւորին կաշառ և թէ ադային, և ուլամային ֆոռշոցա,

որ ամենեքեան եղեն 'ի կողմն խօջայ Սա-ֆարին. և ապա թէ՝ չարն այն բարձաւ 'ի մէնջ և 'ի Բաղիշոյ:

ՌՃԾԵ. Մաղթուլ օղլի Ալի փաշայն, 'ի տորա աւուրս քաղաքի ունոյն վասն կարի և սաստիկ հարկապահանջութեան եկին 'ի քաղաքէն մեծք, և փոքրիկք աւելի քան զԵՃ. անձինս, 'ի վարդավառին պահոց երեքշաբթին, և գնացին մինչ 'ի Բանդի-մահին և կամէին 'ի դուռն թագաւորին գնալ. և ծերունի աղայք գնացեալ դար-ձուցին յետս 'ի վարդավառի կիրակէն եկին 'ի քաղաքս:

Սոյ 'ի մարտի ԻԹ. հրամայեաց Հայոցս որ զքաղաքի խանդակն երեք օր փորեցին: Սա մայիսի Ժ. բազում զօրօք գնաց 'ի վե-րայ Խօշաբայ և շատ վնաս արար. և Յուն. Ա. ապա էառ զբերդն, և հանեալ զխան Մահմատն՝ զիբրահիմ բէգ եդ Պա-րոն, և դարձաւ բազում աւարաւ:

Եւ 'ի սոյն ՌՃԾԶ. մարտի ԻԷ. էր օդն պարզ, բամբակ տեղաց յերկիր: Եւ 'ի սոյն ամի շինեցաւ Նարեկայ վանք ձեռամբ Մի-նաս վարդապետին: Եւ 'ի Յուլիսի Ե. շարժ եղև սաստիկ: Եւ յաւուրս նոյն Ալի փա-շային, 'ի Ներկատան ձոր՝ ճամբի շինեցին:

Ի յայսմ ամի ՃԶ. լիտր չորայն Գ. ղրու-րուշ եղև 'ի վան:

Այս Ամի փաշայս ՌՃԾԶ· Հոկտեմբերի Զ· գնաց ։ Նաև 'ի սոյն ամի շինեցաւ Գետ-րոս Ռուաքէնլոյ Եկեղեցին ձեռամբ Տէր Իգ-նատիոսին ։

ՌՃԾԷ· Մարտի Բ· Ջարքաղ Ահմատ փաշայն եկն · սա հրաման (երեր) վասն գլխոյ Խալիլ աղային, Ուսուֆ աղային, և մեծ Մուֆթուն · և նոքա ոչ հնազանդե-ցան · զի Ուսուֆ ելեալ 'ի ներքին բերդն ամրացաւ , և Խալիլ աղայն իւրեանց տու-նըն , և Մարտի ԺԲ· օրէն մինչ Ապրիլ Ը· և ապա միաբանեալ Բ· աղայք և Մուֆ-թին Աբաս Ամիի լաճ և Դուզան աղի Բ· լաճ աւելի քան երեք հարիւր արամբք՝ որպէս թէ յՍտամբօլ 'ի դուռս թագաւո-րին կամին գնալ, փախեան ։

Սա ել 'ի բերդ և նետ ձգեաց դէպ 'ի հարաւ · որ նետն անցեալ զքաղաքն ան-կաւ 'ի ղոյլէրն · և եկեալ 'ի վայր 'ի տեղի նետին քարեայ արձան կանգնեաց · և նոյն արձանէն դարձեալ նետս ձգեաց դէպ 'ի ծովն , և անդ ևս քարեայ արձան կանգ-նեաց և գրեաց 'ի վերայ նորա · որք կան 'ի նետէ արձանին մինչև ցմիւս արձան իբրև քայլս Ռ· մեծ մարդոյ , աւելի և ոչ պա-կաս ։ Եւ ՌՃԾԸ· մազուլ եղև և գնաց ։

ՌՃԿ· Օգոս ԻԵ· Ռաջար փաշայն եկն 'ի վան · սա Յունվար Ա· սպան Ջալիլվար

(գուցէ Տիլավար) օղլի Հուսէն աղէն. և Յուլիս Ի· գնաց բազում հեծելօք և Նեֆով մեծաւ 'ի վերայ Խօշաբայ. և 'ի ճանապարհին Թալանեաց Ջեռնակայ բերդ, որ լի էր բազում գանձիւք· զի բոլոր Նահանգ յահէ փաշային և հեծելին անդ էին Թագուցեալ զամենայն ինչս իւրեանց վասն ամրութեան, և ապա անցեալ գնացին 'ի Խօշաբ. և Իբրահիմ բէգն, որ էր 'ի բերդ, ոչ եկաց հակառակ ընդդէմ· այլ ինքնին իւր կամօք էջ 'ի բերդէն, և տարեալ ընդ խան Մահմատի տղայն եդ Պարոն, և 'ի Մայիս Ա· դարձան բազում աւարաւ։

Ի սոյն Թւին Սպահանայ Շահի եղբայրն փախստական յեգիպտոսէն եկն 'ի քաղաքս Վան. Ռաջաբ փաշայն յղեաց և կոչեաց առ ինքն, և նա ոչ եկն. վասն որոյ հրամայեաց տանել զնա 'ի բերդն և առնել 'ի Թաքստի։ Եւ ինքն իւրայնօք և բազում զօրօք ելեալ գնաց 'ի Ջուխուր, և Թալանեաց զերկիրն. և 'ի Յուլիսի ամսոյ Թ· որ էր Վարդավառի երկուշաբթին դարձաւ 'ի քաղաքս. զՇահի եղբայրն իջոյց 'ի բերդէն և եդ 'ի Նաւ և յղեաց 'ի Աղթամար, և խուրշըն ինքն հոգայր. և առ Շահն և առ Թագաւորն մարդ յղեաց, և Մնայր հրամանաց Նոցին։

Եւ 'ի սոյն աւուրս Վարագայ մարագն

փլաւ, և երկու մարդ՝ 'ի ներքև մնացին, և երկուքն մեռան, և երկուքն ողջոյն մնացին, բայց մեռեալքն Թ. օր առանց թաղելոյ մնացին։ Այս Թաշկար փաշայն ոչ եթող թաղել մինչև ՌՃ. ՂԷ. արեան գին էառ և ապա ետ թաղել. յորում աւուր էր Առաջնորդ Ստեփաննոս վարդապետ և Քէթէև Նազր Ամիրխան՝ որ ՌՃ. զուրաց պայրուք առին շահով, և ետուն։

Նաև 'ի սոյն ամի Բարդուղիմէոս վարդապետ գնաց մօտ փաշայն և ասաց. ես ԲՃ. ԺԻ. գարի կուտամ, զիս արա Առաջնորդ քաղաքիս. և փաշայն աղդեաց քահանայք գօլճաթաւորացն, և քահանայքն ոչ կամեցան։ Իսկ փաշայն ըստ հայցման Հայոց զԲարդուղիմէոս վարդապետ 'ի բերդ 'ի զնդան ձգեաց. և կոճլեալ 'ի քաղաքէս Գ. մարդ, ամեն մարդայ ԴՃ. փարա եհաս. և ԴՃ. ԺԻ. գարին՝ զոր խոստացեալ էր նա, զայն 'ի Վարդապետն էառ. և զՍտեփաննոս վարդապետ կրկին հաստատեաց. և ԴՃ. զուրաւ 'ի Բարդուղիմէոս վարդապետէն էառ, յորոյ պատճառս քաղում պարտք եղև Վարդապետ։

Ի սոյն ամի խաղիլ աղբերն զՎարժիր Թաջիխն մօտ աղբիւրն եբեր 'ի քաղաքս. բայց բազում տանց վնաս եղև 'ի քաղաքին։

Նաև 'ի սոյն տարւոջ 'ի գիւղն Բերդակ ումեմն Թուրքի կովն ծնաւ . և էր անձն մի որթին , գլուխն Բ. բերան , աչք , և ոտկանց Դ. և ոտք Զ. 'ի ծնունդ մայրն մեռաւ ., և Թուրքն այն եհար թրով զորթն և կտրեաց և արար Բ. կտոր . և գլխոյ կողմն եբեր 'ի քաղաքն , զոր ամենեքեան տեսին , և զարմացեալ փառս տային Աստուծոյ ։

ՌՃԿԱ. փետր. ԺԲ. Հասան փաշայն եկն . սա զՍուխթայ (սօֆտայ) մի եառ 'ի զնդանէ , և տուաւ մի սպան . և 'ի մարտի ԺԲ. զՍամէլի Նազարն 'ի յէշ դրին և 'ի մէջ քաղաքին շրջեցուցին ։ Եւ 'ի սոյն ամի Արճիշոյ դատաւորին երկու գոմէշ ջամնակ ծնան , և 'ի միւս օրն դատաւորն մեռաւ ։ Նաև յերկիրն Գաւաշու ումեմն քրդի խոյ մի տարեկան , խոր մի ցորեն , և խոր մի դարի , ամենեքեան 'ի քար դարձան . զոր բերեալ 'ի քաղաք ցուցին փաշային և օճախներաց , որ և մեք ևս աչօք տեսաք ։ Եւ 'ի սոյն աւուրս Նադր Ջերօն գինով եղեալ գնաց 'ի բաղանիս , և [illegible] ետ Թուրքերացն , որք առժամայն կալեալ զնա տարան փաշայի առջեւն , և անդ դատն մահուամբ սպանին , և ապա կախեցին 'ի փայտէ վասն Նախատանաց 'ի տեսութիւն ռամկին ։ Եւ 'ի սոյն օր հրամայեաց որ

փողով ձայնեց 'ի մէջ շուկային թէ՝ Քրիստոնեայ ոք մի՛ իշխեսցէ սպիտակ կողոց, դեղին օձլ, և մէշս հագնել, և ոչ թուր, թուանք, խանչալ, դանակ պահել, և ոչ թամքով այարով ձի հեծնել, և կամ գինով 'ի շուկայն շրջել, և ոչ տաճկին գինի տալ: Այս Հասան փաշայն Ցուլիսի ԺԴ· գնաց 'ի վերայ Խօշաբայ, և նստաւ ԺԵ· օր, զի կամէր որ զխան Մահմատի լաճ հանէր 'ի բերդէն և զԻբրահիմ բէգ Պարոն դնէր, և ոչ կարաց. և յՕգոս. Ը· դարձաւ:

'Ի սոյն Սեպ· Ը· քուրդ մի գող եմուտ խալիլ աղայի այգին, և շուն ըմբռնեաց զնա. վասն որոյ իմացեալ կախեցին զնա:

Այլ և Բ· թուրքի կին 'ի յէշս դրին և շրջեցուցին 'ի քաղաքս: Այլ երկու թուրքի կին ածիլեցին (զհերս գլխոյն) և 'ի յէշ եդեալ փողոցով շրջեցուցին, և ապա քշեցին 'ի քաղաքէս:

ՌՃԿԲ Հոկ· ԺԲ· Աբրահիմ փաշայն եկն 'ի Վան, և 'ի սոյն Դեկ· Դ· ին գնաց:

'Ի սոյն թիւ նորոգեցաւ կտուց ծովապատ Անապատ Սուրբ Կարապետու եկեղեցին սրբատաշ քարամբք, ձեռամբ նորին առաջնորդ Սիմէօն վարդապետի և Երեմիային, բայց արդեամբք ամենայն քրիստոնէից:

ՌՃԿԳ. Մարտի ԻՋ. Մուրթազայ փաշայն եկն, և յԱպրիլի ԺԳ. զխօջայ Մարութի թոռն զՄարութայն և զՄինօյի լաճ զՅահակ կախեց։ Ի սոյն ամի խիստ ձիւնամեծ և կարի ցուրտ ձմեռն եղև, այնքան մինչ զի սղնձէ ջուջումն և ճճրեղ 'ի մէջ տանցն պատռեցան. և 'ի յունվար Ջ. 'ի Ցայտնութեան գիշեր ԺԴ. Արաք 'ի ցրտոյ մեռան, թող զայլսն. յաւուրս՝ Գ. Դ. աւելի կամ սակաս մեռանէին. և 'ի սաստիկ ձմեռն ցրտոյս լուաք որ 'ի յԱրճէշ քաղաք Ա. լիտր միթիր ղուռուշ մի եղև, և մէկ վաթ խոտ Գ. ղշ. և մէկ ղուրուշ յարդ՝ .... ղուրուշ և կէս. և Բ. խուրձ խոտ՝ լաւ ոչխար մի տային. և այն ևս հազիւ 'ի ձեռս անկանէր։

'Ի սոյն ամի Փիրկանց Ախիջան մեռաւ, որ ունէր եղբօր որդի, և քոյր, և քրոջ որդի. և վանայ Ղուլն զտունս, զայգիս և զապրանս տիրեցին։

Եւ 'ի Ցուլիսի ԺԵ. Ուսուֆ աղայից Ժ. մարդ 'ի գիշերի գաղտ գնացին զի զՆօհ Աղի լաճ սպանցեն, և ոչ կարացին, զի նոքա արթունք էին և սոքա փախեան. իսկ նոքա զհետ մտեալ կալան զմինն և տարեալ կախեցին։

Եւ ՌՃԿԴ. ին այս Մուրթազայ փաշայն գնաց 'ի վերայ Խօշաբայ Ջէնալ բէգ

Զարոն հանել և զԻբրահիմ բէգ. դնել Պաբոն. և 'ի գնալն' իմացեալ Ջէնալ բէգն թագուն զօրօք եկն 'ի դէմ փաշային. և 'ի Ջանկայ դաշտն հանդիպեցան միմեանց և յոյժ պատերազմեցան. և յերկու կողմանց աւելի քան զՄ. այր անկան, մինչ զի և դատաւորն որ էր միականի Աւդուլահ աֆանդին մեռաւ, և փաշայի գլուխն եւս վիրաւորեցին. բայց յետոյ Ջէյնալ բէգ խիլայեաց զփաշայն և հաշտեցան։ Սա 'ի նոյ. Ի. ծանուցաւ եղև, և ԽԱ. Ղափուջի եկն և զգլուխն եհատ։

'Ի սոյն ամի Մարտի Ը. յառաւօտէ շարժ եղև 'ի քաղաքս Վան, յորմէ 'ի յայգիքն Սուրբ Ցակոբայ վեր տուն մի փլաւ. վեց հոգի տակն մնացին, չորսն մեռան և երկուքն ապրեցան։ Նաև Բարդուղիմէոս Առաքելոյ գմբէթն թռաւ, և Խօշաբայ բերդի ճօռանն խախտեցաւ. Ղարա սաքայ բերդի Չէլոդին վերայ քօշկն փլաւ և ըզՉէլոդն աւերեաց, որ և բազում մարդիկ 'ի ներքև մնացին։ Այլ և Սաթմանից քօշկն փլաւ և զբազումս սպան. և այլ բազում գիւղք տապալեցան և յոլովք մնացին 'ի ներքև, և բազում վնաս եղև Մահմուտեայ երկրին։ Եւ 'ի սոյն ամի 'ի յԱրճէշ քաղաքի 'ի մեծի հինգշաբաթի գիշերն առաւօտեան ժամուն շարժ եղև, որ եկեղեցւոյ գմբէթն

անկաւ, և ԼԷ· մարդ 'ի ներքև մնացին. բայց խնամօքն Աստուծոյ մինն մեռաւ, և այլ ամենեքեան ապրեցան այլ չարեքն տաղնապ եղեն:

ՌՃԿԵ· Յունվար ԺԸ· Ջանլի Մահմատ փաշայն եկն, որ Բաղլի (գուցէ Ֆազլի) ասէին. սա հասեալ 'ի յԱրճէշ, զՄուսամին իւր յղեաց 'ի քաղաքս, և հրամայեաց զի ամենայն մեծամեծք և փոքունք գնասցեն ընդդէմ նորա մինչև 'ի Բերկրի, որ և եղին ամենայն զօրք քաղաքին աւելի քան զԵՌ· անձինս. և հասեալ 'ի Բերկրի հանդիպեցան միմեանց և եղեն անձինք ՋՌ· և գնացին 'ի վերայ Աբաղու երկրին, և Մահմուտանայ, բազում և անասելի ոճիրս գործեցին. քանզի Եզիդու ազգն և զանմեղ քրիստոնեայսն առհասարակ սպանին. զտունս լի մարդով և զախոռս լի անասնօք այրէին, և նոքա 'ի մէջ տոչորէին մինչև յելս շնչոյ. նաև Դ· Ե· և Զ· անգամ սրով հարեալ սպանանէին. և զայլսն որպէս զանասուն դանակաւ զենուին. և զտղայս կախեալ յերկու ոտիցն յերկուս հերձէին և ձգէին յերկիր. և զկաթնասունս ցրուեալ 'ի յերկրի՝ ձիոց կոխան առնէին. զծերս և զպառաւունս սրով սպանանէին. զհայոց և զեզիդաց զարս և զկանայս զգեղեցիկս, զերիտասարդս և զմանկունս ՋՃ·

հոգի գերի բերեցին. նաև ԼՌ· ոչխարս և անթիւ ձիս և ջորիս, եղինս և գոմէշս, պղնձեղէնս և արծաթեղէնս թալան բերին, որ թիւ ոչ մտանէր. և զի էր առաւ-ջաւորացն ձմեռն ձիւնամերձ· և կարի ցուրտ էր. և շատք 'ի յահէն փախստականն եղեն 'ի լերինս և 'ի ձորակս, 'ի դարակս և 'ի սահմանս, և անդ էին բքածեծք և ցրտասառոյց մեռան: իսկ այն ողորմելի գերիքն հետափոտս 'ի ճանապարհին առաջի ձիոցն թէ զինչ տանջանս կրէին, մանաւանդ խղճալի կանայքն 'ի ձեռս զազրագործ և անաստուած անօրինաց. և 'ի յունվար ԻԴ· եմուտ 'ի քաղաքս բազում գերեաւ և աւարաւ. և 'ի միւս գիշերին Գ· Եղէղէ-եղ 'ի ղաղաղախն. և 'ի յուն. ԻՁ· զխալիլ աղայն սպան. և հասեալ 'ի մարտի ԼԱ· որ էր Ցարութեան Զատկի մեծ շաբաթ օրն, ինքն մեռաւ, և զբերեալ գերիսն ոմանք ցրուեցան և զերծեալք փախեան, և զոմանս քրիստոնեայսն գնեալ ազատեցին, և զոմանս հանեալ 'ի հաւատոցն ուրացուցին:

ՌՃԿԶ· Օգոս. ԻՁ· Դալի Հուսէյն փաշայն եկն Խ· բայրաղօք. և քաղաքացիք եկին ընդդէմ և պատերազմեցան ընդ միմեանս 'ի Լէզքայ դաշտն, և զօրք փաշային յաղթեցին զվանեցիս և զբազումս վիրաւո-

քեցին, և զձիս, և զզէնս, և զհանդերձս կողոպտեցին, որք մերկ և ամօթալի դարձան 'ի յետս․ և փաշայն գնաց 'ի յետս 'ի յԱւանց, և զգիշերն անդ մնաց․ և 'ի վաղիւն եմուտ 'ի քաղաքն, իսկ քաղաքացիքն այլ ոչ ելին 'ի դէմն ։ Սա եկաց մինչ 'ի Նոյ․ ԺԳ․ որ էր իւրեանց Ղուրբան բայրամ, և 'ի նոյն գիշերի ելեալ գաղտ գնաց սակաւ զօրօք ։

Ապա եկն Ջալարի Ուսուֆ փաշայն, և չուստ մնդղում եղև և գնաց․ և դարձեալ եկն, և քաղաքացիքն ևս կրկին ելին ընդդէմ մեծաւ փառօք․ սա եկաց մինչ 'ի ՌՃԿԷ․ և Մարտի ԺԳ․ գնաց ։ Եւ 'ի սոյն ամի Յուլիսի տասն Ղազու մի լաճ զտաճիկ գուլամիրն և քուրդ մի 'ի ղուղուխ հարին․ և Օգոստոսի ԺԵ․ լուսինն՝ որ էր ԺԵ․ աւուր, խիստ խաւարեցաւ և սևացաւ իբրև ժամ Բ․ և ապա դարձաւ 'ի գոյն արեգական, և յետոյ սակաւ սակաւ պայծառացաւ ։

ՌՃԿԷ․ Օգոս․ Է․ Քալաջի Մահմատ փաշայն եկն ։ և 'ի փետր․ մէկ մեծ խռովութիւն եղև 'ի մէջ Խալլիլ աղայի լաճ Մահմատ բէգին և Խալլիլ աղային․ իսկ Մահմատ միաբանեցաւ ընդ Նոհ աղի լաճ Մահմատ բէգին, ելեալ առին զբերդն և ամրացան, և շատ հարին 'ի վերայ Ալի աղի

տան. և Սև աղայն փախստական լինէր տանէ 'ի տուն. և նոքա ուր և լսէին թէ անդ է՝ անդ հարկանէին զնա. որ և բազում անգամ մնաս եղև, յոլով մարդիկք մեռան. իսկ Սև աղայն ոչ կարաց համբերել, այլ 'ի փետր. ԻԸ. ելեալ գաղտ փախեաւ 'ի քաղաքէն և եղբայր իւր Աւդուլլահ աղայն և Թամուր Աղի լաճ Մահմուտ չէհէն, իսկ Ղուլաղասիք հրամանաւ Թագաւորին համարձակեալ Թալանեցին և այրեցին զտուն Սևի աղային, և զնոյնօրն Աւդուլլահ աղային, և ապա յետ աւուրց առաքեցին խաբանօք բերին զՄահմուտ չէհէն 'ի քաղաքս, և յԱպրիլի Գ. սպանին զնա Բուռնովով. Եւ այս համբաւս տարածեցաւ ընդ ամենայն աշխարհս, թէ վան քաղաքի Ղուլն ապստամբեալ է. և նոքա իջեալ 'ի բերդէն զօմանս թողին անդ պահողս որպէս սեպհական ժառանգութիւն, և ոմանք զքաղաքս տիրեցին, և բերդի նստողն ես 'ի հրամանս սոցա կայր, և մնացին այսպէս աւուրս ինչ:

Եւ ՌՃԿԸ. Յունիսի ԺԸ. հրամանաւ Թագաւորին Քօփրուլիի որդին Աւդուլլահ փաշայն եկն առնել ջուբէշ և դատաստան, քննել և իմանալ և հատուցանել ըստ գործոց. յորում աւուրս էր 'ի քաղաքս վան այն Քալաջի Մահմատ փաշայն, որ և ինքն

իւր ամենայն զօրօք ելեալ գնաց ընդդէմ, և քաղաքի Ղուլաղասիք զօրօք իւրեանց. և միաբան գնացին ընդ յառաջ մինչև 'ի գիւղն Աղնականց, յայնկոյս գետոյն հանդիպեցան իրերաց։ Էին ընդ նմա բազում անթիւ հեծելազօրք, նաև յԱմթայ բէգն իւր զօրօք, Բաւայ և Ջզերու Պարոնններն իւրեանց զօրօք, և այլ բազում հեծեալք և անհամար հետևակք։

Եւ 'ի վաղիւն ելեալ անտի եկին յԱղնականից դաշտն իջին. և անդ մեր փաշայն մեծ պատիւ արար նմա և զօրաց նորա։ Եւ ապա նստեալ խօսեցան վասն ամենայն անցիցն եղելոց և զպատճառսն չարեաց։ Եւ նոյն ժամայն 'ի մէջ դաշտին եհատ զգլուխ Ալի աղային և Նօհ աղայի լաճ Մահմատ աղային, և անդէն եթող 'ի մէջ դաշտին. և ինքն ելեալ զօրօք և բանակեցաւ 'ի մէջ դաշտին Ալանուց, և զերրորդն դարձեալ յանձնեաց 'ի ձեռս և յԵնգիչար աղասին, և ինքն եկաց անդէն աւուրս ժԵ. և ապա գնաց զօրօքն իւրովք։

Եւ յաւուրս սոյն Քալաջի փաշային Մօլայ Խըտըրրի Թոռն գինով եղեալ գնաց 'ի Ցարութիւնի տան վերայ վասն քուերն. և զի արևն 'ի մուտ էր՝ Ցարութիւն և իւր դրացի Ախիջան՝ զոր Գառու ատամ ասէին,

տղքա երկոքեանս նստեալ էին 'ի սեղան 'ի տան դրան. և յանկարծակի տեսին զտանձիկ իջեալ 'ի պատէն և եկն առ նստա-զինուք, և նոքա երկուցեալ մեծարեցին զնա, և կանգնեալ ինքեանք նստուցին զնա 'ի վեր. և նա ասէ ցՑարութիւն՝ Կոչեա ասա և զքոյրն քո՝ և նա ասէ՝ Մեծ համօթ է քեզ այդ ասելն. զի անհամեք Բ. կորիճ, կեր և խմիր որչափ պիտի։ Եւ նա ասէ՝ Ոչ, թող նա ևս գայցէ, վասն զի ես վասն նորա եկեալ եմ. և Ախիջան ասաց, Զամաչե՞ս որ ասես եկեալ եմ նա-պաով. ել և գնա։ Եւ նոյն ժամայն եհան զսուր 'ի սիրտ Ախիջանին և սպան զնա. և Ցարութիւն եհան զսուրն 'ի ձեռաց և եհար զսիրտ և սպան զտանձիկն, և մտեալ 'ի տունն զքոյրն ևս սպան. և 'ի յառաւ-ւօտն ել ինքնին և գնաց առ փաշայն և պատմեաց զեղեալսն թէ՝ Տանձիկ եկն 'ի վերայ իմ տան վասն իմ քրոջս և սպանի զդրացին մեր, և ես սպանի զտանձիկ և ըզ-քոյրն իմ։ Եւ նոյն ժամայն կալան զնա և եդին 'ի շղթայս. այս եղև 'ի Սեպ. Ա. և պահեցին զնա մինչև 'ի Նոյեմբեր Ի. և ապա կախեցին զնա և այլ տանձիկ մի ընդ նմա. և ՌՃ. ղուրուշ արեան գին առին 'ի յԱրարուց հողն այգեստանեայց։

ՌՃԿԸ. Օգոս. Լ. ծերունի յաջի Ամ

փաշային եկն. սա 'ի Փետր. Բ. սպան զՆու-
մանն ալի լաճ Հուսէյն աղէն և զՆամանթի
լաճ Ալի աղէն, և այլ երեքեան, 'ի յա-
հէյն. փառս որոյ Յուսուֆ աղէն խարով զօ-
րօք եկ 'ի Ներքին բերդ եհար զվրան և
հանդնեաց զթնդանօթն մինչև 'ի լոյս զճանկոյն
վառէր և Նոյ յդէր ընդդէմ փաշային. և
Խալիլ աղի լաճ Մահմատ բէգ՝ այն որ
զհետ Նօհաղի լաճառն զբերդն գողացան
և 'ի գալն Աբդուլլահ փաշային փախեաւ,
և այժմ 'ի կողմ այս փաշայիս է. և զփո-
չերի առաւելի քան զԵՃ թօփ զարկին յերկրոյ
հաղմանց բերդէն 'ի քաղաքն, և 'ի քաղաքէն
'ի բերդն. և առա Խալիլ աղայի ըռճն էառ
'ի փաշայէն Ձ. ընտիր մարդ, և գնացեալ
եմուտ 'ի բերդն վերին, և 'ի գիշերի կէսն
ահնայն հնարքիւք 'ի Ներքին բերդն. և մինչ
Յուսուֆ խարով զօրօք Նստեալ կայր ան-
հոգ 'ի մէջ վրանին, և նոքա յառաւօտէ
յանկարծակի հասին 'ի վերայ Նոցա զի-
նուք և սուսերօք՝ հարին զվրանն և աւարին
զզէնս Նոցա, և կալեալ զգլխաւորս Նոցին
զԼօթոնց Յուսուֆ աղայն, զԻբրահիմ քե-
հէյն, զՄուստաֆայ բէգն, զՕսման աղէն,
զՏուզլունոյի երկք լաճ, և զայլս մեծա-
գոյնս, կապեցին զձեռս, և այլք փախեան
և ցրուեցան. և զկապեալսն տարան դէմ
փաշային 'ի սարայն, և 'ի Նոյն պահն զծ.Գ.

'ի նոցանէ գլխատեաց. և Ժ. 'ի շղթայս եհար. և 'ի սոյն պատճառ է՝ 'ի Ծաղկազարդի կիրակէն որ էր Ապրիլի Ժ. զՀաւգողենց խօջայ Մաղաքեայն և զկոր Ուսուֆն կախեաց. և Յունիսի Ե. զՆոհ աղի կորն ըսպան. 'ի յունվարի ԺԵ. զԻբրահիմ քէհէն և զկանանչագլուխ մօլայ մի 'ի յէշ հեծոյց և 'ի մէջ քաղաքին այնպէս խայտառակ շրջեցոյց դղրդով։

Սա զփաշայի զօրսն և զբերդի պարիսպն բազում տեղիս նորոգեաց. զօրօքն մէջի բակն մեծացոյց, և միւս ևս նոր դարպաս եբաց 'ի դուրս, և՛ աւելի խարաջ Դ. էառ 'ի Հայոց։ Սա հրամայեաց թէ Տաճիկ ոք մի՛ իշխեսցէ ձիով և խանչարով շրջել 'ի մէջ քաղաքին, որ և յահէն ամենեքեան զէնընկէց շրջէին. և ազգս Հայոց էին 'ի խաղաղութեան։

Սա 'ի խնդրոյ Տէր Իգնատիոսին՝ զՊետրոս Առաքելոյ եկեղեցւոյ դուռն դրսին երկու փեղկով եա բանալ, որ Դ. ատախճանաւ ելանէին։ Սա 'ի Յունվարի Ի. մահուան եղև և ել 'ի քաղաքէն և գնաց 'ի գիւղն Աւանց մինչ փետր. Բ. անդ եկաց և ապա գնաց. և 'ի միւս ամին Մօլայք քաղաքին ժողովեցան և եկեալ զՊետրոս Առաքելոյ դուռն քակեցին. և ինքն Տէր Իգնատիոս փախեաւ. և կալան Ե. մեծ

իշխան և եղին 'ի բանդ. և յեօթն եկեղեցեաց եօթն քէսայ տուգանս առին, որ բազում ոսկեղէն և արծաթեղէն սպասք հալին և եստուն և ապա թողին իշխանաց զառաջին փոքր դուռն շինել: Զայս ամենայն չարիքս Խալիլ աղայի լաճն գործեաց, և ինքն փախեաւ Ստամբօլ, և անդ սպանին զնա, և ընկեցին 'ի հրապարակ. որ շունք կերին զնա:

ՌՃՀ. փետր. ԺԸ. դարձեալ Ավտուլլահ փաշայն եկն և Մայիսի մէկն գնաց 'ի վերայ Խօշաբայ. իսկ Զէյնալ բէգ պարոնն զեղբայրն իւր եթող 'ի բերդն, և ինքն էջ և եկն առ փաշայն և մեծարեաց. և եղեն սիրելիք և բարեկամք. և փաշայն մեծ պարգևօք դարձաւ 'ի քաղաք. և 'ի նոյն աւուր Օսմանցին էառ զԹիֆլիզ:

Եւ հրամանաւ թագաւորին 'ի ՌՃՀԲ. եկին 'ի Վան Ամասիոյ փաշայն, Ուրհայու փաշայն, Զանդրու փաշայն, և այլ փաշայք զօրօք իւրեանց և հեծելովք առ Ավտուլլահ փաշայն, որ եղև նոցա զօրագլուխ և սարասքար, և գնացին 'ի վերայ Պարսից և առին զԽոյ, զՈրմի, զԵրևան, զԹավրիզ, զՀամատան, զՄուղան, և այլ բազում փոքր քաղաքս:

Բայց թէ ո՞րչափ անողորմ արիւնս հեղին և գերի բերին, որ 'ի թիւ և 'ի գիր

ող մնացին · զի ոչ մնաց աշխարհ, որ Գ‧Ճ‧ ԽԶ‧ գերի ոչ տարաւ · մինչ զի Աստուածքօղ Ընկիւրեցի նորընծայ կաթողիկոս ԸՃ‧ գերի գնեաց ազատեաց · թող զայն որ ուրացուցին · և այլազգի գերիս կրկին էին քան զքրիստոնէից գերիս, որք ամենեքեան ցիր և ցան եղեն, և ցրուեալ խառնեցան յայլ ազգս և յազգս և 'ի լեզուս օտարս, և նեղեալք ըստ ամենայն յամենայնի ։ Եւ Սեդրուլլահ փաշայն յամենայն տեղիս զօրավար և զօրագլուխս կարգեաց, և ինքն եկաց 'ի Թաւրիզ մինչև ՀԵ‧ թիւն. և զայս Ալի փաշայն 'ի Թագաւորէն եկն 'ի Թաւրիզ, և Սեդրուլլահ փաշայն յՕգոստոս ՀԶ‧ եկն 'ի Վան, և զորդին իւր զԱբդըռահման 'ի տեղին եդ փաշայ քաղաքիս · և 'ի Սեպտ. Գ. գնաց 'ի յՈւրհայ ։

Եւ ՌՃՀԶ‧ Այս Աբդըռահման փաշայս իւր տուրքով մէջ նոր քաղաքիս շինեաց, և 'ի յԱւանուց ճանապարհէն 'ի զովոտ տեղիս խերթե քայլս Ռ‧ սալայատակս արար ։ Սա քաղքի մանուկ էր և գինեւէր, ևս զի յԱստուածքօղ տեսեալ փոքրիկ նաւեր տաւաչինեաց և փոքր թօփեր եւս դնել 'ի մէջ, և ամէն երեկոյի սակաւ մարդով մտանէր 'ի նաւն գինով և օղով պզիչերն ազդ չըէր 'ի մէջ ծովուն, թէֆ ձգէր այսր և անդր, ատանեղով և քնելով ուրախանայր · և յա-

ռաւօտ ելեալ գայր յիւր օդայն· 'ի Մարտի ԺԲ· ծննդեան եղև և գնացեալ 'ի Տրապիզոն մեռաւ :

Թիւ ՌՃՀԷ· Քանլի Մուստաւայ փաշայն եկն 'ի վան :

Թիւ ՌՃՀԸ· Արապկերցի Մահմատ փաշայն եկն, որ փաշաջի ասէին · եկն վոֆորայ 'ի վան և խոտոչ էառ :

Թիւ ՌՃՀԹ· Գարայ Մուստաւայ փաշայն եկն, որ Թավրիզ ոսբորեաց էր · և փոխեաւ էկաւ մօտ Ջավուշբաշին · յամիս արին, յետոյ գնաց :

Թիւ ՌՃՁ· Արիֆ Մահմատ փաշայն եկն 'ի վան :

Թիւ ՌՃՁԱ· Մեծ Թամուր փաշայն եկն 'ի վան Ապրիլի Գ· Աւագ երկուշաբթին, և միւս օր ել և գնաց յԱրզրում· Մայիսի Զ· օրին դարձեալ եկն, և հասեալ 'ի Քաջբարիոս՝ Զաւուշբաշի Աւտուլլահ աղայն սպան · Նոհ աղի լաճ Ահմատ քէհէն և այլք փախեան · և զօրք փաշայքն զհետամտեալ բազումս Թալանեցին, և՛ շատս վիրաւորեցին, և այնպէս ջարդելով եկն եմուտ 'ի քաղաքս · և Գ· թոփխանն և դաշտան դուռն լանքոլ և թոփաղաւն շինեց, որ 'ի դէմն տանէրին՝ լանքոլ ձգել տայր · և ամենայն երկիր դողային 'ի յահէ նորա · և յայսմ ամի գնաց 'ի վերայ Բաղդադայ ·

զխանն փոխեաց , Գ. մեծ աղայ սպան , և բազում զանձս էառ , և եկն դարձեալ 'ի վան ։

Եւ ՌՃՁԲ. գնաց 'ի վերայ Սալմաստու՝ Մայիս ամսոյն, և կողոպտեաց զնա . էառ զԱխբակ , Գ. ԳՌ. մարդ սուր քաշեց և դարձեալ եկն 'ի վան . ձմերոյն առաջուրէն ժողովեաց քան զԿ. քիսայ աւելի . 'ի Մայիսի Ի. ել և գնաց 'ի վերայ Թավրիզոյ և էառ . և զբազումս 'ի Պարսից ազգէն կոտորեաց և գերի արար , որ Թիւ ոչ գոյր ։

Ի սոյն Թիւ , Յունիսի Ժ. օրին եղև ջոնամայ Գ. օր և Գ. գիշեր . որ Թահմազն յետ դարձուցին 'ի Բաղդատ զօրքն Թօփալ Օսման փաշային ։

'Ի սոյն Թիւ եկն ազգ մի Թաթար , որ մարդակեր էին , գնացին 'ի Թավրիզ առ Թամուր փաշայն . և փաշայն 'ի ընձէլ եղած ջոտոջառղնէրոց օր ԺԵ. մարդ Նոյէն տայր նոցա , որք մորթէին և ուտէին ։ 'Ի սոյն ամի դարձաւ Թամուր փաշայն 'ի Թավրիզոյ և եկն 'ի Սալամաստ . իսկ վանայ զօրքն՝ որք էին Թամուր աղի լաճ Ահմատ բէգ , Մէհտի Խըդըրի լաճ , Ալի աղի լաճ Օսման բէգ և այլ մեծամեծ աղայք , խորհուրդ արարին Թէ փաշայն ոչ Թողումք որ 'ի քաղաքս մտանէ . և վանայ Մուսալիմ Ալի աղայն իմացաւ , մարդ՝ յղեաց առ փաշայն 'ի Սալամաստ . և նա մէկ օր Սալ-

մաստու եկն 'ի խօշար · իսկ վ'անայ Հայք և Տաճիկք 'ի յանհէն դողային · և դիմեալ 'ի քաղաքն նորա շինած ղարաղօլջըներ ու ղոնֆաջըներ ջարդեցին · փաշայն Գ· որ նստաւ 'ի խօշար թէ գան 'ի դէմն , սակայն ոչ գնացին այլ դուրգունըներ գործեցին և ճոռանէ-վէ 'ի ճողան լցին · փաշայն իմացաւ որ կռուիլ կամին , 'ի խօշարայ եկն 'ի Ղոռւ-բաշ գիւղն , և դուրս եղած ամէն քրիս-տոնեայ ռայէն գնացին 'ի մօտն · երկնչէին թէ թալանէ զինքեանս · և նա յուսա-դրեաց զնոսա ասելով թէ՝ Մի՛ երկնչիք , երթայք , նստարուք միամիտ 'ի ձեր տե-ղին ։ Յետ գնալոյ նոցին ինքն ևս հեծեալ 'ի ձին 'ի Ղուռւբաշայ եկն 'ի կենդանանից գեղջն առաջովն անց գնաց 'ի ծովու ե-զերն 'ի բերդի ետևն · զի յետ ինգիշար աղաստւն բանս եդեալ էին · 'ի գիշերի եւ 'ի բերդն , և լցեալ զնօֆերն ձգեաց 'ի վե-րայ Աղայոց տանց ուր և կամէր , և ան-ճար մնացեալ բացին ամենեքեան զդրունս և փախեան · և ապա եկն փաշայն 'ի սա-րայն և նստաւ 'ի տեղի իւր , և կալեալ զԻնգիշար աղասին սպան փոխանակ տա-լոյ բերդին ինքեան ։ Յետոյ սարայքարն խնդրեաց զնա 'ի Ղարս , և գնաց · անդ Անաւուտ փաշայն եհատ զգլուխ նորա 'ի ՌՃՁԴ· թիւ ։

Ի Թիւ ՌՃՁԵ. Քուրդ Իպրահիմ փա-շայն եկն աստ, մեռաւ:

Թիւ ՌՃՁԶ. . . . . եկն. յետ Գլուն (Գուլին) կռուաւ. չատ տաղէկլութեամբ դուրս արին 'ի քաղաքէն գնաց:

Թիւ ՌՃՁԷ. Մուսուլցի յաչի Հուսէն փաշայն եկն 'ի վան. յետ Գլուն կռուան. ալլահ ինկաւ, որքան Բախբը՞ ունէր եւ Օսման ազին, ինքն ահու ղորող գնաց 'ի Մուսուլ:

Թիւ ՌՃՁԸ. Վանեցի Օսման ագայն եղև Վանայ փաշայ. 'ի սոյն թիւ շինեցաւ Հայկավանից Սուրբ Աստուածածին եկեղեցին: Եկաց սա 'ի վան մինչ 'ի ՌՃՂ. և ապա մանդաղ եղև 'ի Մուսուլ. և անդ Հուսէն փաշայն եհատ զգլուխ նորա, զի ասին թէ ֆէրմանըն էր վասն շինման նորքին . . . ([illegible]):

Թիւ ՌՃՂ. Սուզանջի օղլի Օմար փաշայն, յետոյ Մուրթազայ փաշայն եկն, Մուսալիմ Սարխօշ Ալի փաշայն Գ. ամիս նստաւ և գնաց. Մուրթազայ փաշայն և Օմար փաշայն մնացին 'ի վան. տայէն չատ նեղացան 'ի յՕմար փաշայէն. ուստի հոգելոյս մեծ Ախիջան աղէն Ղարասաֆարեան առեալ զտայէն գնաց յԱրզրում առ Համալ օղլի սարասքար վազիրն. և կամէր 'ի դուռն Թագաւորին գնալ, վասն որոյ

առաքեաց 'ի դուռն թագաւորին և ծանոյց զարարս Նորին և զգլուխ տոցին 'ի կայսին. և բերեալ հրաման յղեաց 'ի Վան 'ի վերայ Մուրթազայ փաշային. և Մուրթազայ փաշայն եղբայրագիր գոլով նմա, սակայն զթագաւորի հրամանն կատարեաց յաւուր միում եկին երկոքին փաշայք 'ի բերդն վասն ճաշ առնելոյ, և անդ կամեցան սպանանել զնա, և ոչ եղև հնար. և իջեալ 'ի բերդէն եկին Թավրիզու դրունով. քանզի Մուրթազա փաշայն 'ի Ջաւուշբաշոնց տունն էր իջեալ, և Օմար փաշայն 'ի սարայն. հասեալ 'ի Թավրիզոյ դրան փոքրիկ Ջամին յառաջ, Օմար փաշայն կամենայ Աշարաղասոնց փողան գնալ, սակայն ձին ոչ գնաց և չատ կանգնեցաւ , . . . (Բան պակասէ)։

Թիւ ՌՃՂԲ. Արծկեցի Սուլէյման փաշայն եկն 'ի Վան. մեծ սղութիւն եղև, որ քէլայ մի ցորեան հարիւր ղուրուշ ծախուաւ. լիտր մի ալիւր Գ. ղուրուշ. ամէն բան սոցա նման։

Թիւ ՌՃՂԳ. Ղարիբ Իսիթ Օմար փաշայն տեղս եկն. ծանօթ չունէր։

Թիւ ՌՃՂԴ. . . . . Հուսէն փաշայն. սա սպան զՇկակ մեծ Օմար աղէն։

'Ի սոյն թիւ Աստուածածնի պահոց Թահմազ եկն 'ի վերայ Վանայ. մեծ նեղութիւն եղև. Աստուած ետ յետս դարձաւ։

Թիւ ՌՃՂԵ· Զալիք Օմար փաշայն եկն· Բ· Գ· ամիս եկաց, գնաց։

Թիւ ՌՃՂԶ· Դայաջի Արդուլլահ փաշայն եկն· խօջէք շատ տուգնեց· Հայկավանից եկեղեցւոյ թառմէն (վերնատուն) փլաւ· տէրտէր օրհնէլին, անտի եւ տուգանս էառ։

Թիւ ՌՃՂԷ· Աինադ Մուստաւայ փաշայն եկն։ Եւ 'ի ԴՐ· Դարայմիրաքենց Լալէն մեռաւ· Դ· օրէն ետք մարմին 'ի գերեզմանէն հանին, գլուխ կտրեցին, ճաշունենց դռնէն կախեցին։ Ցայսմ ամի Գաղանչոնց Սաֆար կախեցին, որ Խօջինկայ Շարամիրի տունն կոխեաց։

Թիւ ՌՃՂԹ· Զարբինի Օմար փաշայն եկն 'ի Վան· դրամ կտրեց· հինգ փարանոց արաց ԼԲ· փարայ, ամաղանի ԻԵ·։ Դաւուդ աղէն սօլաղասի էր, 'ի մէջ ըշխէլին սպան։

Թիւ ՌՄ· Աւտի Ջալալօղլի յաջի Հուսէն փաշայն եկն· սա սպան զՆաբի Հասան, զՂաւուջի Ծուռն, Քռէզի Լօլօն, տասպուներ շատ սպանեց· խօջէք բռնեց, շատ դրամ էառ· հացն շատ թանգ էր· գարին ԻԵ· ՂՀ· էր, ալիւրի լիտրն մինչ Բ· ՂՀ՝ յղեաց Մուսուլայ շատ հաց բերաւ· լիտր աքասի մի իջաւ։ Անիծեալն . . . թէ ինչ . . . կերաւ, գրել ոչ անկանի։

ՌՄԲ· Թօփչենց Մուստաւայ աղայն . . . տարասգար Լաւանդ հետ Ղուլին գնացին ՚ի վերայ Թագուրցւոցն , (քուրդի ցեղ է), Թամթար խանն այնպէս պարտեաց , որ ոչխարի պէս ամէնն բռաց (մերկացոյց)., և խայտառակ եկին տեղս :

Թիւ ՌՄԳ· Ղարսեցի կոր (կոյր) Իւսուֆ փաշէն հետ Գլուն կռուան , մտուցին առաջայն , էլան Մուշն , բռնեցին Խասանէ յառաջ· յղեաց խօշաբայ մարդ բեր , էլան դէմ չթողին , գիշերով գաղտ դունէն ելեալ փախեաւ : Ի սոյն ամի խաչլի օղլին Արզրմայ Իբրահիմ փաշէն եկն , ծէ· որ Նստաւ ղոյէր , գնաց : Ի սոյն թիւ Շահնավար օղլի Մուստաւայ փաշէն եկն և գնաց :

Թիւ ՌՄԴ· Մարտի Ա· եկն : . . Նորավանց (գիւղ) Նստաւ , քաղաք գալ չթողին · իսա աղէն ատէնք էառ գնաց դէմ· շատ մարդիկ մեռան , գիւղացիք ամեն փախեան , ցանքեր կերցուցին · յետոյ Եէնգիչար աղասին Եէնգիչարեօք , Ղազեօք առին իսա աղէն տարին մօտ փաշայն · Մարմետ (գիւղ) ետ աղային , ինքն մանզուլ եղև , գնաց · Գռ· մարդ աւելի ունէր :

Ի սոյն ամի իսա աղի լաճ Մահմուտ աղէն եղև . . . : Ապա Միջաք Մուստաֆայ փաշէն եկն ՚ի Վան · Գօջայ Արաբ սպան Շխու Օմար աղէն : Ի սոյն ամի , Համբարձման

տօնին , մահն անկաւ · որ Ն· Ժ· մեռանէին 'ի Հայոց և 'ի Տաճկաց · եհաս մինչև աշունն , ապա վերացաւ ողորմութեամբն Աստուծոյ ։ Ի սոյն թիւ Սուրբ Խաչի պահոց՝ Սուրբ Նշան հանին Գ· օր 'ի Տիրամայր եկեղեցին ։

ՌՄՆ· Ռաջար փաշայն եկն ։

Թիւ ՌՄԿ· Դարձեալ Շահսաւար օղլի Մուստաւայ փաշայն եկն · հաց շատ սուղ էր · ցորեն Ի· ղշ· հացի հօխէն Է· փարայ , և կորեկ ալիւր Լ· փարայ լիտր ։

Թիւ ՌՄԹ· Աղայ փաշէն եկն 'ի Վան · Թոռպաղ օղլին քէհայ էր · շատ ջանաց թէ իսա աղէն սպանի , ոչ կարաց · աղէն մօտ չգնաց բնաւ ։ Ցայսմ ամի Գօրոյի Աղախանն խողջնէ մի եհան ։

Թիւ ՌՄԺ· Նոյ· ԺԲ· օրին Ջարար օղլի Ցէզուլլայ փաշէն եկն · սա սպան զԱւտի Քարիմի լաճն Ենգիչարի գոլով Ալիճիչէրէ օրթէն (գնդէն) քշել եւ ձմռան ձեան վրայ ։

ՌՄԺԱ· Դժնամոյ եղև Է· օր , քանզի Սուլթան Մուստաֆային տղայ եղև ։

Եւ 'ի սոյն թիւ Ջօբան աղէն խօշաբայ պարոնի լաճ բռնեց · վանեցիք գնացին սաֆար 'ի վերայ Աբաղու · Աղչէքէօէկ Նօֆ տարան հետ · Նօֆ զարկողն Ա[illegible]ճանդիլն էր · Ջօբան աղէն փախեաւ · բերդն առին ։

Ի սոյն թիւ Բաղդադայ Սուլէյման փաշայն մեռաւ ։

Ի սոյն թուի Ապրիլ ԺԴ. Ապարանից Սուրբ Խաչ (վանք է) լոյս էջ գմբէթին բազում աւուրս. և բազում ուխտաւորք գնացին անդ և տեսին։

Թուի ՌՄԺԲ. եկն Քարիմ խան 'ի վերայ Սարդար Վաթալի խանին և հալածեաց զնա բոլոր տարին. և 'ի հասանել կէս ձմեռուան՝ ռայ եկն, և էառ զՇիրմի։

Ի սոյն թուի հանգեաւ Շամախեցի Յակոբ կաթողիկոսն։

Ի սոյն ամի Ապրիլ ԺԴ. Նստաւ յաթոռն Սիմէօն արժանաժառանգ կաթողիկոսն։

Ի սոյն թուի Սեպ. եկին ֆոհրճվանք և խաղացին 'ի վերայ պղնձէ թեկի։

Ի սոյն փաշայի ժամանակ շինեցան յԱրարուց և Ցանկուսներաց եկեղեցիք, Էջմիածին, Սուրբ Պօղոսայ և Ղուռուպաշայ եկեղեցիք, և՝ բազում վանքեր։

Ի սոյն թուի սպանին Երուսաղէմի ճանապարհին Զարուխչու Բարսեղ և Երիզու Նազարն։ Ի սոյն թուի Այվազօղլին կախեաց փաշայն երկու մարդ հետ։

Ի սոյն ամի Սարի փաշայն եղև սարասգար. գնաց 'ի վերայ Բաշի աչուխին, շատ ջարդուաւ. հինգ, վեց մարդով հազիւ փախեաւ՝ և եկն 'ի Կարին։

Ի սոյն թուի Դեկտ. ԻԹ. այս Ֆէյզուլլահ փաշայս ծնընդոյ եղև գնաց 'ի Սուազ։

Թուի ՌՄԺԳ. Ապրիլ Ա. Խասաքի Քօռ

Ահմատ փաշայն եկն. շատ ջանաց թէ ի-նա աղէն սպանանէ, և ոչ կարաց. աղէն 'ի սարայն ոչ երթայր, այլ փաշայն ամէն օր աղէնց այգին էր: Ի յայս թիւ, և 'ի սոյն փաշայի ժամանակ, աղէն՝ իւր տղայ Մահմուտ աղէն տանուտ դռնայանն արաց. բայց յոյժ զարմանալի նամագաշայ կայր 'ի ֆըրանգէն: Այս նամագըն յետին գիրերն հարին քաղէքոյ Օխանին Աստուածատուրի տղայ Օհաննէսին, և մեռաւ Յունիսի ԺԵ.:

Ի սոյն թիւ Համադանցի Ասլան 'ի մէջ խանին 'ի Թավրիզ 'ի գողոյն սպանաւ:

Ի սոյն թիւ Սեպ. Ժ. Ահմատ փաշայն գնաց 'ի Փիլս: (Գուցէ Կ. Պօլիս կամ Թիֆլիզ:)

Թիւ ՌՄԺԴ. Քօրփուլի օղլի Նաման փաշէն, որ Խօշ ասէին, եկն 'ի Վան, շատ հօքամ ունէր. իւր երկու լաճուն տանուտ նոյէ արաց, ԲԶ. տղայ աւելի տանուտեցին: Ի սոյն ամի եկին 'ի Մշոյ Ե. ՋԶ. ձիաւորք և բէքզատայք, խանք և խօճայք, յաղագս իսա տղի աղջիկ Ունգուսուն խանըմին շուքեաց խմելոյ. ԶԻ. նաքաղ, լաւ ոսկեզօծ զամաշ փակած ձգած 'ի վերայ նաքաղէցն, այնպէս Չէրգայ (կարգ) սօլ աղասոնց Մահմուտ աղէնց տնէն բոլորան թօփչոնց դռնակէ գնացին աղէնց տուն. շատ լաւ նամագաշայ եղև:

Ի սոյն ամի բէնա Եթնէն սկսաւ բերդ և քաղաքներ նորոգել:

Ի սոյն ամի ՆՂ· Ի· Ամիր Մուստաֆայ փաշայն եկն ։ Ի սոյն՝ յաջի Ահմատ աֆանդու լաճ Ահմատ բէգին հարսանիք արին, Ոչ բէգէն քանի շուն այաքած նէտակ կու քաշէր · շատ կերաւ . . . ։

Թիւ ՌՄԺԵ· Մայիս ամսի ԺԴ· ահագին շարժ եղև 'ի մայրաքաղաք Ստամբօլ· անթիւ տեղեր փլան, և շատ մարդ մեռաւ ։

Ի սոյն Թիւ Քօլօզ փաշայն եկն 'ի վերայ Մաղսուտ բէգին, Ոստանէֆով հարին զաղա 'ի Մշոյ (երկիր) և սպանեցին ։

Ի սոյն՝ Ակրփու քարի ջուրն (գետն) այնչափ շատցաւ, որ մտաւ Թավրիզու դուռն, զի Մայիսին այնքան անձրև եկն ։ Ի յայսմ ամի, Յունիսի ԺԴ· Ամիր Մուստաֆայ փաշէն մանզուլ եղև, գնաց իւր երկիրն ։

Թիւ ՌՄԺԶ· Մայիսի ամսոյն, Եագիջի օղլի Իբրահիմ փաշէն եկն· և 'ի սոյն ամի Հոկ· ԺԳ· աստ մեռաւ ։

Ի սոյն օրս Ղարասաֆարեան լուսահոգի Սահակ մեռաւ ։

Ի սոյն ամի Դեկտ· ԻԵ· օրին, Առաջնորդ Գրիգոր վարդապետ՝ Սուրբ Նշան 'ի Տիրամայր եկեղեցոյն հանեալ տարան եդին յէջմիածին 'ի ժամանակս Իսպա աղին, քանզի տեղս փաշայ ոչ գոյր, ձեռնտուութեամբ Մ· Թովմա աղային և Պարիկ աղային · և քանզի Տիրամայր եկեղեցւոյ ժո-

զօրաւորդք ոչ կամէին, Զ. խօջայս ըմբռնեաց և ՋԾ. դհ. տուգանս էառ. յառաջագոյն վարագ կամէին տանել, յետոյ եղին յէջմիածին։

Ի Թուիս այս ՌՄԺԷ. . . . Հասան փաշէն եկն 'ի Վան. ապա Քուրդ Իբրահիմ փաշէն եկն. խանդակները հորդեցին։

Թիւ ՌՄԺԸ. Մոսկովու ամֆաջ բացուաւ։ Ի սոյն Թիւ Նոյ. Զ. ին Գրիգոր առաջնորդ վախճանեցաւ։

Թիւ ՌՄԺԸ. Դեկտ. ամսոյն, յետ մեռանելոյ Խալիլ աղային՝ Թամուր աղայն կամէր լինիլ սոլ աղասի, ոչ ետուն. վասն որոյ մեծ խռովութիւն եղև 'ի մէջ նոցա. և սկսաւ Ղուլն դառնալ 'ի վերայ Թամուր աղային. միաբանեցան ընդ Օսման փաշայի տղին դաշինս եդին, յետոյ յաւելան 'ի կողմն նորա Շօնըջ օղլի Իսմայիլ բէգ, Քեար աղասին, Աշարի լաճն, Իսախանի Իբրահիմ բէգն, Իրզի լաճերն, Սօղբաթ օղլին, և այլ անթիւ մարդիկք ամէն եղեն 'ի կողմն Թամուր աղային։ Եւ զի տեղս փաշայ ոչ գոյր, ահլահով և ֆօռլօռլայով շուրջ գային. յաւուր միոջ վստահացեալ հարին փշտօյով զկոր (կոյր) մուֆթին, որ Գռաբռեմ օջանոյն ասէին, և սպանին. մեծ ամն էր. և ապա սկսան կռուել՝ առաւօտուն մինչ 'ի գլուխ. շուկայք դատարկեցին և բոլոր փակեցին 'ի յահէ թալանելոյ. և

մարդ ոչ կարէր ելանել 'ի տանէ յահէ գուլլուլայէցն , որ այնչափ հարկանէին մի֊մեանց , ևս առաւել գիշերն ․ յետ Մաղ֊ըլէքէն , քանիցս անգամ եէչէշ արարին 'ի վերայ միմեանց , և ողջ տամօղլանին մինչ 'ի Բօյրամծ այնպէս կռիւ արարին , մինչև Բօ֊ղօզ առին թէ դամաթ Հուսէն փաշայն գա֊լոց է տեղս ․ յաւուր Ենսար աղասին Թա֊մուր աղայի խօսքով գնացեալ ընդ Եէն֊իչէրի օղլանան խօսեցան , գիշերով դամիր ղափուն բացին , էլաւ բերդն վերին ․ ցածրի բերդն Ղասար օղլի Ուսուֆ աղայն էր բռներ ․ սկսան երկու կողմանց և ծաղքինոց և Նամազխաներոց միմեանց հարկանել ․ Բ․ Գ․Ճ․ ճամաշրէ աւելի կայր ․ կամէին Նօֆ ծը֊դել 'ի վերայ Իսա աղենց տան բայց ոչ կա֊րացին ․ երկեան 'ի Թագաւորէն , քանզի Իսա աղի Նանարքն միշտ գնայր , գայր այսր անդր , և փաշայն ևս մօտեցաւ գալու ։

Թիւ ՌՄԺԹ․ Յունիսի Ա․ Դամաթ Հու֊սէն փաշայն եկն յԱրճէշ ․ ելան Թամուր աղէն , և Օսման փաշի լաճ , Շանըր օղլէն , բոլոր Ղուլ ճետն , Գ․ Դ․ էլ մեծագլուխ մօլայ գնացին , հասան Բանդրխմանէն (գետն), մօլէքն յղեցին մօտ փաշէն գանգատ 'ի վերայ Իսա աղին ․ փաշէն վերուց (ասաց) թէ՝ Ես գալոց էի քաղաք , դուք վասն է՞ր եկիք ։ Ապա Բ․ մօլի միզ եհար կարեց ․

Նաֆասի մօլէն Ռասուլ աֆանդին յղեաց Աղթամար. Աղէք պրծան փախեան 'ի Բասյարդիա: Միւս օր Խան աղէն իւր Ֆօլաթով գնաց դէմ փաշային, խալաթ հագաւ. փաշէն տուին նկին քաղաքը: Գիր յղեցին Բասյարդիդ թէ՝ Խօյ եկէք. ոչ եկին: Էն ժամ՝ որ մտաւ քաղաքը՝ Կարայ քէհէն Ջամհար աղի լաճու վիզն եղարկ: Ի. օրից յետ Թամուր աղէն հետ միւս աղայից, Ղուլի ամէնը, Է. ԸՃ. ձիաւոր կոխել եկին լեցուան այգեստան Գօրդուցնոց թաղ, Մաշուրենց թաղ, Հասան բէգերենց թաղ, Բերդան նախորջիս բռնեցին, Կարայ քէհէն, Խան աղէն, երեք Նօֆ առնան գնացին Գլըզ գոր (թաղ). Խ. Ծ. Նօֆ ունէլի հարիւր սեներաց, վերջ որ Ղուլին եռես չկինիր, մէկ մէկ մեծեր գօնշիւշ եղան (անհաստեցան). Ղուլին՝ որ 'ի վերայ Թամուր աղին էր, փախեան. Մնացին երեք ֆարճանքէ աղայք, անոնք ալ անճար Միրօյեան փախեան 'ի Բաղդադ. Թամուր աղէն, Շախթք օղլին, Ամէտի Օսման փաշի լաճն, ՌՄԼԷ սաֆարի ԺԸ.:

Թիւ ՌՄԻ. Յունվարի Զ. մեզ պատիկ զատիկ (ծնունդ) արինք այլազգիքն ալ մեղ հետ սանծաղանէ եայրամն արին:

Ի նոյն թիւ Յունվարի ԺԵ. Ս. Սարգսի պահոց երկուշաբթին Խան աղէն մեռաւ:

Թիւ ՌՄԻ. Թամուր փաշէն եկն՝ Օս

մեն փաշք լաճն ընդ Նմա · Օսման փաշի լաճն եղև Եող աղասի, Շամթր օղլին Ալղաֆ աղասի ։ Ի սոյն թիւ Օգոս. ԺԵ. Կարամանլի փաշէն եկն . . . 'ի սորա աւուրս ծառքնոտ թռուն . . . ձգեցին երկրով գնացին Մուղուղնի օղլունց այգին, ծառերն կտրեցին, Լամուկն փախաւ ։

Թիւ ՌՄԽԱ. Ցունվարին, Ժողն պատղեցաւ Ե. օր, որ յԱրճիշոյ դային 'ի յԱնապատն և յԱնապատէն դային 'ի դուրս և գնային ։ Ի սոյն թիւ, Մայիս ԺԵ. Վանայ Գուլն Բ. խորով առին 'ի Հայոցս, և կէս դր. էր հարամ խորով ։

Ի սոյն թիւ Սեպ. Ա. Միլահդար Խալիլ փաշէն եկն. Թամուր աղէն եղև սող աղասի. Քէհէն, Գուլն' գնացին 'ի վերայ Նարեկայ Շէյիդ Աղին, ուր եկն. բերդն քակեցին ։

ՌՄԽԲ. Մայիսի ԺԷ. օրին այս Խալիլ փաշայս' Գորոյ չաւուշի լաճ Մուստաֆայ աղէն արար Ալղաֆ աղասի. քանի օրից ետք' 'ի մէջ սարային սպանեց . . . լէշն Մողէնի առջև թաղեցին ։ Ի սոյն թիւ գնացին Արծկու Մուրատ բէգի վրան ։

Թիւ ՌՄԽԳ. Մալաք Ահմատ փաշայն եկն ։ Ի սոյն թիւ Թամուր փաշայն թուղթ առեց էկաւ Վան, որ գնայր Խարբուդ ծանապաղ ։ Ի սոյն թիւ Մահմուտ բէգ եղև սող աղասի. Օսման փաշի աղային Քոյրաղ ոչ

տայր . . . . ճլա կերցնելով, խալի տալով. զօրով բերել ետ ։ Ի սոյն թիւ, Մ. Թովմայ աղէն առ Աստուած փոխեցաւ ։ Ի սոյն թիւ Թօփչոնց Օմար աղայն՝ և Ջամուշչոււ լաճեր կռուան . Օմար աղէն գնաց վէր Ջամուշչոնց տան, քարով հարին սպանեցին Մինդան օղլի՝ Օսման էլ հետն ։

Թիւ ՌՄԻԴ. Օգոս. ԻԱ. վանեցի Թամուր փաշայն եկն վան ծառոք, և սկսաւ անփոխարէն ողորմութիւն հաւաքել 'ի Տաճկաց ։ Սա սպան զԴաւուտ աղի լաճն Օսման աղէն և զՍօլքաթ օղլին . Օսման աղէն 'ի մէջ խօշնայէն խեղդեցին, Սուլէյման աղէն բերդն սատկեցուցին . . . . ։

Թիւ ՌՄԻԵ. Մայիսի ԻԴ. Ահմատբէգ և Գափուջի բաշին գնացին յՍտամբօլ ։ Ի սոյն թիւ եկաւ Վէզի խօշնայ ՃԻ. Հէսայ Թամուր փաշային ։ Ի սոյն. Սեպ. Ջ. օրին Ախիջան մեծափառ իշխանաց իշխան գնաց Ստամբօլ։

ՌՄԻԶ. Սեպ. Ա. Ախիջան բարեսէր և քրիստոսասէր աղայն եկն յՍտամբօլայ. Թօփչոնց Ռասուլ կախեց փաշէն ։

ՌՄԻԸ. Մայիսի ԻԸ. Այս Թամուր փաշայս մեծ սաֆար արար 'ի վերայ Բաղիշոյ, և հետն ունէր Մշոյ Մաղսուդ փաշայն . և գնաց անդ Նստաւ ԺԷ. օր. երկիրն ամէն տայ եկին . Նաբուդ բէգ՝ որ 'ի մէջ բերդին էր՝ ԻԳ. քէսայ ստակ տուաւ

և ապա փախեաւ . և կալեալ Ը. ոգի մե-ծամեծաց 'ի Մուշ առաքեաց զընճըլըվ , և Բ. սպան . և առեալ բազում հարկս մե-ծաւ յաղթութեամբ եմուտ վան ։

Այս Թամուր փաշայն գչափին ճօղօղէ էօղ, ոն-օրընէըլէ քարեր ամէն դօմչըլըմէջ արաց ։

Ի սոյն թիւ , Նոյեմբերի ամսին գնաց Աշքակու Նստած էՆ (քրդաց) եհար . Գ. ԴՌ. ոչխար երեր տեղս . Չէօռխօտըրօյ Օս-ման աֆանդին կախեց , ապա երեք էլ ուրիշ տաճկի կին եդ 'ի Նաւ քշեց . Ղա-րասաֆար օղլու Մօրուքն կտրել ետ , որ ռօքէ ձէլէ+ էր ։

Ի սոյն թիւ , Դեկտեմբեր . Այս Թա-մուր փաշայս՝ Մխիթարենց Բաբանիկն Ա-բով , որ գիշեր կոր Գազկէ աղջկայ տուն բռնեցին է. անուանի կնիկ ետ դնել 'ի Նաւ քշել , որ են այսոքիկ . կոր Գազկէ աղջիկ , քուլխանչու Եղիսէն , Խանթուման , Քաչալ աղջիկ , Օդաբաշու կնիկ , Ղազան-չու կնիկ , Նորշինցու կնիկ , պըղծեալք ։

Թիւ ՌՄԻԹ. Յունվար ԺԱ. վասն ծովա-ցեալ մեղաց մերոց յայտնեցաւ Աստուա-ծային խրատապատժութիւն , զի Սամար-ջոնց Աբրահամու որդին Շայենն , որ Նոր հարսնիս էր արած ԺԵ. կամ Ի. օր , քանի բեռ ճօղօտ էր առած որ Արզրում տա-նէր , յանկարծակի կէս օրէն ետք մին բեռ

ուղեւորեցաւ եղեւ մէկ մը կարաւանապետ Հնդկաս-
Աստուածածին նշանաց չիտայ, մեծագնեաց շատ-
ճանա եւս իւրեանց եւ երկրին, զի յանկարծ
թօթափել բոլոր տունն քանի դրկեցի
ահեղ դաշտ եղեւ, եւ Ե. հոգի մնացին 'ի
նորոգոյ հողին, եւ բաղում ինչք եւ տար-
բանք ցիր ու ցան եղեն 'ի նորոգոյ հողին եւ
յայլ տեղիս. լուաք թէ գերան մի ծգեալ
էր 'ի տանձկաց գօտերն, եւ խախտեալ
դրանց, տանց եւ ժէնձոտայից ոչ ոք կարէ
ընդ գրով արկանել, մինչ զի Իսֆահանոյ քա-
ղաքն եւ Թաւրիզու գաւառն եւ բոլոր շրջակայք
ծանուցեալ Նաղնիսթանայ . . . . . եւ երկոքեան ...
ստանայ ամէն 'ի վայր թափեցան, եւ նոյն
պահ երկիր մեծատունքն՝ սաստ տաղաւարին, տօ-
ղաւարին, Ընձէտ բէգ, բոլոր Հայք եւ Յա-
ճիկք եկին եւ ահաւոր առաժամայն հող փո-
րել. մինչ թէ նորոգոյ մնացեալք ողջ գտա-
նիցեն. ջանք տալով գտին զնորահարսն եւ
տղայ մի փոքր 'ի գրկին, իբր թէ կամե-
ցեալ էր փախչիլ եւ անդէն տուն եկեալ
էր 'ի վերայ, եւ մեռեալ էին երկոքին. եւ
միւս օր հանին գ. մեռեալս, որ էին բ. մեծ
տղայ ծէ. ի. տարւոյ, եւ աղջիկ մի. եւ
յետ բ. եւ գ. աւուրց որք փորէին զհողն
այրեցեալ գերանք եւ ինչք դուրս հանէին
ամէն ոչընչացեալ եւ այրեցեալ, եւ այն ծը-
ղօտամանք, որ հինն 'ի վեր էր եղեալ եւ վերին 'ի

յանդունդ իջեալ. և այնպէս խառն՚ի խուռն էր, որ ոք չկարէ զկերպ բանիցն գրել։

Ի սոյն թիւ Աստամբօլայ ծովն պաղե-ցաւ, որ առի Բօղազէչէ, զի կարի ցուրտ եղև. Զրզիրայ և ՚ի Բաղդատ մեծամեծ ձեանք եկին, որ ՚ի վաղուց հետէ չէր եղեալ։ Ի սոյն՝ Ապրիլին, Քարիմ խանն մեռաւ. Սարդարի լաճն սպանին։ Ի սոյն թիւ, Յուլիս ԺԲ. օրին Նադիր աֆանդիի Ճընճիկոն դէմեր ֆօրթուղալիչ արին։ Յուլիսի ԺԳ. օրին այս Թամուր փաշայս գնաց ՚ի վերայ Ջուլամէրկու Աւդուլլահ բէգին, ԻԳ. քէ-սայ սատակ եա, լաճն յղեաց մօտն, և Լ. աւուր վերայ դարձաւ և եկն ՚ի քաղաքս,

Ի սոյն թիւ Նոյ. ԺԳ. ին այս Թամուր փաշայս՝ Քաչալ աղջիկ և իւր էրիկ դէմ միմեանց կախեաց, և դողէ Իբրահիմի լաճ ՚ի մէջ ոսկրայից ֆօրթուղալիչ արաց և իւր տուն և Սալիմ աֆանտու տուն այրեաց։ Ի սոյն ամիսս, Զրբաշենց Յակոբ՝ ֆոհվոնջի Սարգսի եղբայրն սպան, և Զօռնձայ տուին ՚ի Նմանէ։

Թիւ ՌՄԼ. Յուլիսի Զ. Արքայն վրաց Հերակլ եկն ՚ի վերայ Երևանայ քաղաքի ԽԲ. զօրօք, և շատ աւերութիւն արար. և երկիրն բոլոր քանդեաց և այրեաց. վերջ ՃԾ. գիւղ քշեալ տարաւ ԼԲ. հա-զիս, և ՃԲ. տաւարս համարով, որ տա-սանորդն իւր էր ԺԲ. և ինքն ՚ի մարդ-

կանէ վերացեալ գնաց 'ի Թիֆլիզ։ Ի սոյն թիւ, 'ի քաղաքս Վան Ե. հոգի Թուրք 'ի գիշերի միում սպանին տանէրկ մի 'ի մէջ իւր տանն. և իմացեալ փաշայն . . . . ։ (Գոհանէր)։

Ի սոյն թիւ, Յուլիսի ԺՋ. Սահակ Ախիջան մեծահամբաւ աղայի հետոն գնացաք յԱղթամարայ Սուրբ Խաչն յուխտ և երկրպագութիւն Աստուածաբնակ տաճարին և Արքոյ Խաչին. վարդավառի՝ կիրակէն։

Ի սոյն օրս փոխեցաւ առ Աստուած պայծառ ջահն սուրբ Եկեղեցւոյ Ախձօն Արքազան գերիմաստ և աստուածընտիր կաթողիկոսն, և նստաւ յաթոռ Տէր Ղուկաս Արքազան կաթողիկոսն. Տէր Աստուած կեանս երկանս պարգևեսցէ նմա։

Ի սոյն թիւ, Դեկտ. ԻԷ. մեծ և ահագին շարժ եղև 'ի քաղաքն Թավրիզ, որ բոլոր քաղաք տապալեցաւ, և անթիւ մարդիկ մեռան և 'ի ներքոյ հողին մնացին, որ ականատեսքն ասացին թէ՝ Ահագին քաղաք իբրև բնական բլուր մի եղև, որ ամենևին քաղաքի նշմարանք ոչ երևէին. նաև շրջակայ Գաւառացն, այսինքն Խոյ, Ուրմի, Գուռնայի, Սալմաստ. և 'ի քաղաքս մեր Վան ևս շարժեցաւ, և ողորմութեամբն Աստուծոյ ոչինչ վնաս եղև։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Կը փափագէի որ գրքուկիս մէջ խօսուած զանազան իրաց և նշանագրաց պատկերները, ձևերը դրուէին, որոցմով ընթերցողն կ'զբօսնու և լաւապէս կ'ըմբռնէ 'ի մտի․ սակայն զանոնք փորագրել և տպագրել տալը մեր ձեռնհասութենէն վեր գտանք ։ Աստ կը դնենք միայն երաժշտական խազերն և անոնց անունները, որ մեր ժամագրքի և շարականաց մէջ գործածուած են, իբրև հնութիւն համարելով և իբրև հայկական նօթա, ձայնագրութիւն, ցոյց տալով թէ Արևելեան ազգաց մէջ յայտնի եւ մեր Նախնիք առաջին հանդիսացած են եղանակները մարմնաւորել․ որով և իրենց գեղեցիկ ճաշակ ու մտադրութիւն ունենալը ցոյց տուած են ։ Հարկ չկայ քննութեան մտնել երաժշտական գիտութեան, մանաւանդ թէ անգէտ եմ այնմ․ և ոչ քննել կ'ուզեմ ասա թէ ո՞ր դարուն գիւտն է, և ո՞վ հեղինակած է․ առ այս մենք ալ բանասիրաց հետ կ'սպասենք Գաղղիացի հայագէտ Պ․ Ե․ Տիւլօրիէի ձեռնարկած հետազօտութեանց արդեանց, որ անցեալ տարիէ հետէ սկսած է տեղեկութիւններ հաւաքել և դիտողութեան առնուլ ։ Կրնան մեր ազգային երաժիշտներն ալ նպաստել

իրենց կողմէն յիշեալ գիտնականին, որոյ օգտուտն ու պարծանք Հայութեան կը վերաբերի․ ուստի և մեծ շնորհակալեաց արժանեօք կը յիշենք Պ․ Ե․ Տիւլորիէն, յաջողութիւն մաղթելով իրեն, և յորդորելով որ ազգային ձայնագէտք աջակցին անոր։

Բաւական գործ մի էր մեր բարեկամ Պ․ Եղիա Տնտեսեանին 1874ին հրատարակած «Նկարագիր Երգոց Հայաստանեայց Եկեղեցւոյ» անուն գիրքը, յորում փորձառութեան, և հնութեանց ու աւանդութեանց դիմելով բազմակողմանի տեսութիւններ գրած և հնար եղածին չափ այս նիւթիս վրայ բացատրութիւններ տուած է։ Գործ՝ արժանի ուշադրութեան, և հեղինակն՝ քաջալերութեան։

Հայ ձայնագրերուն կամ խազերուն միայն պարզ ու հիմնաւոր համարուածներն կը նշանակենք։

° Սուղ, ʻ ՛ Շեշտ, ՝ Բութ, ✓ Փուշ,
° Ծունկ, ^ Խունձ, ‿ Տաշտ, ⁄ Երկար,
Ր Պարոյկ կամ Ոլորակ, ✓ Ջարկ, / Սուր,
/ Թուր, ⌐ ~ Խոսրովային, ʊ Հուհայ,
Ց Փաթութ, ʷ Խաղ, ⌐ʷ Վերնախաղ,
ʷ/ Ներքնախաղ, ˉ Բենկորձ, ~ Էկորձ,
Ռ Ձակորձ, ա Մենկորձ։

ՀԱՅՐԵՆԵԱՑ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Բառերու վրայ գրել՝ ամենէն ընդարձակ և դժուարին ճիւղն է գրելուն. բայց մեք՝ ըստ մեր սովորութեան և կարողութեան խիստ սահմանաւոր պիտի գրենք։

Պարզ և բնական է գիտնալ թէ մարդիկ՝ որոց 'ի սկզբան մէկ գաւառ մէկ հայրենիք է եղած, միևնոյն բառերով խօսած են. հարկ չկայ ապացուցանելու թէ մարդկային նախնական այդ եդեմային հայրենիք՝ Հայաստանն էր. գոնէ Ս. Գրոց անժխտելի վկայութեան հետ՝ հնախօսներն ալ Հայաստանի հին աւանդութեան կը համաձայնին՝ թէ Նոյի տապանն 'ի Մասիս, Նոյի իջևանն 'ի Նախիջևան, և Նոյի այգին յԱկոռին է եղած. ահա այս վայրը բնակեցաւ, աճեցաւ, խօսեցաւ միաբան միաբարբառ մարդկութեան նորոգեալ դերդաստանն։ Ընթերցասիրաց յայտնի է Յոյն իմաստասիրին Ողոմպիոդորոսայ յաւանդութենէ յառաջ բերած հին զրոյցք, զոր յիշէ մերս Խորենացին։

Իսկ երբ միութիւնն բաժանուեցաւ մարդոց, բազմացան, ցրուեցան, թող որ Աստուած 'ի պատիժ մտաց ամբարտաւանութեան՝ խառնակեց լեզուները, այլ և բնական էր՝ որ գնալով ամեն ոք ըստ կամս սրտից իւրեանց 'ի զանազան վայրս և գաւառս, վիճակելով տարբեր կենցաղավարութեան, և, որովհետև, ընտանեկան և երկրագործական պարզկեան-

քի սահմանը փոխեցին բռնաւորութեանց, իշխանութեանց, հարկ եղաւ պերճանքներ աւելնալ, պէտքերը շատնալ, գլխաւորաբար շինութեանց, վայելչութեանց, և սպանութեանց պէտքեր, ուստի լեզուի սահմանն ևս փոխուեցաւ, և ըստ հանգամանաց մարդկանց՝ ընդարձակեցաւ։

Իրաց այս կերպարանք մինչև ցայսօր կ'երևի և 'ի մեզ։ Նախրորդ մը կամ խաշնարած մը ո՛րքան գաղափարի ծանօթութիւն ունի, ի՛նչ տեսած կամ լսած է, անոնց վերաբերեալ բառերը միայն գիտէ։ Հովուին՝ ինչ ազգ է կը լինի թող լինի, ի՛նչ լեզուով կը խօսիս, խօսէ, պալատի մը շէնքին կամ կահաւորեալ սենեկի մը կամ բազմամթեր վաճառատան մը նկարագիրն ըրէ, անկարելի պիտի լինի քեզ բառեր գտնալու, որպէս զի ըսածդ հասկըցնես. մինչև անոր ծանօթ բառերով գտնէ նմանութիւնները չտաս. զը, գարնան, արեւու, բոլորակ լուսնի, աստեղաց, ծաղկանց, ջինջ աղբիւրի մը, գառին եղջերին, եղան աչքերուն, ձիու բաշերուն, առուոյցքի, ձեան, ևն։ Ի՞նչ բառերով պիտի բացատրես Եւրոպական ձևով հագուած կանանց զարդերը Հայաստանցի տանտիկնոջ մը, անշուշտ ագլօրի կատարին պիտի նմանցընես շափրղան. մաքիի դմակին նմանցընես՝ ղըշըրղը, ևն. խեղճը այդ կեանքէն ծանօթութիւն չունի, որ բառերն ունենայ։

Փարիզի խոհարարները գուցէ քանի մը հազար բառ ունին միայն իրենց արուեստին վերաբերեալ. բայց Հայաստանցին քանի մը տեսակ մսեղէն բանջարով կե-

րակուրներ և կաթն ու մածուն, սերն ու կարագ, թանն ու պանիրը գիտէ։ Դիքը, դու Աղէքսանդր Տիւմայի վիպասանութիւններն, կամ Հիւկոյի Թշուառները՝ իմ աչքիս առջև, կը կարդամ ծայրէ 'ի ծայր. բայց կը հասկնամ միայն այն մասերը՝ որոց վրայ գաղափար ունիմ։ Այո, Թշուառներու մէջ կը հասկնամ Ժան Վալժանի վիճակը, անոր անցքերը և արկածները, քանզի քաջադէպ է յաճախ մեր շուրջը տեսնուածին և կատարուածին. կ'զմայլիմ, քանզի կը հասկնամ Միէնվընու եպիսկոպոսին սրտով և արդեամբ ողորմածին, մարդասիրին վարքն ու արարքն. Նորա պատկերն Աւետարանի մէջը կայ. Եկեղեցին շարունակ ցոյց տուած է անոր նման առաքինիները. և ոչ միայն 'ի դասուց եկեղեցւոյ պաշտօնէից, այլ և Թագաւորաց։ Հայ էր Աշոտ Ողորմածն։ Իսկ փարիզի բանտերու, պալատներու, ականներու նկարագիրէն բան մը չեմ հասկնար։

Լեզուի մը բառերը ուրեմն տեղեաց և կենցաղավարութեանց համեմատ շատ կամ քիչ են։ Գեղացիներն ալ անթուելի բուսոց տեսակներ և անուններ գիտեն, որոց վրայ երբէք գաղափար չունի պանքեռն կամ սեղանաւորն։ Բժիշկն իրեն բառերն ու բառարանն ունի. աստղագէտն իրեն, դերձակն իրեն, մեքենագործն իրեն, եւն.

Մանուկ տղաքները երբ զգալ կ'զգան, կը ժպտին, կամ կը վշտանան, անյօդ ձայն մը կ'արձակեն. հետզհետէ «մամա, բաբա, թու, բու, օխ, կըխ, ճէճէր, ճիճի,

հօլօ հօլօ, բլէ բլէ»․ և այլ քանի մը այսպիսի միավանկ, երկվանկ բառերով իրենց բոլոր ըսելիքը և պէտքերը կը հասկցնեն․ լեզու մը, զոր ամեն ազգի մանուկը միապէս կ'արտասանէ, և մի և նոյն բան կը կը հասկցնէ ։ Անմեղ մանկիկը՝ դեռ Սենաարին դաշտը տեսած չէ, դեռ գաղափարաց Բաբիլոնին մէջ մտած չէ ։

Եթէ միտ դնենք, ահաւասիկ ամէն ազգ միօրինակ բառեր կը գործածէ, զոր, երբ հաւ մը կը կանչէ՝ «ճու ճու ճու» կ'ըսէ, վանելուն «քշէ քշէ»․ շուն մը կանչելուն «կուճու կուճու» կ'ըսէ, վանելուն «օշտ օշտ»․ կատուն կանչելուն «փիշի փիշի», վանելուն «փըշտ փըշտ»․ կով և եզն վարելուն «օհօ օհօ»․ ձինը վարելուն «դէհ դէհ»․ էշը՝ «չու չու», եւն ։ Այնպէս միօրինակ են գրեթէ սրտի և կրից արտայայտիչ բառերը, այսինքն ձայնարկութիւնքն․ ցաւոց նշանակութիւն կուտայ ամէն ազգի մէջ «Ա՛յ, վա՛յ, եամա՛ն, աւա՛ղ, ո՛վ օֆ, ա՛հ, վա՛հ, ո՛ւհ, բո՛ւհ», եւն․ զարմացման՝ «օ՛, է՛,» եւն․ ուրախութեան՝ «օ՛խ, վա՛շ, օխա՛շ»․ և այլն ։ Ուրեմն ընդհանրապէս կիրք յայտնող բառեր ազգային չեն կարող լինել, այլ մարդկային են․ թէպէտ և բառից կարգ չեն դասեր քերթողք ձայնարկութիւնները, բայց քանի որ գաղափար մը կը յայտնեն, իսկապէս բառ են․ միայն թէ՝ ՚ի զանազան ազգս, մինչև իսկ ՚ի զանազան անհատս, տարբեր ձևով կ'արտասանին ։

Գալով մեր Հայրենական գաւառական բառերուն, ան[illegible]ին է որ մէկը կարող

լինի Հայաստանի ամեն գաւառաց բնակչաց բերանը գործածուած բառերը հաւաքել, որոց կարևորութիւնը արդէն շատերը սկըսեր են զգալ․ և հասկցած են թէ մեր գրաբառ մատեաններու մէջ գործածուած ու բառարաններու մէջ զետեղուած բառերը հերիք չեն ազգի մը լեզուի ամբողջութեան և կատարելութեան պէտքը լեցընել․ Թէպէտ դիւրութիւն կայ մեր լեզուի կանոններու մէջ նոր բառեր յօրինելու, նոր բարդութիւն կազմելու, բայց ժողովրդեան ու հնութեան չինածն աւելի բնական է։ Օրինակի համար ըսենք․ ժողովուրդ կըսէ «բանթող», գրականութիւն կ'ըսէ «գործադուլ»։ Ժողովուրդ ամեն օր նոր բան մը տեսած կամ լսած ժամանակ, նոր բառ մը կ'ստեղծէ․ շուկայի մէջ, ընկերութեան մէջ, գեղերու մէջ մանր և փորձէ․ մանաւանդ զուարճաբանութեանց մէջ։

Ըստ մեզ՝ գաւառական բառերու հաւաքումն մի միայն գաւառական ժողովըրդական լեզուներով զանազան գրուածներ հրատարակել պէտք է․ և այն հրատարակութեանց մէջ գործածուած բառերը հաւաքել և նշանակութիւնը դնել՝ կամ առընթեր կամ վերջընթեր։ Մերձաւոր տարիներս սկսան այս կերպ գրութիւններ երևնալ Հայ հրապարակի վրայ, որոց ոմանց անուններ և գործքեր յիշած ենք Գրոց Բրոցին և Մանանայիս մէջ (1)։

---

(1) Յիշել պէտք է նաև «Մուշեղ և Կայինիկէօ անուն վէպը, զոր յօրինեց և հրատարակեց

Գիտնական Պ. Քերովբէ Պատկանեանին գրական գործքերէն երեք կտոր ընդունելու պատիւն ունեցայ Մեծ. հեղինակին կողմէն. որոց նիւթն է Հայոց մի քանի գաւառաբնակ ժողովրդոց բերանացի զրոյցքներ, խաղեր, խօսակցութիւններ, ևն. և նոցա մէջ գտնուած բառեր, ձևեր, կազմութիւններ և նշանակութիւններ, որոց վրայ ռուսերէն լեզուաւ իմաստասիրական տեսութիւններ և ծանօթութիւններ գրած է իբրև լեզուաբան և քննաբան Արևելեան հին և մայր լեզուաց. 'ի կարգս վերոյգրելոց զետեղած է նաև մեր Գրոց ու Բրոցէն ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ կամ ՄՀԵՐԻ ԴՈՒՌՆ վէպը, Մշեցւոց լեզուաւ։ Այսպիսի բարձր և փորձ միտքերու գործ է մեր ձեռնարկած կամ փափագածն 'ի գլուխ հանել. և մեք ուրիշ բան չենք կրնար ընել, այլ միայն գոնէ գիտնականաց ծանօթացնելու առարկայ

Մաշկերացի Պ. Յ. Մաթիկեան 'ի Կ. Պօլիս, 1874։ Նաև «Անխօս մարգարիտ» անուն ստանաւոր վիպագրութիւնը, զոր այս տարի յօրինեց և հրատարակեց Տ. Ղևոնդ քահանայ Շիրոյեանց Վանեցի. և որոյ երկու գործ ևս կը գտնուի ձեռագիր, բաւական հետաքրքրական և ժողովրդական զրոյցներով և ոճով յօրինուած։

Իսկ «Ուսեալ պանդուխտ» անուն ընտիր և գեղայուն գրքոյկն՝ յօրինեալ 'ի Պ. Տիգրանեայ Ամիրճանեան և տպեալ 'ի Վառնա 1873, արդարև հեղինակին պատիւ բերող և ամէն պանդուխտ հայուն օգտակար գործ է։

կը ներկայացնենք մեր աշխատասիրութիւնը․ ահա այս նպատակաւ է որ Մանանայիս մէջ բազմատեսակ նիւթեր մթերեցինք, որք զանազան ճաշակ կ՚ընծայեն ընթերցողաց։

Աւելորդ կը համարիմ դիտել տալ ընթերցողին բառերու կազմութեան և հոլովմանց տարբեր ձևեր, որ ինքնին յայտնի են․ նոյնպէս և շատ մը բառերէն՝ որոց իբր բացատրութիւն առընթեր գրած եմ Մանանայիս մէջ, չդրի բառարանիս կարգին։ Հարկ է նաև խոստովանել թէ անհուն բառեր կը մնան տակաւին գաւառական, զորս հետազօտել և ձեռք բերել պէտք է․ մեք մերովսան պիտի շարունակենք։

ԲԱՌԱՐԱՆ

Ա․

Ադամամութ․ Գիշերային թանձր խաւար։

Ածիկ․ Մշ․ Գարնցան ցորեն ջրի մէջ դրած կը խմորեն․ և ինքնին քաղցր համ մը կ՚ունենայ, իբրև քաղցու ալիւրով շաղած․ իսկ ըստ Վանցւոց՝ արտի մէջ կամ շտեմարանի մէջ խոնաւութիւն առած չոր ցորենի հատիկ։

Մշ․ կը նշանակէ՝ ըստ Մշեցւոց։
Վն․ » ըստ Վանեցւոց։

Ակահ. Արթուն ։ Ակհել. զարթնուլ կամ իրազեկ լինել ։

Ականջքաշուկ. Խաղ մի է մանկանց. մէկը միրգ կը ձգէ գետին, որոյ վրայ կը ժողվի մանկտին. ով որ խլէ զայն, անոր ականջները կը քաշեն, մինչև վար ձգէ. իսկ եթէ առնողն վազէ և ձեռք տայ զայն ձգողին, միրգն իրեն կը մնայ, և ինքն կ'ազատի ականջները քաշել տալէն ։

Ակն. Ակն մատանւոյ. ակն աղբեր. ակն թոնիրի, զոր կը բանան հանդէպ դրան, յորմէ հողմ կ'առնու թոնիր և կ'արծարծի կրակն ։

Ակնջկլայ. Ականջ կալնուլ. եթէ աւետիս մը տան, նախ ականջներէն կը բռնեն մինչև բան մը խոստանայ, ապա ըսելիքը կ'ըսեն ։ Ուստի աւետաւորք նախ կը պահանջեն «Ակնջկլէս ինչ է» . ականջ կալնուլս ինչ է ։

Ակնջփորուկ. վ.ն. փոքրիկ որդ մը նման թրթուրի, որ 'ի դաշտի և 'ի պարտիզի բնակչաց ծանօթ է. մարդու ականջը կը մտնէ, որոյ վրայ ձէթ կաթեցնելով կը մեռցնեն ։ Մոխաս պէօճէյի ։

Ակուկայ. վ.ն. Թոնրի ական բերան կը դընեն՝ հողէ շինած 'ի ձև Ո ։

Ակուկել. վ.ն. կուուել, արգիլուել ։ կանգառնել ։

Ակրաժածիկ. Քիչ մը ուտելիք, որ հազիւ ակռաներ շարժէ. Եւս գործածեն զայս՝ կաշառք բառին մէջ ։

Ահա՛նջ. Ահա, ահա տես. Եւ իբր զարմացական նշան ։

Աղուէս. Մշ. Հարսնածէն առաջ ընծաներ

և ուտելիք ու խմելիք ղրկել փեսայէն հարսին տունը ։

Աղուն. վն. Ցորեն՝ 'ի ջրաղաց տարած աղալու համար ։

Աղուր. վն. Սայլի ուղի՝ երկրագործաց ։

Ագօթրան. Արշալոյս. եւ՝ արեւելեան կողմն։

Ամբրոց. Ամրոցաձև չէնք գիւղացւոց 'ի թըրիքէ, որոյ մէջ կը լեցնեն վառելու ցան, փթիր, պտտուր, եւն ։

Ամիչկ. Խոտ կամ առոյտ, զոր միանգամ հնձելէն զկնի, կրկին կը ջրեն, կը բուսնի, և կրկին կը հնձեն ։

Ամռնուկ. Ամառային միրգ, կամ այլ ինչ ։

Անանա. վն. Կնոջ անուն է. և իբր անանաս՝ անմահացուցիչ բոյս մի կամ խոտ ։

Անանակ. վն. Ծիրանի գօտի ։ Գուցէ՝ Աղեղնակ ։

Անբաղդի. վն. Աշխարհական անձ. կարգաւոր չեղող։

Անգօթք. վն. Ագահ։

Անդար հազար. վն. Անթիւ անհամար ։

Անեղ. վն. Աղեղն նետ նետելուն. և աղեղն՝ որով բամբակ գզեն ։

Անթօլկել. Արմունկով հրել, կամ բռամբ նետել բան մը ։

Անթրոց. փայտ մը, որով թոնիրի կրակներ կը խառնեն ։

Անձկուտոր. Նազելով քալող, ճօճացող։

Անղալատ. Անսխալ։ Եւս՝ չքնաղ, անաբատ ։ Եւս՝ անուն կանանց ։

Անչամ. վն. Անչափ ։

Անտիւոր. վն. Տան անտիւոր, կին, ամուսին ։

Աչարայ. Նոր բուսած արտի կանանչը ։

Աշնցան. Աշնանէ ցանուած ցորենները։

Աշիշ ուլնիկ. վ.ն. Կապոյտ ուլունք, զոր
 կարեն մանկանց զգեստուց վրայ, որպէ-
 զի չար աչքէ ազատ մնայ։

Ապուկել. վ.ն. Յարձակում ընել բանիւ,
 նախատել, գր. «Ապուկաւ Պօղոսի գլուխ»։

Ապունեկ. Թռչուն մի փոքր, սեւագոյն։

Առչկան. վ.ն. Բոք, որով բուրդ և բամ-
 բակ ոլորեն։

Աջոջ մաջոջ. վ.ն. Գոգ մագոգ, կամ գա-
 ճաճ մաճաճ. որոյ նկատմամբ կ'ըսեն թէ
 ազգ մի է մարդկան մէկ թիզ հասակաւ,
 և թէ աշխարհիս վերջ մարդիկ այնքան
 կը պզտիկնան, որ աղան ծակէն մտնեն
 ելնեն ու ըսեն. փառք քեզ, Աստուած,
 ի՞նչ մեծ դարգահ է։ Եթէ այսպէս, Աջոջ
 Մաջոջներ հսկայք և տիտանք կը մնին։

Առկող. Ջառիկոզմե։

Աստըւոր. վ.ն. Այս աշխարհ, երկրաւոր։

Ավա. Մչ. Նման. գր. «շան ավա կը հաջէ»։

Ավա՛ր. Խիստ մեծ. զարմաց՝ ձայնարկ։

Արապահ. վ.ն. Տանեաց շրջապատ՝ բարձր
 որմեր, իբրև պատնէշ կամ պարիսպ։

Արևահաս. վ.ն. Արևու ջերմնով հասուն-
 ցած խաղող։

Արևերես. վ.ն. Արեգդէմ վայր։

Արևպատ. Մչ. Արևմուտ։

Արջաբլա. վ.ն. Ուրուական, որոյ անունով
 մանուկներ կը վախցնեն։

Ափսաթաթիկ. վ.ն. Մանկան մը ձեռնե-
 րուն վրայ իյնալով չորքոտանւոյ ձաքի
 մը պէս քալել. յափփիթերա։

Բ.

Բաբօ. վն. Բա՛բէ՛. Իբր կոչական ։

Բադիլ, կամ Պատիլ. Մշ. Իյնալ ։ Գուցէ իյնալու «բա՛դ» ձայնէն շինուած ։

Բաժ. վն. Հասակ, Բոյ, Երկայնութիւն ։

Բալան բալան. Բարդ 'ի բարդ ծուխ, բոց, ամպ, փոշի, եւն ։

Բալաք. Անասնոց խատուտիկն, եւ բորոտութիւն ։

Բան. Գործ ։

Բանթողս. վն. Գործաւորաց կամ մշակաց գործելէ դադարիլ ։

Բանձրանց. վն. Եկեղեցւոյ Ս. հաց, մասն ։

Բաշ. Անասնոց ճակտի վրայ եղած ճերմակ նշան ։ Եւս՝ ձիոց վզի վարս ։

Բարգ. 30 խուրց մէկ բարդ է խոտոյ կամ ցորենոյ ։

Բարկ. Խիստ, «բարկ քացախ, բարկ կըրակ», եւս բարկացող մարդ ։

Բերանսրվեր. վն. Ի վերայ երեսաց անկանիլ, ննջել, կամ ձգել բան մի ։

Բէճ. Ուս ։ Ուրեմն Բաճկոն՝ ուսերու վրայ ձգած հանդերձն է ։

Բէր. Ոչխար կթելու տեղ և ժամն ։ Բերք ։

Բէրուոր. Կաթ կթողներ և կրողներ ։

Բիցուկ. Մշ. Սատկած ։ Բիցաւ. սատկեցաւ ։

Բլնթրեկ. վն. Պոնդ, պնդել, պոնդ հարկանել. [illegible] ։

Բղբղիկ. Մշ. Ջուր խմելու փարչ (կուլէկ). որոյ կոկորդ նեղ և ծակ ծակ է. խմելու ատեն «բըղ բըղ» ձայն կ'ածէ ։

Բղիկ. Մշ. Փոքրիկ աման հողէ, որոյ մէջ եղ. կաթ, մածուն, եւն, կը լցնեն ։

Բղող. վ՛ն. Խնկան կամ խէժի մեծ կտոր։
Բոթնոց. Գողպատէ կամ կաշիէ շինած, որ կ'անցունեն 'ի բոյթ մատն։
Բոլոնթրէզ. վ՛ն. Բարձրացեալ բոց։
Բոնկալ. Այն հաւկիթ, զոր միշտ կը դնեն հաւուն բոյնը, որոյ վրայ նստելով հաւն՝ ձու կ'ածէ։
Բուլ, Բոյլ. Խումբ ծառոց, պրակ. յոգ-նակին է՝ Բլեր։
Բուջ. Մշ. Գուլպայ, ճօրապ։
Բռալ. Կովու ձայն. բառաչել։
Բռան. վ՛ն. Խոշոր և ծեր կատու. կցորդ կը հնչեն բռան կատու։
Բռնատուն. վ՛ն. Բանդ, արգելանոց։
Բռուածք. Թարբշու։
Բրդուճ. Պատառ։
Բրչամ. Կնկան կամ այր մարդոյ երկայն հեր գլխոյ. և՝ անասնոց բաշ։
Բրոր. Պղտոր։
Բօլօճ. Միջատ։
Բօկ. Կօկորդ։
Բօտ. Բոտ. Որդնակեր, բոտացեալ, փուտ։
Բօրանի. Տեսակ մը կերակուր։

Գ.

Գաբանակ. Հովուի պարեգօտ թաղիքէ շինուած, որ կը ծածկէ գլխէն մինչ յոտն. որ և կը ծառայէ փոխանակ անկողնոյ և վերմակի։
Գալ. Գալարումն կամ հիւսուածք բանջա-րեղինաց 'ի չորացուցանել։
Գալար. վ՛ն. Սոնձ։ «փորս կը գալարի». սոնձը սոնձիմ։
Գահ. վ՛ն. Գահ, ժամանակ։

Գայ որ. Մշ. Խորև մակբայ, քանի որ, որովհետև ։

Գզիր. Գեղի պաշտօնեայ, որ գեղապետի հրամանը գիւղացւոց կը հաղորդէ և կը գործադրէ ։

Գէլվազ. Արևելեան հիւսիսէն փչած սառն հովմ ։

Գիլ. վն. Տեսակ մը կակուղ քար ։

Գլխաւոր. վն. Էրիկ ։ Կին այս անունը կուտայ իւր էրկան ։

Գլուլ. վն. Ախեռի մէկ տեսակն ։

Գոգնոց. վն. Կանանց և մանկանց հանդերձի մաս մի, միակտոր, զոր կապեն պարանոցէն և մէջքէն, որ կ'երկարի մինչ յերեսս ոտից. իսկ Մշեցիք և Կարնեցիք մէջքէն 'ի վայր մէկ մասն կ'ընեն, մէկ մասն ալ մէջքէն մինչև վիզ, զոր «սրտանոց» կ'անուանեն ։

Գող. Ընկոյզ. Ճող, Ճ[illegible]ող ։

Գոլ. վն. Տաքութիւն, գոլորշիք ։

Գոստան դդէլ. Ջրային մանր ժժմունք ։

Գուզ անել. վն. Անշարժ և անշշունչ դարանել. լռելեայն թագչիլ ։

Գունդ. Որ և իցէ կլոր բան, կծիկ, խմորի գունդ ։

Գուտիկ. վն. Վարդապետի և տէրտէրի գլխարկ, սև բուրդէ հիւսուած ։

Գռգռալ. Որոտումն ամպոց ։

Գռեխ. Թարախ վէրաց ։

Գրկափակ. Դրան ետև ձգուած երկաթէ կամ փայտէ նիգ, իբրև փակ ։

Գրտնակ. Կլոր և ողորկ փայտ, զոր գլորելով խմորի գունդերուն վրայ, կը բանան, լաւաշ հաց կը շինեն ։ Օխլա[illegible] ։

Գօ, գօսկօ, գօհանչ. վն. Ահա :

Գօմբ. վն. Բունցի հարուած :

Գօռ. Գերեզման քրիստոնեայ չեղող անձանց :

Գօտիկ. վն. Պսակաձև պաճուճեալ փայտ, զոր կանայք 'ի գլուխ դնեն, և վրայէն զարդեր կը կապեն :

Դ.

Դայ. վն. Հօս, հոն, հող :

Դաչ. կանխաւ, յառաջուց :

Դարդար. Օր օր :

Դարման. Ցաւոց դեղ. ևն պարէն անասնոց:

Դեղդիր. Աչքը դեղ կամ ծարուր քաշելու համար փոքր ոսկոր մի կամ փայտ :

Դըղէգ. վն. Խայթոցաւոր բզէզ, կամ իշամեղու :

Դընկ. Սանդ ծեծելու համար կոթով փայտ մը :

Դըմփիկ. վն. փոքր թմբէր :

Դըրըմփ. վն. Իյնալու ձայն. զր. ասեն, «դըրմփաց գետին. դրմփոց եղաւ, տեսէք ի՞նչ ինկաւ». ևն :

Դըքա. Մչ. Հողէ կամ փայտէ շինած նըստելու տեղ, իբր բազմոց :

Դիր. Ցորեն ցանելու կերպ մի է, որոյ արտը առու առու կը վարեն, և միայն փոսերու մէջ կը ցանեն : Եւս իբրև մակբայ՝ հեղ, անգամ. «եօթն դիր», եօթն անգամ: Եւս կտաւատ ձիթահան բերելուն ձէթ հանելու համար՝ չափ մի է :

Դլուզ. վն. Բեկեալ անօթ խեցեղէն: Եւս փոքրիկ բղուղ:

Դնդեղ. վն. Ափք ծովու կամ գետոյ :

Դնդղկտալ. վն. Ծանր այլ միշտ չարժիլ. դանդաղել։

Դող տաքցոց. Տենդ ։

Դոր. վն. Ուր ։

Դուր. Փայտ ծակելու համար երկաթէ գործիք. և՝ «դուր կուգայ, դուր չիգար» կ՚նշանակէ՝ Ախորժակ ունիմ կամ չունիմ։

Դրուց. վն. Հանդիսի համար պահուած զգեստ. դրուց հալաւ ։

Դօլ. Դոյլ կաշիէ շինած, ջրհորներ և աղբիւրներու ականներ հորդելուն՝ կաւերը դօլի մէջ կը լցեն կը քաշեն վեր ։

Դօղիկ. վն. Սիմիթի ձևով եփած հաց. և անասնոց պարանոցի շուրջ եդած ըսպիտակ գոյն շրջանակաձև ։

Դօր. Կարգ, «սրայ»: Պահ. «դօրէդօր», ժամէժամ։

Ե.

Եբ. վն. Երբ ։

Եզանչուիկ. ∿∿∿∿∿ Այս օրինակ նկար կամ դերձանով բանուածք ։

Եւ. Մշ. Եւք, զառի վեր, Եօխուշ։

Եղա. Տարր, նիւթ ։

Եղահալ. Պղնձէ աման մը, եղ հալելու ։

Եղերով. Լեռան մը անուն ՚ի Բշտունիս ։

Եղնիկ. Եղջերու, կէյիկ, և՝ փաղաքշելի, քնքոյշ, սիրուն ։

Եղունիկ. Աղաւնի. և անուն կանանց ։

Եմ. իմ։

Եռ. վն. Գիծ ։ Եւս՝ եռացումն ։ Եռալ՝ եփիլ, և զեռալ մրջմանց, բազմութիւն մարդոց, ևն ։

Նռքոր· վն· Նռալ, քերուիլ մարմնոյ, բոր, բորոտութիւն։

Նրդիս· վն· Տան առիքին կամ ձեղունին վրայ եղած լուսամուտն։

Նրեսբաց· վն· Տան շէնքի այն մասը, որոյ երեք կողմը պատ կայ, և վրան ծածկած, բայց մէկ կողմը բաց է և ճաղերով պատած, ուր կը նստին 'ի զբօսանս, իբրև պատշգամ։

Զ·

Զատ· Մշ· Մշակաց կամ գործաւորաց ըղըկելիք հաց և կեր. և՛ իր. և՛ իբր կերակուր. և՛ հեռի։

Զատիկ· վն· Ճանճի մեծութեամբ կարմրագոյն միջատ անթև, որ կ'երևայ Զատկի օրերը. և Ս. Զատկի տօն. և Ս. Ծնընդեան տօնը, զոր անուանեն՝ Պզտիկ զատիկ։

Զատուոր· Մշ· Մշակաց կամ գործաւորաց կերակուր տարող։

Զըղզըղուն· Իբր զուտ և մեղմ հոսող ջուր և զեփիւռ. «զըղզըղուն քամի. զըղզըղուն ջուր»,

Զըղզիկ· վն· Հողէ ամանի կոտրուած մանր կտորներ։

Զըմփ զըմփ· վն· Իբր արձագանք ձայնի։

Զըպուն· վն· Հանդերձ, պարեգօտ, Էնթարի։

Զըրընկոց· Մետաղի ձայն։

Զուլալ· վն· Զինջ. «զուլալ ջուր, զուլալ ձէթ, զուլալ գինի», ևն։

Է·

Է՛· Զարմացք և ձանձրոյթ կը նշանակէ։ Եւ՝ հերիք է։

Էւ. Իբր մակբայ՝ «եւ» կը նշանակէ։ Եւս՝ այլ, ուրիշ։ Եւս՝ քրդերու ցեղ կամ տոհմ. որոց գլխաւորքն ալ կ'ըսուին՝ Էւ տղօտ։

Էմ՛. վն. Դարձեալ, վերստին։

Էրուկ. վն. Նոր բողբոջ ծառոց։

Էմ՛լէ. Մշ. Դարձեալ, վերստին։

Էդա սկընայ. վն. Այդպէս, այդգունակ։

Էնա սկընայ. վն. Այնպէս, այնգունակ։

Էսա սկընայ. վն. Այսպէս, այսգունակ։ Երբեմն ևս միայն «ըսկընայ» կ'արտասանեն։

Էս, էսա. վն. Սա, սոյն։

Էդ, էդա. վն. Դա, դոյն։

Էն, էնա. վն. Նա, նոյն։

Էծու պտուկ. վն. Այծու պտուկի ձև ունեցող տեսակ մը խաղող է։

Էջ. վն. Այն գինին՝ որ առանց ճմլելու ինքնին կը քամուի հնձանի մէջ դիզուած խաղողէն, և որ պատուական է յոյժ։

Էն գահն ինե. վն. Նոյն պահուն, մէկէն մէկ, անմիջապէս։

Էսան. վն. Յեսան, զոր Մշեցիք անուանեն՝ Լէսան։

Էսկանդար. վն. Այսքան։

Էսմլայ. Մշ. Այսպէս։

Էր. Այր, քարայր։

Էրէթիկ. Տեսակ մը վէրք է, որ կը գոյանայ մանկանց շրթանց և երեսանց վրայ։

Էրկանք. Աղօրիք, զոր ձեռքով կը դարձնեն։

Էրկէն. Երկայն։

Էրկնունիկ. Երկայնկեկ, «ծէծ»։

Էրուն. Արիւն։

Ը.

Ընչկիլ. Մշ. Մինչև։
Ըսկընէմ. Վն. Այսքան։
Ըսկի. Երբէք, և ոչ իսկ։
Ըսկուն. Վն. Այնպէս, այսգոյն, այնգոյն։
Ըստայ. Վն. Այստեղ։

Թ.

Թաթ. Վն. Գուլպայ։
Թաթպան, Վն. Ձեռնոց, ելոյէնձեռն. զոր Մըշեցիք «Թաթնոց» կոչեն։
Թալել. Նետել։
Թաշկել. Մշ. Հոգնիլ, կասիլ։
Թանխոռք, Թոյլ գործուած կտաւէ կամ չալէ տոպրակ, որոյ մէջ մածուն կամ թան կը լցեն, և քարի տակ դնելով ջուրը կը քամուի։
Թանհատ. Մշ. Մածնաթանին քամուած, պինդ մասն, զոր Վանեցիք «պինդ թան» անուանեն։
Թանհուս. Թանով խառն եփուած ճաշ։
Թառմայ. Ցախտապաչէն վերնատուն 'ի տունս, և տեղի կանանց յեկեղեցիս։
Թարթափ. Աչաց կոպերու վրայ եղած մազ։
Թափթափայ. Վն. Թոնիրի մէջ եփած հաց 'ի ձև կլոր նկանակի, թանձր տափարակ։
Թէրմաշ. Իւր հեգնութեան անէծք և հայհոյանք 'ի գործ կ'ածեն։
Թըթու. ([illegible]). Եւ թթու համ. Եւ՝ աղի ջրով, խմորով, կամ քացախով ջուր դրած բանջարեղէններ։
Թըրթըփալ. Երբ հաւ մը կամ անասուն

մը մորթեն, գլուխ կտրելէն ետքը՝ ըրած շարժման կ'ըսեն թըրթըփալ։

Թթուց· Հաւու կոկորդ, ուր զետեղէ պահէ կերած կուտն։

Թնթոց· Հարիսայ կամ ճաշ խառնելու և հարկանելու փայտն։

Թնթուխ· փափուկ։

Թոլկող· Թոյլ կող· յանթատակի եղած կողի ոսկորներուն մէջ տեղը, որուն «հոգեդուռ» ալ կ'ըսեն։

Թոլ փէշ· Թափթփած, դանդաղ, անհոգ մարդ։

Թռթռնեկ· Թիթեռնիկ։ Նաւ՝ խելքը թեթեւ մարդ։

Թօրթ· վն· Դիրդ գինւոյ · [illegible]։

Թօրուան շուրթն· Թոնիրի շուրթն, որոյ վրան ծեփուած, այլ ներքև պարապ կը մնայ · խուզարկութենէ իր մը թագուցանելու համար, այն տեղ կը պահեն, վրան կը հողեն։

Ժ·

Ժաժիկ· Իւղը հանուած Մածուն, որ նման է Եօղուրդի պանիրին · Վանեցիք հոտաւէտ բանջարներ կը խառնեն հետ, կ'ուտեն։

Ժաժկ· Շարժ, երկրաշարժ։

Ժանգռ· Ժանգ։

Ժիր· վն· Առողջ։ Իսկ Մշ· ուժով։

Ժղել· Մշ· Խօսելով ժամանակ անցընել։

Ի·

Իբե· վն· Եբեր, բերաւ։

իգի․ Այգի ։
իլիկ․ Մետաքսայ լիլիկ, որով դերձան ոլորեն․ Եւ՝ ոսկերաց մէջ եղած ուղեղ, ծուծն ։
իլին․ վ․ն․ Լի, լցուն ։
իմալ․ Մչ․ ինչպէս ։
իմկընի․ վ․ն․ Ննչան բառ՝ իբրև ծօ՛, բարկացած կամ հայհոյած ժամանակ գործ կ՚ածեն ։
իննե․ վ․ն․ ի ներքս, ՚ի մէջ ։
ինկաւոր․ վ․ն․ Լուսնոտ, կամ դիւահար, որ փրփրի և անկանի ։
ինոր, իդոր, իսոր․ վ․ն․ Անոր, ադոր, ասոր ։
ինչխ․ ինչպէս ։
ինքն ինքն․ Անձամբ անձին ։
իշել․ Մչ․ Նայել, դիտել ։ Կարնեցիք՝ Աշել, (որ է Աչել ։)
իշունց․ Ցիշոց, հայհոյանք ։
իսկի․ Ըսկի, երբէք, ոչինչ ։
իտին դիր, իտին դրին․ վ․ն․ Ցետոյ, ամենէն վերջ ։
իրե․ վ․ն․ Եկաւ ։
իրիկ․ Այր, էրիկ ։
իրիշկել վ․ն․ Նայել, դիտել ։

Լ․

Լախ․ վ․ն․ փուտ․ «լախ ձու», փտած հաւկիթ ։
Լաճ․ վ․ն․ Ձաւակ, մանչ ։
Լամուկ․ Քրդու կամ տաճկի տղայ ։
Լամէզ․ վ․ն․ Սոսկ ջրով ու ալիւրով եփած կերակուր ։
Լարան․ Հաստ թել մազէ կամ կանեփէ ։

Լաօ. Մշ. Իբր ո՛յ ողող։
Լխմել. } Մանրել, փշրել։
Լխրտել. }
Լըփ. Ափ։
Լըփլըփել. Լափլիզել։
Լղկել. Վ. Ն. Ջրաթաթախ լինել։
Լուլախ. Վ. Ն. Կարկտախառն անձրև։
Լպզորել. Վ. Ն. Իյնալով՝ մարմնոյն կաշին քերթել։
Լպզտրալ. Վ. Ն. Ոտքը սահիլ, սառոյցի վրայէն, կամ քարի կամ ցեխի վրայ կոխելէն, ևն։
Լպզտրուկ. Լկրտած, չամչցող. իբր լըպըզտրեալ երես։
Լօլիկ. Մշ. փոքր նկանակ հաց, Բոյնիկ հաց։
Լօշ. Բարակ բացուած հաց, լաւաշ։
Լօպկել. Մերկացնել, կողոպտել։

Խ.

Խանձրահամ. Այրած կերակուր։
Խանձրահոտ. Խանձի հոտ։
Խանձրիլ. Բուրդ խանձիլ, լաթ այրիլ, կամ մարդու, անասնոյ մազերուն այրիլ։
Խաչերկաթ. Երեք թևէն խաչաձև երկաթ, զոր դնեն թոնիրի վրան՝ թոնիր վառած ատեն. և անոր վրայ կը դնեն կերակուրի պտուտուկ կամ սան, եփելու կամ տաքցընելու համար։
Խեմ. Ղ. Ն. Հայիմ, Նայիմ։
Խեռնիկ. Վ. Ն. Մէկ տարեկան հորթ, իբր հերուընեկ։ Ամիկ։
Խզուզ. Կալի տակ մնացած՝ կեղև չհանուած ցորեն։
Խեչ. Մշ. Քոլ, կուշտ։

Խէրօ. Աղուականն բառ՝ յատկացեալ վասն մանկանց ։ Իբր՝ սիրուն զաւակս ։ Եւս՝ մարդոյ անուն ։

Խըյ. Մշ. Միթէ ։

Խըռ. Մանկանց խաղ մի է, որ իրարու ետևէ վազելով ձեռք պիտի դպցնեն փախչողին ։

Խըռնու. Իբր ճարտար ։

Խիլ. Շուղ, չէօք ։

Խուռամ. Հնձուած՝ այլ դեռ չկապուած

Խուրձ խոտոյ, ցորենոյ, եւն ։

Խուս. Ալիւրէ եփած ճաշ ։

ուցկուլուլու. Երաշտ օրերը փայտ մը կը պատատեն լաթերով և փողոցէ փողոց շրջեցնելով ջուր կը թափեն վրան, որպէս զի անձրև տեղայ ։

Խշտել. Խթել, մշդել ։

Խռծիկ. Պէպէք մանկանց

Խօ. Իբր մասնիկ բառից, այլ նշանակութեամբ իբր ձայնարկութիւն. զը, դու խօ՛ մարդ ես. ես խօ՛ տղայ չեմ, եւն ։

Խօրօտ. Սիրուն, գեղեցիկ, բարւոք ։

Ծ.

Ծանտրմակ. Վ.Ն. Ջուանի վրայ շինուած ննջարան մանկանց, իբր օրօրոց ։

Ծառզարդար. Ծաղկազարդի տօն. ծառոց զարդարուիլ ։

Ծէրվէրիկ. Վ.Ն. Ոտից մատներու ծայրով քալող, ձեռաց մատերու ծայրերով բան բանող, իբր ֆէնճոքէ ։

Ծին. Երեսի վրայ եղած սև ծին, պինչ ։

Ծուռ. Վ.Ն. Խենդ, յիմար ։

Ծռթավարիկ. Վ.Ն. Խենդօրէն, յիմարաբար ։

Ծուծակ. Վ. Ն. Ջրանցք, ջրի ծակ, ջուր անցնելու խողովակ ։

Կ.

կազալ. Վ. Ն. Ծառի չորցած տերև ։
կաթալիկ. Վ. Ն. Կաթ լեցնելու հողէ աման. և՝ իբր կիսակարաս ։
կաթիկ. Վ. Ն. Լերդացաւ. գուլէ ։
կաժ. Մանած թել, որ իլիկի վրայէն կանցունեն վելակի վրան ։
կալատիգ. Կալոտի կամ կալ ըրող եզներ ։
կալմագտ. Ցորենոյ կամ այլ արմտեաց կալ եղածէն՝ մշակաց, աղքատաց, անցորդաց ևն, մասն մասն ձրի բաժնել, իբր կալ մասն ։
կալտնել. Վ. Ն. Ախալել ։
կանանչ մատոտ. Վ. Ն. Կանանչագոյն մեծ մողէզ. ժէրլէնժէլէ ։
կանափըտիկ. Թուխ դեղնագոյն խատուտիկ մորթ կատուի ։
կանգալ. Գտըտել, չրջել, գթօնուլ ։
կանգռել. Մչ. Ցամառիլ. կամ արգիլուիլ կենալ ։
կանդ կլուզ. Վ. Ն. Մանրիկ մանկտիք ։
կանել. Վ. Ն. Մանել. դերձան կամ չուան մանել ։
կատար. Ագլօրի գադաթան վրայի միսը ։
կատիկ. Միս չուտելու օր և ուխտ, երբ միայն կաթնեղէն և ձկնեղէն և հաւկիթ կուտեն ։
կեռ. Ճէնկէլ ։
կեռիկ. Վ. Ն. Ներքին ծնօտ, չէնէ ։
կեր. Վ. Ն. Կերակուր ։

կզզուել. Վ․Ն. կորանալ, քամակ ծռել ՚ի վայր :

կթխայ. Գինւոյ կամ օղիի բաժակ. գաւաթ :

կիտուր. Մչ. Մարախ, որ ցորեն և կանանչեղէն կը կտրէ :

կլք. Վ․Ն. Ամուր, պինդ :

կլօճ. Վ․Ն. Անխմոր հաց. և՛ իբր յատուկ այն հացը, զոր ջաղացքի մէջ կ'եփեն :

կողինձ. Վ․Ն. Կորիզ. սալորի, ծիրանի, դամոնի, գեղձի, ևն :

կողուանք. Վ․Ն. Անկողինք, Եաթախ Եօրղան :

կճայ. Տաճկի կամ քրդու աղջիկ, կնիկ :

կճօ. Վ․Ն. Աղուական կոչումն փոքրիկ աղջիկանց, իբր ըսել «սիրուն աղջիկս» :

կոլ. Վ․Ն. Իբր նախադասական բառ, չօռ :

կովծըծուկ. Մչ. Տես կանանչ մատաստ :

կովիկ. Վ․Ն. Ջագար :

կոր բու. Վ․Ն. Գիշերահաւ. և՛ բու, ճայղուշ :

կուզ. Վ․Ն. Մոոք կենդանին. և՛ տապաստող :

կուլուլի, Վ․Ն. Խիստ հազ, կապուտ հազ :

կունք մը. Վ․Ն. Իբր պահ մը. «կունք մ'առնել», պահ մը քնանալ :

կուռիկ. Վ․Ն. Փոքրիկ քասայ հողէ շինուած :

կուռօ. Քուրդի տղայ :

կուց. Վ․Ն. Երկու ձեռաց ափերուն մէջ լցուած, իբր չափ :

կպուցել. Վ․Ն. Կպցունել, փակցունել. և՛ ճրագ կամ կրակ վառել, լուցանել.

կռէթ. Վ․Ն. Ջորցած հողի կոշտ մը :

կռիկ. Վ․Ն. Ագռաւ :

կռչալ. Երակաց կտտրտուելուն, կամ չոր բանի մը ջարդուելուն ձայնը :

կտէլ. Վ․Ն. Դգալ :

կտոր կտոր. Վ․Ն. Նաղանօք խօսող, չար-

ժող, քալող, եւն ։

Կտրոց. վ. Ն. Մանկանց իրարու ետեւ վազելու խաղ մը ։

Կտրիկ. վ. Ն. Կտրիկ ընել, խտղտեցնել. եւ՝ պստրիկ այծ ։

Կրկչալ. կարկաչել անծեղ թռչնոյն ։

Կօլօտ. վ. Ն. Կարճ, կարճահասակ ։

Կոռ. վ. Ն. Ձեռքի ցուպ, որոյ վերի ծայրն կորացուցած են ։ Եւս՝ որ եւ իցէ կոր ինչ ։

Կոռտիկ. վ. Ն. Հագուստ է, նման մաքցի, բայց անթեւ ։

Կոտ. Գլխուն գանգ. եւ՝ ցորենի չափ. եւ՝ փայտէ աման ։

Հ.

Հազար թերթիկ. վ. Ն. Ստամոքս ։

Հակառ. Հակառակ. ըստ Վ. Ն. խակառ ։

Հաղմ՛լէ. Մշ. Հեղ մի եւս, միւսանգամ ։

Հանգ. վ. Ն. Հանգիստ. եւ՝ չնչառութիւն. ասեն «հանգս կտրաւ». որ է՝ շունչս հատաւ ։

Հանգռել. Մշ. Շունչ կտրիլ ։

Հատքուտ. Աշնանէ ցանուած ցորեան՝ որ արտի ծոց հողին տակ կը ծածկուի եւ գարնան կը բուսնի ։

Հատնել. վ. Ն. Մեռնել, զոր 'ի գործ ածեն հայ չեղող ազգաց նկատմամբ, եւ անասնոց մեռնելուն ։

Հարսնառ. Մշ. Հարսնածուք, հարսնածութիւն ։

Հետ հետուն. վ. Ն. Ետ ընդ ետ, անմիջապէս ։

Հերուընեկ. Մէկ տարեկան որթիկ, որ և կոչի հերնեկ. ըստ Վանեցւոց հնչմանց՝ խեռնիկ : Ամիկ :
Հէռի. Այծ վարելու կոչումն :
Հըմալ. Մշ. Այնպէս :
Հըմլայ. Մշ. Այսպէս :
Հըմկայ. Մշ. Հիմակ, այժմ :
Հինգ աղբէր. Վն. Այլաբանօրէն՝ ձեռաց հինգ մատ, կամ ապտակ :
Հլոտել. Մշ. Հրել, մղել, գլորել :
Հով. Հովանի :
Հուր ի հրեղէն. Վն. Հրեղէն էակ. և՝ չքնաղ. գործածեն աղջկանց կամ կանանց գեղեցկութիւնը գովելուն. զոր հնչեն «խուռնի խրեղէն». և «խուռիկ» անուն է կնոջ. նոյնպէս և «խրեղէն» :
Հտրաց. Հետ իրերաց, ընդ իրեարս, միատեղ :
Հօն. Իբր հուն. արտ հնձողներ մասն մասն կը բաժանեն հունձ, և իւրաքանչիւր մասին բաժանումն կը կոչեն հոն կամ հօն :
Հօնած. Հոն բացող, հնձողներէն մին որ ամենէն արագաձեռն է և ամենէն առաջ կ'ընթանայ, և որ երկրորդ մը ևս ունի իրեն, որ կոչի՝ հօնածաղբէր :
Հօրի°. Մշ. Ինչու, է°ր իմ, հէ°ր իմ :

Ձ.

Ձարձրուիլ. Թեւ թեւ լինել, կտրտուիլ, փտտիլ :
Ձէթ. Վն. Մանր : Ասեն «ձէթ պէտ», որ է «փոքր և մեծ» : Մենք գրեցինք նաև՝ «ձետ պետ», իբր պոչ և գլուխ, փո-

խանակ՝ կրտսեր և աւագ քսերոյ, կամ ճետ և պետ :

Զիթհաց. Գործարան կամ տուն, ուր մեծադերան մեքենայով ճմլելով կտաւատը՝ ձէթ հանեն . ղէղիէրհանէ :

Զմէթք. Աչքի այն տեսակ ցաւ, որ ձիւնի վրայ արև ժամանակ նայելով կ'արտասուէ և կը կսկծայ :

Զմրկտալ. վն. Զգտել, կէշէլմէք :

Զմրուկ. Զոր խեցի՝ ջրային ժժմանց, մանկըլոյ Նոշէ, զոր կախեն օրօրոցի գերանէն, և մանուկը իր թաթիկներով կը խառնէ զայն, անոր չըխկչըխկոց ձայնով կը զուարճանայ . կանայք կարծեն թէ՝ զօրութիւն ունի այս, որ տղաքները ազատ կը պահէ ձմրկտալէ . և ձմրկտալը՝ դիւային կը համարին : (Տես և Եզնիկն Գիրք Բ. ժԹ .)

Ղ.

Ղորդ . }
Ղորդման. } Իրաւ, ստոյգ :

Ճ.

Ճան. Վէգ, զոր հանեն կենդանեաց ոտից բարձերէն, և խաղ կ'ընեն :

Ճանկ. վն. Մագիլ գազանաց : Եւս՝ ափ մի, ափով մի, իբր չափ :

Ճակտնոց. Դրան վերին սեամ, բարաւոր : Եւս՝ զարդ ինչ 'ի ճակատս կանանց : Եւս՝ ձիոց կամ եզանց ճակտէն կախած կաշիէ կամ թելէ հիւսուած ծոպեր, ճանճերէ պաշտպանուելու համար :

Ճարընկան. Մշ. Մուրացիկ, աղքատ:
Ճիտ. Ճիտ հանել. Նախատինք:
Ճէլօյ. վն. Ազգ ինչ քրդաց, որոց թուաղեայ գլխարկը բարձր է 'ի ձև եպիսկոպոսական ճիլաւկ թագի, և զգնասուց թևերու գրօշակ երկար՝ մինչև գետինը կախուած:
Ճըլլեկ. Մանր և կլոր հատիկ դառն, որ իբրև որոմն պայանայ ցորենւոյ հետ:
Ճիժ. Մատղաշ մանուկ:
Ճլոր. փոքրիկ պուտուկ, հողէ պոյիտ:
Ճլտուզ. վն. փոքրիկ կամ ազազուն:
Ճխդել. վն. Ամրացնել, պնդել. և՛ հրել:
Ճկիկ. Դրան վրայի երկաթ, որով բաղխեն զդուռն:
Ճղակ. վն. Երկճղի, ճղճաւ:
Ճղակ թագ. Եպիսկոպոսական թագ, որ ասի «չաթալ թագ»:
Ճղավզիկ. վն. Մանուկներ լուացած ժամանակ՝ ճիտէն կը վերցնեն քանիցս, որպէս զի ջիլերը ձգուին. այս արարողութիւն ճղավզիկ կը կոչեն:
Ճղօր. սոլընձախ:
Ճոչ. վն. Մեծ:
Ճոչիկ. Մշ. Մեծ մայր, հօր մայր. ըստ վանցւոց՝ ճոչ մամա:
Ճութ. Ողկոյզ, կամ ինչ և իցէ ողկուզաձեւ իր:
Ճպոթ. Դալար փայտ, վարոց, որով զմարդ պատուհասեն ծեծելով, և զանասունս վարեն:
Ճվալ. Ճվճվալ:
Ճրագ. Հողէ շինած ճրագ, որոյ մէջ պատրոյգ կը դնեն և ձէթ ածեն վառեն.

ճրագի տակ ուրիշ հողէ փոքր աման մը կա կայ, զոր ջահ ասեն. Կ. երկքոտնէն փայտաշէն ճրագակալ կայ, որ բարձր շինուած է, և վրան քանի մը տեղ պախ֊տակ անցուցած են, ճրագները վրան դնելու համար:

Մ.

Մա. } վն. Մայր:
Մամա. }

Մազրակալ. վն. Է այն, որոյ վրայ լոշ հացի խմորն առնելով թրթեն 'ի կողն թոնիրին:

Մաթրաթ. վն. Մեծ քասայ, կերակուրի աման:

Մաժել. վն. Ձեռքով շոյել, շօշափել, շփել:

Մալուլ. վն. Տխուր:

Մակատուզ. վն. Սոյլանկող:

Մանել. Թել կամ չուան ոլորել: Իսկ Մշ. ձգիլ, վայր անկանիլ:

Մանգղոն. Մշ. Մանգաղ:

Մաշկ. վն. Թռչնոց կաշի, կամ բարակ կաշի:

Մռութ. Բերնի ստորին շուրթն: Եւս՝ տըխուր: Մռութ կախել՝ տխրիլ:

Մաս. վն. Բառ նուիրական, յոր երդնուն, իբր Ս. Հաղորդութիւն: Մաս առնուլ, Արբութիւն առնուլ:

Մաստորոն. վն. կարագ և պինդթան իրար խառնած, ուտեստ:

Մարէ. վն. Մայրիկ:

Մէզար. Ճալէ գործուած պօղչայ. բանջար կը լեցնեն մէջ, և գործի ատեն 'ի գոգ կը կապեն:

Մէզել. վ. ն. Մտածել, խոկալ։
Մէրօ. վ. ն. Ազնուական կոչումն փոքր աղ-ջըկանց։
Մէջկապ. վ. ն. Գօտի։
Միջան. վ. ն. Անկողնոյ մէջ լեցուած բուրդ։
Մլել. վ. ն. Խոթել։
Մըշկել. վ. ն. Մղել, հրել։
Մկայ. վ. ն. Հիմայ, այժմ։
Մղել. Մշ. Ոչխարաց հօտին տեղ մը մակաղել։ Նմանութեամբ՝ մարդոց բազմութեան եւս գործ կ՚ածեն։
Մշել. վ. ն. Լաթեղինաց այրիլ. մշահոտ՝ լաթ այրելու հոտ։
Մոն. վ. ն. Գէշ, չար. որ ասեն, Մոն բան, մոն մարդ, եւն։
Մոնթ. վ. ն. Վանքի տիրացու, կամ վարդապետի փոքրաւոր։
Մրկել. Երակի կամ արեան տաքութենէն խանձիլ, էրել։
Մօլօզ. Անտաշ քար։
Մօղ. Խածանող ճանճ։
Մօզիկ. Արու հորթ։
Մօռ. վ. ն. Մօր, ճահճուտ։

Յ.

Յամալիք. վ. ն. Մեծ կուժ, ջուր կրելու մեծ աման։
Յէր. Այր, ծմակոյ։
Յունթ. Անթատակ, ընդ. անթով։
Յօլ. Խաղ ինչ մանկանց։

Ն.

Նակահատան. վ. ն. Նակատատան եւ անե-յանկարծ։

Նմուշ· Կերպարան ։ Եւս՝ Նման ։ Եւս՝ Հետքը ։
Նշանց· Ցոյց ։ Նշանց տալ, ցոյց տալ ։
Նուկանոց· վ՛ն· Ջափ գինւոյ, կամ ձէթի, 200 տիրէմի ։

Շ·

Շապկել· վ՛ն· Բազմութեամբ շրջապատել ։
Շեղք, Շեղքիկ· վ՛ն· Պարտիզպանաց երկաթէ գործիք մը խոտեր խլելու ։
Շեփ· Խարազանի ծայր կապած բարակ կաշի ։
Շէնք· վ՛ն· Մեծ քայլ· շէնքել՝ առանց կոխելու վրայէն անցնիլ ։ Ըստ Մշ· շեկ ։
Շլկտար· վ՛ն· ուժեղ բեռնակիր ։
Շնիկ· Մշ· Ջափ ցորենոյ և այլ արմտեաց ։
Շոգ· Տաք, տապ արևու ։
Շոգելք· վ՛ն· Շոգի ։
Շուշտակ· վ՛ն· կանանց գլխու վրայ ձգելու լաթ, իբր զարդ ։
Շուշտեմ· վ՛ն· Ջգիտեմ, տարակոյս ունիմ ։
Շուռ տալ· Միւս կողմ դարձնել, կամ տակը վրայ ընել· «շուռջել» ևս ասեն ։
Շուար· վ՛ն· Ճարտար ։
Շրջոնք· վ՛ն· Որ և իցէ իրի մը միւս կողմն ։
Շրտել· վ՛ն· Աչքի յառումն, անթարթ հայեցք ։

Ո·

Ոժ· Ոյժ ։
Ողեայ· փորձութիւն ։
Ողմել· Մշ· Ընկողմնել յորմն կամ 'ի ծառըն, եւն ։
Ոռազատիկ· վ՛ն· Յետս յետս երթալ, կամ ոտի վրայ սահելով ընթանալ ։

Ոստին· Վ. Ն· Անձրոդի վայր, կամ ցամաքային :

Ուզնկայ· Մշ· Աղջիկ նշանելու խօսելու գնալ:

Ուլնիկ· Ուլունք :

Ուշք· Ուշ, յիշողութիւն : «Ուշքս գնաց», խելքս դարձաւ :

Ուտիչ· Մշ· Տեղի, ուր ճարակ կամ խոտ արկանեն ոչխարաց ուտելու՝ 'ի ձմերայնի։

Ջ·

Ջախջախ· Ջաղացքի քարի վրայ հաստատուած փայտ, որ քարի դարձած ատեն «չախ չախ» ձայն կը հանէ :

Ջանչ· Վ. Ն· Ջանչ խաղողի, տանձի, խնձորի, եւ, մրգեղինաց կուտեր՝ և կուտեր շրջապատող մասն, որ չուտուիր ։

Ջարոց· Սատանայական :

Ջրբեր· Վ. Ն· Ամուլ կին :

Ջրնկուր· Վ. Ն· փոքրիկ առու, ջութակ :

Ջրտեա· Բան չիմացող, նորեկեշ :

Ջիր· Ջորցուցած մրգեղէն :

Ջորթան· Ջորցուցած պինդ թան :

Ջոք· Ծնկներ : Ջոքել՝ ծնկածալ նստել։

Ջում· Մինչև : Ջուր՝ եւս ասեն :

Պ·

Պադագրել· Վ. Ն· Բարկանալ, զայրանալ:

Պալ· Քարերու մեծամեծ կտորներ :

Պաղել· Մեռնել քրդաց կամ տաճկաց ։

Պապաճիկ· Վ. Ն· փոքր դիրքով եփած հաց ։

Պատեկ· Մշ· Կոնակ :

Պատիկոն· Վ. Ն· Իբր որմ, «պատ պատիկոն»։

Պատվու ճուտեր· Մշ· Սոչընկօղ :

Պատել. Մշ. հյնալ. և՝ «Արև պատաւ», Արև մարը մտաւ:

Պատրուս. Պատուաստ:

Պարագած. վն. կարօտ ըմպելեաց կամ մրգեղինաց, պապակեալ:

Պէտ. վն. խոշոր, մեծ:

Պիժ. «Ճիժ պիժ», մանր մանկտիք:

Պինդ. վն. է այն լաթ, որով պատատեն և պնդեն զմանուկն յօրօրոցի կամ 'ի խանձարրի:

Պլուզ. վն. փոքրիկ մարդ, կամ մանուկ:

Պնտուկ. Ցընոբէ, կաղին:

Պշալ. Պշնուլ:

Պոզիկ. Ջրկիճի ձևով հողէ շինուած աման ջրոյ և գինւոյ:

Պուճուճակ. Ծոծրակ:

Պուկօշ. վն. թանձրաշուրթն. և՝ տեսակ մի տանձ:

Պսմամայ. վն. Հօրեղբօր կին:

Պսպղուն. փայլփլուն:

Պտղունց. վն. Բոյթին, ցուցամատին և միջամատին ծայրերուն միացումն, կամ անոնցմով բան մը առնուլ. և՝ բուռն:

Պտըտուր. կղկղանք խաշանց:

Պօլօճիկ. Երիկամունք:

Պօղօջակ. Պղպջակ, պօղօջկել, պղպջել:

Ջ.

Ջանք. Ճէնկ. «Ջանք ու կռիւ»:

Ջամուկ. Կցեալ երկու միրգ. և՝ երկուորեակ ծնեալք:

Ջէրգայ. վն. Կարգով:

Ջին. վն. Բարկութիւն. «Ջինս էկաւ»,

զայրոյցս ելաւ ։ Ջնոտել, զայրանալ կատաղի կերպով ։

Ջխտել. վ. ն. Զոյգ փռնգտալ, զոր յաջողութեան նշան համարին ։

Ջնջոց. վ. ն. Լաթ մը՝ յատկացեալ ամաններ լուանալու ։

Ջռռոթան. Ջրորդան. տանիքներու վրայ դրուած փայտէ կիսախողովակ, յորմէ անձրեւաջուրն ժողվելով վար կը թափի ։

Ջրով. Հազիւ. «Հազար ջրով», հազիւ հազ ։

Ջրապպսիկ. Հաստ թուղթէ մը շինուած խաղալիք է մանկանց, երբ փոքրիկ [illegible] ։

Ջրբաշ. վ. ն. Այս անուն կուտան այն անձին, որ հասարակութիւն կ'ընտրէ և կը կարգէ ջրերը կարգով բաշխելու իւրաքանչիւրին ։

Ջրկալ. վ. ն. Արտ ջրող. տեղ տեղ նաև ասեն՝ ջրտու, ջրւոր, ևն ։

Ջրտուն. Ջաղացքի ջրտուն, ուստի ջուրն անիւին զարնուելով դուրս կը հոսի ։

Ջրջրուկ. վ. ն. Մանր խոցեր կամ պալարներ, որ մանուկներ կը հանեն շրթանց կամ ծնօտին վրայ ։

Ռ.

Ռայ. Ռայայ. «ռայ գալ», հպատակիլ, անձնատուր լինել ։

Ռըմիկ. Ամբոխն, հասարակութիւն, ռամիկն ։

Ռինդ. Ռընտիկ, կոկիկ, սիրուն. ևս՝ առողջ ։

Ռուբ. Եփած քաղցու, պէքմէզ ։

Ս.

Սալարսել. վ. ն. Սալայատակ առնել, սալքար շարել ։

Սախ․ Հողէ շինած մեծ աման, յորում լուացք առնեն։ Եւ՛ մեծ աման կերակրոյ։ Եւ՛ բուրդէ գործուած զանգապան։

Սանտերք․ վ․ն․ Երկաթ ակրաններով սանտրաձև գործիք, որով բուրդ գզեն։

Սավա․ վ․ն․ Մատղաշ մանուկ․ ասեն և՛ սապի․ «սավա տղայ, սապի տղայ»։

Սատանի եղունգ․ վ․ն․ Գայլախազ սև քար։

Սարակ․ վ․ն․ Օրականով աշխատող մշակ կամ գործաւոր։

Սարակախափան․ վ․ն․ Գործաւորաց դադարումն յանձրևոց կամ յայլ պատճառէ։

Սարանդոստիկ․ վ․ն․ Սարդի ոստայն․ էօ-րէ-նճէկ։

Սարեկ․ վ․ն․ կաշիի կտոր մը, զոր կապեն 'ի բերան մածունի բղիկի․ և՛ սարեկ թռչուն։

Սեխ․ վ․ն․ Խոթան իշոյ․ և՛ բարակ ցից։

Սեղանատախտակ․ վ․ն․ փայտէ սեղան բոլորակ, հաց ուտելու, կամ միս մանրելու, կամ խմորի գունդ գրտնկելու։

Սեռիկ․ վ․ն․ Բղիկ, հողէ փոքր աման՝ եղի, մածունի, ևն։

Սերտ․ վ․ն․ Քաջառողջ, ուժէղ։

Սէլգնա․ Մշ․ Սայլուղի 'ի դաշտի, զոր Վանեցիք «Աղուր» ասեն։

Սէրսուր․ վ․ն․ Մաքուր, զուտ։

Սինամահաւք․ Սիրամարգ։

Սլայ․ Ուռի բարակ ճիւղերէ հիւսուած․ սէփէ։

Սլուլ․ վ․ն․ Սառնամանիք։

Սվլիկ․ Ցրաթռիչ կամ փայլփլացող իր ինչ։

Սկել․ վ․ն․ Սուզանել։

Սկրտալ․ Ջգայռիլ։

զայրոյցս ելաւ ։ Ջնոտել, զայրանալ կատաղի կերպով։

Ջխտել. Վ.Ն. Ջոյգ փունգտալ, զոր յաջողութեան նշան համարին ։

Ջնջոց. Վ.Ն. Լաթ մը՝ յատկացեալ ամաններ լուանալու ։

Ջուութան. Ջորդան. տանիքներու վրայ դրուած փայտէ կիսախողովակ, յորմէ անձրեւաջուրն ժողվելով վար կը թափի։

Ջորով. Հազիւ. «Հազար ջորով», հազիւ հազ։

Ջրապպտիկ. Հաստ թոյսէ մը շինուած խաղալիք է մանկանց, իբր փոքրիկ [illegible]։

Ջրաշ. Վ.Ն. Այս անուն կուտան այն անձին, զոր հասարակութիւն կ'ընտրէ եւ կը կարգէ ջրերը կարգով բաշխելու իւրաքանչիւրին ։

Ջրկալ. Վ.Ն. Արտ ջրող. տեղ տեղ եւս ասեն՝ ջրտու, ջրւոր, եւն ։

Ջրտուն. Ջաղացքի ջրտուն, ուստի ջուրն անիւին զարնուելով դուրս կը հոսի։

Ջրջրուկ. Վ.Ն. Մանր խոցեր կամ պալարներ, զոր մանուկներ կը հանեն շրթանց կամ ծնօտին վրայ ։

Ռ.

Ռայ. Ռայայ. «ռայ գալ», հպատակիլ՝ անձնատուր լինել։

Ռըմիկ. Ամբոխն, հասարակութիւն, ռամիկն ։

Ռինդ. Ռընտիկ, կոկիկ, սիրուն. եւս՝ առողջ։

Ռուբ. Եփած քաղցու, պէքմէզ։

Ս.

Սալարսել. Վ.Ն. Սալայատակ առնել, սալքար շարել։

Սախ. Հողէ շինած մեծ աման, յորում լուացք առնեն ։ Եւ՛ մեծ աման կերակրոյ ։ Եւ՛ բուրդէ գործուած զանգապան ։

Սանտերք. վն. Երկաթ ակրաններով սանտրաձև գործիք, որով բուրդ գզեն ։

Սավա. վն. Մատղաշ մանուկ. ասեն և՛ սապի. «սավա տղայ, սապի տղայ» ։

Սատանի եղունգ. վն. Գայլախազ սև քար ։

Սարակ. վն. Օրականով աշխատող մշակ կամ գործաւոր ։

Սարակախափան. վն. Գործաւորաց դադարումն յանձրևոց կամ յայլ պատճառէ ։

Սարանդոստիկ. վն. Սարդի ոստայն. էօ-րէ-նճէկ ։

Սարեկ. վն. Կաշիի կտոր մը, զոր կապեն 'ի բերան մածունի բղկի. և՛ սարեկ թռչուն ։

Սեխ. վն. Խթան իշոյ. և՛ բարակ ցից ։

Սեղանտախտակ. վն. Փայտէ սեղան բոլորակ, հաց ուտելու, կամ միս մանրելու, կամ խմորի գունդ գրտնկելու ։

Սեռիկ. վն. Բղիկ, հողէ փոքր աման՝ եղի, մածունի, եւն ։

Սերտ. վն. Քաջառողջ, ուժեղ ։

Սէլգնա. Մշ. Սայլուղի 'ի դաշտի, զոր Վանեցիք «Ալղուր» ասեն ։

Սէրսուբ. վն. Մաքուր, զուտ ։

Սինամահաւք. Սիրամարգ ։

Սլայ. Ուռի բարակ ճիւղերէ հիւսուած. սէպէ ։

Սլուլ. վն. Սառնամանիք ։

Սլփիկ. Սրաթռիչ. կամ փայլփլացող իր ինչ ։

Սկել. վն. Սուզանել ։

Սկրտալ. Զգայուիլ ։

Սղալ· վ. ն. Շրթամբք փչելով ձայն հանել· սուլել:

Սղկել· Մանրել, փոշիացնել:

Սռեծ· վ. ն. փայտեր, որոց վրայ ոստայ-նանկներ հինած կը հինեն:

Սրսունք· վ. ն. Սարսուռ. ասեն՝ «սրսունքս դողաց. սարսուռ զիս կալաւ». իբր քստմնել:

Սրսուռ· վ. ն. Զուտ, զտեալ:

Սրտանոց· Մշ. Լանջակապ. իբր զարդ կա-նանց ՚ի վերայ լանջաց:

Սօղնակ· վ. ն. Դրան փակ, երկաթէ կամ փայտէ սիւրկիւ:

Վ.

Վաղէ վաղ· վ. ն. Վաղվաղակի, արագ ա-րագ հասնիլ, ընթանալ:

Վաք· փայտէ մեծ խողովակ ջրոյ ջաղացքի:

Վարդի ծոց· վ. ն. Կարմրուկ ախտ կամ ծաղկի պէս հիւանդութիւն մը մանկանց:

Վարոց· Մշ. Ձեռքի բարակ գաւազան, որով վարեն զանասունս:

Վաքդէգ· Տեղի ծառազարդ և հովա-սուն ՚ի գլուխ ջաղցի վաքին, ուստի ջուրն լճացեալ մտանէ ՚ի վաք:

Վզնոց· Շարք ոսկւոյ կամ մարգարտի իբր զարդ պարանոցի կանանց. կէրտէնլըք:

Վիր· Որու:

Վէրի· Վայրի ոչխար, էրէ:

Վրզտ վրզտ· վ. ն. Արագ արագ ելնել մտնել:

Վը՛չ· վ. ն. Վա՛չ, ափսոս, իբր միջարկ.:

Վժալ· Մանկանց ճչալ, աղաղակ.

Վիլակ· Կարժառ, էլէկ:

Վուշ· վ. ն. Կտաւ, քէթէն:

վռազ. վն. Շտապ, անել.
վռտիլ. վն. Կխանել լինել, կխայրեաց ։

Ց.

Ցախ. Ցարիքն անցած, ժամանակն անցուցած. խօրքն ։
Ցապղին. վն. Ստեպղին ։
Ցաքօղք. վն. Ցենդ, ջերմախտ ։
Ցե. Ցես ։
Ցզկել. Թրջել ։
Ցէզէլք. վն. Ցեսիլք, իբր յափշտակեալ յերկինս ։
Ցէլ. Դեռ. «տէլ ալա». դեռ ևս ։
Ցէրաթաչ. վն. իբր՝ տէրամէռ. հայհոյանք է ։
Ցէր մաչ. վն. Հնչեն «թէրմաչ». հայհոյանք է ։
Ցըռճիկ անել. Պոչ տնկելով վեր վեր ցատկել անասնոց ։
Ցիզ. Ոչխարաց ոջիլ. կենե ։
Ցիլ. վն. Ցիղմ. [illegible] ։
Ցիրուհնի. վն. Է փայտ ինչ կանգնաչափ, որոյ կոթն բարակ, իսկ ծայրն իբր թաթիկ մանկան, որով կռնակն քերեն. այս անուն անապատաւորք յօրինած են ։
Ցնօրիկ. վն. Ցան համար շինած ապրանք, իբր ընտիր իր ։
Ցուածուրիկ. վն. Մենաշնորհութիւն, յԱստուծոյ տուեալ ։
Ցուլիկ. Շան լակոտ ։
Ցուճիկ. վն. Պստիկ կարաս գինւոյ, ևն ։
Ցուչ—փէտ. Խաղ մանկանց ։
Ցուրիկ. վն. Զանգայ, կամ պարկ ։
Ցուց. Անտի. «էնտուց». անդուստ ։
Ցօ՛. Ծօ՛, ո՛վ. իբր միջարկութիւն ։

Ց.

Ցախ. Չորցած ճիւղեր ծառոց, վառելիք։

Ցան. Չորցած կղկղանք անասնոց, զոր վառեն։

Ցինել. Ցնկնել անասնոց, ծնել։

Փ.

Փաթ. Մչ. փաթթել, փաթթոց. և՝ դարձ, անգամ։ «Ութն փաթ գացի էկայ». փաթաթելով, շրջան առնելով երթալ դառնալ։

Փակահ. Ախոռ։

Փառ. Ջաղցի ճախրի թև, անիւի թև։

Փարատիկ. Լաթ՝ որով թոնիրի կողերը կը մաքրեն, մուրը կը փարատեն։

Փարի. Ոգի, Պարիկ. Ճէբէ։ Առասպելաբարած։

Փեռ. Բերնի լորձունք։

Փէտէ մչակ. ՎՆ. Ծլլակ մեծ փայտ մը, որոյ ճակատէն ցից մը զարկած, կողով կը կախեն. և հող կամ ինչ և իցէ նիւթ կողովի մէջ լեցնելէն զկնի, դիւրաւ կը շալկեն առանց ուրիշի օգնելուն։

Փինչ. Փայտէ բևեռ։

Փմփուս. ՎՆ. Քնքոյշ, փափուկ։

Փշրուկ. ՎՆ. Կաւ, զոր ածեն ի տանիս։ Եւս՝ գլոր գլոր ըրած խմոր եփեն իբր շրջոյ, քացախով և սխտորով ուտեն։

Փողան. ՎՆ. Փողոց։

Փողպատ. Մչ. Շապիկի կամ հանդերձի խոյ։

Փոնթ. Ծալք, կամ կար կարելու ատեն եղած ծալքեր։

Փուղոց. ՎՆ. Հարկաւոր, գործարան կարեաց։

փուռնիկ. Գլորաձև թանձր հաց ։
փուռղիկ. վ. ն. Շան կամ կատուի բուրդ. և՝ բրդի կտոր մը ։
փտորուիլ. Տրորուիլ ։
փօթիկ. վ. ն. Պտտիկ, մանրուկ ։

Ք.

քաղանիչք. վ. ն. Քաղանք ընելու գործիք ։
քաղանք. Մշակեալ բուսոց մէջ գտնուած անպիտան խոտեր ։
քանքան. վ. ն. Ական հատանող, աղբիւրի ջուր հանող արուեստաւոր ։
քապապ. Մշ. Կնքապապ, կնքահայր ։
քապ քապ. վ. ն. Մոկաց գաւառի լեռնաբնակաց կօշիկ, որ հիւսուած է կանեփով. և տակը մանր բևեռներ խիտ խիտ շարուած ։
քառէշտ. վ. ն. Հեծանոց, կալի հոսելի ։
քառթաթօշ. վ. ն. Քարերու մէջ բնակող մօղէզ, [illegible] ։
քարքռայ. Քարաժայռոտ վայր ։
քաւոր. վ. ն. Կնքահայր ։
քէթր վ. ն. Ծուռ, թիւր ։
քըպսել. Մշ. Խճողել ։
քըրքաշ. Գետնաքարշ ։
քծմել. վ. ն. Մատներուն սառիլ ։
քուշաիկ. Գօտէմարտութիւն, ըմբշամարտութիւն ։
քոլստալ. վ. ն. Կաշառք խոստանալ, կամ յուսալ ։
քօլ. Անկոտոչ այծ, էգ այծ ։
քոռ. վ. ն. Կոյր, [illegible] ։

ԲՈՒՍՈՑ ԱՆՈՒՆՆԵՐ

Այս տեղ մեր յառաջ բերած բոյսերը միայն Վանայ, Մշոյ և Այրարատայ գաւառաց կը վերաբերին. և այն՝ ոչ բովանդակապէս. այլ որքան կարող եղանք յիշել. ապա թէ ոչ՝ անհուն ընդարձակ գործ մը կը լինէր և յատուկ աշխատութեան կարօտ՝ անոնց ամբողջութիւնը ձեռք բերել, թէպէտ և կարի կարևոր և օգտակար է: Ոչ թէ գաւառէ գաւառ, այլ գիւղէ գիւղ, քայլ առ քայլ եթէ ոք շրջի, զանազան բոյսեր կը տեսնէ. և ինչպէս կ'ըսեն Հայաստանցիք, «Աստուած մէկ, իւր ստեղծածը հազար ու մէկ» են: Դեռ մեր մէջ ոչ կենդանաբանական և ոչ բուսաբանական գիտութիւն տուն մը ունեցաւ, որ ընկերութեամբ խնամ տանէր Հայաստանի հողը զարդարող բոյսերը, ժժմունքները, բզէզները թանգարաններու մէջ զետեղել, անոնց օգտակարութիւնք և վնասակարութիւնք քննել ծանուցանել, և 'ի տես ածել: Գոնէ մեր օրինակի պէս՝ առ այժմ իւրաքանչիւր գաւառացին իբրև ցանկ մը յօրինէ, և կարելի եղածին չափ ծանօթութիւն գրէ ու հրատարակէ, մինչև ճաշակներ զարգանան ազգի գիտնականաց մէջ:

Արարատայ բուսոց ցանկին մաս մը ընդունեցի մեր բարեկամ Հաճեան Մեծ. կարապետ էֆէնտիէն, որ այժմ Ազգ. Պատրիարքարանի համարակալն է. առ որ գոհունթիւնս կը նուիրեմ:

Ա.

Ալոչ. Ասի եւ Մկնալոչ. վայրի պտուղ ինչ ծառոյ, գոյնն կարմիր, համն քաղցր :

Ալուչայ. Սալոր, որ լինի թ[illegible]ու և քաղցր :

Աղբրանց արիւն. Արեան գոյն կարմիր, թաւիշի նման՝ երեք թերթէ ծաղիկ մը, որ քարերու մէջ կը բուսնի, անհոտ է. Մուշը շատ կը գտնուի :

Աշինջ. Եշինճ. բանջար վայրի. ըօբըղան :

Աշջկռուտակ. Բանջար վայրի. Էջէմիէօղլու :

Ամանկոտրիկ. Կարմիր ծաղիկ ունեցող մանր խոտ ինչ :

Անթառամ ծառիկ. Վայրի ծաղիկ յատուկ այս անուամբ, որ բուսանի անջրդին վայրեր, խիստ անուշահոտ, նարինջ և դեղին գունով :

Անիսոն. Խոտ, որոյ հոտաւէտ հունտ գործածեն 'ի ցքի :

Ապրիմ չապրիմ. (Աչըէմ Դօնէմ) ծաղիկ մանըր և բազմաթերթ, որոյ թերթիկներ մէկիկ մէկիկ փրցնելով՝ մէկին Աչըէմ մէկին Չաչըէմ կ'ըսեն. վերջին թերթն եթէ աչըէմ եղաւ, խորհուրդն 'ի բարին կատարի. եթէ չաչըէմ եղաւ՝ ձախորդ է :

Առոստ. Առոյտ, Եօնճայ. խոտ, ախորժելի ձիոց և ամենայն անասնոց, վայրենի և մշակեալ. տեսակ մը կայ, զոր դալար եղած ատեն՝ իւղով կը տապկեն. և եթէ մարդու ոտք ցաւի կամ ջախջախուի, առոստ կը ծամեն կապեն վրան իբրև դեղ :

Աստղփուշ. փուշով խոտ, որ կապոյտ ծաղիկ կը բանայ :

Արդղիկ. Բանջար վայրի :

Արևելածաղիկ· Արևածաղիկ · [illegible]։

Աւել· Կակուղ՝ բայց դիմացկուն խոտ, յորմէ աւել կազմեն. և քանի մը տեսակ կայ ։

Աւելուկ· Բանջար վայրի, որոյ տերևք նման տերևոց ճակնդեղի ։

Աւշտիկ· Կարմրահատ ցորեն, որոյ հասկերն անփուշ են ։

Բ·

Բազուկ· Բազկիկ· Վայրի և մշակեալ բանջար, որոյ տերևներ սպանախի նման է· մսի վրայ կը ձգեն. պահոց օրեր աղցան կը շինեն, կոթերը աղջուրով և քացախով կը թթուեցնեն ։

Բաւեղ· Բաղեղ· Բաղեղն խոտ · [illegible]։

Բաոբառ· Բերբեր· Փրփրեմ բանջար · · [illegible] ։

Բարդխապահ· Ծաղիկ պայծառ և անուշահոտ, մշակեալ ։

Բացմենակ· Ծաղիկ, որ գործածի 'ի ցքի։

Բերկի· Բևեկնի ծառ ։

Բիբերդ· Տես Աղջկուտակ ։

Բողիկ· Բող· Բողիկ բանջար՝ զոր խաշեն և աղջուր դնեն ։

Բուբու· Դեղին ծաղիկ ունեցող խոտ մի։

Բուտ· Պտուղ վայրի ծառոց ողկուզաձև մանրահատիկ, զոր աղջրով թթուեցնեն և ուտեն ։

Բօլի· Դառնահամ բանջար վայրի ։

Գ·

Գազ· Փուշ խոտ, որոյ մէկ տեսակն վահանաձև է և խիստ կը մեծնայ, կը ծաղկի

և իր խիտ ու թանձր թևոց տակ օձեր և այլ սողուններ կը ծուարին. խոտ չեղած տարիները անասնոց կը կերցնեն գագը, վառելիքի գործ կ՚ածեն, և տանիքնե֊րուն վրայ պարզելով տանիքի հողը վրան կը տարածեն. իսկ միւս տեսակն դեղին է, և կը բարձրանայ. վառելու գործ կ՚ածեն, և ասոր կաթերէն առատ խէժ կը ժողվեն ։ (Գազի խէժ. ԺէՊէԼ ։)

Գապ. Խաւարծիլի լայն տերևներ, որ ու֊տողաց փոխանք կը բերէ. ռէվէնտ ։

Գառան ականջ. Խոտ վայրի ։

Գառու դմակ. Բանջար վայրի ։

Գարնցան. Կարմիր հատ ցորեն, որ ՚ի գար֊նան ցանեն. ամենէն ընտիրն է ցորենի տեսակներու մէջ ։

Գէլու ականջիկ. Գայլու ական. խոտ վայ֊րի, որոյ արմատն է օղանէ, զոր չորա֊ցընեն և մանրեն ցանեն ձիոց վէրքերուն իբրև դեղ։

ԳԸԼԳԸԼ. Բոյս մշակեալ, որոյ հունտն ՚ի տեղիս տեղիս հաց կազմեն և ուտեն, այլ լինի սևագոյն և անսնունդ ։

Գինարբ. Բարձրացողուն ծաղիկ անուշա֊հոտ դեղնագոյն. ազնիւն գտանի ՚ի Մուշ։

Գինարբու. Ծաղիկ կապտակարմիր և ա֊նուշահոտ. ազնիւն գտանի ՚ի Վարագ ։

Գոնգոծ. Խոտ վայրի ։

Դ.

Դաղձ. Վայրի անանուխ. Դաղանի նանէ ։

Դդմաճ. Բանջար վայրի թթուահամ։

Դեղդ. Դեղձ, որոյ ցօղունն երկարէ յոյժ, նման հօբէմ պէպէյի. ծաղիկներ ունի,

և արմատն իբրև աճառ փրփրի 'ի լուացըս. գործածեն աղջկանց գլուխի վարսեր երկարցնելուն ։

Ն.

Նզան աչք. Խոտ՝ որ ունի կոկոն 'ի ձեւ աչաց եզին ։

Նզան լեզու. վ. Ն. Բանջար մի, նման լեզուի եզին, որով վէրք կը կապեն, և յատկութիւն ունի թարախներ մաքրելու ։

Նզանճակատ. Բանջար, զոր աղցան կազմեն և ուտեն ։

Նղէգ. Նղէգանման բանջար ուտելու ։

Նղրճայ. Բոյս վայրի, զոր արմատով հանեն և աղջուր դնեն ։

Նրեքնուկ. Խոտ մանր, որոյ տերևքն երեքեն. և եթէ չորս տերև լինի՝ հմայս հմայեն այնու ։

Նրիցանուկ. Բանջար, զոր Պարսիկք կոչեն [illegible] ։

Նրնջնակ. փուշ ոստալից, որոյ թարմ ցօղունն ուտեն և աղջուր դնեն ։

Չ.

Չամբեղ. Չամբիւղ ծաղիկ. [illegible] ։

Է.

Էշխուտուկ. Վայրի փուշ է ։

Թ.

Թանթրուենի. Ծառ՝ վարդենւոյ նման, որոյ ծաղիկն ևս նոյն անուամբ կոչի. [illegible] ։

Թանի բանջար. Որ ունի բարակաթերթ

կապտակարմիր ծաղիկ, զոր եփեն 'ի թանապուրն :

Թավթվուն. Բանջար :

Թելուկ. Խոտ վայրի :

Թրթնջուկ. Բանջար :

Թօրթիկ. Բանջար վայրի, զոր իբրև մաքրիչ արեան համարին . ասեն թէ կրիայն երբ զօձ սատակէ, թօրթիկս իբրև դեղթափ 'ի վերայ ուտէ :

Ժ.

Ժախ. Բանջար նման բողիկի, զոր աղջուր դնեն և ուտեն :

Ի.

Իշու կաթնուկ. Խոտ, որոյ կաթն սաստիկ դառն է, գործածեն իբրև դեղ:

Լ.

Լալա. Ծաղիկ լեռնային, նման կակաչի . լէլէ :

Լէլազ. Ծաղիկ ողկուզաձև, որ 'ի վերայ ծառոց բացուի . լէյլաղ:

Լուի ծաղիկ. Լուի ծաղիկ, ծանօթ է այս բազմաց :

Լօշտակ. Բոյս՝ որոյ ծիլն նման է դդմենւոյն, և խաղողի նման ողկուզաձև պտուղ ունի . իսկ արմատն կարի դառնագոյն, որ մարդակերպ է, և 24 կերպ ցաւոց դեղ լինին ասեն :

Խ.

Խազազ. Որ ունի զձև և զհամ բրասայի :

Խաշխաշ, խաշխաշուկ. Մեկոն :

Խաւըրծիլ. Բոյս վայրի, որոյ ցօղունն ուտեն, որ լիմոնաթայի համ տայ: Ազնիւն գտանի 'ի Վարագ, 'ի Ծովասար, յԱրագած և յԵղերով լերինս:

Խիթըկ. Խոտ վայրի, զոր 'այրեն, և 'ի փոշւոյն աճառ յօրինեն:

Խոլորձ. Խոտ՝ յոյժ սիրելի ամենայն անասնոց. ունի ծաղիկ կապտագոյն:

Խուրնդատ. Խոտ հաստացօղուն բարձրացեալ իբրև զծառ, որոյ ծաղիկն փռընգտացնէ զմարդ. Վնասակար է աչաց. 'ի պէտս վառելեաց գործածեն զայս խոտ:

Խռովխոտ. Վայրի խոտ, զոր դեղ առնեն վիրաց:

Խընձլուզ.
Խոտուկ.
Խուտուկ.
Խուուկ.
} Զանազան բանջարք:

Ծ.

Ծեթրին. Ծոթրին, համեմ բանջար:
Ծիրան. Միրգ ինչ. աճէմ էրիկի:
Ծներեկ. Բանջար վայրի:
Ծտի լեզու. Բանջար:

Կ.

Կաթնուկ. Տես Խշու կաթնուկ:

Կակաչ. Ծաղիկ վայրի և մշակեալ. դեղնագոյն և կարմրադոյն, հոտով և անհոտ:

Կաղնի. Կաղնի ծառ և փայտ:

Կաճրար. Բանջար, որ ունի տերևս լայնս:

Կանափատ. Կանեփի հատ կամ հունդ, զոր բովեն ուտեն. և 'ի սանտրի ծեծելով գլխաչածն՝ կաթն հանեն գործածեն

պահոց որ 'ի պէտս կերակրոյ.

Կանգառ. Փշատերև՝ բոյս դաշտային և լեռնային. երկու կերպ է, իբր արու և էգ. մէկ տեսակն թարմ՝ աղջուր կը դընեն, եղով տապակեն, թանապուրի մէջ արկանեն. իսկ միւս տեսակէն կաթն հանեն և թանձրացունեն բլիթ բլիթ, կազմեն ծամոն. կանգառն ախորժանօք ուտեն անասունք. իսկ զսերմն՝ որ նման է փստըղի, բովեն և 'ի տեղի սուրճի գործածեն։

Կանճրակ. Փշաբոյս մշակեալ, որ ունի ծաղիկս նման զաֆրանի. և հասկս կազմէ, որոյ հատիկներ նման են արևածաղկի հատին, զորս խաշեն, ծեծեն, կաթ հանեն, և պահոց կերակրոց 'ի պէտս գործածեն։

Կապար. Բոյս՝ որոյ պտուղ աղջուր դնեն ուտեն։

Կառ, կռնուկ. Փուշ՝ բոյս երկարաձիգ, որոյ գլուխն փոքր ինչ նման է եէնկինարի. ցօղունն ուտեն։

Կարմրաբանջար, կլմբօզ. Ճակնդեղ։

Կարոս. Մաղդանօս.

Կաքաւախաղող. Ծառ ինչ յԱրագած, բարձր՝ երկու կանգնաչափ, որոյ տերևքն սղոցանման, առ մէն մի տերև ունի պտուղ ինչ նման ելակի, ուտեն և քաղցրեղէնս կազմեն։

Կեծուկ. Բոյս բազմափուշ։

Կինձ. Մշակեալ բոյս, որոյ տերև նման մաղդանօսի։

Կոծախուր. Ծառ, որոյ պտուղն թթուաշ։

Կովուճակտիկ. Տես Եզանճակտիկ։

Կոտեմ, կոտմուկ. Բանջար ջրաբքի, մշակեալ և վայրի ։

Կուէզիթաւ. Լայնատերև բոյս ինչ անպէտ։

Կտաւատ. Կտաւի հատ կամ հունդ, յորմէ վառելու ձէթ հանեն, և սոյն ձիթով գոմէշ օծանեն ։

Կորեկ. Տորը, զոր հաց կազմեն ։

Կորնկան. Խոտ ինչ նման առոտոյ և խոլորձան, վայրի և մշակեալ։

Կուսբ. Ձէթ հանուած կտաւատի դիրտ ։

Հ.

Հաղարճ. Ծառ փոքրիկ յԱրագած, որ ունի պտուղս մանր ։

Համեմ. Հունտ ինչ մշակեալ։

Հավաժոր. Բոյս, որոյ արմատն է խիստ կարմիր ։

Հոշհոշիկ. Բոյս, որ ծալ ծալ տերևներ ունի. և ծաղիկ՝ սպիտակ և դեղնագոյն։

Հըրտըմ ջիւան. Բառ քրդերէն. բոյս մըշտականաչ ։

Ձ.

Ձեան ծաղիկ. Սպիտակ և դեղին անհոտ ծաղիկ, որ ձեան հալելուն պէս կ'երևայ և կը ծաղկի ։

Ղ.

Ղադիփայ. Ղարէֆայ ծաղիկ ։

Ղանաֆիլ. Ղանաֆէլ ծաղիկ ։

Ճ.

Ճամբու խոտիկ. Մանր խոտ տերևախիտ ։

Ճարճատուկ. Խոտ ինչ, որ ունի կապոյտ ծաղիկ ։
Ճթուկ. Բոյս ինչ վայրի ։
Ճլեկ. Մանր և կլոր հատիկ դառն, որ իբրև որոմն գոյանայ ցորենւոյ հետ ։
Ճչնանօր. Վայրի ծաղիկ յոյժ գեղեցիկ նման կարմիր վարդի, այլ մեծ քան զայն ։
Ճռնեկ. Խոտ մանրատերև ։
Ճնճղկու պաշար. Էղէնկեօմենի ։

Մ.

Մամուխ. Ծառ ինչ յԱրարատ, տերևք նորա նման խնձորենւոյ. կորիզ նորա 'ի չափ և 'ի ձև բալի. չորահամ, թխագոյն. ուտեն և քաղցրաւենիս շինեն ։
Մանտակ. Բանջար վայրի. աղջուր դնեն և ուտեն ։
Մասուր. Ընհոտ վարդի ծառի պտուղ. թթու է. հազի դեղ համարին, և կերակրոց մէջ գործածեն ։
Մատուկ. Մանր խոտ փափկատերև ։
Մատուտակ. Թանձրատերև խոտ ինչ դառնահամ, որոյ վրայ գազպին կ'իջնայ ։
Մեղրածուծ. Թորթլիկ բանջարի ծաղիկն, որ նման զանազիլի բացուի. սոյն ծաղկանց բունը ծծեն, որ քաղցրահամ է ։
Մըրիվանդ. Սպիտակ ծաղիկ ինչ ։
Մոմէմար. Ընտիր բանջար վայրի ։
Մոշ. Ծառ ինչ վայրենի, որոյ պտուղն նըման մորենւոյ է, զոր ուտեն ։
Մորիմուկ. Մորենի ։

Ն.

Նարկիզ. Նարգիզ ծաղիկ ։

Նափրադ · Ծաղիկ է , որ 'ի սկիզբն գար- նան ծաղկի :

Նուֆիկ · Բանջար վայրի , տատաշխարար · չո- րացուցանեն և պէսպէս կերակուր կազ- մեն :

Շ·

Շամամ · փոքրիկ սեխ , 'ի չափ խնձորոյ , գօտևոր , գունաւոր և անուշահոտ :

Շարտաղուկ · Դեղձ :

Շընխադող · Բոյս ինչ , որոյ պտուղն կար- միր և մանր լինի , նման հաղարջի , զոր ուտեն :

Շընսախտոր · Բանջար վայրի , նման և 'ի համ սխտորոյ , զոր արմատով հանեն , աղջուր դնեն և ուտեն :

Շընքաքուկ · փուշ ինչ , որ բուսանի յա- ւերակս :

Շղան գատակ · Անպէտ բոյս ինչ , նման սունկի :

Շրէշտ · Բանջար վայրի , որոյ բոյսն 'ի թմբոմ և 'ի չոր' իւղով տապակեն · իսկ արմատն աղան , որ է ճէճէ :

Ո·

Ողորմանկոթ · Բանջար ինչ ·

Ուլուականջ · Խոտ ինչ :

Ուաց · Խոտ անուշահոտ , նմանութեամբ և հոտով իբրև ֆէոլխան , զոր ուտեն :

Պ·

Պապկէ պլոր · Խոտ ինչ , որոյ ցօղունն ու- նի 'ի գլուխ իւր կապոյտ հատս իբր հունտս

Պառվում մեղար· Բանջար վայրի ։
Պատրաքօ· Բանջար մշակեալ ։
Պատուտակ· Տես Բաղեղ ։
Պարոն բանջար· Բանջար վայրի բարեհամ ։
Պիւօկ· Բանջար վայրի ։
Պնտուկ· Կաղին ։ Ֆընտըղ ։
Պտուկ· Բանջար վայրի, աղջուր դնեն ։

Ս·

Սէզ· Սէզ խոտ ։
Սինձ· Անուշ խոտ, զոր մարդիկ եւս ուտեն ։
Սիւեղ· Բանջար, զոր աղջուր դնեն և ուտեն ։
Սխտորուկ· Բանջար վայրի, համով և նըմանութեամբ սխտորի ։
Սոխուկ· Մանր բանջար վայրի համով և նմանութեամբ սոխոյ · աղջուր դնեն ։
Սունկ, Սունկ ծառոց, և սընկն դաշտի · ծանիբար ։
Սուսամբար· Անուշահոտ խոտ ։
Սուսան· Սուսան ծաղիկ ։
Սպանդ· Սաստիկ դառն և գարշահոտ խոտ, որ բուսանի 'ի գերեզմանոցս ։
Սպիտակուկ· Սպիտակ բանջար վայրի, զոր չորացուցանեն և կերակուր կազմեն ։
Սկրուկ· Խոտ վայրի, զոր ոչխարք ախորժանօք ուտեն ։

Վ·

Վարդապետիկ· Ծաղիկ, որոյ կոկոն վեղարաձև՝ կապտագոյն ։

Ց·

Ցանդռնեկ· Բանջար վայրի ։

Ցարեկան. Ցեղակ մի ցորենոյ, ըմէրող :

Փ.

Փընկի. Բանջար վայրի :
Փշփշուկ. Բանջար վայրի :

Ք.

Քարչին. Վայրի տանձ :
Քեղ. Պարարտ և մացառանման բանջար հոտաւէտ, որոյ ցօղուն խաշեն աղջուր դնեն և իւղով տապակեն :
Քօլօզիկ. Դեղին ծաղիկ ինչ :
Քօսի մօրուս. Բանջար վայրի :

Օ.

Օշին, Ցեղ Շրէշա :
Օշինդր. Դառնահամ խոտ. գործածեն 'ի ցքի և դնեն 'ի գինւոջ. և՝ իւրև դեղ եփեն և ջուրն խմեն. ջէլին օճէ :

ԱՐՕՐ, ԿԱՄ ՀԱՐՕՐ

Արօրն է փոքր գութան, միայն անիւներ պակասին. իսկ միւս մասերն ամբողջ ունի, ինչ որ գութանն ունի. գարնան և աշնան եղանակին՝ երբ հողն կակղցած է անձրևներով, զոր Մշեցիք «Հարվոնք» կոչեն. և եթէ արդէն ուրիշ տարի վարած են զայն գութանով, արօրը կը վարէ: Արօրը կը կապուի մէկէն մինչև վեց լուծ կամ զոյգ եզներէ. սովորաբար՝ տեղ կայ որ չորս լուծ կը լծեն. ուստի կ'անուանեն «Չորոց». տեղ ալ կայ որ վեց լուծ կը լծեն, ուստի և կանուանեն «Վեցկի»: (1)

---

(1) Գիւղացւոց մէջ աւելի առատ և մարգագետին ունեցողներ խարող են գութան ունենալ. և գիւղի հարկին ու ծախքին մեծ բաժինը գութան ունեցողներ կը վճարեն. ասոնք կ'ըսուին «Ջամբայր», կամ «Գեղի իշխաններ»: Իսկ որոնք որ վեցկի ունին, և այն ըստ լծոց առատութեան կամ սակաւութեան՝ կ'ըսուին «Պձեղո». և իրենց հարկեր ու գեղի մէջ պատահած հասարակաց ծախքերը իւրաքանչիւրն իր տանիձաննին համեմատ կը վճարէ. տանիձաններն ևս՝ «Պլիկո» կը կոչեն:

Երկրագործաց տանց և կարասեաց անուններն ևս հետաքրքրական են. նոյնս նաև եղանակաց, ամսոց, շաբաթուց, օրերու, ժամերու անգամ յատուկ յատուկ անուններ յօրինած են. բայց այս ամենը գրել բաւական ընդարձակութեան կարօտ գործոյս. և կը խոստովանիմ՝ թէ չկրցայ կարողանամ կատարեալն գրել զանէ այժմ:

ՍԱՑՂ, ԿԱՄ ՍԷՂ

Սայլով կը կրեն իրե՛նց խոտերու և Հացերու որաները դաշտէն. և ուրիշ բեռ-նակրութեանց ալ կը գործածեն։ Երկու-անիւի վրայ հաստատուած է սայլը, և անիւներուն մէջ անցած փայտը կ'ըսուի «Միռնի», կամ «Առու»։ Անիւները սռնով մէկտեղ կը դառնան. անոնց շրջանակին վրայ երկաթէ օղ կայ անցուցած։ Սայլի երկու քովերը երկընցուցած փայտերը՝ «Ուռեր» կը կոչեն. և առեղներուն դէպ 'ի յետս երկարցած ծայրերը՝ «Պոչեր», կամ «Թրացից» կը կոչեն։ «Կոտոշ» կ'ըսեն երկու հաստ փայտերուն, որ սայլի առա-ջոյ կողմը իրար մօտ բարձր անկած են. և կոտոշներու մէջ անցուցած են՝ ճախա-րակին գունդի պէս կլոր փայտ մը՝ զոր «Կլորս» կը կոչեն. սայլը բանեցուն չուանը այս կլորսով կը պնդեն և կոտոշ-ներուն կը կապեն։ «Աղուէս, կամ Աղ-ուորս» կ'ըսեն կլորսէն վեր եղած փայտին, «Ճաշեր» է պարան, որով սայլի բեռը կը կապեն։ «Մանիչքեր» է այն փայտը, որով կլորսը կը դարձնեն. «Ճանճառօխեր» է այն, որ սանրին կը միացնէ լծոց. և կը դարձնէ պնդունակը։ «Ջուլ», կաշիէ պարան, որ բանիը լծոյն կը միացնէ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գութան .

Գութնի ականեր. Երկու անիւք, մինն բարձր և միւսն ցած ։

Գութնի սռնի. փայտն որոյ ծայրերը անիւքն են անցուցած ։

Գութնի խարազան. Որոյ հետ դութնի էշն կցեն ։

Գութնի էշ. Ծուռ փայտ ինչ երկար և հաստ իբրև գերան ։

Գութնի առատամ, կամ խոփտուն. փայտն՝ յորոյ վերայ հաստատեն զխոփ ։

Գութնի ուսն և ուսնապրէր. Փայտն որ զէշն և զառատամն միաւորէ ։

Գութնի մաճ և ծռումաճ. Ղեկի նման տնկուած փայտն, զոր կալնու մաճակալն և ուղղէ զմաճն ։

Գութնի թուր. փայտն՝ որ 'ի մէջ իշոյն և առատամին է ։

Գութնի խոփ. Երկաթն՝ որ պատառէ և վարէ զհողն ։

Գութնի տախտակ. Որ խոփի վարած հողը կը շրջէ ։

Գութնի կաքաւ. Լեզուաձև փայտ, որ զտախտակն պնդէ ։

Գութնի ձևիչք. Երկաթն՝ որ առաջոյ քան զխոփն է ։

Գութնի ճամբարակ. Կաշիէ գործուած կապն, որ գութանի մասերը կը միացնէ ։

Գութնի բնադայ. Հաստակուռ երկաթեայ շղթայն, որ զգութանն կապէ ընդ լծոյ ։

Լուծ. փայտն՝ զոր դնեն 'ի պարանոցս զոյգ եզանց։

Ամոլ. Առաջին զոյգ գոմէշք կամ եզինք լծեալք, որ պարտին լինել ընտիրք և ուժեղք։

Ամոլվար. Մշակն՝ որ նստի 'ի լծան ամոլոյն և վարէ զլծեալսն։

Սարծիլ. Երկրորդ զոյգ եզանց կամ գոմէշք։

Ոժտուն. Երրորդ զոյգ եզանց։

Ոժտունվար. Մշակն՝ որ նստի 'ի լծան, և վարէ զոժտունս։

Հուրիկ. Չորրորդ զոյգ եզանց։ Եւ մանուկն՝ որ նստի 'ի լծան և վարէ զհուրիկ եզինս (1)։

Խարեզան. Մտրակ՝ որով զեզինս հարկանեն 'ի վարել։

Մանգեռ. Գերան՝ որոյ վերայ ատամնաձև փայտեր կան հաստատուած. հերկն վարելէն զկնի, այսու փշրեն և սանդրեն զարտն։

Տափ, Տափան, կամ Ցաքան. Մացառներ կամ փուշեր խիտ կապած գերանի մը վրայ. սերմն ցանելէն զկնի՝ այսու հարթեն զհողն և ծածկեն զսերմն։

ՎԵՐՋ

---

(1) Ըստ պնդութեան և կակղութեան հողոյն լծկան անասունք շատ կամ քիչ կը լինին. երբեմն մինչև ութն զոյգ կը լծեն, այլ սովորաբար չորս լուծք անասնոց և չորս մշակք մէկ գութան կը գործածեն. մշակաց մինն է մաճկալն։

ՎՐԻՊԱԿՔ

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
43	4	չողէն	չողէն
77	5	արկածնե-րըկ ամ	արկածնե-րը կամ
86	20	դողայ	դողայ
134	8	վէմերը, որոց	վէմերը ու կոթողները, որոց
213	14	ղտուրիկ	ղտուրիկ
234	1	և	ևս
272	7	գրկի	գրկիս
300	7	էս որ եւ	ես արեւ
300	5—8	ինձ մէկ	փնձմէ
300	15	երես	էրես
300	20	արիւն	արին
300	33	սաղին	ղրաղին
317	4	Հի—կէ	Հ—կէն
319	22	Ձանք	Հանք
322	2	պանիր	պանիր
326	28	նոր	նոյն
333	7	Ջըռ	Ջըռ
385	21	Ղազերօք	Ղուլերօք
386	25	Արազու	Արաղու
387	20	Երիզու	երիցու
422	11	Խխուրձ	խուրձ
422	13	ուցկուլուլու	Խուցկուլուլու
428	22	Հոն	Հուն
429	19	Մանգղոն	Մանգղոն